



Հարգելի՛ ընթերցող.


ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am




ԲՆԱԿՆԵՂՅՈՒԹՅԱՆԵՐ

Կազմող՝ Ա. Վ. ԱՐԻՍՏԱԿԵՐՅԱՆ

Խմբագրական կոլեգիա՝

- Մ. Հ. Դավթյան
- Լ. Վ. Միրիջանյան
- Վ. Ա. Մկրտչյան
- Վ. Մ. Մնացականյան
- Հ. Ս. Սահյան



ЦАРУЯР РАФАЕЛОВИЧ СЕВАК

Собрание сочинений в 6-и томах, том VI.

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван, 1976. Торяна, 9'

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Պարույր Անակի ձեռագրային մի Աշոտից տեղեկանում ենք, որ բանաստեղծը մտադիր է եղել տարբեր տարիներին մամուլում հրատարակված, բայց ոչ մի ժողովածուի մեջ չմտած, ինչպես նաև բոլորովին անտիպ գործերը հավաքել ու հրատարակել «Գիրք մեացորդաց» խորագրով: Այս հատորը, ըստ էության, բանաստեղծի մտադրության իրականացումն է: Բանաստեղծությունների շարքը լրացվել է նաև գրականագիտական-ֆենադատական անտիպ գործերով ու մի ֆանի այնպիսի նամակներով, որոնք շատ կարևոր են Պ. Անակի ստեղծագործական նախասիրությունների ու գրական դավանանքի լուսարանման համար:

Հատորը կազմված է ըստ ժամանակագրության, բացառությամբ մի ֆանի դեպքերի, երբ անհրաժեշտ է եղել պահպանել ավյալ շարքի, մտահղացման ամբողջությունը:

ԱՆՆՈՐԱԳԻՐ

... Ես նոր մի պոետ, անհայտ տակավին,
Խոհերի անտես մակույկին նստած՝
Զգիտեմ արդյոք կլինի՞ր քամի,
Որ առաջ մղի իմ առազաստը,
Թե ինքս պիտի շապիկն իմ՝ կարմին
Առաքաստ շինեմ, նոր լինեմ վատահ,
Որ երգն իմ նորեկ, նավը իմ գանձի
Պիտի ընթանա օվկիանոսներն ի վեր
Եվ փոթորկածուփ ծովերում անծիր,
Որպես գալիքի անմարմին նվեր,
Պիտի շնչով իր անանձնապատկան
Վառվի որպես վես, սրբազան պատգամ...

Մեր երկրի վրա կախվել են ահեղ
Օրեր՝ մառ ու մութ և դաժան կարի
Ցանկալով մահվան թույնով վրդովել
Հանգիստը երկրի մեր շնաշխարհիկ...
Եվ ելել ենք մենք մեր այգաբացով,
Մեր ուժով համակ, վաստակով արգար,
Ջնջելու շարիքն այդ արյունացուք,
Կոտրելու վերջին այդ կեռը խարդախ,
Վերջին տերերին այն ժանտարարո
Եվ իշխաններին բոլոր այն արբշիռ
Նեղողելու իրենց իսկ արնակարոտ
Հատուցման ծովում—անտես, անկշիռ...
Արդ ժամն է հասել, գնում եմ ես էլ
Դեպ մարտնչող մեր այն բազմագունդը,
Ուր մահը անվախ սրտեր է տեսել,

Ուր ուռճանում է հաղթության հունդը...
Գիտեմ, որ մահը շուտ է աջնտեղ
Իր դառնապատիր գգվանքների մեջ,
Եվ տևողությամբ մի ակնթարթ է,
Շատ կարելի է գտնել մահվամբ վերջ...
Ուրեմն գտնատվի՞ հերոսությունն իմ,
Եվ գոյությունն իմ դառնա մի առա՞նցք,—
Վախկոտության հին մազութով յուղված...
Ուրեմն դարկանա՞ մահվան պաղ շնչից
Արհամարհանքն իմ՝ սին մահվան հանդեպ,
Եվ մոլեգնակամ վրնջող իմ ձին
Դառնա նապաստակ—վախկոտ ու անդե՞մ...
Օ՛, ո՛չ... թող լինեմ Կապլան էսերական—
Իմ առաջնորդի կյանքի դեմ դավող,
Եթե առկա է երգիս շեփորին
Այսօր կեղծիքի շպար կամ օբտիդ,
Եթե անապակ երգիս սափորին
Կաթում է անջինջ, պղտորող մի շիթ...

Գնում եմ աջնտեղ և սարսում շունեմ
Ես մահվան հանդեպ—մոլի և անգութ...
Իմ անվախության սրտերն աճում են
Իրար հաջորդող օրերի հանգույն:
Գունատվիր, ով մա՛հ... Չարագույժ աքոտով,
Դու աներևույթ, անտես բորենի,
Անգոյության հուր—աննյութ, անկրակ,
Դու թունոտ անշար, տեսքով ցորենի...
Դու, որ անտես ես, դու, որ աննկատ,
Դու, որ անձև ես չար կասկածի պես,
Խանդի պես սնվող—անստինք, անկաթ,
Վրեժի նման անվրեպ այնպես...
Դու, որ կասկածի, վրեժի, խանդի,
Նման շարժվում ես աննկատ, անկանոց,
Ստեփան նրանց պես, կաս հնուց անտի
Որպես սրտերի փորձություն փականք:
Գունատվիր, ուրեմն, դաշկացիր, սողա

ձուրդի նման կամ ինչպես սողուն,
Եվ իմ (օ՛, ո՛չ, մեր) շնչից դողողա,
Մալարիայից են ինչպես դողողում...
Դու, որ գոյության բյուր հազար կանթեղ
Մարել ես դաժան քո սառը շնչից,
Դու, որ եղել ես հաղթական, քան թե
Քո որդին—կյանքը՝ քո հանդեպ շնչին,
Արդ պիտի փոխենք հին դերերը մենք
Ներդաշնակությամբ օրինա՞նիչ,
Եվ պիտի դողաս ինձանից, ով նենգ,
Ինչպես կանթեղը սառն ածխածնից:

Քանզի ես ահա գալիս եմ քո դեմ
Հոգուս մեջ ծիծաղ, բաքոսյան խնջույք,
Մի վախճանալիա, մի ուրախ հանդես,
Մի աստվածային խրախճահաճույք...
Քանզի ես ահա գալիս եմ քո դեմ
Գիտցած լինելով ինչո՞ւ եմ հազնում
Քո ջղանցքը սև և իրանապիրկ,
Ինչո՞ւ եմ այսքան շատ վաղ հավաքում
Դեռ նոր բաց արած ծիրանահագի
Առագաստը իմ, այս ուրախ կյանքում...
Գնում եմ ես էլ ցանեմ մի հատիկ
Այն գալիքնահունձ լայն մարգագետնում,
Որ չըդառնա մեր աստղը մահատիպ,
Ժանտաժանտ, դժնի աշխարհի մթնում,
Որ անծիր երկնում մեր բազմաաստեղ
Օտար մի թռչուն խենթ չսավառնի,
Որ կարմիր ոգուն մեր չըպատվաստեն
Ոչ մի գոսական ճյուղ, ոստ եղենի,
Որ կապուտաշյա ջրերում մեր ջինջ,
Օվկիանոսներում անգամ սառցաձիստ
Ոչ մի խորթ մակույկ, առագաստ ոչ մի
Չըլողա, աջնտեղ չգտնի հանգիստ,
Որ հայրենիքիս արդարավաստակ
Հողը մի օտար ոտք չըտորրի,

Որ ալետեղ մարտը՝ հոգով անկաշկանդ
Գալիթի հազար հույսեր օրորի,
Որ ցուցամատը մեծ առաջնորդի
Նորից ու նորից մնա ուղեներէ,
Որ միշտ ժպիտով ճանապարհորդի
Մեզ դեպի վարմիր հաղթութեան ֆիւնիշ...

22—23. VII. 41

Նավալու

ՓՆՏՐՈՒՄՆԵՐ

Երգի ստեպում հազար շավիղներ,
Հազար արահետ, ճամփաներ բազում,
Ինչքան սեզ քնար, քանի տավիղներ,
Ինչքան հնչյուններ, մտքեր երազում:
Բայց այդ բազմուղի լաբիրինթոսում,
Ուղիներում այդ հեշտին ու դժվար,
Ընկած երգերի հերկած ակոսում,
Դարձել էմ ես խոհերի ավար,
Խոհերի առաջ՝ թեքած պարանոց,
Խոհերի առաջ՝ մի նվաստ հոգի,
Խոհերի առաջ՝ խեղճ ու վարանոտ,
Խոհերի առաջ՝ բարդ ու անմեկին...
Կյանքն էլ է այդպես դժվար ու հեշտին
Վերխոյացումով, վարիչումով լի.
Կյանքն էլ ողջույնի և հրածեշտի
Համբույրներով է անիմանալի.
Կյանքն էլ է նրբին, կյանքն էլ պահանջկոտ,
Կյանքը կարոտ է իր երգը լսել.
Կյանքը պճնված, բայց նաև բոկոտն,
Կյանքը—մշուշոտ, կյանքը—վառ, լուսե...

Ու այդ կյանքն ահա ինչպե՞ս ընդգրկել,
Մավալը շափել երգի մենզուրով...
Երգերը՝ գրված երգերից գրքե,
Կարո՞ղ են միթե անձրևաջրով
Օծանել կյանքի դեմքը բազմանիստ,
Պատկերել նրան... զողանջը գոնե,
Որպես ցոլք ու փայլ սփռուել հանգիստ,

Որպես եղածի նկար անգունեղ
Մատներով վարպետ լավ ուրվաբեկ
Այնպես, որ կյանքը շայլանդակվի,
Որ շխառնվեն բծեր ու փծեր
Եվ կյանքն անկաշկանդ գեթ չըվանդակվի...

Ու դրա համար իմ մանուկ հոգով,
Իմ անվարժ գրչով, թույլ ուժերով իմ,
Իմ հայրենիքի երկնքի ներքո
Պիտի երգեմ նորը բոլորովին:
Պիտի կաշկանդված իմ հոգին սուրա,
Ինչպես հողմը խենթ փոթորկի ժամին,
Թափառի անհաս եզերքի վրա—
Պայծառ գալիքի սեզ ճանապարհին:
Պիտի իմ երգը ծնվի կյանքի մեջ,
Կյանքի գրկի մեջ... կյանքից գոյացած,
Պիտի որ դառնամ կյանքի բանաստեղծ,
Կյանքի զորությամբ բարձր խոյացած:

Ու դրա համար ծառանամ պիտի
Հին անեծքային օրհնքների դեմ,
Որ երգս կապի ծիածան-զոտի,
Որ հոգիս դառնա խնդրության եզմ:
Ու պիտի շուռ տամ գլուխս հպարտ
Բյուր ճամփաներից, շավիղներից բյուր,
Ինչպես աքսորից փախած թխապարտ,
Թափառումներին տամ հազար համբույր...
Պիտի շարդոտեմ ամեն մի կապանք,
Ամեն մի շղթա՝ հոգիս կաշկանդող,
Որ կյանքը երգիս մեջ էլ մնա կյանք,
Որ շինեն տողեր՝ խոհերըս բանտող...
Եվ ահա հոգիս այս հուզումով լի՝
Կանգնած է ահա լուռ ու վարանոտ
Բյուր ճամփաներում անիմանալի,
Քայլելու համար գեթ ուղու կարոտ...

... Հին ճամփաների լաբիրինթոսում,
Որպես գնացող անտես իոններ,
Տենչանքները իմ հեռու են հոսում,
Իսկ ես որպես մի խիզախ պիոներ—
Հոգուս մեջ — ձգտում, գլխիս մեջ — խոհեր,
Շեփորում եմ գոռ հաղթանակի մարշ:
Եվ եթե հանկարծ հրացանը իմ
Դեռ չկրակած անօգուտ պարպի,
Թող այս երգն իմ—հոգուս մտերիմ,
Դառնա իմ հոգու երգը կարապի...

[1941]

ԶՂՋՈՒՄ

Ճաշակած մայրական գգվանքի հետ կարոտիդ լեղին,
Մարմնական հանգստի հետ՝ հոգու խռովք,
Թույլ տուր այսօր, քույր իմ, դարձնել քեզ արնոտ
կառափնատեղի,
Եվ ինձ մորթել այնտեղ մեղանշման ու զղջման անագորուշ
սրով...

Քանզի դու էիր միայն՝ հատկացար ապրումներս խելագար,
Անկումներս՝ թոխլքից առաջ, դժգոհ հայացքս՝ թոխլքից հետո.
Տեսար միտքս—գայլի պես անկուշտ, գայլի պես ագահ,
Լսեցիր տիրական ճախրանքը ոգուս, որ զարկվում է լոկ
հանճարի նետով:

Քանզի դու էիր՝ անսարսուտ իջար հոգուս վիհերն ի վար,
Հոգուս անհունները—մռայլ, ահալի, անհատակ,
Ուր լպրծուն են ծերպերը, քարանձավներն—ամայի,
քարափները—խավար,
Ուր պատահամբ ընկածին կյանքս թվում էր անմիտ և
երգս՝ անախորժ կատակ:

... Սակայն դու անհատակ վիհերից այդ ելնելով անելարան,
Երջանիկ և գոհ ժպիտով մի, որ հատուկ է գանձեր պեղող
մարդուն,
Հասկացար, որ հրաշք էր կյանքս—անհունորեն հարուստ և
գերառատ...
Տեսար այնտեղ արարիչներ—երկնող, արքաներ—անթագակիր
և դեեր—մշտարթուն:

Ըմբռչանցիր ցավով՝ անդամալի հաճույքի հետ միասին,
Քաղցր ու դառն շիճուկներն իմ՝ սրբագործված արյունիս մեջ,
Սերս հավերժորեն խոստումնալից և վայրկենապես

խաբուսիկ,
Հոգիս, որպես հավերժ մատյան և մարմինս՝ նրան գրքակալ...

Զխնդացիր, երբ հիվանդ էի հոգով՝ առանց պատճառի և
անցավ,

Զլքեցիր, երբ լքեցի քեզ-անգետ քո հոգուն, քո լույսին կույր,
Եվ խոստումի ու սիրո, և դրժման ու լքման մեջ ինձ

հասկացար,
Կեղտով ապական հոգիս դիտելով՝ անբիժ ու մաքուր...

Եվ հիմա ես, անցած անվերադարձ ճանապարհի կեսից
Ետ նայելով, քույր իմ, ի՞նչ խոսքերով արդյոք արդարացում
հայցեմ,

Ինչպե՞ս հասցրնեմ քեզ զղջման երգն այս իմ,
Երբ սերըս—սուրհանդակ՝ անհանգրվան անցել
Եվ իր հետ տարել է սրտիդ մերձենալու անկրկնելի հասցեն...

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ ԶՈՎԱԾՆԵՐԻՆ

Սիրելի իմ, հարազատ իմ, ընկեր իմ,
Որ հանգչում ես այժմ անհայտ մի խորշում,
Ջահել սրտով, անկնճիռ ու անխորշում,
Դու իղձերիս, ապրումներիս մտերիմ:

Ես— եղբայրդ՝ տվայտանքով քո հոգու,
Ես— ընկերդ՝ սրտիդ զարկով բաբախող,
Հարազատըդ փարված կրծքիդ սրախող,
Մի վառ հույսով խոր վերքերդ եմ ամոքում:

Գուցե վաղը ես էլ թաղվեմ մի խորշում
Կույր ու դաժան մի գնդակով՝ բուժ արճիճ,
Թաղեմ ճակատն իմ անկնճիռ, անխորշում:

Ու թող մեռնենք, եղբայր, սիրով ու անճիչ,
Վառ հավատով, որ սերունդները անցավ,—
Կկերտեն մեզ փառքի անմահ հուշարձան...

[1942]

TO BE OR NOT TO BE

(ՎԻՆԵԼ, ԹԵ ԶՎԻՆԵԼ)

Նամակ բարեկամիս՝ գրված պոետական և աշխարհագրական հետումներից

Հեռու ժխորից քաղաքի, ծխից հեղձուցիչ,
Հեռու շշակի խելագար բառաչից, կառքերի վագրից անկամ
Այս հեռավոր լեռներում, ուր ամպերն են արճիճ
Եվ հարափոփոխ երկինքը՝ սենտիմենտալ ու լարկան,—
Ես— հոգուս մրրկածուփ հորձանքի հանդեպ խլականջ,
Ես— շնահեղձ, որպես հորձանքով ափ նետած ծովածուկ,
Ես— անհունների մեջ նետած միտքս, որպես սովածին
գայլական:

Սպասելով անհունների արձագանքին՝ կարոտով անձուկ.

Ես— սրտիս մեջ Դարի Տառապանքը և հանճարի շունչը

դարերի.

Ես— տրտմաթախիծ, ինչպես օրը արևից առաջ և խնդությամբ
ցամաք,

Այս խավար գիշերին երկունքի նստած՝ հայացքս դեռ

անհայտ արևին,

Երկունքից առաջ, բարեկամ, շափավորում եմ խոռվքն իմ
հոգու և հանգավորում որպես քեզ նամակ:

Արդ տրտում է անձն իմ գերազոր և բեկված է կամքն իմ
անկոտրում

Եվ թաց են աչքերն իմ անարտոսր.

Սրտիս մեջ խոռվք կա անեզր, հոգուս մեջ՝ տրտունջ,

թևերիս՝ փետրում,

Հայացքիս դեմ՝ արյան փոսեր.

... Եվ կանգնած է իմ առաջ մարդկութունը՝ վիզը ծուռ և
մերկանդամ,

Ամոթը թուխս դրած աչքերում,
Ձեռքերին կապանքի հետքեր, կապույտ վերքեր այնքան,
Միրողի հույսով, կորցրածի դառնությամբ, վեհությամբ
աստծո և հեղությամբ գերու...

Ե՛վ բզկտված է նա, բրածեծ և խղճուկ է նրա տեսքը,
ինչպես ծաղիկ մի ջրում՝ ջրալիքով տարուբեր,
Ե՛վ անալիք է նա՝ մեղապարտ կատաղության փրփուրը
սառած շրթներին,

Ե՛վ ծանր է նրա վիշտը, որպես դաժան տիրոջ մշակի բեռ,
Ե՛վ հոգնած, ինչպես մկանը վաստակած կոների...
Ի՞նչ է նա վերջապես, այդ խղճալին, որպես խըխունջ՝
անգետ, որպես խլուրդ՝ կույր—

Դարավոր մի խեղկատակ տիեզերական բեմերի,
Ուր հուշարար է ժամանակը, Տարածությունը՝ վարագույր.
Բնությունը՝ կենդանի դեկոր և բազմերանգ ճառագայթները՝
գրիմ...

... Եվ ահա կանգնած է նա իմ առաջ՝ անօգնական ու թշվառ
Եվ վերքերից իր, որպես ավերված աչքերից, հանդա՛րտ
Սորում է արյունը դեռ տաք, որպես ահեղ բողոք, որպես
ծանր գանգատ...

Իսկ իմ մեջ խռովքն է փայլատակում,
Եվ վրեժը կարկառում է թաթերն իր դեպի հոգուս երկինքները
յոթերորդ,

Իսկ իմ մեջ, որպես Աստծո մեջ, ծագում են երկու հակում—
Ինձ դեպի հակառակ քեռներ մղելով:
— Արդյոք չըթքե՞լ այս թշվառ Մարդկության վերքերի վրա,
որպես թույն մահացու

Եվ անհնարին ուժով շապտակե՞լ...
Նրան, որ դարերով իր բյուր որդիների
ժանիքներն է իրար ակոսյել,
Բայց ոչ երբեք նրանց բազումները հուժկու...
Եվ ինչպե՞ս կարող էր նա այդ կոահել,
Նա, որ միայն ծեծվել է, բզկտվել, գերվել
Որպես Հիսուս մի բազմաշարքար,

Որ սիրտն իր, ուղեղն իր տերերին է տվել,
Նրանց, որոնք որպես վայրի արջառ
Փորփրել են հողը եղջյուրներով,
Սմբակներով ցրել երկինքն ի վեր
Եվ հետքերով իրենց գոռ ընթացման
Առատ շաղ են տվել դիե՛ր, դիե՛ր, դիե՛ր...
Երկրի երեսն ի վեր հորոքեցրել
Վերջալույսի գույնի, կակաշների գույնի կարմիր ջրե՛ր,
ջրե՛ր...

... Եվ չթողնե՞լ արդյոք անմխիթար
Նրան այնպես մենակ ու կարեվեր
Եվ սիրտս առած որպես հավերժորեն գտած
Մի անկորոսսու բաշխիչ, մի արևե,
Մի լուսավոր ցնորք, հավիտ օտար
Հերյուրանքին...

Թռչել բա՛րձր, հեռո՛ւ...
Որպես անմիտ կատակ
Էլ չըհիշել բախտը այս աշխարհի,
Էլ չըհիշել կանաչ, ճանաչ վանանց
Թուվությունները սին, երբ որ պիտի
Այդ ամենը արյան ումպով կուլ տալ,
Ոնց դառնահամ դեղը ջրով և կամ թեյով,
Երբ նախաճիրով պիտի, մահով, պատերազմով, գեներով
հոխորտալ

Եվ գրկել կնոջը կտրված մի թևով,
Այն էլ եթե, եթե, բախտը եթե ժպտա...
Օ՛ ծանր է, անթափանց մղձավանջը այս սև
Ինչպես կուպր, ինչպես ծանրասև վարագույր...
Եվ ի՞նչ, և ի՞նչ, և ի՞նչ, ի՞նչ խոսքերով ասել
Նրա մասին, որ, արդ, իր կրակում
Հրկիզում է բոլո՛ր, բոլո՛ր նրանց,
Որ ապրում են այս խեղճ հողափոփի վրա...

Կավ չէ՞ արդյոք լոն՛, լոն՛ և հավիտ
Եվ չըլինել այդպես մոտիկ ու մերձ

Ինչպես ծաղիկ մի վառ ու հոտավետ՝
Քթին դեռ երազուն մի աղջկա,—
Եվ շքինել այդպես մոտիկ ու մերձ
Այս աշխարհի բախտին, այս մարդկության
Բյուր ցավերին անբուժ, գալիքին դառնապերճ
Այդպես ահա ըսկիզբն ունենալ վերջ,
Լո՛ն՛, լո՛ն՛ անճար... անհուսության ցավի,
Անհայտության զազիր, սուր ճիրանների մեջ...

Բայց ի՞նչ... Կինել որդի՞ դրժյալ և դավաճան
Ե՛վ անարժան որդի, և՛ անառակ,
Կինե՞լ աստժո դեմ ըմբոստացյալ տաճար,
Բուն խոսքի դեմ ցրցված անմիտ առած.
Անցած ուղիներին դավաճանող...
Համաձայնվե՞լ կամա, որ ի վերուստ
Տրված շնորհն այս, գուցե վիթխարի
Այս կրակը ներքին՝ ինձ տապակող—
Գարձնելով ինձ մոխիր, անդարձ մարի՞...
Եվ այդ ամենն այնպե՛ս... մի կատակո՞վ...
Բայց չե՞ որ ես անբախտ նույն մարդկության,
Նույն կարեվեր սրտի այսքա՛ն ահեղ
Մնունդն եմ ի վերջո և գուցե թանկ,
Ինչպես նույն մարդկության վաղընջակա՛ն դարի
Իմ պարպերի համար— մի նետ-աղեղ...

Եվ այսօր դառնաղի այս օրերում,
Այս օրերում անլույս և խիստ մթնաբ
Թռչե՞լ դեպի եթեր, թռչե՞լ հեռու,
Թողնե՞լ նրան այսպես անմըխիթար...
Զբփայտվա՛յն նրան հույսերով պերճ,
Վերքերը շամոքե՞լ վառ երգերով,
Դեռ ըսկիզբ շունեցած ունենալ վե՞րջ...
Եվ այդ այն ժամ, երբ որ բյուր վերքերով
Աշխարհն է կուշ եկել որպես ոգնի
Եվ հարկավոր է տալ նրան թևեր...
Երբ պարտեզն աշխարհի չոր է, ավեր

Եվ պետք է նրա մեջ առուն խոսի՝
Բողբոջները նրա որ չըգոսնեն
Եվ կանաչի ծառը հեզ մարդկության...
Իսկ դաշտերում անհերկ, մերկ ու ավեր
Դեռ որպես ժանգապատ, հուժկու գութան
Հերկե՛լ պիտի հողեր և ժանգը տալ
Հողի գոց արգանդին անվերադա՛րձ, հավե՛տ
Եվ մարդկության կրկին ծննդի հետ
Ահեղորեն կանգնել՝ մտքով հատուն,
Խորհով խրթին, լեզվով արևաներկ,
Շիտակիրան, որպես սեզ վերստասյուն...

...Օ՛, չեմ կարող երբեք, իմ բարեկամ,
Հեռու մնալ ցավից իմ այս դարի,
Մարդկության սին բախտից, եթե անգամ
Իմ լույսն իր խավարում անդարձ մարի...
Թեկուզ մնան հավե՛տ, հավե՛տ օտար
Իմ թափառող հոգուն և իմ սրտին,
Իմ թռիչքին մոլի, հրակատար
Իմ իղձերին, խոհին՝ խոր ու խրթին...
Եթե անգամ մարդկանց ժպիտը—թույն,
Քմժիծաղը՝ աղբյուր անհուն ցավի,
Արհամարհանքը սին և մշտարթուն
Առօրեական, ճղճիմ, սրտացավի
Տեղիք տվող հազար արարքները նրանց,
Զանքերը՝ կտրելու թևերս արծվի,
Հերյուրանքը ստոր, եթե հոգուս վրա,
Որպես մահվան ստվեր մեղմորե՛ն տարածվի,—
Նորից ես չեմ կարող լինել դաժան,
Կինել դրժյալ որդի և հեռանալ
Դեպի կապույտ հեռուն, որտեղ հազար
Հորիզոններ գուցե իմ դեմ բանան...

Ռուբիկոնը անցած ոչ շատ թեթև
«Լինել շքինելու» խնդիրն ահա

Այսպես լուծած և լուռ թողած հետև
Անկումներն իմ, որպես կանգուն պահակ
Իմ փոթորկոտ կյանքի անցյալ օրվա,
Այսօր ահա, որպես վաղվա
Գալիք փորձանքների անմահ գուշակ
Ես նետվում եմ առաջ որպես բուժակ
Տիեզերքի անհուն, խոր վերքերի...

10. VIII. 42

Զանախի--նավալու:

ԱՇԽԱՐՀԻ ԳԱՐՈՒՆԸ

Մայիս է: Գարնան պես բացվել են սրտերը:
Թվում է՝ ամեն տեղ գարունն է:
Թվում է՝ ամեն տեղ անցել են ցրտերը,
Զի թափվում աշխարհում արյուն էլ:

Բայց ահա թերթերը,
Բայց ահա եթերը...
Ինչ-որ տեղ նորից սառնամանիք է,
Ինչ-որ տեղ նորից մոլեգին հրդեհը
Կիզում է բամբուկե տների տանիքը:

Ինչ-որ տեղ՝ արկերի շառաչից թնդում է,
Մվատվում հողի փառահեղ հանգիստը:
Ինչ-որ տեղ՝ պոետը մթամած բանտում է,
Լրտեսը արքա է,
Խելառը՝ միևի՛ստը:

Գալարվում է ցավից Ատլանտյան օվկիանը,
Խաղաղից՝
մնացել է անունը...

Եթերից,
Թերթերից
ցուրտ փշի որքան էլ՝
Բացվել է աշխարհի գարունը:
Բացվել է գարունը և մարդկանց սրտերը.

Իրենն է անում բնությունը:
Եվ եթե ինչ-որ տեղ մնում են ցրտերը,
Այդ ոչ թե հերքում է, այլ հաստատում է
Գարնան

Վերջնական
հաղթությունը:

[1946]

Լինում է— չի լինում,— ինչպես հեքիաթներում,—
(Ա՛յն, որ տատրս էր պատմում ամեն գիշեր),—
Լինում է— չի լինում՝ մեր տան մոտ ու հռու
Մի գեղեցիկ աղջիկ՝ վարսերը սև:

Լինում է— չի լինում... Միակ որդին մեր տան
(Նման հեքիաթների կրտսեր որդուն)
Միրո՛ւմ, շա՛տ է սիրում այդ թովիշ աղջրկան,
Միրում է— չի սիրում աղջիկը թուխ...

Հետո, ամեն գիշեր, երբ մութն է թանձրանում,
Տղան թափառում է այգում ամա,
Ուր ծառերի միջից լուսինն է բարձրանում
Եվ թախծո՛ւմ նրա հետ, նրա՛ համար:
Լինում է— չի լինում... Խորհրդավոր լուռում,
Վերջանում է սիրո հեքիաթն այստեղ...
— Եղել է— չի եղել,— ինչպես հեքիաթներում,—
Եղե՛լ է, չի՞ եղել,— ես չըգիտե՛մ...

14. V. 46

Երևան

ԱՆՀԱՍՑԵ ԲԱՑԻԿ

Քաց փայտի պես՝
Ո՛չ վառվում են,
Ո՛չ էլ հանգչում,
Այլ լուկ մխո՛ւմ:

Ճահճուտի պես՝
Մխանդամից չեն չորանում,
Չեն էլ բխում:

Բաց դռներ են անվերջ բախում,
Քիված կուտը նորից թխում:

Շաքարի տեղ շիբ են ծախում,
Ի՛նչ է՝ շիբն էլ սպիտակ է:

Կարծում են, թե կարևորը
Ապրա՛նքը չէ,
Այլ... պիտա՛կը...

17. IV. 55
Մոսկվա

ԿԱՍ ՈՒ ԶԿԱՍ—ԱՍՏԾՈՒ ՊԵՍ

Ծրբ քեզ մենակ ես զգում,
Դու զգում ես քեզ աստված՝
Ո՛չ մի բանով չհաստված,
Եվ ոչնչո՛վ չսաստված:
Բայց երբ մենակ ես զգում,
Մենա՛կ-մենա՛կ ես զգում՝
Արարչական արյունըդ
Սառչում է քո տաք բազկում.
Քեզ զգում ես խեղճ ու թույլ,
Քեզ զգում ես անկարող,
Քո մեծ բախտով՝ հար դժբախտ,
Եվ անտաղանդ քանքարով...

Դու քեզ մենա՛կ ես զգում,
Եվ ի՞նչ ես դու վերջապես.
Աստծու նման դու և կա՛ս,
Եվ դու չկա՛ս՝ աստծու պես...

25. X. 55
Մոսկվա



Նա դուրս է տալիս
 Սուտի ու պուտի,
 Մեկ՝ խիստ պարզունակ
 Ու մեկ էլ՝ խրթին:
 Բայց կարևոր է
 Գիտե՞ք, թե որը.
 Լեզվին՝ մի բան է,
 Այլ բան է սրտին:



Դուք հիշում եք.
 Միշտ էլ գործը
 Մեր ձեռքով էր գլուխ գալիս.
 Բայց — թե ինչո՞ւ—
 Նրան էին
 Մեծարանքով
 Գլուխ տալիս:



Իսկ ինչո՞ւ, ինչի՞ համար
 Այս մեկին ուշք չեք դարձնում.
 Մի ասեղ պիտի առնի՝
 Պողպատի փութն է հարցնում,
 Իսկ կողքին թե մարդ չկա՝
 էլ ո՞չ հարց, ո՞չ պատասխան.
 Թե հավը ձեռքից թռավ՝
 Անփետուր ճուտն է վերցնում:



Ինչ ասեմ խելքիդ.
 Ժամանակից շուտ մի խոսք ասացիր,
 Քեզ, դրա համար,
 Մեղավորների շարքը դասեցին:
 Բա ո՞նց մոռացար.
 «Աքլորը կանչեց ժամանակից շուտ՝
 Մորթեցին կերան,
 Հետն էլ մատները մի լա՛վ լիզեցին»:



Իմաստուն էր, բայց շատ ձգեց
Ու քաշքշեց այս պարանը՝
Մոռանալով, որ պարան է—
Ճիշտ է, հաստ է, բայց գերա՞ն է:
է՛հ, թող նույնիսկ գերան լինի,—
Միևնույն է, ո՛վ իմաստուն,
Պիտի հատվեր՝ թե պարան է,
Պիտի շարդվեր՝ թե գերան է:



Թե ասես. «Մատրս վարունգ է»,
Աղ կառնի ու մոտ կվազի:
Թե ասես. «Աչքըս դուրս եկավ»,
«Տուր տանեմ խեղճ կատվիս» կասի:
Բայց փորձիր հիմար գտնվել՝
Հունվարին մրսել ու հազալ,
Լեղաճաք կփախչի հեռու.
«Նման է թոքախտի հազի»:



Աչք մտնելու համար նա մի հատ է,
Բիբ փորելու համար՝ արդեն երկու:
Բայց գիտե՞ք, թե ինչն է,
Որ ամենից վատ է.
Մաթեմատիկական այս անհայտը
Հայտնի՞ քննադատ է,
Եվ ինչո՞վ է հայտնի—
Ինքն իրեն է հերքել + ինքն իրեն է հերքում...



Զյունը ի՞նչ է իմանում,
Թե աղքատը փայտ չունի.
Ճամփան ի՞նչ է իմանում,
Թե ձին ոտքին պայտ չունի:
Բայց ես գիտեմ. ով երեկ
Շեն տներ է ավիրել,
Ինչքան զղջման խոսք ասի՝
Մե՛կ է, խղճի խայթ չունի՞:

Ինքը հոգապն է հոտած,
Կարծում է՝ բույնն է հոտած:
Սկզուր առոնն ճահճագի՛),
Կարծում է՝ հունն է հոտած:
Եվ հակառակն է լինում.
Ի՞նչ ես ուզում խեղճ թխսից՝
Առողջ ճտեր ո՞նց հանի,
Թե տակի ձուն է հոտած:

Ա՛խ, արդեն ականջ է ծակում
Այս անվերջ զնգոցն ու զանգը,—
Լավ հրգը կրկնել տուր անվերջ՝
Կցնդի նախկին հուզանքը:
Թե ջուրը նույն ակն է ծեծում՝
Լճակ է և կամ ճահիճ է,—
Մաքո՛ւր ջուր, հոտած ջուր չկա,
Գործում է միայն հոտածնքը:

Եթե ասեմ՝
Բոց կլինի,
Եթե շասեմ՝
Խոց կլինի...
Ինքդ ասա.
Ես ի՞նչ անեմ,
Բա իմ բանը
Ո՞նց կլինի:

Թե ինձ այրեց
արտասուքը,
Ինչի՞ս է պետք
էլ քո շուքը:
Մարդ է մեռնում
քո երեսից,
Ինչի՞ս է քո
սե ու սուգը...

Մի ամի՞ս է, թե՞ մի տարի,
թե՞ մի դար
Այն օրվանից, ինչ այս գոհից
չմտար,
Շեմքին կանգնած՝ այդ ի՞նչ բառ էր
ասացիր:
Մոռացել եմ — մի ամի՞ս է՞,
այլ մի դա՛ր:

Դո՛ւ ես ձգում,
Այնինչ ես եմ կտրրվում,
Դո՛ւ բռնքվում,
Այնինչ ես եմ փետրրվում:
Ի՞նչ էլ անեմ, ի՞նչ էլ շանեմ,
Ա՛յ քեզ բան,
Կուժն ու կուլան
Իմ գլխին են կտրրվում:

Հովիտը ինքս ավեցի,
Խլեցիր և սարավանդը.
Քեզ քիչ էր այս այրող սերը,
Վառեցիր և կիզող խանդը:
Ուզեցի, որ հավետ կապվենք,
Որ սիրով խայտանք ու ծփանք,
Դու կապը գարձրրիր կապանք
Եվ աուն կոչեցիր... այս բանտը:

Թե ինձ համար ինչ է պահված՝
Ինքս էլ կարգին չգիտեմ...
Հազար գետից թռել — անցել,
Կանգ եմ առել մեկի դեմ,
Կանգ եմ առել, շեմ հասկանում.
Թրջվելո՞ւց եմ սարսափում,
Թե՞ ինձ ոչինչ չի գրավում
Ու չի ձգում այն ափում:



Նույն հին վանքն է,
Բայց այլևս սուրբ չի թվում այս վանքը:
Նույն լեզվակն է,
Բայց մի տեսակ կեղծ է հնչում այս զանգը:
Հանգը տեղը, վանկը տեղը՝
Ոտանավոր է կարծես,
Նույնիսկ վաղուց անգիր գիտես,
Բայց... կորել է հուզանքը:



Իմ սրտի սյունը
Տեղից խախտել են...
Իմ տան սրբերը
Ո՞ւր են — գաղթել են...
Փառք ու հաղթանակ
Իզո՞ւր մաղթեցին, —
Զգիտեմ՝ ովքեր,
Բայց ինձ հաղթել են...



Մաղի մեջ
Զո՞ւր կմնա,
Պաղի մեջ
Հո՞ւր կմնա,
Այրում են
Թե անկրակ,
Էլ մոխիր,
Մո՞ւր կմնա:



Ես բռնել ուզեցի,
Եվ դու պուկ տվեցիր,
Ես արև ուզեցի,
Եվ դու շուք տվեցիր:
Իսկ հենց որ՝ դառնացած՝
Ուզեցի արտասուք,
Արցունքը շատ էր քի՞չ,
Որ և սուգ տվեցիր:



Տանը լինեմ, լինեմ մայթում՝
Քո ծիծաղն է դեմքիս ցայտում,
Քո ժպիտն է ամեն կողմից
Արևի պես ճառագայթում:
Ազատ զգամ, զգամ գերված,—
Միևնույնն է, սիրաբու իրձն
Միշտ զգում է ինչ-որ անտես
Որոգայթո՞ւմ, որոգայթո՞ւմ:



Հիմար ժպիտով
Մածկում եմ վերքըս—
Ներսից սև-սև է,
Դրսից է ներկըս...
Ինքս ո՞նց դառնամ
Հերիաթի տղան
Եվ ինձ ո՞նց ասեմ.
— Արքա՛, դու մե՛րկ ես...



Աչք մտնողը աչքի ընկավ՝
Աչք կհանի...
Աչքալույս տաս՝ աչքի լույսն ես—
Աչքով կանի.
Աչքիդ շքնկավ՝ աչքի փուշն ես—
Այնուհետե՛
Քեզ նայելու աչք էլ չունի
Զորսաչքանին:

1958 թ., մայրս
Մոսկվա

Ա՛Ն, ՀԱՎԱՏԱՅԻՐ ԳՈՆԵ ԱՍՏԾՈՒՆ

Մեկ «հա»-եա ասում, մեկ ասում ես «չէ»-
Ու չեմ հասկանում՝ ո՞ր խոսքիդ կառչեմ,
Ու չեմ հասկանում՝ գլուխըս առած
Ո՞ր սե—անտակը գնամ ու կորչեմ:

Ա՛խ, հավատայի՛ր գոնե աստրծուն,
Որ վրադ ազդեր առածը ծանոթ.
— Աստված «հա»-ն օրհնել,
Օրհնել է և «չէ»-ն,
Բայց անիծել է մեկտեղ «հա ու չէ»-ն...

[1956]

ԺԵՏՈՒՄ ԵՄ

Ասում են, թե առանց սիրո
Կարելի է մեկտեղ ապրել:
Ես ժխտում եմ.
Կարելի է շմահանա՛լ,
Ո՛չ թե ապրել:

Կժխտեի ես արևի՛ գոյությունն էլ,
Թե արևը շողշողար,
Այլ գրքերում անփայլ լողար
Ու գրքերում թաղվե՛ր միայն:

Կժխտեի ես տերևի՛ գոյությունն էլ,
Թե տերևը ծառի վրա ո՛չ թե շողար,
Այլ ածուխի շերտերի մեջ պեղվե՛ր միայն:

Կժխտեի ակներևի՛ գոյությունն էլ,
Ակներևը թե չերևար՝
Թե նա իբրև լավ ցանկություն
Զեղվե՛ր միայն:

Ես լա՛վ գիտեմ,
Թե ինչ բան է ցանկությունը.—

Ետ ես բերում անդարձ կորած մանկությունը,
Փոխարկում ես էժանության թանկությունը:
Մնանկության խեղդող ձեռքից
Ազատվում ես շտանալիք ժառանգությամբ.
Տնանկության բաց երկընթից

Դու զատվում ես ցնորական բնակությունք,
Աղմբկարար աշխատանքից
Շունչ ես քաշում մտացածին մենակությունք.
Բարակ մեջքս ես դու երազում,
Զա՛ղ աղջիկըս.
Երկու առողջ ոտք ես ուզում,
Կա՛ղ աղջիկըս.
Հավանաբար աչքն է հուզում
Քեզ, շղի՛կըս.
Տրորվող խո՛տ,
Դու ուզում ես անշուշտ լեզու.
Դու, մութ գիշե՛ր՝
Թեկուզ մի քիչ լույս ու լազուր...

Ես լա՛վ գիտեմ,
Թե ինչ բան է ցանկությունը:

Բայց ցանկությունք լոկ լիանալ,—
Ես ժխտում եմ:
Երազանքո՞վ լոկ հիանալ,—
Ես ժխտում եմ:

Ես ժխտում եմ, չեմ ընդունում,
Երբ ժխտում են խոսքո՞վ միայն,
Ո՛չ թե փորձով,
Ո՛չ թե գործով:

Ես ժխտում եմ՝ երբ չեն փնտրում
Առաջ տանող մի նոր համփա,
Այլ սպանում վերադարձով.
Տրբ լրջորեն հոխորտում են ու պարծենում
Ք՛չ պարզապես եղած ստացով,
Այլ պաշարով և ա՛յն չրի.
Յ՛ղ ա՛յն ձրի
էժան շոգու,

Որ չհալած ու գոլորշի դեռ չդառած
Այդ սառույցն է պարունակում...

Ինչպես որ դուք չեք հավատում
Միջնադարյան ոգիներին,
Գոյությունն եմ ես էլ ժխտում շոգիներին,
Եթե նրանք... դեռ սառույց են:

4, 8. VI. 57
Մոսկվա

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՄ

Հրաժարվում եմ նախ իմ իսկ ձեռքից,
եթե նա պիտի պոկի վիրակապ
Փակվել սկըսվող իւրրամուխ վերքից:

Հրաժարվում եմ օգնական զորքից,
Թե պիտի հետո նա շհեռանա
Իմ երկրի խորքից:

Հրաժարվում եմ ա՛յն միակ արկից,
որ պատերազմի ելք չի որոշում,
Այլ միայն տասնյակ մարդկանց է հոշում:

Ա՛յն միակ զարկից,
որ և հերիք է,
Որպեսզի կրկին նոր կյանք ստանա
Մարա Մելիքը:

Նաև ա՛յն բարկից,
Որ լոկ վառում է— չի տաքացրնում,
Եվ ոչ թե թրծում, այլ ճաքեցրնում:

Հրաժարվում եմ
Ինչից որ կուզեք՝
Նույնիսկ սեփական հպարտությունի՛ց:
Բայց ո՛չ թանկ նստող ճշմարտությունից:

Իսկ եթե հանկարծ անկարող լինեմ
— Չհրաժարվել ճշմարտությունից՝
Թե կուրծքս շուզի, որ իր վանդակին զնդակներ խրվեն,

Թե վիզըս շուզի պինդ օղակի մեջ մի կողքի ծովել,
Թե մեջքըս շուզի մայր հողի վրա դիտապաստ փովել,—
տեսնելով, որ իմ կյանքը հատվում է՝
Իմացեք. ես է՛լ
Այդ պահին կասեմ.
— «Բայց այսուհանդերձ... նա պտըտվո՞ւմ է»...

Յ. Վ. 57

Մոսկվա

ՎԱԽԵՆՈՒՄ—ՍԱՐԱԱՓՈՒՄ ԵՄ

Վախենում եմ շատ բաներից,
Ամեն տեսակ վատ բաներից:

Ինչպես մանուկն է վախենում
Գիշերային ավեր վանքից՝
Վախենում եմ ես էլ արդի
Կեղծ ֆանատիկ-մոլեռանդի
կուրա՛չ ջանքից:

Ինչպես մանուկն է վախենում
Գերեզմանոց տանող ճամփից՝
Վախենում եմ ես իմ անվան,
Պատվի՛ համար՝
որքան անբիծ,
Նույնքան նաև շպաշտպանված
Զրպարտության թուխս ու ամպից...

Վախենում եմ
Մին մտքերի ճարճատումից,
Հին մտքերի աղճատումից,
Նոր մտքերի կրճատումից:

Վախենում եմ
Մերժված կնոջ ահեղ բենից,
Խարխուլ պատի խաղաղ շուքում
Հոգնած մանկան անմեղ բնից:

Վախենում եմ ես թույլերի՛ց.
Այդ նրանք են ամենից շատ

Ստորություն անում կյանքում...
Վախենում եմ ես ծուլերի՛ց.
Այդ նրանք են ամենից շատ
Հոգնածորեն ծանրը տնքում...

Եվ աստղային ա՛յն բույլերից,
Որ խաբում են ճամփորդներին՝
Շփոթեցնում հյուսիս-հարավ...

Եվ տակը ծակ ա՛յն դուլլերից,
ո՛ր խաբում են ճամփորդներին՝
Զրհորի մոտ թողնում ծարավ...

Վախենում եմ ես շատ բանից,
Սարսափում եմ շատ... քի՛չ բանից:

«Խոսքն է եղել սկզբբանից...»
Իսկ թե հանկարծ մի անբանից
Հըրաման գա՛
Մինչև անգամ

Վերցնել մարդկանց լեզվի՛ց զրկել—
Ո՛չ թե մարդկանց քիմքին կպած
Այն մի կտոր միսը պոկել,
Այլ բերա՛նք ամուր փակել...

Դժբախտ մարդ է անշուշտ կաղը:
Բայց ի՛նչ արժե և կաղության
Աներնական ծանրը խաղը՝
Երբ կաղություն պիտի խաղաս,
Սուտ-սուտ լնգաս, բռնի կաղաս...
Դեռ կա ուրի՛շ զարհուրանք էլ—
Երբ մինչև իսկ երազա՛նքը
Սենյակի պես կտան վարձով,

Հոգեփրկիչ թղթի նման
Կվաճառեն կյանքում նորից...

— Սարսափում եմ վերադարձող
Քաղաքակիրթ միջնադարից...

Ց. Գ. ՎԻ. 57

Մուկլա

ՔՐՏՆՈՒՄ ԵՄ

Ես քրտնում եմ՝
Ինչպես որ նա, ինչպես որ դու.
Այստեղ մեր մեջ՝ արդեն ո՛չ մի տարբերություն:

Ես քրտնում եմ
Տաք քրտինքով՝
Տապի՛ց,
Տոթի՛ց.

Պաղ քրտինքով՝
Ե՛վ սարսափից,
Ե՛վ ամոթից:

Ես քրտնում եմ և ամոթից,
Երբ ես կուշտ եմ, դու՝ անոթի,
Երբ ես՝ սխալ, իսկ դու ճիշտ ես,
Երբ կարծեցյալ ծանրը վիշտըս
Քո վշտի դեմ լոկ փետուր է.
Մինչ կաթում է իմ կտուրը՝
Տանիք շունի տունըդ մի՛շտ էլ:

Տաք քրտինքն է հոգիս պատում,
Երբ ինձպեսին ինքս եմ դատում:

Ամաչում եմ իմ անտեղի կոշտութունից,
Իմ պատճառով խիստ խորացած գժտութունից,
Դիտավորյալ, ոչ թե անկեղծ հաշտութունից:
Ամաչում եմ ու քրտնում եմ այն ժամ նաև,
Երբ— լինում է— սիրտ չեմ անում
Իմ իսկ սրտի խորքը նայել,
Նայել— և ի՛նչ՝

Հանկարծ զգալ:

Որ չեմ սիրում, այլ խաղում եմ,

Որ չեմ աղում, այլ մաղում եմ,

Որ չեմ ատում, այլ պարզապես նախանձում եմ,

Եվ շոյում է մեղք գործածի թախանձումը,

Ու ստում եմ, թե իբրը ես հավատում եմ,

Չե՛մ հավատում — հավատացող ձևանո՛ւմ եմ...

Սակայն կյանքում շա՛տ ավելի ես քրտնում եմ ուրիշի՛ տեղ,

Թեպետ գուցե չի երևում իմ քրտինքի աղի շիթը:

Ուրիշի՛ տեղ,

Երբ որ մի բան մտածում եմ,

Բայց ասում եմ բոլորովին ուրի՛շ մի բան

Եվ չեմ զգում, որ այդպես է հասնում ահա

Ա՛յն դանակի բթացումը,

Որով մարդիկ այգու նման կյանքն են էտում:

Ուրիշի՛ տեղ,

Երբ նրանք չե՛ն կշռադատում —

Կատարում են լոկ հրաման,

Ասես ուսին զլո՛ւս շունեն,

Այլ շուռ տված մի ջրամա՛ն...

Ես քրտնում եմ ուրիշի՛ տեղ,

Երբ որ նրանք իրենց ուժը...

Բայց այս մասին՝ ուրի՛շ անգամ, —

Չէ՞ որ ինձ պես անզգույշը...

Իմ այս վախկոտ-զգուշավոր մտքի համար՝

Ես քրտնում եմ նաև հիմա

Եվ մտածում,

Թե ինչի՞ց է քրտնում մարդը:

Ի՞նչ եք կարծում:

Ինձ թվում է՝

Ա՛յն պատճառով

Եվ այնժամ է քրտնում մարդը,

Երբ որ օղբ պակասում է:

Ձեզ թվում է,

Թե ամոթի կամ սարսափի զգացումը

Իմ ասածին հակասո՞ւմ է...

4, 17. ՄԼ. 57

Մոսկվա

ՀԻՄԱՐԱԲԱՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ

Հիմարարար խոստովանեմ և այն, որ ես...

Ես էլ ձեզ պես մարդ եմ ծակաչք:

Անտեր աչքքս՝

Թեկուզ փակած,

Զի՛ կշտանում—

Ու տանջում է

Եվ գլխիս դեմ սիրտս հաճախ

Ըմբոստանում՝

Պահանջում է

Օտար այգուց վարդ ու կակաչ,

Ուրիշների փոխք՝ տաք հաց:

Մուռ է նայում օտար կնոջ,

Թե իմն անգամ լինի հնոց,

Իսկ նա՝ նույնիսկ ցրտից ճաքած...

Հիմա՛ր մարդն է այսքան անկեղծ խոստովանում,

Թե՛ խելոքն է ունեցածով միշտ գոհանում...

20. ՄԼ. 57

Մոսկվա

ՆԵՐՈՒՄ ԵՄ

Ես չե՛մ հարգում, ճի՛շտ հասկացեք,

Ես չե՛մ հարգում,

Բայց ներում եմ ջահելներին՝

Երբ զուր տեղը կռիվներ են նրանք սարքում—

Մեղավոր է հորդող ուժի ավելցուկը:

Ես չե՛մ հարգում, ճի՛շտ հասկացեք,

Ես չե՛մ հարգում,

Բայց ներում եմ ահելներին՝

Երբ ասում են շատ լրջորեն,

Հետն էլ տնջում:

— Բա սա ձո՛ւկ է: Մեր ժամանակ լա՛վ էր ձուկը...

Ես ներում եմ

Օտար երկրում լիազորված հայրենասեր այն դեսպանին,

Որ հայրենիք տանող ճամփա չի հարցրելում՝

Իմանալով, որ իր դժբախտ հայրենիքում վիշապացի

Ու խժուռ է բռնակալի դեռ երեկվա բարակ օձը:

Այսպես՝ նաև ես ներում եմ ինքնասպանին,

Թե մի քնած ժողովուրդ է արթնացրելում

Նրա միակ կրակոցը...

Ու ներում եմ գլխացավը՝

Թե ծագում է տարիքն առած կուսությունից,

Գլխացավանքն անակրեկալ՝

Թե գալիս է հաշող շանցած քսությունից:

Եվ այն ցավը,

Որ արդյունք է սիրո անուշ հիվանդության,

Եվ այն հիվանդ սովորությամբ,
Որ ծնունդ է ավանդութան:

Թող որ ներվի
Նաև սուտը անմեղունակ,
Ամեն կուպիտ անմեղ հանաք,
Ամեն ամպ օր ու եղանակ:

Եկեք նաև մի՛ նեղանաք,
Քի սիրում են՝ ցույց չին ապլիս:
Բայց մի՛ նեղեք:
Քի ցույց տալիս, բայց չին սփրում:

Եկեք նաև նրա՛ն ներենք,
Ով լուում է հարկադրված,
Սակայն գոնե փրկվում է:
Բայց ոչ նրան,
Ով դավում է
Սի՛ ցավում է՝ հարկադրված...

Ես չներե՞մ երեխեքին, եթե նրանք
Եվ թանկարժեք իր են կոտրում,—
Թող սպառնան մինչև անգամ և լուանյակի՛ն:
Ես կներեմ ամե՛ն տեսակ ձեռնածուքյուն ու հնապանք,
Եթե նրանք
Երեխայի սրտաճմլիկ լացն են կտրում,
Երեխայի լացն են կտրում, բայց ոչ խաբում՝
Դավաճանված եղջյուրակիր ամուսնյակին...
Երբ ենք ներում կամ չենք ներում,
Հասկանո՞ւմ եք:

Մենք ներում ենք
Ամե՛ն անգամ
Ու լոկ այնքա՛ն,
Որքանով, որ կատարվածը հասկանում ենք:

29. V. 57
10. VI. 57
21. XI. 57
Մուկվա

ՄԵՂԱՆՉԵԼ—ՋՂՋՈՒՄ ԵՄ

Պատահել է, որ չեմ սիրել,
Բայց, չգիտեմ՝ ինչի՞ համար,
Չեմ զլացել անսեր տիրել.
Գրկել եմ կամ համբուրել եմ:
Չեմ ընդունել սրտիս խորքում,
Սակայն լռել-համբերել եմ:

Ես շատ հաճախ ա՛յն չեմ տվել,—
Մեղանշել եմ,— կարո՞ղ էի.
Ու շատ հաճախ ցած եմ թևել,
Իսկ վեր թևել կարո՞ղ էի:
Եվ փախուստ եմ ինձնից տվել՝
Ուրիշ տեղ եմ իզուր չվել—
Օտա՛ր ոլորտ՝ օտա՛ր թևով,
Մինչդեռ մնալ կարո՞ղ էի,
Կարո՞ղ էի և — պարտավո՛ր:

Մեղավոր եմ հույսի համար,—
Չարդարացա՛վ՝
Ո՛չ իմ մեղքով.
Եվ կենդանի ա՛յն հավատի,
Որ քարացա՛վ՝
Ո՛չ իմ մեղքով.
Եվ ա՛յն բարի սրտի համար.
Որ շարացա՛վ՝
Ո՛չ իմ մեղքով:
Մեղանշել եմ
Եվ ա՛յն ըմբոստ երգի առաջ,

Որ խոհեմըս պատահեցի.
Ա՛յն խոհերի մահվան համար,
Որոնց ծինը խաթարեցի.
Մեղավոր եմ և քո՛ առաջ,
Որ... սիրելուց դադարեցի,
Եվ ա՛յն ներման, որ բռնությամբ
Իմ լայն սրտից վտարեցի...

Իսկ ճիշտն ասած՝
Ընդհանրապես մեղա գալու քի՛չ բան ունեմ...

4. VI և 27. XI. 57
Մոսկվա

ԽՆԱՅՈՒՄ ԵՄ

Խնայում եմ ո՛չ թե սերըս, ճի՛շտ հասկացիր:
Խնայում եմ քո նոր զարթնած սի՛րտը միայն
Տարիքն առած ինձ պես մեկի խելառ սիրուց,
Ինչպես որ հին-նստած գինուց,
Անփորձները շուտ են հարբում
Եվ շատ ուշ են ուշքի գալիս...

Խնայում եմ միակ հույսըս,
Ինչպես նաև պառավ մորթս,
Թե չէ, գիտե՛ք, մե՛կ էլ տեսար՝
Ինչ-որ հոգնած մի վայրկյանի,
Վերջ տվեցի հիմար կյանքիս...

Թե չեմ ասում,
Որ մեր տնկած խնձորենին ուրի դարձավ,
Արդյոք ո՞ւմ եմ ես խնայում.
Մե՞զ՝ խեղճերիս,
Թե՞ ուռենին...

Թե չեմ ասում,
Որ հատակին թափված յուղը
էլ ո՛չ մի կերպ ճաշ չի դառնա,
Ո՞ւմ եմ արդյոք ես խնայում.
Պարզ է, որ մե՞զ,
Ո՛չ թե յուղը...

Խնայում եմ ես ոչ այնքան ձեր ակա՛նջը,
Որքան ա՛լքըր.

Թե չէ, գիտե՛ք,
Ձեզ բոլորիդ այն ցույց կտամ,
Ինչ ես վաղուց նկատում եմ...
Խնայում եմ
Ու—ծալում եմ ցուցամատրս...

Ց. XII. 57

Մասկա

ԱՂՄԿՈՒՄ ԵՄ

Այս ամենը արդյոք ի՞նչ է.
Խեղճի նվոց ու ճոխ՞նչ է,
Թե՞ մի ճիշ է
Ու մորմոքում
Հզոր հոգու

Եվ գալիքի աչքում ի՞նչ եմ.
Ճո՞րտ եմ արդյոք,
Թե՞ ազատ եմ,
Հարազա՞տ եմ
Թե՞ լոկ բիճ եմ:
Կենդանաշատ մի հատա՞կ եմ,
Թե՞ լոկ այնտեղ ննչող խիճ եմ,
Կախարդում եմ ու մոգո՞ւմ եմ,
Թե՞... պարզապես աղմբկում եմ:

Եվ իրար հետ դաշնակի՞ց են,
Թե՞ թշնամի գույգ բանակ են
Իմ մեջ քանակն ու որակը:
Եվ ապագա ինչ-որ ժամի
Ես՝ գազանբոս,
Ես՝ վազանբոս,
Չե՞մ շորորա ու չե՞մ քայլի հենափայտով:

Սա

Ո՞չ աղքատ ձևանալ է,
Ոչ հանաք է.
Հանրահաշվի մի խնդիր է՝ գույգ անհայտով,
Որ կարող է լուծել միայն ժամանակը:

Իսկ առայժրմ աղմբկում եմ,
Ինչպես ջուրը,
Որը ի՞նչ է.
Մո՞վ է,
Լի՞ճ է,
Թե՞ ճահիճ է.
Տա՞ք է,
Պղտո՞ր,
Պաղ ու ջի՞նջ է:—
Վերջին հաշվով ջրի համար
Միևնույնն է կամ ոչինչ է.
Նա հոսում է
Ու խոսում է՝
Իր սեփական ձայնը բնա՞վ շխելով,
Ո՞չ ցավ զգում,
Ո՞չ էլ սգում՝
Իր գեղեցիկ մահը բնա՞վ շափստալով...
.

Իսկ առայժրմ աղմբկում եմ.
— Գոնե լսե՛ք...

13. XI. 57
Մոսկվա

Մեր կարոտի՛, մորմոքների՛, մահերի՛,
Ուրախության, սիրո, հույսի՛
Ամեն տեսակ պահերի
Վառված խոսքն է այս բերանին միշտ թառել:
Այս բերանն է վաղակատա՛ր,
անկատա՛ր
և ապանի՛

Ամեն տեսակ բայերի
Խոնարհումը հույս-հավատով կատարել...

Իսկ ճակատը...

Քո ճակատը

Մազաղաթի հին պատառիկ է ասես,
Մարմարոնյա մի ափ բեկոր-հուշարձան,
Կեհրոնեքրդ՝ հնադարյան Գին խաղեր՝
Քեզնից առաջ-քեզնից հետո անվերժան:

Քո ճակատը...

Սրբի ճակատ և հերոսի ասպարեզ,
Հարսանքատան ուրախ տանիք,
Ուր հնչում են նազպարեր:
Քո ճակատը՝
Քրտնող մշակ ու գիտունի զինարան,
Մասունքների խորունկ խորան
Եվ ճգնողի մենարան:

Քո ճակատը՝

Համբուրելի սուրբ խաչքար,
Թոնրի տաք խուփ
Եվ գեղջուկի թեղած կալ...

Եվ ականջը...

Քո ականջը՝

Մեղեդու գեմ՝ դրոնբաց,
Աղմուկի գեմ՝ միշտ կայուն.
Մեր նունուֆար ծաղկի պես
Բացվող — փակվող՝ զգայուն...

Քո ականջը՝
Կախարդական ձայնամաղ,
Եվ դրանով դու մեր հոգին,
Մեր դարերը մաղեցիր,
Թեփ-ժխորը անշատելով թողեցիր,
Իսկ մեղեդին՝
Նմո՛ւշ-նմո՛ւշ, մատնընտի՛ր,
Քո տաք հույզով ցողեցիր,
Անտակ հույսով հողեցիր,
Որ մենք քաղենք մեկին տաս:

Քո ականջը, Կոմիտա՛ս,

Քո ականջը՝

Պատարազվող եկեղեցի՛ սրբազան.

Քո ականջը՝

Շքեղ խեցի՛ ձայնալուր...

Ինչ վսեմ էր ու գեղեցիկ հայաբար,
Թե շարքերը խոր թաղեցին մինչևիսկ,
Աստծու նման դու պեղեցիր մեր հոգում,
Ինչ պեղեցիր ու զեղեցիր աշխարհում...
Անթեղեցիր դու մեր հուրը ցիրուցան,
Կանթեղեցիր մեր կրակը մթան մեջ...
Ինչ խեղեցին օտարները դարեդար՝
Դարմանեցիր ու դեղեցիր հրաշքով...
Թե նեղեցին ու շեղեցին մեր ուղուց՝
Ուղիղ ճամփի դո՛ւ մղեցիր մեզ անվերջ...
Դո՛ւ դարավոր երգի ցանքը քաղեցիր,
Մեր ծով բերքը դո՛ւ թեղեցիր մեր սրտում
Ու թխեցիր՝ հա՛ց դարձրիր հոգևոր...

Քո ականջը, Կոմիտա՛ս,

Քո ականջը — մագնիսի պես —

Եղանակ էր հավաքում:

Ինչ ականջըդ հավաքում՝

Մատնեղ էին նվագում:

Քո մատնե՛րը...

Քո մատնե՛րը՝
Դարմանի մեջ սարսուռ ցորեն շոկշկող,
Կարճատես ու թույլ աչքերից
Վարագույր ու փառ պոկող,
Մթնած մտքի ու փակ հոգու դուռ թակող,
Տնավերին ու պանդուխտին ողորդող,
Սիրած յարին սիրած յարից
Զատողի դեմ բողբոջող,
Ցավ ու կսկիծ ամոքող,
Սեր ու կարոտ նվաղող,
 Բեկված շողեր,
 Վճիտ ցողեր,
 Սրտի զաղեր
 Ու դողեր,
Գեղգեղանքի թրթիռներ,
Նլեկչի հրթիռներ, —
 Հոսուն բոցեր
Ու տաք մոխիր հավաքող...

Քո մատները, կոմիտու՛ս,
Վառվող ծոցին՝ զովարար,
Խորունկ խոցին՝ դեղատուր,
Լաց ու կոծին՝ սփռիանք,
Մանկան ճոճին՝ օրորում:

Քո մատների զարկի տակ
Մեր սրտերը՝ պաղ ստեղ,
Մեր սրտերը՝ անզիտակ,
Քո մատները՝ տաղաստեղծ:

Քո մատները՝ երգահան,
Տանահատո՛ր երգարան...

12, 15. IX. 57

Մոսկվա

ԱՄԵՆՔԸ ԻՐԵՆՅ ԲԱԽՏԻՅ ԵՆ ԴԺԳՈՂ

Ամենքը իրենց
Բախտից են դժգոհ
Եվ ոչ թե խելքից:

Իսկ ես, տե՛ր աստված,
Կրակն եմ ընկել
Իմ խելքի ձևագից:

Խելք ունենայի՛
Վաղուց էի ես
Կարգին մարդ գարձել —

Ես կարող էի
Սենյակ տալ վարձով,
Եվ ոչ թե վարձել:

Խելք ունենայի՛
Ինչ հարկավոր է,
Ես այն կանեի:

Եթե հաստ է պետք՝
Բարակըս որն է,
Հաստ կմանեի:

Խելք ունենայի՛
Ինչ հարկավոր է,
Ես այն կերգեի:

Տեղն ընկած տեղը
Տեղի կտայի,
Ինձ կըհերքեսի,

Ու կլինեսի
Ոչ դեմ, ոչ էլ թեր,
Այլ ոսկե միջին:

Գլուխը քարը:
Թող էժան լիներ,
Միայն... շատերին
Գեղեցիկ թվար:

Հերն էլ անիծած.
Թող ներկված լինի,
Միայն թե դուր գա,
Խարվեն-հավանեն:

Գրողի ծոցը.
Թող որ սուտ լինի,
Միայն թե կույր-կույր
Պաշտեն-դավանեն...

... Ում էլ հարցընես՝
Խելքից չէ դժգոհ,
Այլ միայն բախտից:

Անաստված աստված,
Ինչու ես տվել
Անխելքի բախտ ինձ...

8. V. 58
Մասկվա

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ՈՒՐՎԱՆԿԱՐ

Գարո՛ւն է գալիս,
Գարո՛ւն է գալիս...
Ուզո՛ւմ եք՝
Հանեմ

Մայթերի վրա
Թանկ գին պահանջող
Մի փունջ մանուշակ:

Ուզո՛ւմ եք՝
Հիշեմ
Միծեռնակներին
Ու կոշեմ նրանց
Գարնան հին գուշակ:

Ուզո՛ւմ եք՝
բերեմ
Մի տաքուկ քամի,
Որ վերջին պաղ ձյան
Հոգին էլ հանի,

Ու հետն էլ փռեմ
Մայթերի վրա
Գարուն ավետող
Առաջին փոշին:

Իսկ ես տեսնում եմ,
Որ աղբամանից

Քիթն է դուրս հանել
Մի կրկնակոշիկ—

Կողքերին՝ շոր ցեխ,
Իսկ Քիթը՝ դեռ թաց,
Ասես արցունքոտ,
Ցաված ու արտում,

Որ երախտամոռ
Մի մարդ արարած
Զի՛ էլ սպասել
Գեթ հասնի իր տուն.

Նրան լքելու
Նոր տեղ է գտել՝
Հանել փողոցում,
Այստեղ է նետել:

Եվ աղբամանից
Քիթը դուրս հանած՝
Նա միտք է անում
Եվ անձայն լալիս...

Ասֆալտով պատված
Հսկա քաղաքով—
Արդ հավատացի՞ք—
Գարունն է գալիս:

Գարունն է քայլում՝
Հանելով փոշի,
Գարունն է քայլում՝
Անկրկնակոշիկ...

2. 111. 59
Մուկվա

ՀԱՅՍՍՏԱՆ

Այստեղ ամեն ինչ ներկված է այնպես
վառվրոտ՝ն, ներհա՛կ ու թա՛վ գույներով.
Ասես պարզունակ նկար է մանկան:

Սակայն,
Աստված իմ,
Նո՛ւյն այդ աշխարհում
Որքա՛ն բարդություն ու խրթին բան կա...

18. IV. 59
Մուկվա



Մինչև անգամ մեր ձկները՝
 Մեր սևանյան կարմրախա՛յտը,
 Մեր իշխա՛նը,
 Մեր բախտա՛կը,
 Կաթիլներն են կրում կարծես
 Մեր դարավոր առատ արյան,
 Որ հեղվել է,
 Հեղեղվել է
 Ու ներծծվել Հայոց երկրում:
 Եվ մեր ջուրը բազմադարյան,
 Որ դարավոր մեր խղճի պես
 Անապակ է
 Ու հստակ է,
 Այդ բծերը լվանո՛ւմ է,
 Լվանո՛ւմ է
 Ու... չի մաքրում:

19. IV. 59
 Մոսկվա



Անտա՛ոն է արդյոք
 Իմ կրծքով շնչում,
 Թե՞ ես եմ կորչում
 Անտառի շնչում,
 Անտառի շնչում
 Ամենածավա՛լ:

Սակայն այս հարցով
 Ես ինձ չեմ տանջում:
 Եվ արժե՞ միթե,
 Երբ գիտեմ, որ ես
 Կարող եմ հիմա
 Կոճղի պես լռել,
 Քամու պես հեալ,
 Մտի պես ծվալ,
 Թփերի նման
 Մեղմիկ սվսվալ.
 Անտառի նման՝
 Շաչի՛լ,
 Շառաչի՛լ,
 Անտառի նման՝
 Տնքա՛լ, հառաչի՛լ.
 Անտառի նման՝
 Ահեղ բարկանա՛լ.
 Ու թե մերկանա՛լ՝
 Տերևաթափից—
 Անտառի նման
 Երբեք շամաչել...

23. IV. 59
 Մոսկվա

ՀՈԳԵԱՆՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մտե՛ր ու ծտե՛ր—
Մտե՛ր հնացած,
Մտե՛ր նորացած,
Նորակա՛զմ ծտեր,—

Եվ հողն է թվում
Քիչ առաջ հանգած հսկա վառարան:

Ով մանկությունից
Հազվագյուտ խոսքի որսորդ է դարձել,
Հիմա՝
Անտառում անխոս ման գալիս,
Մի՞թե մի վայրկյան չի կարող կարծել,
Թե շուտ է տալիս
Մի յուրատեսակ հսկա բառարան:

Բառեր ու բառեր—
Բառեր հնացած,
Բառեր նորացած,
Նորակազմ բառեր...

29. IV. 59
Մոսկվա

ԵՐԳՈՂ ՆՅՈՒԹԸ

Եվ ի՞նչ ես դու
Զարմանալի՛ երևույթ ես...

Երբ չես երգում՝
Եթե անգամ
Մարմարակերտ աշուն ու մույթ ես՝
Ուաիդ չկա
Կամա՛ր, ճակա՛տ.
Փլատակված սարսուղույթ ես:

Զարմանալի՛ երևույթ ես:

Երբ չես երգում՝
Լոկ շնչելու,
Կամ մնջելու,
Լոկ տանջվելու,
Կամ տանջելու,
Սովորական սովորույթ ես:

Հե՛նց երգեցիր՝
Նույնն ես կարծես,
Բայց կայնպես տեղն ու տեղը
Մի՛շտ նորույթ ես:

Երբ չես երգում՝
Ոտեր առած մի ճանճրույթ ես,
Միս-ոսկորի քայլող կույտ ես,
Եվ ո՛չ խեժ ես,
Ո՛չ ավիշ ես.

Քո իսկ հոգուն կպած ձյութ ես:

Հե՛նց երգեցիր՝

Դու ուրի՛շ ես.

Միանգամի՛ց գեղեցկացած,

Ո՛չ թե մարդ ես,

Այլ կախա՛րդ ես,

Մո՛գ ես,

Դյո՛ւթ ես:

Հենց երգեցիր՝

Ասեն-չասեն,

Ուզեն-չուզեն՝

Քո՛ղ որ փոքրը,

Բայցեայնպես դարձյալ գյուտ ես...

Դու պարզապես... երգող նյութ ես,

Երգող նյութ ես...

24. IV. 59

Մոսկվա

ՉՀԱՆՎՈՂ ԿԱՐԿՈՒՑ

Շոգ է այնպե՛ս,

Եվ այնպես տա՛ք,

Այնպե՛ս,

Կարծես

Կանաչ գույնի

Հուր է ծփում

Ոտներիդ տակ:

Արև: Կեսօր:

Տապ ահարկու:

Եվ թփի տակ՝

Մի բուռ կարկուտ,

Որ չի հավում,

Թեպետ անգութ

Արև է, տաք,

Տոթ ահարկու:

Արևկող են իրենց տվել

Ճերմա՛կ-ճերմա՛կ մի բուռ ձվեր:

Ու երբ պետք է՝

Սարյակի տեղ

Նրանց վրա նստում է թուխս

Բարի թփի ստվերը թուխ...

24. IV. 59

Մոսկվա

ՀՈՂԸ ՀԱՅՅԵԼԻ

Ձեզ հող թվացող այս հողը համայն
կարծես ինձ համար
Դարձել է հիմա
Ամալգամից զուրկ — նո՛ր մի հայելի,
Որին նայելիս
Տեսնում եմ այնտեղ
Գլխիվայր շրջված — շուռ եկած անտառ —
Եվ ամեն մի ծառ
Մի ծառ չէ կարծես,
Այլ ծառ է երկո՛ւ.
Մառ կոչված մի գունդ հողին է բազմած,
Իսկ արմատների կազմած այլ մի գունդ՝
Հողի մեջ սուզված —
Նույնքա՛ն ճյուղավոր,
Որքան ճյուղ ունի նույն ինքը ծառը...

Ու պարզ է թվում ամեն ինչ հիմա:
Մի՛ հարց է, որ գեռ պարզ չէ ինձ համար.
— Այս արմատնե՞րն են
Խոտ ու ծառերի անդրադարձումը,
Թե՞ արմատների անդրադարձումն են
Խոտ ու ծառերը...

1. V. 59
Մոսկվա

ՊԱՏՐԱՆՔ

Ուտելուց առաջ նայում եմ մի պահ
(Խորհուրդ եմ տալիս, որ դու էլ նայես).

Մեջտեղից կիսված խնձորի վրտ,
Ինչպե՞ս որ Փրկի՞ Կիսազրնդերին,
Լեռնաշղթանե՛ր կան յուրատեսակի,
Քարափնե՛ր ու վի՛հ,
Մովե՛ր ու ծոցե՛ր
Եվ, դժբախտաբար, սահմանազրծե՛ր...

14. X. 59
Չանախի

ԵՐԿՈՒ ՄԻՐՈ ԱՐԱՆՔՈՒՄ

Մի անինքնասեր տգեղ կնոջ պես
Սիրահարվել է ինձ տխրությունը,
Որին շեմ սիրում,
Եվ այդ պատճառով
Նա իր հագուստն ու անունն է փոխում—
Մերթ՝ կոչվում թախիծ,
Մերթ՝ կարոտ,
Մերթ՝ վիշտ,
Ցավ կամ տրտմություն:
Հետապնդում է
Ու չի հասկանում,
Որ մենք շենք սիրում հետապնդողին,
Որ մենք սիրում ենք ու գերվում նրան,
Ում դուր շենք գալիս:
Ես էլ իմ հերթին
Իմ ամբողջ կյանքում
Հետապնդում եմ ուրիշին՝
Նրա՛ն,
Որ նույնպես, դիտմամբ,
Անունն է փոխում—
Այն հույսով գուցե,
Թե մոլորվելով՝
Հետքն իր կրկորցնեմ—
Մեկ խնդություն է անվանում իրեն,
Մեկ՝ ուրախություն,
Կայտառություն է
Կամ պայծառություն:
Հետապնդում եմ

Ու չե՛մ զաղարի,
Մինչև նա, անո՛ւժ,
Մինչև նա, տրվա՛ծ,
Ինձ շասի.
«Քոնն եմ»:

Վկան՝

Ա՛յն կանայք,
Որոնց ոչ անունն ու ոչ էլ հասցեն
Նշել չեմ կարող...

19. XII. 59

Քիֆիս

ԻՆՁ Ո՛Վ Է ԱՐԴՅՈՔ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ

Ինձ ո՛վ է արգելք հավանափորում,
Ո՞րն է իմ աստղը,—
Շատ եմ միտք արել:

Հավանական է՝
Այն Սիրիուսը,
Որ Տիեզերքում
Տեղաշարժվում է ծուռ ու մուռ ծիրով,
Ոլո՞ր ու մոլո՞ր,
Սակայն մնում է միշտ հավատարիմ
Իր անցած ճամփին.
Նույնն է կրկընում...

19. XII. 59
Քիֆլես

ՈՒ ԵԹԵ ՀԱՅՐ ԵՄ...

Ու եթե հայր եմ ամենից առաջ,
Ինչպե՞ս շխտսեմ զավակներիս հետ,
Նրա՛նց հետ,
Ովքեր եկել են արդեն,
Առավել՝ նրա՛նց,
Ովքեր պիտի գան:
Հոգնած խրատից,
Քարոզից զզված՝
Ես հարգալից եմ նայում կտակին,
Թերևս—ո՛վ գիտի—լոկ այն պատճառով,
Որ դա արվում է կյանքում մե՛կ անգամ,
Ինչպես ես՝ հիմա:

Եվ այն, ինչ որ ես ուզում եմ ասել,
Գիտեմ շա՛տ վաղուց,
Եվ այնքա՛ն վաղուց,
Ինչքան շաբաթվա օրերը գիտեմ
Կամ ամիսների անունը:
Սակայն
Այսօր եմ ուզում և պիտի ասեմ,
Քանզի հույս ունեմ, թե այսօր դուք ինձ
Կարող եք լսել թեկուզ և այնպես,
Ինչպես լսում են անձրևի ձայնը,
Քամու հռինդը,
Աղմուկն անտառի—
Ուզած թե չուզած,
Կամա-ակամա...

19. XII. 59
Քիֆլես

ԻՄ ԿՏԱԿԸ

1.

Այս ահեղ դարը ինքը ինձ ծնեց
Եվ... քանի՜ անգամ կործանել ջանաց,
Բայց—կեցցե՛մ թող ես
Ու թող նա՛ կեցցե—
Չկարողացավ կործանել:

Ջանաց

Իր ա՛յն աչքաբաց բիճերի ձեռքով,
Որ նրա աչքի յուղն էին կերել
Եվ ուզում էին ինձ՝ հարազատիս,
Խորթ ցույց տալ նրան...

19. XII. 59

Քիֆիս

ԻՄ ԿՏԱԿԸ

2.

Ա՛խ, այդ բիճերը,
Որ ծեր են ծնվել...

Ջավա՛կըս,

Հիմա ես նրանց առաջ
Նույնիսկ, ազնի՛վ խոսք, ինձ վատ եմ զգում:
Ինձ վատ եմ զգում,
Որ շարացել եմ ես նրանց վրա,
Որ թշնամի եմ համարել նույնիսկ,
Մինչևիսկ ատել:

Սխալվել եմ ես:

Հիմա նրանցից

Շնորհակալ եմ, անկեղծ եմ ասում:

Շնորհակա՛լ եմ:

Չէ՞ որ ինձ համար

Լավ է, որ նրանք կան ու կլինեն:

Չէ՞ որ հենց նրանց ծերության ֆոնին

Ջահելությունն է շեշտվում-ընդգծվում:

Լավ է, որ կյանքում հաղթել են նրանք:

Լավ է, նույնքան էլ արդարացի է:

Ախար ամեն մեկն ունի իրավունք

Գոնե մի՛ անգամ իր կյանքում հաղթելու

Հերթը նրանցն է—

Թող հաղթեն այսօր,
Բայց չէ՞ որ վաղը դու ես հաղթելու
Կամ քեզ նմանը:

Եվ ճիշտ են, ճիշտ են բոլորն աշխարհում—
Քսո՛ւն, տխմա՛րը, խեղճը, սրիկա՛ն:
Կյանքում ամե՛ն մարդ,
Կյանքում ամե՛ն ինչ
Ունի իրավունք
Արդարացնելու իր գոյությա՛նը:

Եվ որտեղի՞ց բերք,
Թե պարարտանյութ չպիտի լինի:
Ի՞նչ ապաքինում,
Թե չի եղել ցավ,
Թե ախտ չի եղել:
Ի՞նչ վերածնունդ,
Եթե չի եղել մահացու դադար:

Երջանկությունն էլ չէ՞ որ հենց այն է,
Որ չկար երեկ և այսօր հասավ...

19. XII. 59

Քիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

3.

Երբ բարկացած եմ՝
Նրանց վանում եմ,
Բայց ինչպե՞ս պիտի վանվեն ինձանից,
Եթե ես հիմա այնտեղ եմ գնում,
Որտեղ գալու են և բոլոր նրա՛նք—
Իրե՛նց ստգերով,
Թե՞ որդիների, թոռան ստգերով,
Մի՞թե նույնը չէ:

19. XII. 59

Քիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

4.

Գնում եմ—
 Հպա՛րտ
 Եվ ինքնավստահ,
 Սակայն կա մի տեղ,
 Որտեղ — քա՛ջ գիտեմ—
 Խեղճանալու եմ ես ինքքս մի օր,
 Հենց որ քո գլխին ինձ դարձնեն մահակ,
 Խեղճանալու եմ—
 Եվ ո՛ր էր գոնե ուժեղի կողմից:

Խեղճանալու եմ... խեղճերի ձեռքով:

Եվ գիտե՞ս՝ ինչպե՛ս:

19. XII. 59
Քիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

5.

Ուժեղին հետո մահակ են սարքում:
 Ուժեղն ի՞նչ անի — խեղճերն են սարքում:
 Մահակ են սարքում՝ ուժեղի գլխին,
 Բայց այն ուժեղի, որ նոր է եկել:
 Դու, հարազա՛տըս, որ գալու ես դեռ,
 Պաշտպանի՛ր հորըդ,
 Որ լխեղճանա խեղճերի կողմից:

Եվ դա կարող ես անել շա՛տ դյուրին:

Հենց որ ինձանից խարազան շինեն՝
 Մեզք ու թիկունքիդ:
 Հենց որ քո գլխին ինձ դարձնեն մահակ,
 Հենց որ խուփ դարձնեն քո բերնին,
 Գիտցի՛ր,
 Որ դո՛ւ ես կյանքում իմ հարազատը,
 Որ իմը դո՛ւ ես,
 Հենց դո՛ւ ես ու կաս,
 Ու եթե հայրըդ ապրելիս լիներ,
 Կյանքում կլիներ քեզ հետ միասին՝
 Ընդդեմ խեղճերի,
 Որ իմ անունով
 Հիմա ջանում են բերանըդ փակել:

20. XII. 59
Քիֆլիս

ԻՄ ԿՏԱԿԸ

6.

Դու ինձ խեղճերից պաշտպանի՛ր, տղա՛ս,

Պաշտպանի՛ր դու ինձ՝

Ինձ չկրկնելով

Եվ չքայլելով իմ հետքով ծանոթ,

Ինձ — եթե կուզես — ժխտելով անգամ:

Ինձ չկրկնելով — և միայն այդպե՛տ,

Կխոսես դու իմ հարազատ ձայնով:

Սեփական շափիղ բացելով միայն

Բանուկ կպահես իմ բացած ուղին:

Եվ ինձ ժխտելով՝

Ինձ կհաստատես:

20. XII. 59

ՔԻՉԻՔ՝

ԻՄ ԿՏԱԿԸ

7

Եթե ուզում ես հորդդ հասկանալ

Ու լինել նրա հարազատ որդին՝

Մոռացի՛ր ընդմիջտ,

Թե կա քերթություն,

Թե կա դպրություն,

Գրականություն:

Կա կյա՛նք,

Կա լեզո՛ւ,

Եվ պիտի, տղա՛ս,

Նաև խոսելու ցանկություն լինի՛,

Բայց մի ցանկություն՝

Որ անխուսափ է՝

Ջուր խմելու պես,

Անառարկելի՛

Որպես հրաման,

Անխուսափելի՛

Ինչպես լինում է

Մազի բուսնումը,

Աճը եղունգի:

20. XII. 59

ՔԻՉԻՔ՝

ԻՄ ԿՏԱԿԸ

8

Այն, ինչ կոչվում է գրականութուն,
Դեսպանատո՞ւն չէ,
Որ զգա՛ս — խորհե՛ս — մտածե՛ս մի բան
Եվ այլ բան ասես:

Իսկ դու դեսպա՛ն չես,
Այլ պատգամավո՛ր:

Ու եթե նույնիսկ դեսպան ես՝
Ապա
Դեսպան ես... կյանքի՛ —
Որքան այսօրվա,
Առավել վաղվա՛...

20. XII. 59
ՔԻՖԻՍ

ԻՄ ԿՏԱԿԸ

9

Եթե ուզում ես հասկանալ դու ինձ՝
Ներս մտիր անտառ և ականջ արաւ:
Որքա՛ն ձայներ կան՝ բոլո՛րը տարբեր:
Եվ բազմահազար ձայնատերերից
Նույնիսկ գեթ մեկին բնավ չի տանջում
Ինչպե՛ս ձայնելը —

Նրանք կարող են լուկ աշխպես ձայնել,
Եվ ոչ այլապես...

20. XII. 59
ՔԻՖԻՍ

ԻՄ ԿՏԱԿԸ

10.

Գիտե՛մ՝
Ես էլ եմ փնտրու շուտով,
Ուր որ է, այս, գնալու եմ ես,
Բայց չե՛մ կորչելու

Գտնալու եմ ձեր... առողջութիւնը:

20. XI. 59
ԹԻՖԼԻՍ

ՆԵՐՇԵՉՄԱՆ ՊԱՀԻՆ

Իսկ երբ մենակ եմ քայլում դաշտերով
Ու միայն ես եմ ինձ զրուցակից՝
Ստորերկրյա անտես ջրերի
Վեճն ու աղմուկն եմ պարզորոշ լսում
Եվ նույնիսկ տեսնում նրանց փրփուրը...
[1959]

ԱՆԿՈՒՄՆԵՐՈՎ ԵՄ ՎԵՐԵՎ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ

Ես թուրման կոչված աղայվնու նման
Անկումներով եմ բարձրանում վերև՝
Ուրախացնելով գուցե շատերին,
Որ իմ հերթական անկումը տեսնում
Եվ ամեն անգամ հաշվում են դա վերջ,
Բայց ոչ թե սկիզբ մի նոր վերելքի...

[1959]

ԶԳԱՅՈՒՆ ԳԼԽԱՐԿ

Իսկ հրը գարունն է մոտենում հեռվից,
և այնքա՛ն հեռվից,
Որ դեռ լուր չունի մատնիչ օդն անգամ,
Ես դա զգում եմ... իմ ականջներով
Եվ մինչև անգամ... գլխարկով իմ հին:

[1959]

ՊԱՐԱՆ ԵՄ ՈՒՋՈՒՄ

Երբ իմ սրտի մեջ
Անհայտությունն է թպլբբառում աքնպես,
Ինչպես որ գույլը՝
Դատարկ ջրհորում,
Ծս երազում եմ մի ամուր պարան,
Որ (ո՛չ ինքրս ինձ կախաղան հանեմ),
Որ ինձ դո՛ւրս քաշի,
Դատարկ թե լեցուն՝
Միայն թե դո՛ւրս քաշի:

Կան խորություններ,
Որ ատելի են...

[1959]

ՏԱԿԱՎԻՆ ՀԵՌՈՒ Է ՍԻՐՈՒՍ ԳԱՎՈՒՍՋՁ

Երբ դեռ հեռու է իմ սեբբ նորեկ՝
Ծս դա լսում եմ
Ու շեմ տեսնում դա,
Ինչպես... անտառում երգող թռչունին:

[1959]

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻ

Ինչ որ անում եմ՝
Կրքով եմ անում,
Անում եմ թափով,
Ծռանդով ամբողջ՝
Վատնելով ավյուն,
Մախսելով արյուն,—

Անտարբերության թշնամին եմ ես,
Անհա՛շտ — անզիջո՛ւմ — մոլի՛ ոսոխը:

Բայց երբ աշխարհի բյուր գոտիններից
Աշխարհ է հաշվվում լոկ երկու բեռ,
Բայց երբ աշխարհի բյուր երանգներից
Աշխատում են լոկ սեն ու ճերմակը,
Բայց երբ աշխարհի բոլո՛ր բառերից
Երկունն են խոսում՝ լոկ «ոչ»-ն ու «այո»-ն,
Ջերմաստիճանըս — անզոր զայրույթից —
Հասնում է նույնիսկ քառասունմեկի,
Ցավըս դառնում է կեղծքիչ մրմուռ,
Ու ես՝ թշնամի՛ս անտարբերության,
Անտարբերության ոսո՛խըս մոլի,
Երևակայե՛ք,
Գերադասում եմ... մնալ ձեռնըպահ:

Սակայն այնպե՛ս եմ մնում ձեռնըպահ,
Որ պերճախոս է «չէ»-ից ու «հա»-ից...

[1959]

ԱՌԱՆՑ ՀԱՆԳԵՐԻ

ԲԱՅՑ

ՄՐՏԻ ՉԱՓՈՎ

Եվ իմ գողթնեցի պապերի նման
Ես պիտի գրեմ առանց հանգերի,
Ինչպես խոսում են մարդիկ իրար հետ,
Ու եթե չափով՝
Լոկ նրա՛ համար,
Որ սրտիս նման խոսքս էլ տրոփի...

[1959]

ԲԱՅ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ու եթե պոետ...

Կուզեի լինել
Պոեզիայի մեջ... միայն հրկրաբան —
միշտ որունեի
և... երկրի վրա,
ընդերքում երկրի:

[1959]

ԻՆՔՍ ԻՆՁ ԼՅՈՒՐ

Միրում եմ լինել ինքքս իմ հյուրը
Ու հյուրասիրվել համեղ... հուշերով,
Եվ կոշնակներ ունենալ նրանց,
Որոնց անունը ես չեմ մոռանա,
Ինչպես սեփական իմ իսկ անունը,
Բայց նաև նրանց, անունը որոնց
Ես — մի՛ գաբաճեք — չեմ հիշում արդեն,
Եվ չի գտնվի գեթ մի մարդ կյանքում,
Որ կարողանար ինձ հիշեցընել
Անունը նրանց, —
Եկան ու շանցան՝
Մի մազ տանելով,
Մի մասս պարզևած...

[1959]

ՄԻ ԲԻՉ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1

Ա՛խ, իմ մեծ Սերը...

*Նա հավասար է
Կորած հույսերիս ճիշտ քառակուսուն
Ու երազանքիս խեղճ մնացորդին...*

ՄԻ ԲԻՉ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2

Ա՛խ, իմ մեծ Վիշտը...

*Եվ նա իմը չէ,
Այլ բոլո՛ր նրանց,
Ում որդին եմ ես
Եվ կամ թե հայրը:*

*Ա՛խ, իմ մեծ Վիշտը,
Որ չի բաժանվում ամենքի վրա...*

[1959]

ԳԹՈՒԹՅԱՆ ՔՈՒՅԵԼԵՐ

Ցանկություններից,
Որ կոչվում են իղձ,
Բաղձանք,
Ու անուրջ,
Երազ
Ու փափազ,—

Ցանկություններից մահացու խոցվել,
Վիրավորվել եմ ես քանի՜ անգամ:
Վիրավորվել եմ ես քանի՜ անգամ
Եվ բուժման տարվել մի հիվանդանոց,
Որտեղ գթության քույր է դարձել ինձ
Ճեղմակ խալաթով Դատողությունը...

Ա՛խ, այդ գթության քույրերը...
Նրանց

Երախտապարտ եմ իմ ամբողջ հոգով,
Իմ ամբողջ սրտով հարգում եմ նրանց,
Բայց, ավա՛ղ, երբեք սիրել չեմ կարող,
Եթե մինչևիսկ շատ են գեղեցիկ...

[1959]

ԱՄԵՆԱՎԱՅՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ծվ ա՛յն հասկացա—
Խինդով աւ ցավով—
Որ անհնար է բուժմունքն սպանել,
Հա՛, անհնար է բուժմունքն սպանել՝
Առանց դիմելու նրա ազգական
Գարշահոտության շար օգնությանը:

— Ամենավայրի՛ սպանությունը,
Որ շեն հորինել սուլթաններն անգամ:

[1959]

ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՅ ՀԱՅ ԵՆՔ

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:

Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում:
Պարզապես մենք էլ պիտի ընդունենք,
Որ մե՛նք, միայն մե՛նք Արարատ ունենք,
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:
Պարզապես Դավիթն այստեղ է կովել:
Պարզապես Նարեկն այստեղ է գրվել:
Պարզապես գիտենք ժայռից վանք կերտել,
Քարից շինել ձուկ, և թռչուն՝ կավից,
Ուսուցմա՛ն համար և աշակերտե՛լ
Գեղեցկի՛ն,
Բարո՛ւն,
Վսեմի՛ն,
Լավի՛ն...

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում:
Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել, —
Պարզապես շատ ենք մենք արյուն հեղել.
Պարզապես մենք մեր դարավոր կյանքում,
Երբ եղել ենք շատ
Ու եղել կանգուն,
Դարձյա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,
Ո՛չ ոք չի տուժել զարկից մեր բազկի:
Եթե գերել ենք՝
Լոկ մեր գրքերով.
Եթե տիրել ենք՝

Լոկ մեր ձիրքերով...

Պարզապես մահն էր մեզ սիրահարվել,
Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրվել:
Ու երբ ճարահատ մեր հողն ենք թողել՝
Ո՛ւր էլ որ հասել, որտեղ էլ եղել,
Ջանացել ենք մենք ամենքի՛ համար.
Շինել ենք կամուրջ,
Կապել ենք կամար,
Ամե՛ն տեղ հերկել,
Հասցրել բերքեր,
Ամենքի՛ն տվել մի՛տք, առա՛ծ, երգե՛ր՝
Պաշտպանել նրանց հոգևոր ցրտից, —
Ամե՛ն տեղ թողել մեր աչքից՝ ցուանք,
Մեր հոգուց՝ մասունք,
Եվ նշխար՝ սրտից...

Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչվում ենք հայ—
Գիտենք դեռ շանցած վերքերից տնքալ,
Բայց նոր խնդությամբ ցնծալ ու հրճվել.
Գիտենք թշնամու կողը մխրճվել
Ու բարեկամին դառնալ աշակից.
Դուրս գալ մեզ արված բարության տակից՝
Մեկի փոխարեն տասն հատուցելով...
Հօգուտ արդարի և արեգակի
Գիտենք քվեարկել մեր կյանքով նաև...
Բայց թե կամենան մեզ բռնի վառել՝
Մենք գիտենք մխա՛լ— և կրա՛կ մարել.
Իսկ եթե պետք է խավարը ցրել՝
Գիտենք մոխրանալ որպես վառ կերտն.
Եվ գիտենք նաև մեզ կրքոտ սիրել,
Բայց ուրիշներին մի՛շտ էլ հարգելով...

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում,
Բայց մեզ էլ գիտենք—

Մեզ հա՛յ են ասում:
Եվ ինչո՞ւ պիտի շնչադառանանք...

Կա՛նք: Պիտի լինե՛նք: Ու դեռ—շատանա՛նք:

19, 25. I. C1
Երևան

ՏՈՂԱԴԱՐՁՎԱԾ ՍԵՐ

Ծս ուզում եմ գրիչ քեզ երկու տող:

Ահա՛ գրիչ ու թուղթ:
Թանաքամանն ահա՛:

Թանաքամանն ահա՛...
Պատվանդան չէ՞ կարծես,
Որի վրա պիտի ինչ-որ արձան տնկվի:
Եվ այդ պատվանդանին... արձանանում ես դու,
Այն էլ գիտե՞ս՝ ինչպես:
Գիտե՞ս, չասե՞ս սակայն.
(Կան գաղտնիքներ, որոնք գերեզման են գնում,
Եվ կա անկեղծութուն, որ չի բացվում երբեք,
Իսկ թե բացվեր՝
Կյանքում այդքան քիչ չէր լինի
Թիվը պոետների)...

Ու չե՛մ գրում ես քեզ,
Ու չե՛մ ասում ես քեզ,
Որ դու իմ կյանքի մեջ այնպես էիր հաշվված,
Ինչպես սուղ էջերը մի շատ փոքրիկ գրքի:
Ու ես ինչպե՞ս հիմա պոկեմ ու տամ քամուն,
Ինչպե՞ս պոկեմ, ասա՛, որ գեթ կապվի մի կերպ
Քեզ նախորդած էջի և հաջորդող էջի
Ա՛յն իմաստը, որ ես հասկանալ եմ ջանում:

Եվ իզո՛ւր եմ ջանում,
Որովհետև գիտեմ,
Որ դու սկսվեցիր սխալ տողադարձով
Եվ չես ավարտվո՛ւմ էլ.
Տողադա՛րձ ես արվում...

1961 թ. [մարտ]
Մոսկվա

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒ

«Ջրույտ է բոլոր քեզ մատուցանե՛ս»

Պահածոյացած՝ քո մեջ ես պահում
Արևագալի նշողումը շեկ,
Մեր երդիկների նշույումը շեղ,
Շինականների խոփի շառայլը հորովելների անկյունադարձին,
Մանգաղի շողքի արծաթ բանվածքը արտի ոսկու մեջ,
Խուլրի երթևեկ ցուլափոխանքը ակնաշլացիկ,
Զինվորագրյալ քաջերի զենքի ճառագայթումը արփալույսի
տակ,
Ատրուշանների բացխուփ բոցերի մարզանք—մրցումը
բոլորանվեր,
Խաչերի ցուլը ցնորաբերող,
Գրակալներին ծաղկող մոմերի պլպլոցը պաղ,
Եվ փա՛յլը, նաև շառավիղո՛ւմը մեր տխուր-զվարթ
ճաճանշող աչքի...

Դու քո մեջ ունես գայիստնի շեշտ
Եվ գավազանի ուղղաձիգ սլացք,
Սկիհի բուրբ,
Կածանի ուրբ,
Մամթելի հանգույց
Եվ ճարմանդի կեռ:

Հայոց աշխարհի փափկասուն կանայք
Քո մեջ՝ են թողել նրբությունն իրենց,
Մամիկներն՝ իրենց գորովը ծփուն,
Ռամիկներն՝ իրենց կոպտությունն առողջ,

Ռազմիկներն՝ իրենց կորովը բազկի,
Եվ սեպուհները՝ կանչը մարտական:

Մեր մեհյանների և տաճարների
Խորաններին ես սիրով պարտական
Վեհության համար քո անկողողպուտ,
Որով այլևս օծված ես այնպես,
Ինչպես սարյակը իր ա՛յն ինքնաքամ օծանելիքով,
Որով դառնալիքը, ճագուկից քայցի, աստծո՛ւն չի հայտնում՝
Նման խուփբերան մեր վարպետներին ու ճարտարներին:
Սրանց հմայակ հմտություններն էլ քո մեջ են փայտում,
Ինչպես ջրերը ստորերկրյա՝ նստվածքների մեջ:

Վատ վարգավազի ջրքան կա քո մեջ
Եվ երբեք շանցնող սարսուռ—տամկուճկուն,
Նավասարդական տոնախմբության քնծում ու հափրանք,
Համբարձման ճախրանք կրկնահրավեր,
Եվ ծառազարդի խորունկ խլրտում:
Հաշտից տեղերի հաշտարար խորհուրդ քրիստոսափայ
Եվ գավիթների խում ու խրախճանք հեթանոսական...

Մեր դյուցազներգակ ու վահագնապաշտ գոռոզ գուռանաց
Բամբ բամբիռների և թինդ թմբուկի ձայների թիւով,
Մեր սիրախոով աաղբերգու արանց, կանանց, կուսանաց,
Անհայտ ու հայտնի բույլքի համեմատ,
Հայրեններ կանչող մեր սիրախորով կտրիճ լաճերի,
Եվ եղբրամոր լալյաց երգերի միջև տատանվող
Բոլո՛ր անհամար ելևէջներին և անցումներին
համապատասխան
Թրթիռներ ունես թավ ու թովչական, թախծոտ ու թավշի:

Մինչ կաքավները թողել են «կղա» և տոտիկ կարմիր՝
Կաքավողների դաշըն ձևերն են քանդակվել քո մեջ,
Նրանց շղարշիկ շորի շրջյունն է, որ քեզ համակել
Ու տոգորել է շուկ—շունջի շատությամբ շույլ,
Նրանց ըզզվիչ հոտերն են հագել

Նրբերանյներդ հանդերձը հարուստ,
Նրանց հագուստի հոտերն ըզզվիչ,
Բայց և բույրերը այն բարձրապահյալ բժժանք—բույսերի,
Որ տիկնանց աիկին Սաթինկան տենչի տերն էին դառնում...

Արտաշիսական հարսանիքներում վերից տեղացող
Դահեկանների հնչում կա քո մեջ
Եվ փոխարինվող շիր ու շամիչի,
Ընկույզ—փշատի բազմաձևություն,
Տանիքներ ճոճող շորջլպար—դարձպարի
Եվ ճապուկ—ճարպիկ լարախաղացի
Գունագեղություն և կշռույթ ու շափ:

Սոփակի սիրանք ունես դու քո մեջ,
Դղիրդ աղացի
Եվ թարմ ալյուրի տաքուկ փափկություն,
Դու քո մեջ ունես նոր դալարիքի
Եվ աղջիկների մեջքի ճապկություն,
Ճախարակների և սանդերքների ձայներ անշփոթ,
Մեր գզրարների ու մազմանների Երգեցիկ զարկեր՝
Մի արարչական նվագ, որի տակ
Աստու բեղ-մորուքն իջնում էր ամպից
Ու դառնում դուլպա, թաղիք ու կարպետ...

Եվ ունես քո մեջ Եփրատի ծփում,
Երազ Երասխի,
Վանա-Սևանա տուրեանություն,
Լեռնադրյուրային մի ջինջ սառնություն,
Որից անցնում է լեղի վարունգի դառնությունն անգամ,
Եվ երկրի երես բարձրացող ջրմուկ,
Որ դրկիցության ելումուտ ումի
Երկրամիջուկյան հրահեղուկի ոլորտների մեջ:

Եվ ունես քո մեջ շամբի երերմունք,
Անսպասելի աղարմունք ամպի,
Սոսյաց անտառի սաղաթթի սոստի,

Որի սաստկութեամբ կամ հանդարտութեամբ
Քախտ էին բանում նախնիները մեր.
— Ամենի՛ր բախտը՝ անստո՛ւյզ ու սո՛ւտ,
Եվ միայն քո՛նը՝ հիրավի՛ պայծառ...

Խորվիրապական տառապանքների թելադրանքով,
Մարտիրոսների, նահատակների
Ու վկաների տաժանքի հուշմամբ
Եվ մեռելոցի անանց կսկիծի պահանջով ազդու՛
Հոմանիշների մի ամբողջ վտառ վխտում է քո մեջ,
Գոմշաձագերից սևութուն առած,
Եվ անտակութուն՝ Մասյաց վիհերից...

Եվ ունես խոսքեր ո՛չ միայն հայցի, այլև հատուցման,
Ո՛չ միայն հոժար և անհիշաչար ձեռքի մատուցման,
Այլև հին քենի ու նոր վրեժի դժվարի՛ն խոսքեր,
Որ արջի նման խոր քուն են մտնում,
Բայց և արջի պես զարթնում են մի օր,
Երբ ծայր է առնում եռոցքը արյան՝
Կապկելով հոսքը ելման ջրերի:

Սակայն ավելի հպարտ ես ու շեն
Անխարդախ սիրո և մտերմության,
Քարու, գեղեցկի, հավատարմության,
Խանդանդատանքի և փաղաքշանքի,
Կերտման—կառուցման, ձգտումի—չանքի,
Երազիկ վաղվա,
Հարածիզ հուսո
Խոսքերով խորունկ, ցուլացիկ ու պարզ,—
Յուրաքանչյուրից՝ մի ողկո՛ւյզ, մի խո՛ւրձ,
Յուրաքանչյուրից՝ մի երա՛մ, մի պա՛րս...

Դու ալսպիսի՛ն ես,
Ալսպիսի՛ն ես դու:
Եվ երջանիկ է՝ ով քեզ կարող է կոչել ՄԱՅՐՆԻ,
Երանելի է՝ ով քեզանով է խոսում ու դատում...

Դու՛ իմ մայրենի՛,
Ալսպիսի՛ն ես դու:
Եվ ես՝ երջանիկս ու երանելիս,
Ե՛ս շեմ, այդ ե՛ս շեմ քեզ տիրապետում:
Դո՛ւ ես, այդ դո՛ւ ես ինձ տիրապետում—
Հավիտյա՛ն և մի՛շտ,
Եվ ա՛յժմ նաև՝
Քեզանով իսկ քե՛զ փառաբանելիս...

29, 31. I. 62
Երևան

ՔԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԱԽԸ

Ես ի՛նձ համար չեմ վախենում.
Կուզե՞ք՝ վա՛ղն էլ ընկնեմ—մեռնեմ:

Վախենում եմ ջրի՛ համար
Եվ ջրային խճանկար ա՛յն քարերի,
Որոնք ինչպես բիրբրի շուրջ,
Ասես դառնում սպիտակուց
Ու ցոլանք են տալիս ջրին:
Վախենում եմ նրա՛նց համար.
Վախենում եմ,
Որ մի գուցե հետըս նաև իրե՛նց տանեմ...

Վախենում եմ նաև հողի՛, հողի՛ համար՝
Մենախոսող ա՛յն մեծագույն ողբերգակի,
Ում «Լինել թե չլինելը» այսօր արդեն բարձր է հնչում
Մինչև անգամ թեթևսուլիկ քամո՛ւ բերնով,
Որ վարակված ու վարակիչ ամպ կարող է քշել—բերել,
Մշտաժիծաղ—զնգուն ձայնով և անձրևի՛,
Որ կարող է անմեղորեն օրհա՛ս փռել՝
Մանուկների երակներում արյունը ջուր դարձրնելով:

Քանի ես կամ՝
Թվում է, թե հողը դեռ չի՛ կործանվելու,
Թե չէ՛ կուզե՞ք... այս վայրկյանիս ընկնեմ—մեռնեմ...

Վախենում եմ, որ գնալիս հետս աստղերի ցոլքը տանեմ
Եվ աչքերի գիշերական ու ծովական խորքը տանեմ,
Կաքավների «կղա»—ն, երգի «լո-լո»—ն տանեմ,
Հեռախոսի կարոտ ցրող «ալլո»—ն տանեմ,

Մարդու հողի կտցահարող աղջրկական քեղքը տանեմ,
Քարանձավի և փակուղու ելքը տանեմ,
Տանեմ մարդու զե՛նքը միակ՝
Խե՛ղքը նրա,
Ու նա մնա անզե՛ն—անզո՛ր
Այս սասանվող հողի վրա՝
Մենախոսող ա՛յն մեծագույն ողբերգակի,
Ում «Լինել թե չլինելը» լսո՛ղ է պետք,
Գոնե լսո՛ղ, լսո՛ւմ եք ինձ, գոնե լսո՛ղ...

Վախենում եմ սրա՛ համար, թե չէ՛ կուզե՞ք
Ձեր աչքի դեմ ընկնեմ—մեռնեմ այս վայրկյանիս...

22. X. 62

Երեան

ՔԱՐԵ ՀՅՈՒՐԸ

Աչքերըս՝

Մրարված հիացում,
Եվ դու ես հասցեատերը:

Մատներըս՝

Հինգ հրթիռ—սլացում,
Եվ քոնն է ողջ ուղեծիրը:

Խոսքերըս՝

Մեռած մի լեզվի
Վիմագիր: Դո՛ւ պիտի վերծանես:

Ու ես էլ՝

Քարե հյուր ձեր բակում,
Ձեր տանը, քո սրտում մինչևիսկ:
Եվ գիտեմ.

Կա՛մ ես՝ քեզ, կա՛մ դու ինձ
Վազ թե ուշ պիտի կործանենք...

22. X. 62

Երևան

ԱՆՊԱՇՏՈՆ ԳԻՇԵՐԱՊԱՀԸ

Եթե լինեի ես գիշերապահ,
Ո՛չ մի գողութուն չէր էլ կատարվի:
Հանգիստ կքներ ամեն տուն ու բակ
Հին «նանիկ»—ի տակ նորամայր առվի:

Եվ խանութների ցուցափեղկերում
Բազում—բազմազան իր ու առարկա
Ի՛նձ ցույց կտային և հեռվից-հեռու
Աչքով կանեին մեկ-մեկու. «Եկա՛վ»:

Եվ գործ կածեինք մենք ամբողջ գիշեր
Խաղալիքների լեզուն անհույս:
Մութը մոռացված բաներ կհուշեր,
Ու կկապեինք մենք հինը նորով:

Հարցեր կտային հազար մի տեսակ
Անհասկանալի մեր մարդկայինից՝
Ադամ—արբանյակ—ատոմ—կայենից,
Եվ նրանց «ինչո՞ւ»—ն, նրանց «մի՞թե սա»—ն
Խեղճիս կզներ ճիշտ այն վիճակում,
Ինչ լույսն է զգում ծակուռ—փշակում:

Բայց հետո քամին կգար օգնության,
Ու խոսք կբացվեր խոտից ու ծառից:
Եվ թավշե արջուկն առանց հոգնության
Կսկսեր պատմել թղթե անտառից:

Ու նապաստակներ՝ ուստինակաչի՝
Փղանավերի թևերին պպզած,

Կիւշտեին ականջները ժիր
Ու կլսեին մանկորեն ապշած:

Հետո... կանացի լաշակներ պես-պես,
Ջրեստներ գունեղ, նրբին կոշիկներ
Կարքեին մի ճոխ պարահանդես,
Որից փակուղու մալն էլ կշիկներ:

Եվ մութն իսկապես մաշվում է— մաշվում,
Լույսը դառնում է խավարին որկիր...

Կիսամեքէ մի կին հինգերորդ հարկից
Նկատում է ինձ ու ետ է քաշվում:

Իսկ նա կհիշի՞ անկողնում իր տաք
Այն տարօրինակ միայնակ մարդուն,
Որ ման է գալիս այս պատերի տակ
Եվ այս ուշ ժամին տակավին արթուն՝
Խաղալիքների լեզվով անհուով
Հարցեր է լուծում համաշխարհային,
Կանանց անմարմին հագուստ ու շորով
Սարքում է շքեղ հանդես պարային՝
Այն ապակեպատ թղթե անտառում,
Որտեղ թավշամաշկ արջուկն է ճառում՝
Հետն էլ լիզելով թուփն իր տնակը...

Թե գործը լինի է կուսարվել երեկ՝
Ինձ ինչ պահակ շնձ, ուրիշն՝ անմեղ եմ...

24. X. 62
Երևան

ՎԱՀՍԳՆԻՆ

«Ով աստվածն իմ հայրենասց
Ղ. ՎԱՐՈՒԺԱՆ»

Աստվածն էիր իմ հայրերի
Եվ սակայն
Հիմա արդեն որդի՞ ես դու, հայրդի՞,
Ու կարող է, որ կոշվում ես ժակ կամ ժան,
Ու կարող է, որ վատ գիտես հայերեն:
Եվ ես հիմա քեզ եմ դիմում՝ եղբո՛ր պես,
Ավա՛գ եղբոր կամ, թե կուզես, հո՛ր նման:
Ձե՛մ աղոթում, այլ պահանջո՞ւմ սաստումով,
Ձո՛հ շեմ բերում, այլև զո՛հ եմ պահանջում՝
Իրավունքով այն շարված, բայց անջինջ,
Որ իմ ու քո նախնիներն են տվել ինձ
Եվ այլևս շեն կարենում ետ առնել...

Վահա՛գն,
Վահա՛գն,
Իմ հարազատ անծանոթ,
Աստվա՛ծ պիտե, թե ո՛ւր նետված ու միտված.
Իմ երակին կպած երակ հեռավոր,
Իմ բազուկից զուգաճյուղված դու բազուկ,
Դու կիսագունդ իմ իսկ արյան գնդիկի,
Իմ մոր որդի և հոր զավակ տնեղուրս:
Մի՛թե պիտի ուրախացնենք թշնամուն՝
Քո կորուստով,
Քո հալում ու ձուլումով՝
Այդ նորօրյա—այլափոխված զուլումով,
Մի՛թե պիտի ուրախացնենք թշնամուն,

Ա՛յն թշնամուն, որ քո հողից բեզ գրկեց,
Սակայն հողըդ բեզնից պիտի շղրկվի՛,
Եվ չի՛ գրկվի, քանի դու չես կամենում...

Վահա՛գն,

Գու թոռ Վիշապաքաղ Վահագնի,
Մի՞թե պապիդ արյունը ջուր է դարձել
Քո այն բանուկ երակներում, որոնց մեջ
Արյան փոխվեց ճերմակ կաթը Աստղիկի:
Մի՞թե ամեն հարկի ներքո հայկական
Լուսադեմին էլ սիրո մեջ չեն երկնում
Երկիր, երկին, ապա թե ծով ծիրանի,
Որ դուք կարմրիկ եղեգնիկի ծոց—բոցից
Վազեք հուրհեր, ու բոցմորուք, ու բոցբեղ,
Վազեք դեպի ա՛յն վիշապը, որ միայն
Ձեն է փոխում, իսկ էությունը՝ երբեք:
Ա՛յն վիշապը, որ իր մարմնով ճաքճաքուն
Բոլորակ է քաշել հողիդ հայրական՝
Պռշի վրա դրած գլուխն իր արնոտ,
Եվ ուր որ է պիտի իր պոչն իսկ խածի:
Բայց չի՛ խածի իր պոչը նա, եթե դու
Չընդդիմանաս, չդիմանաս ու կորչես:
Բայց չի՛ խածի իր պոչը նա, եթե դու
Ջազի միջով Գողթան փանդիո շրորսաս:
Եվ չի՛ խածի իր պոչը նա, եթե դու՝
Ինքըդ գուցե արդեն մի ժակ կամ ժուլետ,
Ձավակներիդ վաղը անսուտ զղջումով
Չմրկրտես նորից Վահագն ու Աստղիկ:
Եվ չի՛ խածի, լա՛վ իմացիր, չի՛ խածի,
Ինքն իր պոչը չի՛ խածի նա, եթե դու
Չհասկանաս արք—արարքը պապիկիդ՝
Ա՛յն Վահագնի, որ քայլ քայլեց երկնքով՝
Հարդագողի ճամփան իբրև հետք թողած:
Ստիպված էր նա գնալու, ինչպես դու
Բայց նա գնաց ու... ե՛տ դարձավ: Չմնա՛ց:
Մենք երկնքում մեր ոտնահետքն ենք թողել,

Որ կոչվում է Հարդագողի ճանապարհ,
Եվ բա՛վ է դա, մեզ բա՛վ է դա, սիրելի՛ ու:
Հարդագողի հետքե՛ր թողնել վերստին
Եվ այս անգամ երկրի՛ վրա, աշխարհի՛,
Նրա լայնքին ու երկայնքի՛ն... խաչի՛ պես:
Շա՛տ չէ արդյոք,
Վա՛տ չէ արդյոք, սիրելի՛ ս.
Հարդագողի ճամփա թողնել... խաչի՛ պես,
Ճիշտ ա՛յն խաչի, որ տարել ենք դարեդար
Ու տանում ենք, ու դեռ չենք էլ հասկանում՝
Մե՞նք ենք արդյոք նրան տանում, թե՛ նա մեզ...

Վահա՛գն,

Վահա՛գն,

Եղբա՛յր, որդի՛, հարազա՛տ,
Իմ երակին կպած երակ հեռավոր,
Իմ բազուկից զուգաճյուղված դու բազուկ,
Գու կիսագունդ իմ իսկ արյան գնդիկի,
Իմ մոր որդի և հոր զավակ տնեղուրս.
Մենք,
Որ անցանք Հրո Երկրի ցուրտ—պաղից,
Բարեհուսո Հրվանդանի դեմ-դիմաց
Ինչպե՛ս, ինչո՞ւ պիտի իրար կորցրենք:
Թող որ կորչի մեր թշնամի՛ն, մենք ինչո՞ւ.
Հերթը նրա՛ն, ո՛չ թե մերն է, սիրելի՛ ս:

Ուրեմն արի՛, իսկ քանի դեռ չես եկել,
Վահա՛գն մնա,
Եվ Աստղիկը՝ հարսը իմ,
Թո՛ղ պարզեի նոր-նոր ուստրեր ու դուստրեր՝
Ամեն մեկը՝ մի նոր Վահագն ու Աստղիկ,
Մազերն իրենց, դրոշի պես, բաց արած
Բարեհուսո Հրվանդանի հովերին,
Իմ օդային պագի պես տաք հովերին:

27. XI. 62

Երեւն

ԽԻՂՃԸ ԵՎ ԻՐ ՄԱՐԿԱՅԻՆ ԳՌՄԱԿԸ

**ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿԱՐՈՂ ԷՔ
ԿԱՏԱՐՎԵԼ ՆԱԵՎ ԱՐԹՄԵՆԻ ԺԱՄԱՆԱԿ**

*Նա լուռ ներս եկավ և ասաց... աչքով.
— Այդ ես եմ՝ խի՛ղճըդ:*

*Նա եկավ այնպես, ինչպես գալիս է.
Ոչ թե տան դռնի՛ց, այլ լուսամուտի՛ց:
(Խիղճը երբևէ դռնից չի մտնում):*

ԵՍ

*Եկել ես՝ նստիր:
Ամենից հարմար աթոռը իմ տան
Այս ճոճուանն է:*

ԽԻՂՃՍ

*Որովհետև նա իր ճոճուոցով
Հիշել է տալիս, որ գեռներս կա՞մ:*

ԵՍ

*Ո՛չ, Որովհետև նա չի հասկանում,
Թե ի՞նչ բան է այդ ռորովհետեւ-ը,
Իսկ դու հենց լուկ այդ ռորովհետեւ—ն ես
Եվ ուրիշ ոչի՛նչ:*

(Բաց պատահանիցս ներս խուճեց Ավտարուր՝ Տրամվայի նեւ և մի
հշացող Երեխայի ուղեկցութեամբ, և իսկույն էլ դուրս բառով բակի՛ն նա-
յոզ պատշգամբիցս՝ Տրամվայը դեռ բռնելով սենյակիս մեջ, իսկ հշա-
ցող Երեխայի՛ն՝ պատահանիս գոգի՛ն):

ԵՍ

*Մի քիչ սպասիր,
Որ տրամվայն էլ դուրս թռչի.
Թե չէ՛ քեզ վատ եմ լսում:*

ԽԻՂՃՍ

*Իսկ երեխային , շո՛ւտ արա, նե՛րս առ.
Չէ՞ որ այստեղ եմ ե՛ս, հասկանո՞ւմ ես:*

ԵՍ

*Երեխաների հարցում, դու գիտե՛ս,
Քո այստեղ լինելն ու չլինելը
Միշտ ավելորդ է եղել ինձ համար:*

(Տրամվայն էլ դուրս օտոպց պատշգամբիցս, իսկ հշացող Երեխայի՛ն տա-
րավ Մայրը, որ դուրս պրծավ Հացի խանութից):

ԵՍ

*Ինձ դու չես թողնում կարգին գործ անեմ:
Ասա՛, իմ վերջը ի՞նչ պիտի լինի:
Եվ ի՞նչ եմ դեռ ես.*

*Ինչ-որ մի քոսո՞ւտ վարչության անդամ
Եվ մինչև անգամ ո՛չ վարչության պետ:*

ԽԻՂՃՍ

*Ես մեղավոր չեմ, որ պատահանըդ
Երկաթե ճաղեր կամ վանգակ չունի,*

Ու ես կարող եմ ներս ու դուրս անել:
Երկաթի ճաղերն ու վանդակները
Լինում են, գիտե՛ս, և քնարածակ:
Ճաղե՛ր պատրաստիր,
Եվ... չեմ մտնի ներս.
Օ՛ղ չեմ, որ մտնեմ ճաղերի միջով,
Մանավանդ օդն էլ հիմա համարյա
Զրկվել է ինձնից:

(Օղը շրխոցով բացեց պատուհանի օշակցե՛ր՝ հիշեցնելով, որ ինքը բնած
չէ և որ իր նետախուզությունը հիանալի է աշխատում):

ԽԻՂՃՍ

Հը՛, տեսա՛ր. չէ՛ որ ես ասում էի,
Որ հարկավոր է ճաղեր պատրաստել:

ԵՍ

Ի՛նքս եմ պատվերներ ընդունում, ի՛նքքս:
Իսկ դու չես թողնում՝ պատվեր կատարեմ:

(Նորից մի Ավտոբուս նեոս ցառկեց և մի քանի վայրկյան կայանելով
սենյակումս՝ ֆուտակի պես զոաց, ուզի՞ր ախանջներես տակ):

ԽԻՂՃՍ

Մեքենայական այս հաճախակի այցերը և այս
Մեքենայացված զոոցները քեզ
Մի՛թե ավելի քիչ են խանգարում,
Քան թե ես, այո՞:

ԵՍ

Ես ժամանակի սերմն ու ծնունդն եմ,
Զավակն օրերի:
Իսկ դու շարունակ քաղտո՞ղ ես կաթաղած:

Աստվածաշնչյա՛ն հինավուրց քարոզ:
Եվ թո՛ղ գրաբար խոսքերից արդեն փոշոտված եմ ես
Եվ որտեղ որ է ցեցոտվեմ պիտի:

ԽԻՂՃՍ

Բայց ինձ պցել են նույնիսկ շան առջև,
Եվ անգամ շո՛ւնը
Զի կարողացել ինձ ուտել, հարա՛:

ԵՍ

Իսկ մարդիկ, կարծեմ, քեզ ուտում են հեշտ
Եվ լավ էլ մարտում:

ԽԻՂՃՍ

Բայց դու... մա՛րդ չես դու,
Թեպետ և ունես կաղապար մարդու:

ԵՍ

Իսկ թո՛ղ կարծիքով ես... ի՛նչ աղբ եմ ես:

(Այս խոսքի վրա խիղճս ցառկեց նոճան արտօն, ինչպես գա լինում
է վատ խաղացված լավ կատակերգության մեջ, և ձեռքը մեկնելով ինձ՝
նոճան արտօն էլ նոճան ձայնով ոգեց):

ԽԻՂՃՍ

Դո՛ւ... գիտե՛ս, դու այն անքնությունն ես,
Որից խուսափել չեն կարողանում մինչև իսկ նրանք,
Որ ինձ ուտում են և լավ էլ մարտում:
Զգիտե՛ս. դու այն նճանությունն ես,
Ինչից չի կարող խույս տալ զավակը,
Որ քանի գնում՝ այնքան ավելի:

Նման է գառնում իր հարը, մորը,
Պապին կամ քեռուսն,— այդ միևնույնն է:
Իսկ երկրագունդն էլ իր վրա շունի
Միջօրեական—հորիզոնական կոչված գծերը:
Մե՛նք, մե՛նք ենք քաշել այդ գիծ ու միծը,
Որ... չմոլորվինք:
Դո՛ւ... այդ գծե՛րն ես:

(Ուզեցի զարմանա հայտնել, բայց նա շտուճակեց՝ փաթած ձայնապնակի պես) .

Դո՛ւ... բնավ դո՛ւ չես:
Դու պարզապես իմ հավատարմատար—դեսպանն ես միայն
Անիշխանություն այն ղղլակներում,
Որտեղ իշխում են
Ինձանից զրկված ու զերծվածները:
Դու, եթե կուզես, դու իմ լրտեսն ես չպարտավորված,
Զվարձակալված իմ գործակալը,
Անաշխատավարձ իմ թղթակիցը,
Իմ... անապակի ակնոցը նաև:
Դու, եթե կուզես, պատանդն ես նրա՛նց՝
Ինձանից զրկված ու զերծվածների՛,
Նրա՛նց պատանդն ես, ի՛մ ձեռքերի մեջ.
Թե քեզ սպանեմ՝
Նրանք կմեռնեն անծուխ—անժառանգ:
Դո՛ւ... դո՛ւ... դո՛ւ...

ԵՍ

Ե՛ս... ե՛ս...

(Ու բարկությունից այլևս բառ չգտա: Ամենադժվար բանը «ես» ասելն ու շտուճակելն է: Ուստի ակամա «ես»-ը բողբջի ու բռնեցի «դու»-ն: Ու չնկատեցի, որ պատասխանեմ մեջ ոչ մի նոր բան շատացի, այլ պարզապես եղծիս ասածը շրջեցի իրեն վրա) .

ԵՍ

Դո՛ւ... հենց դու ի՛նքդ ես... իմ գործակալ՛ը...
Եվ իմ... լրտե՛սը...

190

Եվ իմ... ակնո՛ցը...

Դո՛ւ... դո՛ւ ես պատանդ իմ ձեռքերի մեջ.

Ուզեմ՝ կխեղդե՛մ... կփոխանակե՛մ... կծախե՛մ... կը՛... կը՛...

(Կոտացի և արքնացա, որովհետև՝ ինչպես քիչ նետո հասկացա՝ սենյակս էր մտե: ու խրխնջում էր այս անգամ ոչ թե Ավտոբուսը, այլ դռանս էլեկտրական զանգը: Դեռ դուրը չբացած՝ կոանեցի, որ եկել էն կանչելու... վարչության նիստի. կարևոր հանձնարարություն էն տարա...):

8. XII. 62

Երևան

ՄԵԶԱՆԻՑ ՄԵԿԸ

Մեզանից մեկը, անշուշտ, այստեղ չէ,
Մեզանից մեկը՝
Կամ ես, կամ թե դու
Թե դու չես այստեղ՝
Ապա ինչպես է,
Որ ինձ հետ ես միշտ՝
Իմ սենյակի մեջ,
Իմ մատների տակ,
Իմ լեզվի վրա:
Թե ես չեմ այստեղ,
Ապա ինչպես է,
Որ ես հետդ չեմ՝
Քո սենյակի մեջ,
Քո մատների տակ,
Քո լեզվի վրա:
Ճիշտն այն է գուցե,
Որ մենք երկուսս էլ այստեղ չենք լինում:
Ինքս այնտեղ եմ, որտեղ որ դու ես,
Իսկ դու այնտեղ ես, որտեղ որ ես եմ:
Այսպես գալիս ենք մենք դեպի իրար,
Գու՛ ինձ մոտ,
Սա՛ քեզ
Սվ... չենք հանդիպում... այս քանի տարի:

18. XII. 62
Երևան

ՀԱՅՈՒՆԻՆԵՐԸ

Լոկ իրե՛նց հատուկ բյուր անուններից
Քայիս է բույրը հին-հին դարերի,
Անցին քարերի,
Պարտեզի, շոգի ու խոնավության,
Երկնքի, հողի ու խոնարհության,
Մինչդեռ փեշերից՝
Բույրը թարմ հացի,
Հոտը խնձորի կամ սերկեվիլի,
Որ քուն են առնում նրանց փոթերի ու դարսերի մեջ՝
Հայրական տնից բերած սնդուկում...

Ու մեր ճաշերը նախ նրանց տաքուկ շնչով են եփվում:
Իսկ եթե նրանց գլխաշորերից դեղ—գարման սարքվեր՝
Անպարկեշտություն կոչված ախտը հին կրուժվեր իսպառ...

Բարեխառն գոտուց հեռու ապրելով՝
Մենք միշտ քարեխառն օդ ենք ներշնչում մեր տների մեջ՝
Շնորհիվ... նրանց հավատարմության:
Եվ ամեն անգամ նրանք մտնում են անկողինն իրենց,
Ինչպես մտնում են սրբացած տաճար,
Իսկ եթե նրանց այդ նույն բանն ասես,
Կիսաչակներն երկյուղածորեն՝
Այդ համարելով սրբապղծություն...

Ու երիտասարդ նրանց ձեռքերը նուրբ են առավել,
Քան իրենց սրտի թաղանթը նույնիսկ,
Մինչդեռ մայրական ու մոմիկական ձեռքերը նրանց
Կնալով անվերջ փոխում են — փոխվում

Ու նմանվում են... երկրի կեղևի՛ն,
Սարե՛ր կան այնտեղ, ձորե՛ր, անդունդնե՛ր՝
Կոշտուկի՛ տեսքով,
Կնճիռի՛ տեսքով,
Տեսքով խորշումի՛...

Խորանի նման լեցուն են նրանք տաք մասունքներով,
Որ միշտ կարող են գավիթ դուրս բերվել ինն ամիսը մեկ
Ու կոչվել «զավակ» կամ «խաչ», ինչ նրանք
Սիրով են կրում բովանդակ կյանքում...

Անցնելով փշոտ ճանապարհները առի և փախի՛
Բոբիկ ոտքերին կծկել են նրանք
Իրենց հայրենի գետակն ու առուն,
Ցավից մշուշված իրենց աչքերում
Տարել են իրենց ծուխը ծխանի
Եվ իրենց հոգնած շալակին առել
Ոչ միայն մանչին կամ մի մագաղաթ,
Այլ մի բովանդակ... բնիկ հայրենի՛ք,
Մի ծա՛նրը, ծանր՛ր, ծանր՛ր հայրենի՛ք՝
Իրենց կանացի թիկունքին կպած
Ա՛յն կուզի նման կամ ա՛յն սապատի,
Որ շտկրվում է լոկ գերեզմանո՛ւմ...

Ինչե՛ր չեն տեսել նրանք այս վերջին հազարամյակում...

Հաճախ են նրանք իրենց պաշտպանել
Տաք խաչերկաթով
Կամ եռման կաթով:
Նրանց հայրենի անխիղճ ու բարի քարափներն անտակ
Ու կամուրջները շար ու ողորմած
Մեկ անգամ չէ, որ նրանց փրկել են անպատվությունից,
Որպեսզի ապրած դժոխքից հետո
Մարտիրոսացած մտնեն դռներից ա՛յն Արքայության,
Որ եթե չկա ու չի էլ եղել,
Ապա անպատճառ ստեղծվեր պիտի

Հենց սրա՛նց համար:

Իսկ եթե մահը եղել է անգութ
Ու ժամանակին չի տարել նրանց,
Ու եթե նրանք ընկել են հարեմ՝
Առևանգիչի, լկողի համար ծնել են նրանք
Միայն... ապուշնե՛ր և կամ... դահիճնե՛ր...

28. XII. 62

Երևան

ԽԵՂՃ ՈՒ ԽՂՃՈՎ

Խեղճ ու անխիղճ իմ սիրելի,
Այսուհետև միշտ թիրտա
Հզոր ձեռքում ամենատուրբ այն զորության,
Որ բառերի ցուցակի մեջ կոչվում է «խիղճ»:
Եվ թիրտա երջանկորեն՝
Քեզ զգալով երանելի:

Ես՝ ի ծնե երանելիս,
Երանի եմ տալիս և քեզ,
Եթե պիտի այսօրվանից գերի ընկնես
Ու շաղատվես,
Ու շուգենաս գեթ մի վայրկյան
Ազատվել այդ սակավադեպ գերությունից:
Այնժամ միայն կհասկանաս քո ջղերով,
Քե կա մի տեղ, ուր խրատը ձանձրալի չէ,
Եվ քարոզն էլ չի սպանում երգ ու տաղին:
Այնժամ միայն դու դիտապաստ քո մազերով կհասկանաս
Ճառագայթի շիտակությունն ավանդական,
Նաև նրա նմանությունն ասեղի հետ:
Եվ քանի որ թելն է մտնում ասեղի մեջ,
Ոչ թե ասեղը թելի մեջ.
Եվ քանի որ գալարվողը թելն է միայն,
Ոչ ասեղը.
Եվ քանի որ, եթե պիտք է,
Ասեղով են ծակում, ոչ թե նրա թելով,—
Ուրեմն այսօր և հավիտյան թող ասեղը կոչվի և խիղճ,
Իսկ սիրելի՛ս, խեղճ սիրելիս,
Դու մի՛ հոգա թելի համար.

Թելը կգա, քեզ կգտնի,
Ինչպես մեղքն է մարդուն գտնում...
Եվ դրանով դու շես դառնա
Ու շես կոչվի երբեք Դերձակ:
Դու կդառնաս ու կկոչվես Արվեստադետ,
Որ մի հոգնած—ազնիվ պահի
Կարող է և իջնել... խրատ տալու ցածրությանը,
Որովհետև այդ ցածրության լայնածավալ արոտներում
Եթե անգամ ծիլ է տալիս,
Ավա՛ղ, արմատ չի հաստացնում խիղճ ասվածը:
Քե քո ջղերն այդ արմատի մազանոթներն են տարածուն,
Ու երբևէ չեն քաղհանվի,
Ու չեն լինի արմատախիլ,
Ուրեմն այժմ և հավիտյան երանի՛ քեզ,
Իմ խղճով ու խեղճ սիրելի...

7. VII. 63

Երևան

**ՄԵԿԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՈՒ ԿԱՏԱԼԵՐԳ
ԵՐԵՔ ԱՂԶԿԱ ՎՐԱ**

Մերանում ենք, Պարույր Սևակ,
Մերանում ենք, սիրելիս...
Գ. ՄԵՎԱԿ

Երեք աղջիկ քայլ են քայլում փողոցով:
Երեք աղջիկ փայլ են փայլում փողոցով:
Քայլում—փայլում, շե՛ն էլ նայում ոչ մեկին,
Բայց և այնպես տեսնում են պարզ ու մեկին,
Որ բոլո՛րն են իրենց նայում դողոցով:

Երեք աղջիկ ծիծաղում են անառիթ
Ու թվում են... ու թվում են անառիկ:
Տեսնես՝ ո՞վ է նրանց անուն հորինել:
Երկուսինը՝ ի՞նչ ուզում էր թող լինելը,
Միայն մեկին... մեկին լինելը Քնարի՛կ:

Երեք աղջիկ դաս են սերտում մեկուսի:
Տեսնես՝ ո՞վ է փարվում նրանց մերկ ուսին:
Մեկին ինչ—որ մեկը սիրելը, մինչդեռ ես,
Ես սիրեի գոնե... գոնե երկուսին:

Երեք աղջիկ դուցե ասեն ինձ «քեռի»՝
Նայելով իմ ճերմակացող քունքերին:
Իսկ ես ինչպե՞ս իմ հայացքով չգրեմ
Բիբերի մեջ նրանց ծիծղուն աչքերի.
«Մեկիդ մերժման ցավը մի կերպ կկրեմ,
Իսկ երկուսի՛դ, գիթ երկուսի՛դ... կսիրե՛մ»:

Նրանք՝ դալա՛ր, իսկ ես՝ ահա ա՛յս տարիքին:
Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.
Մեկին՝ ի՛մ պես,
Մյուսին՝ ի՛նձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ իրար բնա՛վ շեն ճանաչում,
Ես դրանից, անկեղծ ասած, շե՛մ ամաչում,
Որովհետև ես չեմ խաբում և ո՛չ մեկին.
Ինձ՝ երեքը, իսկ ես սիրում եմ երեքին՝
Մեկին՝ ի՛մ պես,
Մյուսին՝ ի՛նձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ երջանիկ են, ես՝ առավե՛լ:
Ո՛չ մի անգամ ո՛չ մեկն ինձնից չի՛ խոռվել,
Տառապանքից չի՛ պառավել
Ու կարոտից չի՛ խորովվել,
Որովհետև նույնիսկ հիմա՝ այս տարիքին,
Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.
Մեկին՝ իմ պես,
Մյուսին՝ ինձ պես,
Ու երրորդին էլ՝ ինձ նմա՛ն:

Երեք աղջիկ թե հանդիպեն մի օր իրար,
Պիտի խոսե՛ն—խոսե՛ն իրենց սիրուց իրավ,
Ու չիմանան, որ սիրում են մեկին՝
Նրա՛ն,
Ով սիրել է իրենց մեկտեղ.
Մեկին՝ իմ պես,
Մեկին՝ ինձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն...

3. XI. 63
Երեան

ՊԻՏԻ...

Ա՛խ այս անվերջ «պիտի»—ն
վերջ ունենա՞ պիտի...

«Պիտի... այսպես անենք,
Պիտի... այնպես անենք:
Պիտի... այսպես լինի,
Պիտի... այնպես լինի:
Պիտի... պիտի... պիտի»...

Այսպես «պիտի»—ն պիտի
նստի գահի վրա,
Իսկ մենք մնանք ոտքի,
Երկրպագենք նրան...

Ձ. XI. 63
Երևան

ՀԱՎԵՐԾ ՆԵՐԿԱՆ—ԲԱՑԱԿԱՆ

Աչքեր ունի նեղ—երկարուկ,
Ասես լինեն կորիզ հոնի,
Ունի հայացք մի հեռախույս,
Նման մթին հորիզոնի:

Տիրուհի՞ է — տիրուհի չէ:
Սիրուհի՞ է — սիրուհի չէ:
Քո՞ւյր է — քույր չէ:
Կո՞ւյր է — կույր չէ:
(Երբ որ պետք է՝ կնկատի,
Երբ որ պետք չէ՝ չի նկատի)...

Անպարտադիր և անհրաժեշտ,
Հավերժ ներկա և բացակա՝
Թե «սեր» ասես՝ խնդրում է շեշտ,
Թե ասես «կին»՝ վեհ ածական:

Եվ էակ չէ վերացական,
Այլ կենդանի՝ միս-ոսկորով:

Իսկ անո՞ւնը: Ասեք Խոնարհ,
Ասեք Շնորհ, ասեք Գորով:

Եվ մի՛ հարցրեք, ումն է նա.
Այս մեկը թող գաղտնիք մնա...

14. XI. 63
Երևան

ՄԻ՛... ՉԻ՛...

Մի՛ անիր (այս),
Մի՛ անիր (այն),
Մի՛... մի՛... մի՛... մի՛...

Չի՛ կարելի (այս բանն անել),
Չի՛ կարելի (այն բանն անել),
Չի՛... չի՛... չի՛... չի՛...

Այս «մի»—ն ու «չի»—ն աջից—ձախից,
Իբրև երկու փակագծեր,
Անլուծելի խնդրի նման
Մեր ողջ կյանքն են մեջտեղ գցել:
Եվ այս խնդիրն ո՞վ կլուծի...

26. XI. 63
Երևան

ԾԱՌԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Զէ՛, շա՛տ եղավ,
Էլ շա՛տ եղավ այս թթվադեմ փնթփնթոցը...

Ծառերն անգամ
Ունեն իրենց բարոթյունը՝ զով ստվերը,
Որ անվճար մեզ են հանձնում,
Որպեսզի մենք նստենք նրանց բարոթյան մեջ
Ու... շարանա՞նք՝
Եթե անգամ ոչ խեղճ հողի,
Ապա նրա թեկուզ և վատ տիրո՞ջ վրա...

Բայց ծառերը նաև կանաչ սլաքներ են,
Որ մեզ անխոս հրավիրում
Ու խնդրում են նայել... վերև՝

Կույրե՞րն են միշտ քայլում՝ դեմքը վերև տնկած:
Իսկ մշտապես ցած նայողը կույր չէ՞ արդյոք...

Եկեք մենք էլ վերև նայենք՝
Ո՛չ թե կույրի, այլ ծառի՝ պես,
Որպեսզի մեզ երբեմն զգանք
Քիչ ավելի մոտիկ օդին, քան թե հողին...

Իսկ շատ շեղա՞վ մեր այս տտիպ քմծիծաղը
Սրա՛—նրա՞՛
Ամե՛ն ինչի,
Կյանքի՛ վրա...

Բավակա՞ն է,
Եկեք ժողա՞նք,
Եվ ո՛չ թե լոկ մեր շուրթերով ու աչքերով,
Այլ ո՛ղջ մարմնով՝ այնպե՛ս, ինչպես
Ամբողջ մարմնով է կատարվում ամեն մի սրտ
Ինչ է անվերջ փնթփնթալով կյանքի վրա՝
Արդեն կյանքն ենք վերավորում շա՛տ ավելի,
Քան կյանքն է մեզ վերավորել...

Թող ծառերը գրկախառնվեն
Իրենք իրենց բարության հետ՝
Ձով ստվերի,
Ու քիչ քնեն,
Որ... լսե՞ն մեր քացախած քրթմնչոցը,
Իսկ մենք
Նրանց մատնանշիչ սլաքներին հետևելով՝
Նայենք վերև՝,
Մտերմանանք ա՛յն օդի հետ,
Որ իշխում է ոչ թե հողի տիրո՛ջ վրա,
Այլ հենց նաև հողի՛ վրա, նաև հողի՛:
Մտերմանանք ա՛յն օդի հետ,
Որ չի անցնում լոկ մարդկային շնչափողով,
Այլև փողով արդարությա՞ն՝
Շեփորելով և՛ արյունոտ կարեկցանքի,
Ե՛վ արյունոտ հաղթանակի,
Ե՛վ ծանրագին ուրախության
Բեթհովենյան երգը հուժկու...

Ու եթե դեռ ոմանք պիտի կրկին գրկեն
Մանոթ թառը
Եվ օրորեն իբրև մանկան, որ... լաց լինի,
Ապա ինքըս
Չե՞զ հմ ուզում իբրև մանկան իմ գիրկն առնել,
Ի՞նձ հմ ուզում իբրև մանկան իմ գիրկն առնել

Եվ օրորե՛լ,
Եվ օրորե՛լ,
Որ այսուհետ... չթնգթնգաք,
Որ այսուհետ... չթնգթնգամ...

4. II. 64
Երևան

ՀԱՅՐԸ

Շա՛տ է շատացել աղմուկն՝ աշխարհում,
Շատացել այնքա՛ն,
Որ լուսթյունը բարկացել է խիստ,
Եվ գրանից է սնդիկը ելնում ջերմաշափն ի վեր՝
Բանտարկված ինչ-որ վհուկի նման՝
Մեզ վախեցնելով ու վկայելով,
Որ Երկրագունդը թոքերի աճող բորբոքում ունի,
Եվ մենք ամենքս էլ ջերմութուն ունենք:
Մեր ջերմութունը
Կուսթյան սաստիկ բարկությունն է հենց,
Եվ նրա ցասում—բողոքն է նաև

Հա՛զը,
Այս հա՛զը,

Որ կարծես արդեն տիրակալական հովեր է առնում
Եվ համատարած աշխարհը բռնում...

Ու սաստկանում է այս հազը նաև... ծխից ու մխից,
Ուտի՛չ, թունավո՛ր ծխից ու մխից,
Որ շատացել է աղմուկի շափով,
Քանի որ ծուխը նրա շունչն է հենց...

«Մուխ էր դուրս ելնում հղեգա՛ն փողից»...
«Օ ծո՛ւխ ծիրանի»...

Իսկ այժմ արդեն

Մուխ են դուրս փնչում ո՛չ միայն կանայք,
Նույնիսկ ո՛չ միայն աղջիկներն անկոնք.
Մխոզ են դարձել իրե՛րը նաև,

Առարկանե՛րը,

Մետաղնե՛րն անգամ.

Ամեն մեքենա ծխով է շնչում,

Ամեն գործարան ծուխ է դուրս փնչում:

Մխնելուզային գլանակները ցցելով երկինք՝

Նրանք ծխի հետ տարածում են հազ...

Հա՛զը

Այս հա՛զը

Բռնել է հիմա նաև երկինքը.

Կապույտ երկինքը

Մուր վարակվել է ա՛յն կապույտ հազով,

Որ այլևս արդեն

Միայն մանկական հիվանդություն չէ,

Այլ հիմա նաև երկնայի՛ն մի ախտ,

Տիեզերակա՛ն մի հիվանդություն:

Եվ ամեն տեսակ օդանավերի

Հա՛զը

Այս հա՛զը,

Այս կապու՛յտ հազը

Հնչում է հիմա մեր գլխից վերև,

Նաև մեր գլխի վերևից վերև,

Որտեղ ծխում են ոչ միայն ամպեր հնավանդական,

Այլև անհիմաց ինչ-որ մի ոգի,

Որի անունն էլ չեն ուզում ասել,

Ինչպես որ շարքին անվամբ չեն կոչում...

Արքանյակների ծխին համաշափ

Մուխն է խառնրվում ա՛յն հրթիռների,

Որ ունեն երեք, չորս ու հինգ գլուխ՝

Քաղաքակրթված դեբրի նման...

Եվ լուսթյունն է բարկանում կրկին

Ու ջերմաստիճան դառնում երկնքին,

Որ տենդի մեջ է
Եվ ում քրտնքի
Անձրև կոչեցյալ կաթիլներն արդեն
Հաճախ են դառնում ախտ սողոմական,
Որ բուժում չունի
Եվ որի ճշան նախանշանը
Հա՞ղն է,
Ա՛յս հազը...

Հազի՛ց,
Ա՛յս հազից
Բուժվե՛նք շուտափուլթ,
Որ քամի՛ն հազա
Քարանձավների՛,
Խողովակների՛,
Փչակների՛ մեջ
Եվ փողոցային լուսամփոփների կենտ կոպերի՛ տակ,
Հազա մշտական թրթիռով սրտի ու խորհրդավոր՝
Ա՛յն հավերժական սիրահարի պես,
Որ իր գալուստն է ավետում հազով...

Հազի՛ց,
Ա՛յս հազից
Բուժվե՛նք շուտափուլթ,
Որ ամեն մի տան դուռն մոտ հազա
Ավտոմեքենա՛ն հարմար ու էժան՝
Հրավիրելով մի զբոսանքի,
Որի վերջն ունի «համբույր» գրություն...

Հազի՛ց,
Ա՛յս հազից
Բուժվե՛նք վերջապես,
Որ հազը դառնա տեր ու տնօրեն
Աշխարհի ամեն նավահանգստում,
Կայարաններո՛ւմ համայն աշխարհի,
Նաև երկնքո՛ւմ,
Նաև երկնքո՛ւմ,

Որ նո՛ւյնպես ունի լայնացման կարիք:

Ծրկրին

ու

Ծրկնին

Թոքերի առողջ լայնացո՛ւմ է պետք...
Ո՛չ թե թոքերի ահեղ բորբոքում...

7. 11. 64

Երևան

ԿԵՍՎԻՇԵՐԱՅԻՆ ԲՆԱՆԿԱՐ

Քամին փռուց ծուխ էր սարքում,
Մուխ անկրակ,
Ու տարածում պուրակ-պուրակ,
Իսկ դրանից ձանձրանալով՝
Վճռում խաղալ պահամոցի,
Եվ պահվում էր,
Այնպե՛ս պահվում,
Որ գյուղացիք ասում էին «շոգից մեռա՛նք»:

Օրը քակել իր ծալքերը
Ու փռել էր աշխարհով մեկ.
Մի ծալքից՝ շո՛գ,
Երկրորդից՝ տա՛պ,
Երրորդից՝ տո՛թ:
Տառապում էր նույնիսկ օդը՝ դողէրոցքից:
Տաքության մեջ զառանցում էր ամեն մի բույս:

Լուսթյուն էր մի այնպիսի՛,
Ասես ծերուկ բնությունն էր ուշաթափվել:
Եվ այդ ասեղ լուսթյունից մանկան նման վախենալով,
Միակ ջուրը՝ աղբյուրը խեղճ,
Կարծես ոչ թե կարկաչում էր առու դարձած,
Այլ հեկեկում—չղաձգվում...

Ջրով լի դուլն ստիպում էր, որ աղջրկա
Բուլ՛ր թովիչ պահուստները բացահայտվեն՝
Նույնիսկ իրեն վարագուրող հագուստի տակ:

Իսկ ես նաև նայում էի դուլի ջրին,
Որ աղջրկա քայլվածքի հետ
Իր ողջ կապույտ մակերեսով
Աչ էր գնում—ձախ էր գալիս,
Ասես լիներ մեկ միաձուլլ սկավառակ.
Ջուրն՝ աղջրկա քայլվածքի հետ,
Ջրի հետ էլ՝ երկինքը մով:
Եվ ջուրը շէր ելնում—իջնում,
Կարծես երկինքն էր դուլի մեջ
Գլխապատույտ զգում անվերջ...
Եվ այս ամենն՝ ա՛յն պատճառով,
Որ քունն ինձնից անմեղ տեղը,
Խոռվել է ու... լքե՛լ ինձ:

6, 12. II. 64
Երևան

ԲԱՐԻ ՕՐ

Իմ օրը երեկ աղքատ էր այնքան,
Որքան դրախտի նկարագիրը՝ սուրբ զրբերի մեջ,
Քանի որ լինել նշանակում է մասամբ ունենալ,
Իսկ ինձ թվում էր, թե չկա՛ էլ սեր,
Թե դարձել է նա արդեն սովորույթ...
Եվ երեկ աղքատ ու խեղճ էի ես,
Չար չէի բնավ, բայց աղքատ էի,
Անսովեր էի՝ անապատի պես.
Տա՛լ էի ուզում՝ տալո՛ւ բան չկար:
Ու ծանր էր մարդկանց «բարի օր» ասել.
Թվում էր, թե ես այդ «բարի օր»-ով
Նրանցից ինչ-որ բան եմ հայցելու,
Որ նրանք պիտի տան չկամությամբ...

Իսկ իմ օրն այսօր այնքան է բարի,
Որ կարելի է հացի տեղ ուտել,
Խաղալիքի տեղ տալ լացող մանկան,
Մալի՛ իբրև թարմ հրավիրատոմս,
Բաժանել մարդկանց, որ երբ բաց անեն՝
Իրե՛նք ողողվեն ցուքով բարության:

— Մանո՛թ-անծանո՛թ մարդիկ, բարի օ՛ր...

Եվ օրն իմ այսօր այնքան է լեցուն,
Որ եթե նույնիսկ ինձ գետին զարկեն՝
Ես կփշրվեմ իբրև... գանձանակ,
Եվ հարստությունն ու կայքը հոգուս
Բարի զնոցով շա՛ղ կգա շորս կողմ՝

Շփոթեցնելով և ապշեցնելով
Նաև ջարդողի՛ն,
Նո՛ւյնիսկ ջարդողին:

— Բարի օր... և ինձ ջարդողի՛ն անգամ...

Եվ կա կանչ արյա՛ն, որով մեր նախնիք
Գարեբրի խորքից մեր մեջ են խոսում,
Մեզ հետ են խոսում մե՛ր իսկ բերանով:
Եվ կա բնության անմեթ հրավեր,
Որից ընտանի կենդանին անգամ
Վայրենանում է հանկարծ վերջստին:
Արյան այդ կանչն է հիմա իմ բերնում դառնում
— Բարի օ՛ր,
Եվ քեզ է ահա հասցեագրվում,
Քե՛զ, իմ սիրելի՛, ում անմեղ մեղքով
Ես աղքատ էի երեկ տակավին,
Ինչպես զրախտը՝ սուրբ զրբերի մեջ,
Իսկ այսօր՝ բարի՛,
Իսկ այսօր՝ լեցո՛ւն... Տոյստոյի՛ շափ:

Թո՛ղ թագավորի այդ բարին այնտեղ,
Որ դեռևս կա թագավորություն,
Թո՛ղ նույն այս բարին նախագահ դառնա ամեն մի երկրի,
Աշխարհիս բոլոր պետություններին դառնա վարչապետ,
Վառելիք դառնա շարժիչների մեջ,
Գրքոշակ դառնա նավերի համար,
Ու ճակատագիր՝ ամեն մի մարդու...
Մենք էլ մտովին, ճամփորդենք սիրով,
Լինենք ամենուր՝ «բարի օր»-ի պես,
Եվ ամենուր էլ դասեր տանք սիրո՛
Ապացուցելով, որ սերն իսկական
Ընդամենը լուկ փոխում է ձևեր,
Երբեմն թվում սովորույթ անգամ,
Մինչդեռ իսկապես նա նույնն է մնում
Եվ կյանքի միջով, մեր ձեռքից բռնած,

Ասպհովարար առաջ է տանում,
Որ հրե խոսքով մութը ետ հրենք,
Մեր ուսով մղենք ժամանակն առաջ,
Օրվա ճակատից, որպես հին հուռութք,
Կախենք միևնույն զանգը.
— Բարի օ՞ր...

16, 17, 11. 64
Երևան

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հանդիպումը բաժանումի սկիզբն է հենց...

Հանդիպեցինք այդ ե՞րբ արդյոք,
Որ գնում ես, գնում արդեն:

Իմ գտնված — միա՛կ մակդիր,
Ամենաճի՛շտ բաղդատություն.
Դեռ նո՛ր գտած՝ թռչո՞ւմ ես դու մտքիցս արդեն:

Համ չեն զգում միայն բերնով:
Համ զգում են հոգո՛վ նաև:
Եվ գնո՞ւմ ես, գնո՞ւմ արդեն,
Որ հռչակի անհամությունն իրեն արքա
Ու դարձնելով հոգիս ոստան ու տնքացո՞ղ աթոռանիստ,
Իշխի նաև իմ կեղեքվող ծայրամասո՞ւմ...

Եվ համբուրված իմ շուրթերին դողդողում են սիրո խոսքեր,
Ինչպես ցողի կաթիլները ա՛յն թփերին,
Որոնց վրա անհոգ քամին դասն է սերտում իր գծառությունը
Ու ես անվերջ փորձ եմ անում
Իմ թափանցիկ լուսթյան առկ պահվծը մի կերպ:

Քո փեշերը փաթաթվում են գիրգ ծնկներին.
Խանգարել են ուզում կարծես, որ շքնատ:
Մխախտան է մեջըս հազում:
Ստվերները հոտոտում են հողը: կրկին:
Կամենում են կարծես զգալ

Անցած տեղիդ բուրմունքն անանց,
Քաղաքային փողոցների լույսերն ազոտ
Փռնոտ քամուց իրենց աչքերն են շուտ թարթում,
Ինչպես մարդը, երբ ուզում է լաց չլինել...

Պիտի գնա՛ս...

Պիտի գնա՛ս,
Իր քանի դեռ չենք հանդիպել՝
Փողոցն այնպե՛ս ինձ կարոտի,
Ինչպես ես քե՛զ:

Պիտի գնա՛ս,
Որ անխացած սպասումը
Բուրբազիծ քաշի իմ շուրջ՝
Ինձ դարձնելով սուր շառավիղ,
Սիրտըս՝ կենտրոն,
Որ ամեն ոստ իր ստվերով
Ցույց տա ժամը՝ սլաքի պես,
Ու շրշունով գրքնզացնի նույն ժամն էլի:
Որ ես զգամ, ուշացումով,
Թե ինչպես է սահում—անցնում
Կյանքն իմ կողքով,
Ես էլ՝ կյանքի,
Զգիպչելով երբեք իրար:

Պիտի գնա՛ս,
Որ ես անվերջ իմ մտքի մեջ,
(Թուփակի պես կամ անվտանգ խելադարի)
Նո՛ւյնը կրկնեմ.
«Շատը... գր-նաց, քի-չը մը-նաց»...

Եվ քանի որ պիտի՛ գնաս՝
Դե, շո՛ւտ գնա, որ շուտ էլ գա՛ս, շատ շմեռ՛ա:
Տե՛ս,
Օրորվող այս լապտերից
Ես մի շող եմ քաշում—պոկում:

Ա՛ռ,
Փաթաթիր ցուցամատիդ՝
Իբրև գունեղ մի հուշաթիլ,
Որ... վայրկյա՛ն իսկ շմոռանաս
Ու... շո՛ւտ գառնաս:
Իսկ քո երգուն քայլքի թելն էլ թող փաթաթվի
Մայթի՛ն այս գորշ, այս տա՛նը գորշ և իմ հոգո՛ւն,
Որ... բոլորս էլ (մա՛յթ, տո՛ւն, հոգի՛)
Մեկ վայրկյան իսկ շմոռանանք
Եվ սպասենք քեզ անհամբեր:
Իսկ ոլորուն—կաշուն ձայնը մեր համբույրի
Թող համերգվի այս վիրավոր լուռության մեջ
Ու որբացած մեր սեփական ականջներում,
Իսկ հեռվահաս ժպիտները մեր փոխանցիկ
Թող զրոշմեն իրենց վրա ապակիներն այս լուսադող՝
Սպասումի կնիքի պես...

— Ցտեսությո՛ւն:
Ի տեսությո՛ւն...

20. II. 64
Երևան

ԲԱՐՈՎ ՏԵՍԱՆՔ

ՆԱԿԻԻՑ, ՃՃՃՃՃՃՃ օրվա առթիվ

Ինձնից հեռու էր նա՛:
Ինձնից հեռու էր նա՛,
Ում ես հազա՛ր անգամ անվանել եմ՝ կյանքում. **Երբ**

մոգիկրաս:

Նա՛,
Ով բոլորովին անծանոթ էր նաև,
Կարծես կարոտ էր օտակ,
Լոկ ցնորք էր:

Եվ ամե՛ն ինչ կարծես հետըս բողոքում էր...

Կարծես լեռներն անգամ շուռ-մուռ էին գալիս՝ **իրենց**
ստվերներով,

Ինչպես ամեն գիշեր կողքից—կողք է շրջվում մեզնից ամեն
մեկը,

Երբ քունն անհանգիստ է ու երազն է խառնակ:
(Թվում է, թե հիմա է՛լ չպիտի լինի ո՛չ մի ստվեր).

Պիտի լինի լոկ շո՛ղ,

Եվ շառավի՛ղ լինի,

Շառա՛յլ լինի,

Լինի երազներով խորանարդված խոր քուն,

Որովհետև...

Հիմա ես ասում եմ սիրով.

— Բարո՛վ տեսանք իրար,

Հազա՛ր բարով:

Բողոքում էր նաև,

Բողոքում էր նույնպես,

Բողոքում էր նույնիսկ... **հորիզոնը՝**

Իր մենությա՛ն համար,

Մենակությա՛ն համար,

Միայնությա՛ն.

Այնտեղ ժամադրվում ու հանդիպում էին երկիրն ու երկինքը,

Միա՛յն ու լոկ նրանք, ուրիշ ո՛չ մի հոգի:

(Է՛լ մենակ չեն նրանք.

Հանդիպել ենք և մե՛նք՝

Մեր հանդիպմամբ կծկած մեզ բաժանող անծիր **հորիզոնը**):

— Բարով տեսանք իրար,

Հազա՛ր բարով:

Մթնած երկնքի մեջ, իրիկնացող օդում,

Ինչ-որ անտես ձեռքով ինչ-որ անտես բան են զոդում:

Ջրզոդությամբ հիվանդ սև ամպերը

Ապաքինվում կրկին ու լալիս են ուրախ,

Եվ անձրևը հիմա թթվածորվում,

Ուռչում—ուռճանում է պղպըջոցով:

(Թող խմորվի նաև երջանկությունը մեր

Ու դառնա հաց օրվա, ձրի նպա՛ստ՝

Իրար փնտրողների,

Բայց չգտնողների,

Միջահատված—զատված խեղճ սիրազույգերի

Ու սիրազուրկերի ափի վրա):

— Բարո՛վ տեսանք իրար,

Հազա՛ր բարով:

Երեքշաբթին, վախո՛վ, վիզն է քորում՝

Կամենալով խոսել օրենք—իրավունքից:

Բայց կիրակին, հեռվի՛ց, բիրտում նրան,

Բայց կիրակին նրան սաստում է խեթ.

(Թող մե՛կ շաբաթվա մեջ զո՛ւյգ կիրակի լինի)...

— Բարո՛վ տեսանք իրար,

Հազա՛ր բարով:

ՄՐԱՍ ԲԱՐԵՎ

Իր վերջն ունի տճեն հեքիաթ,—

Ես դա գիտեմ այնքան վաղուց,

Որքան անունն ամիսների:

Եվ հասել է հրածեշտի պահն անողորմ...

Պառկոտել են լեռներն ահա՛

Դեմքը ցցած դեպի երկինք,

Ու դաշտերն են ահա պառկել՝

Բերանքսիվայր, մեջքը տնկած,

Որ... ոչնչով շմասնակցեն

Հրածեշտին մեր այս տրտում:

Մուռ ժպիտով պարտակում եմ տխրությունըս

Ու նայում եմ մի հայացքով,

Որ հատուկ է մողեսներին.

Ո՛չ դեպի դուրս,

Դեպի նե՛րս եմ կարծես նայում:

Եվ՞ քշում եմ ինձնից մտքեր,

Դե՛րս ամառն տոթ—խեղդոցին

Գլխով ճանճ է քշում խեղճ ձին...

Ա՛խ ճանճերն այս, որ չեն պոկվում ինձնից հիմա,

Ինչպես ահա քեզ մեկընդմիջտ առևանդող

Այս գնացքը՝ զույգ գծերից այս երկաթի.

Ինչպես ահա տտիպությունն՝ այն խնձորից.

Որ խածում ես,

Որովհետև... լացն է գալիս գուցե ե քո...

Գիտե՛մ.

Սիրույց խոսելն արդեն

Չավասար է հիմարություն,

Սակայն ինչպե՞ս վերջին անգամ կրկին չասեմ,

Որ ինձ հիմա,

Նո՛ւյնիսկ հիմա

Թվում է, թե ամբողջ կյանքում

Ժամանակըս ես վատնեցի

Ամե՛ն տեսակ (լուրջ թե դատարկ) բանի վրա

Եվ... ժամանակ է՛լ չմնաց

Մի լա՛վ — կարգի՛ն — կո՛ւշտ սիրելու.

Ինչ որ եղավ՝ նախափորձ էր կարծես միայն,

Հնդամենը... սևագրություն,

Որ դեռ պիտի

Սրբագրվեր—մաքրագրվեր ներշնչանքով,

Մինչդեռ ահա պահն է հասել,

Որ քեզ ասեմ.

— Մնաս բարև՛...

Էլեկտրական լույսերն ասես լինեն փողեր

Մի վիթխարի նորահնար երգեհոնի,

Եվ քամին է նրանց հիմա աշխատեցնում՝

Նվագելով մի այնպիսի՝ ողջերթ ցավոտ,

Որից նույնիսկ սարսըռում է

Մետաղալարն էլեկտրական,

Ու գողոցով օդն է մղվում

Դեպի առաջ. ո՛ւր՝ չգիտի՛:

Իսկ դու բնավ չե՛ս էլ լսում.

Է՛լ այստեղ չես դու մտովին,

Այլևս դու հեռո՛ւ ես շատ

Եվ դրանից այնպես ես դու գեղեցկացել,

Ինչպես մանուկն իր քնի մեջ:

Ես կհիշեմ քեզ հենց այսպես՝ գեղեցկացա՛ծ:

Իսկ իմ դե՛մքը...

Երբ դավաճան ինչ-որ երազ

Երբևիցե ինձ վերստին հիշել տա քեզ,

Աղաչո՛ւմ եմ.

Դու մի՛ հիշիր իմ դեմքն այնպես,
Ինչպիսին է այս վայրկյանիս:
Անշարժացած մկաններս վկայում են անհայելի,
Որ դա կարծես դե՛մք չէ հիմա,
Այլ մի... դիմա՛կ:
Եվ իզո՛ւր են ծիծաղեցնել փորձում սրա՛նք՝
Այս սյունեքը.
Ես լա՛վ գիտեմ,
Որ այս պահին իմ ժպիտը
Պիտի դառնա մի դասական ծամածուանք...

Բայց... քանի դեռ բոլորովին դու չես մեկնել,
Ես չե՛մ շրջվի:
Է՛հ, կան բաներ,
Որ շրջվելու իրավունք էլ չունեն կյանքումս:
Ի՛նքզ խորհիր, թե իսկապես ի՞նչ կլիներ,
Եթե շրջվել կամենային... կամուրջները կորաքամակ,
Որ իմանան, թե... երկինքը ի՞նչ գույն ունի...
Ես չե՛մ շրջվի՝ քանի դեռ դու չես հեռացել
Սահմաններից... մեզ կամրջող հիշողութ՛յանս:
Այնժամ միայն ես քեզ կասեմ.
— Մնաս բարե՛...

24. 11. 64
Երևան

ԻՆՁՆԻՑ, ԹԵ ՔԵԶՆԻՑ

Թեպետ ինքը մրրիկի մեջ,
Ինքդ էլ մրրիկ մի կատաղի,
Այսուհանդերձ մի՛ մոռացիր, որ մրրիկը
Տանիքներ է քշում—տանում.
Ու ջարդում է ծառեր հսկա,
Բայց արմատից նա չի հանում
Ո՛չ խոռոչ ո՛չ էլ դաշտածաղիկ...

Երբ վերջանա մրրիկն այս մեր,
Ես կգնամ, հավանաբար, զբոսնելու
Եվ կավերեմ իմ ոտքերով
(Յուրատեսակ մրրիկի պես)
Մաղիկների միատեսակ սանրվածքը
Եվ թերևս կխաղաղվեմ՝
Մտածելով,
Որ ավագ է իմ սերն ինձնից.
Նա ծնվել է ինձնից առաջ՝
Իմ հեռավոր նախնիների սրտի խորքում,
Նրանց գործոն շնչերակի դուդարի մեջ,
Բայց և ինձնից շատ ավելի կրտսեր է նա
Ու երբևէ չի ծերանա՝
Փոխանցվելով...

Իսկ քանի դեռ ֆոթոգրիկը չի վերջացել,
Թույլ տուր գոնե կառչել հիմա ձեռքին քո պաղ,
Որ մեկնում ես անջատումի այս վայրկյանիս
Այնպե՛ս դյուրին և անտարբեր,

Ինչպես օտար մեկի հետ են ծանոթանում:

Բայց մենք... ա՛յլ կերպ ծանոթացանք,
Եվ այս ձեռքն էր առաջինը,
Ինչ քեզանից ունեցա ես:
Նա դառնում է և վերջինը,
Ինչ քեզանից ինձ է մնում:
Եվ արժի՛ նա երախտագետ իմ սեղմումին...
Իսկ մենք հիմա, այս մրրիկով, անջատվում ենք:
Որ... ձեռքն իմ այս
Այս սեղանից մնա առկախ,
Ինչպես... լքված մի առարկա...
Որ... աչքերիս հին թաղանթին
Մնան նոր-նոր կարկատաններ...
Ու դաջվածքներ՝ մարմնին և՛ իմ, և՛ գուցե քո,
Ինչպես մարմնին ա՛յն կենդանու,
Որով բախտ ու սեր են փորձել
Եվ որին մեր նախնիները
Մկրտել են «զատիկ» անվամբ...

Անջատվո՞ւմ ենք...
Բայց մեզ վրա, անջատ-անջատ,
Թող իրե՛րը չգերիշխեն
Եվ չհեծնեն դեպքե՛րը մեզ:
Թող դու գտնես գոնե այնքա՛ն,
Որքան, ասե՞մ, ես եմ կորցնում...
Թող ծառերը իրենց ճոճքով
Մշո՛ւշն ավլեն մեր կտրելիք ճանապարհից,
Ու հա՛րթ լինի ճանապարհն այդ՝ գոտո՛ւղ նման,
Հենց ա՛յն գոտուղ,
Որ չգիտեմ և չգիտես՝ ո՞վ կարձակի...

Իսկ մեծ բա՛ն ես դու համարում
Մեր տեսվելը այսկողմ—այնկողմ:

Օ՛Ֆ, հասկացիր գոնե հիմա՛.
— Երբ ինքներս ենք փախչում մեզնից՝

Մոտենում ենք մեզ առավե՛լ...
Մայրամաս ենք ուզում գնալ:
Բայց խրվում ենք մեր կենտրոնո՛ւմ...

Գոնե հիմա՛ դու հասկացիր...
— Լուսավոր է կյանքը թվում
Լոկ այնքանով և լոկ այնժամ,
Երբ գնում ես քեզնի՛ց այնկողմ,
Ազատվում ես ինքրդ քեզնի՛ց...

Իսկ դու հիմա, հեռանալով,
Ազատվում ես ինքրդ քեզնի՛ց,
Թե՞ ընդամենն ինձնից միայն...

24. 11. 64

Երևան

ԱՆԱՀԻՏ

Դու օտա՛ր չես, չե՛ս:

Բայց ի՞մն էլ չես, հա՛...

Դու՛ վաղընչական հիմավորը բազին
Փակ շրթունքներով ու բաց աչքերով:
Ես՛ մի հեթանոս առայսօր ծպտյալ:

Դու՛ հավերժաբուխ աղբյուր տասնակունք,
Քո ամեն մատից՝ մի ակըն ցայտիչ:
Իմ թաց աչքերի երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ըմպում եմ ես քեզ:

Անշարժությունը քո պիրկ ոտների
Դարձընում է ինձ մի խոյ օրուկված,
Որ պտտվում է շորսբոլորքը քո
Ողջ շառավիղով իր ոտնակապի:

Նա արածում է այն, ինչ աճում է
Իր ոտների տակ և քո շուրջբոլորը,
Բայց որոճում է... միայն քե՛զ ու քե՛զ
Ու բառաչում է... միայն քե՛զ համար:

Քո ստինքները՝ պարսատիկի պես,
Սպառնում են միշտ ջարդել գանգն իմ պիղծ,
Երբ ասում եմ քեզ, որ դրանք հետո
Կառասպար դարձան... սկիհի՛ համար:

Թվում է, թե քո շրթունքները փակ
Ուր որ է պիտի բարկությամբ բացվեն,
Երբ ասում եմ քեզ, որ հետագայում
Քեզ գրկել տվին մի... թո՛ւխ մանուկի:

Բայց ամեն անգամ խաղաղվում ես դու,
Երբ թաց աչքերիս երկու ափերով՝
Եղեգնիկներով իմ թարթիչների,
Քո կամքից անկախ ես ըմպում եմ քեզ:

Եվ հասկանում եմ, որ ամեն անգամ,
Երբ սկսվում է նո՛ր դարագլուխ,
Ջանում են մի կերպ խուսափել քեզնից,
Իսկ դարագլխի ավարտի վրա՝
Ինքնակամորեն քե՛զ վերագառնում:

Անտեսանելի վերջի՛դ ժամանակ,
Անտեսանելի սկզբի՛ս պահին
Հանդիպում ենք մենք ու... տրվում իրար:
Եվ չե՛ն տեսնում մեզ... չի տեսնում նույնիսկ
Ո՛չ պատվանդանըդ,
Ո՛չ կոշկատակըս...:

Դու դիցուհի՞՞ ես:
Բայց և ի՛մն ես դու...

9. VII. 61

Թո՛ւփա

24. II. 64

Երևան

ԵՐԵՒԱՅԻ ԼԵԶՎՈՎ

Ասում են, որ մենք՝ տղամարդիկըս,
Անշափ նման ենք երեխաների,
Միայն թե, իբրըր, մենք այդ չգիտենք:
Ծա գիտե՛մ, գիտե՛մ,
Շա՛տ լավ էլ գիտեմ:
Բայց ես չգիտեմ, թե ո՞վ է ասել,
Որ եթե մայրը ծեծում է նույնիսկ,
Երեխան դարձյալ «մայրի՛կ» է կանչում:
Ծա եմ, սիրելի՛ս, հենց այդ երեխան
Ու նրա լեզվով ահա վերստին
Քեզ եմ ձայն տալիս օգնության կանչով.
— Ցավում է, ցավո՛ւմ...

Ծա քեզ իմ մասին ոչինչ չեմ պատմել
(Մեզ ժամանակը երես չի տալիս):
Այսքա՛նը գոնե իմացիր այսօր.
Մանուկ ժամանակ
Մանուկին էի ես մեջըս ատում
Ու նախանձելով ես սիրում էի մեծերին միայն:
Իսկ հիմա իմ մեջ մեծին եմ ատում
Ու սիրում իմ մեջ ապրող մանուկին,
Որ կծկվել է, բայց ամբողջացել:
Հիվանդանում է նա հիմա հաճախ,
Բայց վերստին է նա առողջանում,
Երբ ցավն ուզում է սնվել... արցունքով:

Ու երբ որ ցավն է արցունքով սնվում,
Ծա էլ մանկան պես ու նրա լեզվով,

Ինչպես քեզ հիմա,
Չայնում եմ կրկին
Կանչով օգնության.
— Ցավում է, ցավո՛ւմ...

Իսկ դու ինձ ասա փաղաքո՛ւշ խոսքեր
(Ի՛նչ փուլթ, թե նրանք չեն կատարվելու):
Հեքիաթնե՛ր պատմիր՝ իրար խառնելով
(Ծա չեմ ջոկելու ճիշտը կեղծիքից):
Ու եթե ոչի՛նչ էլ չի մնացել,
Կրկնիր ա՛յն խոսքը, որ չի հնացել
Եվ որ իսկապես շա՛տ լավ է օգնում:
Չե՛ս հիշում:
Հիմա հիշեցնեմ:
Ասա,
Որ... կմեծանամ ու կմոռանամ:

Կրկնիր այդ խոսքը
Նա շա՛տ է օգնում՝
Թալիսմանի՛ պես,
Հուռութքի՛ նման...

11. III. 64
Գրիշան

ԽԵՆԹԸ

Ես նայում եմ իմ ձեռքերին,
Ա՛յնպես նայում,
Որ դիտողը ինձ կարող է խենթ համարել:
Նայո՛ւմ-նայո՛ւմ,
Շուռ ու մուռ եմ տալիս այնպե՛ս,
Քարկըտիկ եմ կարծես խաղում առանց քարի:
Ու նրանց հետ խոսում եմ ես
(Նաև խոսո՛ւմ)
Եվ համարյա նույն լրջությամբ,
Ինչպես Համլետ արքայազնը՝ ընդ գանձի հետ,
Որովհետև... այս ձեռքե՛րք,
Միայն սրա՛նք,
Սրա՛նք պիտի լոկ վկայեն,
Թե եղե՛լ ես դու իմ կյանքում,
Ունեցե՛լ եմ երբևէ քեզ,
Զգացե՛լ եմ քեզ՝ համի պես,
Ապրե՛լ եմ քեզ՝ ցավի նման:
Այս ձեռքե՛րը,
Միայն սրա՛նք,
Սրա՛նք պիտի լոկ վկայեն,
Որովհետև...
Ինձ եղածը մտապատրանք է լոկ թվում,
Կարդացած վե՛պ,
Ուրիշ մեկի պատմած երա՛զ:
Ու չեմ հիշում մինչև անգամ քո դեմքը ես.
Տանջում եմ ինձ,
Չեմ ներում ինձ,

Ատում եմ ինձ,
Բայց... չե՛մ հիշում դեմքըդ անգամ:

Միայն սիրված ու համբուրված աչքերը քո,
Ասես քեզնից ընդմիջտ պոկված,
Ուր նայում եմ՝ ինձ են նայում,
Ուր թեքվում եմ՝ գտնում են ինձ,
Այն Բախտի պես,
Որ դիցապաշտ հին հույներին
Հետևում էր ամբողջ կյանքում...

Անգամ դեմքդ չեմ հիշում ես...
Ու թե հիշեն՝
Միա՛յն սրանք,
Լոկ ձեռքե՛րըս պիտի հիշեն
Ու վկայեն, որ դու կայի՛ր,
Որ դու եղա՛ր:
Իրո՛ք եղար:
Միայն սրա՛նք պիտի հիշեն
Քո ձևե՛րը,
Մա՛շկը,
Հո՛տը,
Սարսո՛ւտը,—
Քեզ՝ ամբողջովի՛ն...

Ու չնայե՛մ իմ ձեռքերին
Ու չնայե՛մ այնպե՛ս, այնքա՛ն,
Որ դիտողը ինձ կարծի... խենթ:

Ու թե կարծի՝ կսխալվի՞ն...

11. III. 64
Թիբուս

ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՓՆԵԿԻՐԸ

Ավելի շուտ է ապագան գալիս,
Քան թե՛ շուգելով՝ մեկնում է ներկան:
Նկել ես... այդպես:

Ու ես՝
Շփոթված—շաղված ժպիտով
Ժպտում եմ անվերջ,
Շարունակ ժպտում՝
Բուռդայի նման...

Ու զարմանում եմ,
Զայրանում նաև,
Որ երջանկության մրցանակ չկա
Համայն աշխարհի ո՛չ մի անկյունում:
Իսկ եթե նման մրցանակ լիներ,
Հիմա դափնեկիր ե՛ս կդառնայի,
Նվ ողջ աշխարհը՝
Դարձած ցուցամատ,
Ի՛նձ պիտի նշեր բարի նախանձով,
Քիչ կակազելով բարի նախանձից.
«Տե՛...սե՛ք ա՛շ...խա՛ր...հի՛ երջանիկ մարդուն»:

Իսկ երբ աշխարհի երջանիկ մարդն է սկսում խոսել,
Լսում է նրան... տարե՛րքը նույնիսկ:
Նվ զուր մի՛ կարծիր,
Թե սովորական մի ձյուն է տեղում:
Զէ՛.

Ես պարզապես «սեր» բառն եմ հիմա հուղվում մտքով,
Նվ դա հնչում է իբրև հրաման,
Որ մեծափաթիլ ձյունն էլ հուղվվի պարզ ու վեհորեն,
Նվ նրա ճոխն էլ իմ ոտների տակ ինձ շփոթեցնի՝

Մի՛շտ հիշեցնելով մի բան,
Որ իսկույն չի մտաբերվում
Ու երկա՛ր—երկա՛ր մտածելուց վերջ
Գլխի ես ընկնում, հասկանում հանկարծ,
Որ խնդությունից
Սիրտը ձխում է հենց այս նո՛ւյն ձևով...

Նվ զուր մի՛ կարծիր,
Թե մառախուղն է ձորն ի վեր ելնում՝
Դեպի ետ հոսող ջրվեժի նման,
Դրա համար էլ դանդա՛ղ—ծանրորե՛ն:
Զէ՛.
Մ՛ս եմ կրկին շնչում ձորն ի վեր՝
Քնքշանքի խոսքեր արտաբերելով:

Նվ գո՛ւր ես կարծում,
Թե համն ես առնում նորելուկ գարնան,
Նվ որ հալոցքի օրերն են հասել,
Նվ որ ծառերը պիտի աննկատ պտկեն նորից-նոր:
Զէ՛.

Մ՛ս եմ դարձյալ վերամկրտում
Նորագարձ սերըս իմ տաք շնչի մեջ,
Նվ դրանից է
Կուսպաշտ ձմեռն իր բեռը բարձա՛ծ
Փախուստի դիմում ճամփով հալոցքի,
Նվ դրանից է ծառն էլ սկսում
Լնդերքը ճեղքել՝ երեխայի պես,
Նվ ատամ հանել՝ բողբոջի տեսքով:

Ավելի շուտ է գարունը գալիս,
Քան թե՛ շուգելով ձմեռն է մեկնում:
Դո՛ւ էլ, սիրելի՛ս, եկել ես այդպես,
Նվ եկել, կարծեմ, իմ հրավերով կամ հրամանով,
Որ ուրիշ բան չէ,
Քան «սիրել» բայի խոնարհումը լուռ...

ԳԱՐՆԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀՈՏԸ

— Հարկավոր չէ՛,— ասում եմ ես ինքըս փնձ,
Ասում եմ ես մտքիս մեջ
Ու մեկ-մեկ էլ՝ գծի նման՝ բարձրաձայն:
Հարկավոր չէ՛ այս նոր սերը ո՛չ մեկիս՝
Ո՛չ քեզ, ո՛չ ինձ,
Ո՛չ մեկիս...

Բայց ակամա դերասանից (հասկանո՞ւմ ես, ակամա՞),
Հա՛, ակամա դերասանից ո՞վ է դժբախտ առավել...
Եվ կույր ձեռքս
Կույրին հատուկ խարխափումով ու դողով
Հեռվից-հեռու ձեռքդ, մեջքդ կամ աչքերդ է արոնում
Եվ մոլեգին շոշափումով կարծես նրանց վրայից
Ջնջում է իմ «հարկավոր չէ» — ն տառ տո առա...

Վա՛յ քեզ, թշվա՛ռ երջանկության,
Տանջանքի հո՛ղը գլխիդ:
Մի՞թե նրա շափ էլ չկա, աբ շտանջես ինքըդ քեզ,
Որ մոռանաս «միթե» — ները,
«Չէ որ» — ները քո երկասյր
Եվ անձնատուր լինես ինքըդ քո ընթացքին
Գարնան պես:

Իսկ գարո՞ւնը...
Արձակվում է ճամփաների պաղն արդեն:
Կպչուն ցեխն է հովեր առնում իշխելու:
174

Եվ ձների մարմնի վրա վտակները հալոցքի
Իրենց հունով բաց են անում նորանոր
Երակներ ու գաբկեբաղներ... ու տաք.
Սկսվում է մի նոր գարուն անհատա՛կ ու անհատա՛կ՝
Երազի մեջ մեզ պատահող անկումի՛ պես անհատակ...

Ինչքա՞ն կուզես «հարկավոր չէ՛» գողգողա.
Ինչքա՞ն կուզես թող ուղեղըդ երկմտանքի սև ջերմից
Ձյան պես հալվի,
Գառնա պաղած թանապուր.
Ինչքա՞ն կուզես խաչ դիր վրադ
Քո սեփական արյունով,—
Միկնո՞ւյնն է.

«Հարկավոր չէ՛» — ն իր իսկ կամքին հակառակ,
Ինքն իրենից թաքուն անգամ՝
Ի վերջո

Վերափոխվում ու դառնում է թի՛նչ ուզում է թող լինի».
Որովհետև... մարդը մա՛րդ է, ո՛չ թե քայլող գաղափար...
Որովհետև... «չէ որ» — ները նո՛ւյնպես քնել են ուզում...
Որովհետև... ինքդ գարնան վտանգավոր հոտ ունես...
Որովհետև... ինքս էլ գարնան վտանգավոր այդ հոտից
Միշտ զգում եմ գլխապտույտ,
Որ տևում է ամիսներ...
Որովհետև... պարտվե՞լ, այո՛,
Ումի՛ց կուզես դու պարտվի՛ր,
Սակայն ո՛չ թե ինքդ քեզնից.
Ինքդ քեզնից պարտվելով՝
Դու դառնում ես փսոր ծամոն
Կամ ինքնաթափ պատի ծեփ
Եվ ոչ նույնիսկ մի մեքենա,
Գեթ մեքենա՛ խելացի.
Որ կուզեի՛ իրոք դառնալ,
Բայց ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,
Եթե բնավ չի՛ ստացվում, ի՞նչ անեմ:

էլ ի՞նչ մնաց, որ ի՞նչ անեմ, սիրելի՛ս:
Մնաց գոռա՛լ, թե երկուսիս՝ ինձ ու քեզ,
«Հարկավոր չէ՞» — ն հարկավոր չէ՞ քնկապես.
Մե՛նք ենք իրար հարկավոր...

17. III. 64

Գիւլեան

ՁԻԹԱՊՏՂԻ ԾԱՌԸ

— Ուրեմըն շե՛ս գալիս,—
Իմ իսկ տված հարցին
Ինքս եմ պատասխանում խոցված հպարտությամբ.
— Ի՛նքըդ գիտես...

Իսկ դու
Ինքդ էլ գիտե՞ս արդյոք, որ խուսափման ուղին
Կյանքում գուցե կարճն է ճամփաներից բոլոր
Եվ նույն տեղն է բերում արագորե՛ն, նորե՛ն:
Ուրեմն էլ ինչո՞ւ ես զուր խուսափել ջանում:

Մոռացե՛լ ես գուցե:
Բայց դու գիտե՛ս հաստատ,
Որ ես մոռացության բոլոր օրենքներից
Մեկն եմ լոկ ընդունում՝
Ա՛յն, որ սահմանել է հպարտությունն ինքը,
Երբ խոցել են սրան՝ գազանի պես:
Իսկ ես... ու քեզ խոցե՛լ ինչ-որ բանով:

Եվ մի՞թե չես տեսնում դու իմ քնքշությունը
Եվ իմ մեղմությունը դեռ շե՛ս զգում միթե:

Ա՛խ այս քնքշությունը, որ ինձ կապոտել է,
Ինչպես Գուլիվերին՝ թզուկները...
Ա՛խ այս մրրկանման մեղմությունը,
Որով պաշարված եմ և օղակված այնպես,
Ինչպես մայրցամաքը՝ օվկիանոսով:
Ա՛խ այս «ախ» — ը նաև,

Որ կպել է լեզվիս
Անթուիթյան ծնած փառի նման,
Եվ ինձ կպատճառեր սրտախառնութ, անշո՛ւշտ,
Թե շիհներ համիդ նշխար—մնացորդը,
Որով փաթաթվում եմ ես սրբորե՛ն, նորե՛ն՝
Առանց հաղորդություն սպասելու հույսի:
Թե շիհե՛ր համիդ նշխար—մնացորդը...

Իսկ դու գիտե՛ս արդյոք, որ դո՛ւ բնավ դո՛ւ չես.
(Ո՛չ զարմացած նայիր, ո՛չ ծիծաղիր):
Հաստա՛տ գիտեմ, որ դու դարեր առաջ
Զիթապտղի նազուն ծառ ես եղել,
Հետո (ի՞նչ իմանամ, թե քանի՛ դար հետո)
Երկրորդ անգամ կրկին աշխարհ գալիս.
Կի՞ն ես դարձել արդեն...
Գիտե՛մ, հաստա՛տ գիտեմ,
Թե չէ այդ ինչի՞ց է, որ քո շրթունքները
Հասուն ձիթապտղի համ են տալիս...

Հիմա ի՞նչ ես ասում. դու չե՛ս գալիս:
Ի՞նչ է, կամենում ես, որ ես մեռնեմ
Մի անպտո՛ղ ծառի դանդա՛ղ մահո՞վ՝
Երկա՛ր հոգեվարժիս ողջ ընթացքում
Անվերջ երազելով ձիթապտղի մի ծառ՝
Հեռո՛ւ-հեռո՛ւ ինձնից,
Քո՛ շափ հեռու...

17. III. 64

Գիլգամեշ

ԱՆՔՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՏԱՄՍ

Ոչի՛նչ այնպես ինձ չի հուզում,
Ինչպես մի հարց միամիտ.
Խավարն ինչո՞վ մաշեցնեկե,
Գիշերն ինչպե՛ս լուսացնեկ,
Եթե սրտիդ ճմլումն էլի
Թույլ չի տալիս մտնել քուն...

Տե՛ս, ջղային այս անտառը
Հանգստացավ ինքն իրեն՝
Իր հերթական նոպան ապրած՝
Տառապած ու պարտասուն:
Իսկ ջրերը
Հար տանջվելով անքնության բիրտ ձեռքից,
Բարձունքներից ցած են նետվում՝
Ինքնապանի մոլուցքով,
Բայց, կատվի պես,
Միշտ ընկնում են իրենց ճկուն թաթերին
Եվ, մի վայրկյան շնչակտուր, մլավում են քե՛զ հետո
Ու լուսյան մեջքի վրա նո՛ր ու նորից փակցնում
Իրենց տենդոտ դառանցանքը՝
Խոտվության կոշի պես...

Իսկ ես՝ ներկա, մինչ հայացքս՝ բացակա,
Օտարվում եմ ինքրս ինձնից,
Ինքրս ինձ չե՛մ ճանաչում:
Ջլախտավոր ինչ-որ խոհեր,

Ինչ-որ մտքեր ընկնամոր
Քարտում են, ընկնում-ելնում՝
Կարծես ո՛չ թե գլխիս մեջ,
Այլ... հեռավոր լուսնի վրա կամ Մարսի...
Մեռելներն են ինձ այցելում՝
Կերպարանքով երազի,
Ու շեն թողնում, որ զրուցենք երկուստեք.
Իրենք իրենց մենախոսում են անձայն,
Ապա թողնում—հեռանում են,
Որ ես լսեմ քիչ հետո,
Թե ինչպես է երկախոսում ճեպընթացը բքի հետ,
Թե ինչպես են երկախոսում խոհուն ծերպն ու սուր քամին,
Թե ինչպես են ջղաձգվում ա՛յն գետերը հորդաջուր,
Որոնց երբեք ես չեմ տեսել,
Ո՛չ, տեսել եմ... քարտեզին...
Հետո ինչ-որ արվարձաններ,
Ասես տված իրար խոսք,
Արշավում են,
Որ կենտրոնի տեղը իրենք գրավեն,
Դրանով էլ հենց, իբրը թե, արագացնեն ապագան...
Իսկ նույն պահին
Ինչ-որ ձայներ իմ կենտրոնում սեփական
Ընդդիմախոս այլ ձայների հայրն ու մայրն են անիծում...
Հետո ինչ-որ անո՛ւշ մի ձայն, անվստահ ու տխրագի՛ն,
Հայցելու պես պահանջում է, որ փորձ անենք շտիրել,
Այլ միշտ մնանք բարեկամների մերձավոր...
Հետո՛... Հետո՛...
Կարծես թե ես պառկած եմ հենց ի՛նձ վրա
Եվ ինձ վրա ի՛նքըս պառկած,
Ինձ ճմլելով—ճզմելով՝
Հանգստանալ եմ ուզում...
Պարզ չէ՞,
Որ ինձ էլ չի հուզում այն հին հարցը միամիտ,
Թե գիշերը ինչպե՞ս պիտի լուսացնեմ,
Թե խավարը ինչո՞վ պիտի մաշեցնեմ,

Երբ աչքերիս չի մոտենում քունն անգութ,
Պարզ չէ՞ արդյոք.
Ինքըս պիտի, այսպե՛ս, պառկե՛մ ինձ վրա
Եվ ինձ վրա ի՛նքըս պառկած,
Ի՛նձ ճմլելով—ճզմելով՝
Հանգստանամ փառավո՛ր ու փառահե՛ղ...

17. III. 64

Դիլիշան

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀՈՒՅՍԸ

Վախենում եմ վաղ գարունից, որովհետև, ճիշտն ասած,
Վախենում եմ, որ շրացվի՛, այլ... տրաքի՛ սիրտըս գոց...
Վախենում եմ սիրահարվեմ վերջին անգամ՝ մահացու,
Եվ առաջին անգամ մերժվեմ իմ այդ վերջին սիրածից...
Վախենում եմ, որ մոռացած նախկին փորձ ու նախկին դաս՝
Տանջանքի մեջ նորից մխվեմ ու դուրս չգամ՝ մեխի պես...
Վախենում եմ...

Բայց գարունն է անվախորե՛ն մոտենում:
Խուժան քամին խելքի գալիս վերջապես
Ու դառնում է լուրջ ու խոհուն սերմնացան.
Սար ու ձորում նա գարթոնք է շաղ տալիս:
Արևն ինքը՝ մեծ մոր նման՝ ձյան վրա
Այստեղ-այնտեղ կարկատաններ է գցում:
Հողն օրեցօր կարծես դառնում է յուզոտ,
Ու գոլորշին գրգռում է ախորժակ
Բողբոջումի՛,
Բեղմնավորման
Ու սիրո՞՛
Կենդանո՞ւ մեջ,
Բույս ու ծառի՛
Եվ սրտի՛...
Ելման ջրերն ասես ոչ թե ջուր լինեն,
Այլ գարեջո՛ւր,
Պղպղացո՞ղ գարեջուր:
Եվ արբում է շրջակայքում ամեն ինչ՝
Մարդ ու գազան,
Բույս ու մրջյո՛ւն,
Սիրտ ու ծե՛րպ:
Եվ արբում են՝
182

Խմած կամ թե շխմած.
Եվ արբում են միայն տե՛սից կամ հոտից:
Եվ արբում են...

Ես կրկնակի՛ եմ արբում.
Նակ քեզնի՛ց՝
Սիրված կամ թե չսիրված,
Նակ քեզնի՛ց՝
Նոկ քո տեսքի՛ց ու հոտի՛ց...

Եվ ո՞ւր կորչեմ գլուխս առած,
Ո՞ւր կորչեմ:
Հիացմունքից ու սարսափից կարկամած,
Կարծես հանկարծ հողախախտված
Ու ջլատված ալտմա՛
Անտարբեր եմ ես ձևանում,
Դեմքս փոխում դիմակով,
Բայց... շոյելու և շոյվելու մի ցանկություն կատաղի,
Ակնհայտի մի տե՛նչա՛նքի դավապրություն ծպտրված
Իմ աչքերի մատնը շոյված բացահայտվում է վերջա
Ու տրվում են դատապարտման...
Դատը պիտի դո՛ւ վարես:
Եվ մի՞թե դու
Մեղմացուցիչ դեպք հանցանաց շեռ գտնում
Թեկուզ և իմ ա՛յս վախի մեջ խոստովանված կամովին,
Գեթ գարնա՛ն մեջ այս խելքահան,
Այս խելքահան օդի՛ մեջ,
Նակ... քո՛ մեջ՝
Քո պահվածքի՛,
Քո նայվածքի՛,
Հոտի՛ մեջ...

Տե՛ս, հայցում եմ,
Բայց և մի քիչ սպանում.
Զհասցընե՛ս բողբոջարկման, դատավո՛ր...

ԿՈՐՉԻ ՀԻՆԳՇԱԲԹԻՆՆ

Քեզանից հեռու
Ծա ապրում էի
Կարծես թե ինքս էլ ինձանից հեռու:
Ինձանից հեռու
Գու ապրում էիր...
Գու չէի՞ր ապրում բուսական կյանքով:
Իսկ հիմա,
Երբ մենք մեկտեղ ենք արդեն,
Կարծես թե նորից շերտ-շերտ միացանք,
Որ ամբողջանանք՝ նարնջի նման՝ մի կեղևի մեջ
եվ հյութավորվենք՝
Հողի ավշային շորս բաժնին խառնած
Չորս բաժին ավյուն արեգակնային,
Ու երջանկորեն՝
Նո՞ր կերպ ու նորե՞ն՝
Բարբառենք անխոս.
«Այս է մեր մարմինն, առե՛ք ու կերե՛ք»...

Ինձանից հեռու
Գու նման չէի՞ր...
Ծա նման էի կարծես ա՛յն մարդուն,
Որ սքանչելի ձեռագիր ունի,
Բայց... գրագետ չէ կատարելապես:
Իսկ հիմա,
Երբ մենք մեկտեղ ենք կրկին,
Նո՛ւյն կյանքը հիմա
Իր սքանչելի նո՛ւյն ձեռագրերով
Գրագիտության դասեր է տալիս

Քե՛ շնորհալի վազերին այգու,
Քե՛ տաղանդավոր գետերին բուր,
Քե՛ հայտնի ոխից գազազողներին,
Քե՛ թաքուն սիրուց կակազողներին,
Եվ թե՛ աշխարհիս պետերին բուր,
Որ վերջիններս մատերից բուր,
Մա՛նավանդ... ահեղ ցուցամատերից
Մա՛հը չկաթի,
Այլ կյա՛նքը ծորա
Թշվառ ու փոքրիկ այս երկրի վրա՝
Հեռվից ետ դարձող
Տիեզերախույզ հրթիռների պես...

Տեսնո՞ւմ ես:
Մի տե՛ս.
Մաղկած ծիրանին դիմացի բակում
Նշխար է բաշխում քահանայաբար
Ամբողջ շրջանով իր մեծ շուրջառի,
Իսկ մեղուները
(Այդ նշխարները ծծելուց արբա՞ծ,
Քե՞՞ գուցե դրդված ուրիշ պատճառից)
Ցույցեր են անում փեթակի առջև,
Ինչպես որ մարդիկ
Շենքերի առջև պատլամենտների...

Ով ի՛նչ ուզում է՝ թո՛ղ այդ էլ անի:
Իսկ ես ուզում եմ... իսկ դու չե՞ս ուզում,
Որ գեթ ա՛յս անգամ,
Գոնե ա՛յս անգամ
Հեռավորությունն ինձ ու քեզ երբեք
Չկիսի՛ այնպես,
Ինչպես... հինգշաբթին շաբաթն է կիսում:

Կորչի՞ հինգշաբթին...

18. 111. 64
Գեղեցան

ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՂՆ ՈՒ ՏԵՂԸ

Անտառը հիմա անշափ է նման
Զին-ճապոնական մի ափսոսելի:
Ու ես էլ հիմա
Անզարդ եմ, ինչպես մանկական նկար:

Եվ լռություն է՝
Մայրահեն՝դ այնքան,
Որ սարսափահար վխկաց մի շնիկ
Եվ տեղն ու տեղը սարսափած լռեց:

Հետո՛, շա՛տ հետո,
Ինչ-որ մի որսորդ կրակեց հանկարծ,
Ու ներքև ընկավ... մի ձայն թռչնային՝
Զձայնագրվող ճնգոցով մի կարճ...

Բաց լուսամուտից ես նայում եմ դուրս:
Հետո՛, շա՛տ հետո,
Նայում եմ նաև քաց լուսամուտին.
Կարծես թե ներկը այս լուսամուտի,
Լուռ լաց է եղել ինչ-որ ժամանակ,
Եվ արցունքներն են կարծրացել հետո,
Հետո՛, թե գուցե տեղն ու տեղը հենց...

Խնձորի այգին այգի չէ կարծես,
Այլ... մի բացօթյա դիահերձարան.
Մահի պես ճերմակ սավանների տակ
Մառերն են իրենց դողը փաթաթում...
Խեղճ պատշգամբը ողջունում է ինձ,

Եվ տեղն ու տեղն էլ հրածեշտ տալիս.
Ես ներս եմ մտնում,
Եվ իմ ետևից դուռը փակելով՝
Հենց տեղն ու տեղը մկրատում—զցում
Սուրսայր—սրակող ցրտի մի պատառ,
Որ իմ սենյակի սուտ ամառվա մեջ
Իրեն զգում է մի վտարանդի
Կամ խեղճ ու կրակ մի աքսորական
Եվ տեղն ու տեղը մեռնում է իսկույթ...

Ա՛խ, ո՛ւր էր հիմա շար արեգակը հանկարծ բարկանա՞ր,
Ելման գետերին վերստի՛ն զցեր զառանցանքի մեջ,
Այս հերձարանը կրկի՛ն դարձրենք խնձորի այգի:
Այս սուտ ամռանը ստիպե՛ր գործել ինքնասպանությո՞ւն,
Այս խեղճ անտառը դարձնե՛ր կրկի՛ն յուղաներկ կտափ,
Այս լուսամուտի ներքին ստիպե՛ր Խորի՛ց արտատվել,
Ինձ էլ ստիպե՛ր, որ այս ասե՛նքը լքե՛ի մեկից.
Եվ մինչև անգամ թե շպատակե՛ք ափտոմեքենա՞
Կիլոմետրերը կուլ տայի ոտքով
Ու... հասնեի քե՛զ:

Իսկ եթե հանկարծ դու զարմամայիր
Իմ անակնկալ-անսպասելի այս այցի վրա՞
Վիրավորանքըս
Հենց տե՛ղն ու տե՛ղը մեզ կրաժանե՞ր...

18. III. 64

Գիլիան

ԱՆՃԱԾ ՍԵՐԵՐԸ

— Իմ սերերն անցած...
Նախ՝ նորի՛ց ասեմ,
Որ սերը շունի շարունակություն,
Այլ միայն սկի՛զբ,
Որ չի՛ կրկնվում,
Ինչպես... ծննդյան եզակի օրը:
Եվ հետո... հետո՛
Որքան էլ ջանանք ու ձգտենք սիրել՝
Երբեք ավելին չե՛նք ունենալու,
Ինչպես չի լինում... ավելորդ ատամ:

Սիրո համեմատ
Քիվն ատամների շա՛տ ես համարում:
Բայց մի՛ մոռացիր, որ ես, ճիշտն ասած,
Դեռ չեմ բաժանվել ո՛չ մի սիրածից.
Իրենք են փոխել անուններն իրենց,
Կերպարանքն իրենց,
Իրենց հասակը,
Իրենց տարիքը,
Սակայն ո՛չ իրենց:
Եվ ի՞նչ փոխել են՝ իրե՛նք են փոխել,
Իրե՛նք, ո՛չ թե ես,—
Այս մի՛ մոռացիր:

Եվ զուր մի՛ հարցրու,
Թե ո՞րն է եղել իմ ամենամեծ սերը:
Մի՛ հարցրու:
Սերերը, սե՛ր իմ,

Եթե մինչև իսկ անհավասար են՝
Անհավասար են, ինչպես... մատները.
Ո՞ր մատդ կտրես՝
Պիտի շատ ցավի կամ պակաս ցավի:
Էլ ի՞նչ ամենա...

Ախ այս ամենա—ն...
Իսկ երբեհիցե շե՛ս խելագարվել գեթ այն աստիճան,
Որ հանկարծ մի օր լրջորեն խորհես,
Քե դժբախտության մեր զգացումը
Գալիս է հենց այդ... այդ ամենա—ից.
Անծանոթ է դա ո՛չ միայն բույսին,
Այլև կենդանո՛ւն,
Ապուշի՛ն նաև,
Եվ սրանք իրենց... դժբախտ շե՛ն զգում...
Ամենա չկա՛:

Վատ ու լավ կա լոկ:
Ու եթե սեր է՝
Էլ ի՞նչ վատ, ինչպե՛ս,
Ու եթե սեր է՝
Էլ ի՞նչ ամենա...

— Իսկ անցած սերերն, ի՞նչ է, շեն մեռնում:
Իսկ եթե նույնիսկ, աստված շարասցե, մեռնում են նրանք,
Գարձյա՛լ ապրում են մեր տարողունակ հիշողության մեջ,
Ինչպես մեր... մեռած երեխաները...
Ահավոր ցավը շե՛ն վերհիշեցնում:
Գրկի՛ր ինձ:
Մեղք եմ...

19. 111. 64
Գիւլեան

ԿԱԿԱԶՈՂ ԼՈՒՅՍԵՐԸ

Մթնեց:

Այնպես, որ չեմ տեսնում
Նույնիսկ ոտներն իմ սեփական:
Ու ներքնաձիգ գետակն է լոկ
Մթան շունչը ձայնազրրում
Ուղղահայաց այս քարափի
Եվ անսաղարթ այս ծառերի բնի վրա:

Գիշերվա մեջ այս ծովական
Երևում են լոկ լեռների մեջքերը գորջ՝
Կես ձկան պես.
Հեքիաթական ինչ-որ ուժով
Կարծես դյուրվել—կախարդվել է
Մշտախաղաց օվկիանոսը՝
Իր փոքր ու մեծ ալիքներով քարացել է ու մնացել
Մի վիթխարի
Միջահատված-զատված գանգի ուղեղի պես.
Ո՛չ մի շարժում,
Ո՛չ մի խայտանք:

Ես չգիտե՛մ, իսկ ո՞վ կասի,
Թե առավել սարսափելին ի՞նչն է կլանքում.
Անշնչացած օվկիանո՞սը,
Թե՞ քարացած ուղեղն արդյոք՝
Նույնքան խայտուն ու բազմալիք...

Մթան ահը

Գերաճում է ու դառնում է սպառնալիք,

Եվ հատուկենտ խեղճ լույսերի լճզուն ճարտար
Կապ է ընկնում.

Ձիգ ժամերով
Կակազում են նրանք միշտ նո՛ւյն վանկի վրա,
Ինչպես ինքրս,
Երբ ուզում եմ
Իմ հարազա՛տ հորն ու մորը թունդ հագհոյել՝
Իմ այս իզո՛ւր շիտակության,
Իմ անօգո՛ւտ այս տաքության,
Իմ սիրո այս անտակությա՛ն,—
Իմ այս հիմար
Կյանքի՛ համար,
Որ այլ բան չէ, եթե կուզեք,
Քան կույրերին... հեռուտացույց նվիրելը:

19. III. 64

Գիւլիան

ԱՍԱ «ԱՄԵՆ»

Կրկին՝ ձնհալ:
Վտակները ձմռան քարտե՞զն են ավարտում,
Թե՛ սկսում գարնան քարտեզն այսօր միայն՝
Նկարելով շատ փոքրացած տարբեր գետեր
Ոչ թե կապույտ, այլ գորշ գույնով:

Երկրաչափ է դարձել քամին.
Էլիպս է նա գծում անվերջ,
Գալարագիծ է նկարում,
Հետո, կարծես սխալվելով,
Տարուբերվող մերկ ծառերի
Ստվերներով ջնջում է լա՛վ,
Որ սկսի նորից գծել:

Մարդ երբեմն վախենում է լուռ մտածել:
Ու ես ահա բարձրախոսն եմ գործի զցում:
Սրտագրքով ինչ-որ մի ձայն աղջըկական
Իր անարվեստ ու պարզ երգով
Կոչ է անում ինքնամոռաց—անվիշտ սիրել,
Կոչ է անում հավատարիմ ու միշտ սիրել:
Իսկ ծաղրարար քամին դրսում,
Երկրաչափի իր պաշտոնից արդեն հոգնած,
Աղջըկան է իբր կապկում՝ ծանակելով:

(Դու բանի տեղ մի՛ դիր, քույրի՛կ, ե՛րգըդ երգիր,
Հե՛րն անիծած այս ծաղրարար ու շար քամու):

Սակայն հիմա մեկ ուրիշն է երգում արդեն՝
Միրո՛ւց կրկին:
Սա ուզում է,
Որ մեր սրտերն անվախ բացենք
Ցավի՛ առջև,
Տառապանքի՛:
Բացե՛նք: Բացե՛նք:
Բացե՛նք: Թող գա՛ն:
Թո՛ղ գան վարձկան զինվորների ախորժակով.
Մեկ է՝

Վերջում խնդումն ու սերն են հաղթելու,
Այսինքն՝ մենք:
Տառապանքը թող ինքն իրեն գլխել ջանա:
Իսկ երբ գլխվի՛
Մենք կվերցնենք ամանի պես ու կկործենք՝
Հետևելով,
Թե ինչպես է թունավորվում՝
Ինքն իր շնչով ապականված...

(Երգի՛ր, քույրի՛կ, ճիշտ ես երգում.
Խնդությունը միշտ է կարմիր,
Տառապանքը միշտ չէ բոսոր:
Երգիր...)

Սակայն համերգն արդեն ավարտվում է
Եվ սկսվում մի պաղ զրույց՝
Ստիպելով,
Որ ես անմեղ բարձրախոսի հոգին առնեմ
Ու հայացքով դուրսը խառնեմ:

Դրսում՝ գարուն անկասելի:
Իսկ իմ ներսում՝ նորելուկ սեր:
Օր-ցերեկով նորած լուսին:
Անվիշտ կարոտ:
Արև:
Կեսօր:

Իսկ ծաղրարար ու շար քամին
խոռվել է միանգամից
(Արդյոք ինչի՞ց, արդյոք ինչո՞ւ)
Ու խաղում է պոչուկի հետ շան լակոտի,
Որ հաչում է ցերեկային լուսնի վրա
Եվ սպառնում իր պոչուկով՝ ինչպես մատով...

Հե՛րն անիծած տխրողներին՝
էլ բարև տալ—բարև առնել չկա՛ր արդեն.
Տխրողներից խոռվում եմ հավիտենից հավիտյանըս,
Իսկ դու, սե՛ր իմ, այս անգամ դո՛ւ «ամեն» ասա,
«Ամեն» ասա տատիկի՛դ պես՝
Հավատալո՞ւմ ե ի սրտե՛...

19. 111. 64
Գիւլշան

ԵՂԵՆՈՒԹՅՈՒՆ,
ՈՐ ԼԱՎ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ԱՅԼԵՎՍ ՉԼԻՆԻ

Ես քնիս մեջ տխուր էի.
Այնքա՛ն տխուր,
Այնպե՛ս տխուր,
Որ արթնացա վեր ցատկելով
Ու... լաց լինել սկսեցի,
Հավատացե՛ք, սկսեցի՛...

Դարի չափ ձիգ ժամ է անցել:
Ես այլևս, վաղո՞ւց արդեն, լաց չեմ լինում,
Բայց դեռ տխուր, դեռ տխուր եմ,
Այնպե՛ս տխուր,
Այնքա՛ն տխուր,
Որ ավելի լավ կլինեիր,
Եթե նորից ես լաց լինել կարենայի:

19. 111. 64
Գիւլշան

ԱՆԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՏԱՊԿՆՈՅՈՒՄ

Ինչի՞ց, տե՛ր աստված, ինչի՞ց է, ինչո՞ւ
Որ ամենից շո՛ւտ և ամենից շա՛տ
Իրեն՝ մարդու մեջ հենց մարդն է կորչում:

Եվ դրանից չէ՞ արդյոք, տե՛ր աստված,
Որ երբ մարդիկ են ծնվում՝ լալիս են
Եվ ոչ թե ժպտում,
Ինչպես անում է անճիշտ—անծպտուն
Աստղը նորածին.

Եվ ոչ թե բուրում,
Ինչպես անում է հացը նորաթուխ.
Եվ ոչ թե պարում,
Ինչպես անում է խոտը նորածիլ...

Եվ դրանից չէ՞, որ մարդն աշխարհում
Ո՛չ մի բանի դեմ այնպես անսլաշտպան,
Անզոր չէ այնքան ո՛չ մի բանի դեմ,
Որքան որ մարդո՞ւ՛ ի՛ր իսկ նմանի...

Եվ դրանից չէ՞, որ մենք շարունակ
Այլ բան չենք անում, քան թե լճանում,
Մնչդեռ հոսելն է պարզ կոչումը մեր...

Եվ ինչի՞ համար, ինչի՞ համար են
Մեր բազմատեսակ այս գրպանները,
Եթե հոգին էլ
Մի լեցուն ու փակ գրպան է միայն,
Որ շա՛տ է կարոտ գրպանահատի:

Եվ արհեստական բուծարաններում
Ինչո՞ւ չեն բուծում գրպանահատներ,
Հոգի՛ արձակող գրպանահատներ,
Որպեսզի փոքր-ինչ մենք թեթևանանք
Ա՛յն ծանրը բեռից,
Որ մի կողքի է մեզ ճկում—թեքում՝
Մեզ ստիպելով կաղալ ու խեղալ,
Մե՛զ, որ չենք ծնվել ո՛չ կաղ, ո՛չ էլ խեղ...

Եվ դրանից չէ՞, որ տապակվելով
Տապակվում ենք մենք անարժեքությամբ...

Ու տապակվում է անարժեքությամբ
Ինքը բարիքը,
Եթե մեր ձեռքից կերակրվողը մեր ձեռքն է խածում
Եվ գորեղացած իր ատամներով
Կրծում մեր բուկը:

Ու տապակվում է անարժեքությամբ
Նույնիսկ շարիքը,
Եթե նրա դեմ կա ամենազոր արհամարհանքը:

Ու տապակվում է անարժեքությամբ
Եվ ամենազոր արհամարհանքը,
Եթե ոչ մի կերպ սա տեղ չի հասնում՝
Եթե ընկալողն իրեն զգում է ա՛յն երկնքի պես,
Դեպի ուր ճամփած քարը վերստին
Հնկնում է ներքև...

Ինչպե՞ս, տե՛ր աստված,
Մենք ինչպե՞ս անենք,
Որ շտապակվենք անարժեքությամբ,
Անարժեքությա՛մբ,
Անարժեքությա՛մբ...

20. III. 64

Գիւլշան

ՆԵՐԿԱ.—ԲԱՅԱԿԱ

Ներկա են ոտքերըս. ինքնաշարժ քայլում են:
Ներկա են աչքերըս. երեվի փայլում են:
Բացական հայացքս, այդ նա է. ես նայում
եմ սակայն շեմ տեսնում. ոչինչ չի հմայում:

Ներկա է և մաշկըս. կարծես թե մրսում եմ,
Մածկ ունեմ և շունեմ. տան մեջ էլ դրսում եմ:
Գարուն է — գարուն չէ. բացակա — ներկա է:
Բացական աստղերն են:
Բացական լուսինն է:
Բացական քամին է. շարժումը և... ինքը,
Որ տերն է կարոտիս:
Կարոտս ներկա է...

Քարմ օդից զարթնում են ոունգերըս, բայց իզո՞ւր.
Իմ շնչած օդից է բացակա իր շունչը:
Զգում եմ ոզնու պես փշապատ մտքերըս,
Բայց նրանք վերստին կծկըվում — գնդվում են:

Ա՛խ, լիներ մի քնքուշ — կուպիտ ձեռք. ինձ բացեր,
Ինչպես որ գրտնակով բացում են խմորը,
Ինչպես որ բացում են բառի խոր իմաստը,
Ինչպես որ... շե՛ն բացում, ոզնուն լուկ ճխլում են:

Ա՛խ, լիներ... լինեին հաստ մեխեր, ժանգոտա՛ծ:
Այն խաչը,
Որին մենք կամովին գամվել ենք,
Մեխերի՛ պետք ունի,

Ժանգոտա՛ծ մեխերի:
Մեխն ի՛նչ է, անխիղճնե՛ր, մեխն ի՛նչ է.
էժան է, հեշտությամբ ճարվում է:
Մի քանի մեխն ի՛նչ է.
Ընտրեցեք հաստերը,
Որ ցավը բարակի ու... հատվի:
Հերի՛ք է...

ՅՕ. 111. 64

Գիւլեշան

ԵՍ, ՈՐ ԵՍ ՉԵՄ

Զգիտեմ՝ ի՞նչ պիտի փոխվեր,
Սակայն ես նո՛ւյնը մնացի:
Ես նորից իմ տեղը դարձա՛
Որքան էլ հեռու գնացի:
Հազա՛ր խոչ ու քարեր կային
Իմ անցած ճանապարհի մեջ,
Կար սև ցավ
Ու կարմիր արյուն
Ամեն խոչ, ամեն քարի մեջ:
Ոտ տալով՝ գետին փռեցին,
Զարդեցին իմ կողն ու քիթը,
Բայց նույնիսկ իմաստո՛ւն դարձած՝
Մնացի նո՛ւյն միամիտը.
Գնացի նո՛ւյն ճանապարհով
Ու եկա նո՛ւյն ճանապարհով...

Զգիտեմ՝ ի՞նչ պիտի փոխվեր,
Սակայն ես նո՛ւյնը մնացի:
Իրենց բիրտ արարմունքներով
Ինչքա՛ն էլ մարդիկ վանեցին,
Ինչքա՛ն էլ սուր արմունկներով
Կողերիս հոգին հանեցին,
Նրանց դեմ ես քեն չարեցի,
Հաշտության եզրեր ճարեցի՝
Մանելով իմ հին դերի՛ մեջ.
Մնացի ընկե՛րը նրանց,
Բարեկամն ու մտերի՛ մը...

Թվում է՝ դավաճանեցի
Սերերիս իմ ամբողջ կյանքում՝
Իմ ապրած վաթսուն դարի մեջ:
Բայց սուտ է.

Իմ ամբողջ կյանքում
Ես եղա ու միշտ մնացի
էլի նո՛ւյն հավատարիմը:
Գեղեցի՛կն իր տեսքը փոխեց,
Մինչդեռ ես մնացի նո՛ւյնը՝
Գեղեցիկ մերկություն պաշտող
Հայ ծնված միևնույն հույնը,
Որ իր կարճ—անցողիկ կյանքում՝
Իր ապրած վաթսուն դարի մեջ,
Մի՛շտ մնաց իր պաշտամունքի՝
Իր սիրո հավատարիմը...

... Գուցե ես բնա՛վ էլ ես չեմ.
Պարզապես ցավի ծառան եմ,
Որից ես թակվո՛ւմ եմ—թակվո՛ւմ՝
Փոշոտված գո՞րգ թե թաղքի՛ պես:
Գուցե ես բնա՛վ էլ ես չեմ.
Պարզապես այն կացարանն եմ,
Որտեղ մեծ Սերն է բնակվում
Եվ կողպեք շունի դռանը.
Գերզգա գանդածազկի՛ պես՝
Գուուն ինքն է բացվում ու փակվում...

21. 111. 64

Գիւլջան

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՂԵՏ

Լինենք խելո՞ք:
Հե՛շտ է ասել...

Մառք եթե խելոք լինե՞ր՝
Պտուղների համեղ հյուսթով միշտ կաներ
Իր տոշորված արմատնե՞րը
Եվ իր բնի շոր կոկո՞րդը:
Բա՛, սիրելի՛ս...

Գետն էլ եթե խելոք լինե՞ր՝
Միշտ կհոսեր ուղիղ գծով,
Ամեն տեսակ շեղումներից ապահովված,
Եվ ինքն իրեն չէր ջլատի ոչ մի դեպքում՝
Բաժանվելով մանր ու խոշոր առունների:
Սա էլ գուցե մի առանձի՛ն խելոքութուն,
Ուրի՛շ խելք է:
Բա՛, սիրելի՛ս...

Խելո՞ք լինենք:
Սակայն եթե փոքր խելքը շատ մեծ բեռ է,
Մեծն էլ շա՛տ է վտանգավոր,
Բա՛, սիրելի՛ս...

Իսկ ի՞նչ անենք:
Բա՛ն էլ շանենք:
Պառկենք իրար դեմ ու դիմաց՝
Իրար ուղղված երկու սուրսայր սլաքի պես,
Ու կարոտով իրա՛ր նայենք,

Այնպե՛ս նայենք,
Կարծես թե դու լինես կադոտ,
Իսկ ես՝ անող.
Թո՞ղ մեզանից հուժկու հոսանք առաջանա
Ու լույս դառնա
Ողջ աշխարհի բոլո՞ր մթին տնակներում.
Եվ անարև ծմակներո՞ւմ:
Ու երբ վառվեն այդ լույսերը հանկարծակի,
Մարդիկ իրար աչքով անեն
Ու ժպտալով ասեն իրար.
«Սիրողնե՛րն են իրար նայում»:
Իսկ երբ մարեն այդ լույսերը հանկարծակի,
Մարդիկ իրար վախով նայեն.
Ու մտածեն լուռ տազնապով.
«Ի՞նչ վթար էր... շի՛տնցձեղնո՞ւմ...»

Լինենք խելո՞ք:
Լինե՛նք:
Այնպե՛ս,
Որ շմատենք շար աղետի մեր սերը տաք
Ու... շթողենք մարդկանց մթնումս...

22. III. 64
Գիւլիան

ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԶԱՓԱՆԻՇ

— Երջանիկները ի՞նչ չեն ունենում:
— Ժամ ու ժամանակ:

Զէ՛, սիրելի՛ դ իմ.

Շատ է հնացել քո պատասխանը:

Երջանիկները մո՛ւտ չեն ունենում՝
Իրար հոգու մեջ բարդելո՛ւ համար:

Երջանիկները կո՛ւտ չեն ունենում՝
Անզգուշորեն ջարդելո՛ւ համար:

Ոչ մի կավճոտված հո՛ւշ չեն ունենում՝
Սրտի սպունգով ջնջելու համար:

Նրանք, կարճ ասած, ո՛ւտ չեն ունենում՝
Իրենց ու իրար... տանջելո՛ւ համար...:

22. III. 64

Գիլիշան

ՏԱԿՄԱՇ ԿՐԿՆԱԿՈՇԻԿ

Ելման շրերն իրենց փրփուր—սապնաջրով
Աշխատում են մի կերպ մաքրել ու լվանալ
Քարաքոսոտ-չեչոտ ժայռերն իրենց ափի,
Սակայն...

(Սեին ի՞նչ կարող է սապոնն անել)...

Նո՛ւյնն են մնում,

էլի՛ նույնը.

Զի՛ փոփոխվում նրանց գույնը:

... էլի՛ նույնը... էլի՛ նույնը...

Հսկայական կապույտ աչքի դեղին բիրը,

Որ հայտնի է Արև անվամբ,

Հողի խորքերն է ներխուժում

Եվ հասնելով

Հավերժական սառածության անառ շերտին՝

Ընկրկում է ջղայնացած

Ու նահանջի ճանապարհին

Մինչև անգամ թուփ ու ծառին

Վարակում է ծաղիկ կոշված հիվանդությամբ.

Բողբոջներից ծաղկատար են դառնում նրանք:

... Սաղկատար են դառնում արդյոք միայն նրա՞նք...

Ես՝ աղամա—անմեղ վկաս այս ամենի,

Մի կարևոր = ինձ թարգմանող խոսք եմ փնտրում:

Բայց խոսքերը կարծես լինեն

Վաղուց մաշված կրկնակոշիկ.

Սայթաքում են անվերջ նրանք

Եվ ինձ անվերջ գետնով տալիս:
... Անվերջ... գետնով, գետնով տալիս...

Միշտ ընկնելուց ու ելնելուց
Տնքտնքում են իմ կողերը,
Իմ ողերը
Եվ իմ լեզուն,
Ցավում այնպե՛ս,
Որ պարզապես լացս է գալիս:
Եվ լալու պես թնգթնգում եմ մի խոսք մաշված,
Նույնիսկ տակմաշ կրկնակոշիկից շատ ավելի
Մաշված մի խոսք,
Որ լսողին, քեզնից բացի,
Պիտի թվա ծիծաղելի:

... Ծիծաղելի՛... ծիծաղելի՛...

Ես լալու պես թնգթնգում եմ.
«Միրում եմ քեզ»...
Ու կրկնում եմ երե՛ք անգամ
Եվ շո՛րս անգամ.
Թո՛ղ ծիծաղեն երե՛ք ձայնով
Ու շո՛րս ձայնով...

Թող ծիծաղե՛ն,
Թող ծիծաղե՛ն,
Որ... կտրվի թնգթնգո՛ցքս,
Լա՛ցըս չգա... լացը՛ս չգա...

22. III. 64

Գիւիշան

ՊԱՐՏՔԻ ՏՈՎՈՍՆԵՐԸ

Առավոտն է հասունանում՝ մտքի նման.
Պիտի պոռթկա նա շատ շուտով
Եվ սրտաքամ իր իսկ հյուսթով
Կրկին ներկի
Ծրկին—երկիր:

Օրն է գալիս
Պարտատիրոջ վստահությամբ,
Իրեն անգութ մի վաշխառու:
Պարտ եմ իրոք՝
Միրո՛ղիմաց,
Ու պարտավոր եմ վճարել մի կարոտով,
Որի շահն է իրեն ծածկում...

Ու ես
Հոգնած ուրախությամբ
Հեռվից հեռու ժպտում եմ քեզ
Միրո՛ղ, ներո՛ղ ու համբերո՛ղ մի ժպտով...

Հանկարծակի—միանգամից
Արբունքի է հասնում քամին,
Եվ ձները
Նրա տաք-տաք ակնարկներից ամաշելով՝
Տեղն ու տեղը հալվում են լուռ:

Վտիտ վտակն աչքիս առաջ
Նույնքան արագ
Հասունանում—դառնում է կին

Ու փովելով փարթամ մեջքին՝
Սարսուռում է...

Միայն ես եմ, ես եմ մնում նո՛ւյնը կրկին՝
նո՛ւյն մշտական պարտապանը
Իմ գերհասուն սիրո զիմաց,
Եվ պարտավոր եմ վճարել մի կարոտով,
Որի շահն է իրեն ծածկում:

Իսկ քո սե՛րը...
Ե՛րբ պիտի նա հասունանա,
Թե չէ, գիտե՞ս,
Եթե անվերջ այսպես գնա՝
Ես երբևէ պարտք չե՛մ փակի.
Պարտքը, գիտե՞ս, նա՛, դուան պես,
Իր կողպեքով ինձ կփակի...

23. III. 64
Գիվելան

ՍՊԱՄԵԼՈՎ ԿԵՍՕՐՎԱ ՀՐԱՄԱՆԻՆ՝

Արթնացավ քամին,
Եվ դեռ անսաղարթ ողջ անտառով մեկ
Վլվլուկն ընկավ:

Ծանոթ լեռները հիմա թվում են
Մինչըհնդեղյան—այժմ չքացած մեծ խլուրդների
Մթին աշխատանք:

Հորդորակ առուն այդ է հաստատում՝
Թուփակի նման նույնը կրկնելով:

Նիհարիկ մի մուտ
Սուտ վկայութուն տալու փորձ անում
Եվ արտաքսվում է անտառից անդին:

Հետապնդվելով
Մի շատ կարևոր—կարեվեր խոսքից՝
Միտքըս խրվում է
Դիմացի լանջի մացառուտի մեջ,
Եվ... գրիչն այստեղ՝
Այս ճերմակ թղթին,
Իր սև ինքնահոս արյունն է հեղում...

Մի քանի ժամ է միայն մնացել,
Որ գա կեսօրը
Եվ բանտապետի դժգոհ կոպտությամբ
Ասի. «Ազատ ես»,
Ու ես էլ ահա

Աճապարհուց նույնիսկ մոռացած
«Շնորհակալ եմ» կամ «մնաք բարև» գեթ մըմնջալու,
Պիտի ինձ նետեմ
Անկուշտ երախը մեծ ճանապարհի,
Որ պատահական ինչ-որ մեքենա
Իր անիվներին
Կծկելով կծկի կիլոմետրերը,
Եվ... սրտապատառ մի ուրախությամբ
Զեր տանը զնգա ձեր հեռախոսը:

Դու մի՛ շփոթվիր խոսափողի մեջ.
Իմ շփոթմունքն էլ մեզ բավական է:
Դու ընդամենը ասա «գալիս եմ»,
Թե՛ չէ՛... մեր լեզուն
Ինչո՞վ է ախար խեղճը պարտական
Եվ ինչո՞վ է նա պատասխանատու
Մեր սրտի՛ առաջ՝
Այս ընկնավորի և ջղագարբի,
Որ թպրտում է՝
Մինչևիսկ հազած հեռախոսային զսպառչապիկը...

Բայց... առա՛վոտը դեռ նոր է քայվել,
Դեռ ո՛ւր է որ գա մոռյլ կեսօրը
Եվ բանտապետի դժգոհ կոպտությամբ
Գոռա. «Ազատ ես»:

Առայժմ դու ես, այդ դու ես ազատ
Զեր հեռախոսի քմահաճույքից.
Թող նա համրանա՛ մինչև երեկո:
Թող նա համրանա՛, որ դու շտանջվես.

Իմ այս տանջանքն էլ մեզ բավական է...

27. 111. 64

Գրված

ԸՆԴԴԵՄ ՕՂԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ

Երբ մենք հանդիպենք,
Ես գիտե՛մ, թե քեզ ինչ եմ հարցնելու:
Իսկ որոշվա՞ծ է քո պատասխանը:

Երանի թե ես
Ռադիո-ընդունիչ կոշված այս դեին
Թողնեի քնած
Ու շիմանայի,
Որ փոթորիկ է վաղը սպասվում՝
Օղաբանական ինչ-որ կայանի կամեցողությամբ:
Այդ կայանները
Հազարից մեկ են ճիշտ բան գուշակում:
Իսկ եթե հանկարծ
Հազարից մեկը վաղը կատարվի՞...

Ես գիտե՛մ, թե քեզ ինչ եմ հարցնելու,
Երբ մենք հանդիպենք:
Իսկ դու իմ հարցին պատասխանելիս,
Տե՛ս,
Զանե՛ս այնպես,
Որ արդարանա
Օղաբանական կայան հորշորջվող
Մարգարեն այս սուտ:

Եթե ինձ համար դու չես էլ հոգում,
Մտածիր գոնե աշխարհի՛ մասին.
Նա շատ է կարոտ
Մե՛զմ — գարնանայի՛ն — երջանի՛կ օրվա:

Մեղք է աշխարհը.
Քանի՛ ամիս է նա սպասում է,
Մեղք է, սիրելի՛ս,
Գեթ նրան խղճա
Իմ պատրաստ հարցին պատասխանելիս.
Քո պատասխանով,
Տե՛ս,
Որ փոթորիկ շհանե՛ս իզուր...

27. III. 64
Գիւլջան

ԴԱՐԸ ԵՎ ԺԱՄԸ

Ո՛վ է սանրվելուց ճաղատացել:
Երանի շէ՛ր լինի, որ մարդ կարողանար...

... Ես մտքերս եմ սանրում՝
Խառնիխուռն—խճուճ,
Մանրածանրը, ծալ-ծալ իմ մտքերը:
Սանրում ու սանրում եմ,
Բայց... ի՞նչ օգուտ, բայց ի՞նչ.
Չե՛ն նոսրանում նրանք
Եվ ինձնից չեն պոկվում,
Ո՛չ էլ հարդարվում են, կոկվում—սոկվում...
Ու ես հասկանում եմ, որ ինձ պետք է... քնե՛լ,
Քնել գեթ մի փո՛քըր,
Մի՛ քիչ գոնե,
Քնել թե՛ մազերիս,
Թե՛ նրանց շափ անթիվ այս մտքերի՛ս վրա...

Սակայն ծառ կոչվածն էլ իր սիրտն ունի՝
Մի անանուն թռչուն,
Որ (տա՛կ-տի՛կ-տա՛կ)
Բարբախում է, անվե՛րջ, բարբախում է:
Իսկ թե կողքիս մի սիրտ բարբախում է՝
Թեկուզ ծառի՛ վրա
Եվ ո՛չ կրծքի ներքո,
Մեռած էլ որ լինեմ՝
Ինչպե՞ս քնեմ:

Բայց կա նաև ի՛մն էլ՝ սովորակա՛ն մի սիրտ,
Որ միշտ բարբախում է քիչ անսովո՛ր ձևով.
Նա միշտ բարբախում է իմ... գլխի՛ մեջ,

Եվ այս պատճառով էլ իմ կրծքի տակ
Սրտի տեղ կա, կարծեմ, մի... ժամացույց,
Որի մեծ սլաքը ցույց է տալիս դարը,
Իսկ ծանրաշարժ փոքրը՝ ժամն անցողիկ...

Քաղաքային բոլոր ժամացույցները մեր
Կա՛մ ստում են կարգին,
Կա՛մ կանգ առնում հանգիստ
Նույն վաղեմի՛—անցա՛ծ թվացույցի վրա՝
Անձայն հոհոցով մեզ ծաղրելով մտքում...

Իսկ ճաղատները քի՛չ կան մեր քաղաքում
Եվ աշխարհում համայն:
Բախտավորներ...
...

Եվ շատ մե՛ծ է արդյոք իմ պահանջը կյանքից.
— Կինե՛լ... քաղաքայի՛ն մի ժամացույց,
Կամ մի... ճաղա՛տ անցողի,
Բոլորովի՛ն ճաղատ...

5. X. 64
Երևան

ԹՈՒԹԱԿԻ ԿԱՐՈՏ

Ես հոգնե՛լ եմ, շա՛տ:
Ու կան վայրկյաններ,
Երբ ես ստում եմ.
— էլ քեզ չե՛մ սիրում:
Սակայն ասում եմ այնքա՛ն մտքիս մեջ,
Ասես կողքիս ես և լսես պիտի:

Իսկ մեզ յո՛թ միլիոն մետր է բաժանում...

Ու մինչև անգամ եթե դու լսես,
Մի՛թե կլինես այնքա՛ն միամիտ,
Որ ինձ հավատաս:
Այդպես հեշտ ու շուտ հավատացողին
Իրո՞ք չեմ սիրում:

Բայց ինչո՞ւ եմ զուրկ,
Ես ինչո՞ւ եմ զուրկ
Բոլոր հաճելի թուլություններից.
Ո՛չ հավաքում եմ իրեր հին ու նոր,
Ո՛չ ձուկ եմ բռնում, ո՛չ որսի գնում,
Մառ պատվաստելու ցանկություն չունեմ,
Ու տանս մեջ էլ շներ չեմ սնում...

Գոնե տանս մեջ... թութա՛կ պահեի:

Ու թե տանս մեջ թութակ պահեի՝
Կվարժեցնեի ես նրան հիմա,
Որ վաղնջական գուշակի նման

Մի՛շտ ու շարունակ միա՛յն կրկրներ.
— «էլ քեզ շե՛մ սիրում»...

Սակայն զուրկ եմ ես
Բոլոր օգտակար թուլություններից
Ես զուրկ եմ այնքա՛ն,
Որ մինչև անգամ
Թութա՛կ պահելու թուլություն չունեմ:
Եվ ապաստանած լոկ մի թուլության,
Որ սեր է կոչվում
Եվ գլխիս վրա դարձել է... տանիք
Ու... գլխարկի պես գլխիս է դրվել,
Ապրում եմ այսպե՛ս
Եվ այսպե՛ս քայլում՝
Գլխարկի՛ տեղակ... գլխիս մի տանի՛ք.
— Մի նո՛ր խեղկատակ,
Որին շե՛ն տեսնում,
Իսկ թե տեսնում են՝
Ինչո՞ւ շեն հապա քրքրչում վրաս...

Յ. Մ. 64
Երևան

ԱՆՄՈՒԱՑՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂԸ

Մոռացության օրենքները
Չե՛ն տարածվում ինձ վրա,
Որ ես կրկին, մանկան նման,
Քնին ասում եմ «մայրի՛կ»...

Ու փորձանուտ խավարի մեջ
Կաղակարկին քայլելով՝
Հողի վրա
Կրունկովըս ճակատագիր եմ դաշում:

Հողի վրա
Կրունկովըս ճակատագիր եմ դաշում,
Որ... կարելին չկատարվի՛,
Եվ ապրելին չապրվի՛՝
Ի հեճուկըս... չգիտե՛մ ում,
Ի սփոփանք... գիտե՛մ ում.
Ի սփոփանք ի՛մ ու նրա՛,
Որ միշտ մոտս է — մոտըս չէ,
Ու ես անվերջ
Ինքս եմ խոսում իր փոխարեն և իմ տեղ՝
Ա՛յն մարդու պես,
Որ ինքն իր հետ, մենա՛կ, շախմատ է խաղում:
Բայց կուզեի
Եղունգո՛վըս խաղատախտակն այդ կտրել՝
Նրա ամեն քառակուսին
Մի—մի պիտակ դարձնելով
Մեզ բաժանող

Տարածութեանն իբրև շափ ու շափանիշ:
Եվ կուզեի,
Որ նա ինքը ի՛ր փոխարեն, ի՛ր լեզվով
Խոսեր ի՛նձ հետ և ինձանի՛ց,
Ա՛յն ամենից, ինչ որ ես
Նույնիսկ ինքըս շեմ հասկանում.
Իմ վախերը թարգմանեք...
Վերծանեք իմ ուզածները՝
Իր թարթափի ակնարկով...
Եվ իր մատներն ուշանային
Իմ մարմնեղեն աշխարհի հենց ա՛յն տեղում,
Որ ուշացած սերը ատամ է փոխում՝
Համատարած լինող դարձնելով
Գլխից մինչև գարշապար...

Ո՛ւր է ծագը:
Ծ՛րբ կբացվի գեթ առավոտն անսփոփ,
Որ արևը
Կրկին դառնա ծիծաղելի՝ մի պատկե՛ր,
Իսկ աշխարհը՝
Մի մանկական պատկերազարդ ամսագի՛ր,
Ես էլ՝ արդեն ո՛չ երեխա,
Որպեսզի գեթ միառժամ
Թնգթնգալով ինքս իմ ներքում՝
Քնին «մայրի՛կ» չկանչեմ...

28. VIII. 65

Զանախի

ՄԵՐ ԹՈՒՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեզանից նրանք,
Որ լավագույնն են մարդկանց հոտի մեջ,
Հաճախ փորձում են,
Գոնե՛ փորձում են
Մի կերպ ազատվել իրենց հնօրյա թուլութուններից,
Ինչպես լավերից լավը գլուղացու
Փորձում է կորցնել արդեն ծերացած իր անասունը՝
Նրան սպանել չկարենալով,
Խղճալով նրան:
Եվ ամեն անգամ՝
Նրանք՝ ծերացած անասունները,
Որ մեր մեջ բանող
Թուլութուններն են մեզ նախընծայված,
Վերադառնում են ու գտնում են մեզ,
Ո՛ւր էլ որ տանենք — որտե՛ղ էլ թողնենք,
Վերադառնում են ու գտնում դարձյալ՝
Հուսահատութեան դուռ հասցնելով
Մեզանից նրանց,
Որ լավագույնն են մարդկանց հոտի մեջ:

Հազա՛ր երանի վատագույններին,
Որ հուսահատվել չգիտեն բնավ...

28. X. 65

Զանախի

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Աստված ձեզ հետ...

Իսկ թե իրոք աստված չկա,
Ձեզ հետ լինի թող երկի՛նքը՝
Իր փոփոխման անմեռ ոգով.
Գյուտի երկա՛ր-երկա՛ր ցավը՝
Կարճ բայց կարժրը իր խնդությամբ.
Արդարության կաղ նժույզը՝
Ճշմարտության իր խթանով.
Փոքրիկների պատվերն անմեռ
Ու Մեծերի մեծ ստվերը
Ձեզ հետ լինի...

30. X. 66
Երևան

ՊԱՏՐԱՆՔԻ ՊԱՏԱՆՔԸ

Եվ շատ ավելի վատթար է ցավը,
Քան անարգանքն ու անպատվությունը,
Եթե այդ ցավը ծնունդ չի տալիս վե՛հ ու վսեմի՛ն:

Վե՛հ ու վսեմի՛ն,
Լսո՛ւմ եք, տղե՛րք,
Վե՛հ ու վսեմի՛ն:

Եզրիտոսն ինքն է ավազ ներմուծում,
Այն էլ ո՛ւմ համար. իր... Սահարայի՛:
Մաղրուծանա՛կ է: Կատա՛կ է հիմար:
Բայց Սահարայի ավազն իսկապես
Շինարարական շաղախ չի՛ դառնում.
Մանր է չափազանց:

Ապրելով նույնիսկ համակ—անսպառ ավազի վրա՝
Մեզ հարկավոր է, հատկապես հիմա, ավազ ներմուծել մեր
շենքի համար,

Հարկավո՛ր ավազ:

Իսկ պատրանքներից և պատրանքներով հղիանալը
Մեղք չէ հասարակ, այլ մեղք այնպիսի՛,
Որ հավասար է... (բառը չե՛մ ասում):
Եվ բավական չէ՞,
Որքան մերպսին
Ալլասերեցին այդ պատրանքները՝

Այդ հանդերձափոխ գործակալները... (բառը շեմ ասում):

Թե բավական է՝
Հուզարկավորման լուսթյամբ լռենք
Ու լուսթյան մեջ նոր տառեր կոենք՝
Իբրև նորօրյա աղվեսադրոշմ
Սին պատրանքների ճակատի համար...

Կորչելը, անշո՛ւշտ, ազևտ է ա՛հեղ,
Աղետն էլ գոնե լավ է այնքանով,
Որ ազատում է ելք որոնելու մտքաբամ հոգսից:
Սակայն պատրանքով փրկվելն էլ ախտ է (բառը շեմ ասում),
Որ տարածվում է... խոնավության պես
Եվ ամե՛ն ինչի լնդերքի վրա
Բացում իր վերքը՝ բորբոսի տեսքով:

Անգե՛տ տղաներ, մի՞թե չգիտեք
Մեր միակ փրկչի սուրբ գերեզմանի վայրը սրբազան:
Նա հենց այնտեղ է,
Որտեղ պատրանքն են պատանքում, տղե՛րք,
Պատրա՛նք պատանքում:

Ամուլն ամուր չէ, ոչ էլ ամուրի:
Եվ Հայրենիքը ո՛չ մուրացկան է, ո՛չ էլ հարկահան:
Եվ սերն էլ սուրք չէ, ոչ էլ գթություն,
Որ ամեն մեկը կամ տա, կամ տածի,
Այլ սուրբ ավյուն է
Ու սուրբ արյուն է,
Որ պիտի տա ծիլ
Անկողիններում թե՛ մար, թե՛ մանկան,
Որտեղ սավանը ճմուռորվում է ո՛չ սավանի պես,
Այլ իբրև... պատա՛նք,
Որ... պատառոտվի պատանք—պատրանքը

Եվ համբարձվելով հառնի նո՛ր ողին,
Նո՛ր ողին, տղե՛րք,
Նո՛ր ողին, նո՛րը...

4. XII. 64
Երևան
9. XI. 65
Չանախչի

ԿՐԿՆՎՈՂ ՀԱՆՆԵԼՈՒԿ

Նա եկավ հանդարձ:
Անշո՞ւնչ—անշշո՞ւկ, գողեղո՞ղ եկավ:

Եկավ
Ու մտավ... մազերի՞ս միջով
Ու կրունկների՞ս:

Եկավ
Ու նստեց թիկունքի՞ս վրա
Եվ կրծքի՞ս վրա:
Դիմակի նման հազավ իր դեմքին,
Իրենով և իմ ներսը հազցրեց:
Ու շհասկացա, թե որտեղի՞ց է
Եվ ինչացո՞ւ է...

Չկա ձա՞յն—ծայտո՞ւն,
Շարժո՞ւմ որեէ,
Որեէ պատկե՞ր:
Չկա խո՞րք—հատա՞կ,
Մակերե՞ս չկա,
Եվ ո՞չ էլ միջուկ:

Կա լոկ աններկա մի ներկայութիւն,
Ինչ-որ անմարմին—անտես մի աստված...

Ու ես ակամա կաշկանդված—ազդված,
Ինչպես անդիտակ սարյակի ձաղը օձի հայացքից՝
Ես հանձնվեցի հավիտենութեան երանութեանը...
Իս դարձա համակ մազնիսական դաշտ...

Դարձա հոսանքի մի կարճ հաղորդիչ...
Մեռա կամովի՞ն ու շնորհակա՞լ...
Ու շնորհակա՞լ...
Ու շնորհակա՞լ...
Դա ինչքա՞ն տեկց:
Մի դա՞ր:
Մի վայրկյա՞ն:
Մի ողջ մոլորակ ստեղծվեց մեզից,
Ապա դարձավ մեզ...
Եվ միայն հիմա՝
Այսքանի՞ց հետո,
Ես սկսում եմ կարծես կուհել,
Թե դա ինչի՞ց էր
Ու թե ի՞նչ էր դա:

Դա մեղմութիւնն էր...

24. XII. 65
Երևան

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

Լավագույն ժպիտ ասվածը, անշո՛ւշտ,
Փա՛կ աչքերովն է:

Իսկ լավագույնը հրազանքների՝
Բա՛ց աչքերովը:

Լավագույն երգը
Բաց պատուհանից—հեռվից լսածն է:

Լավագույն խոսքը
Լուսթյան խորքում լռին ասածն է:

Լավագույն ազգը այն է, հրեհի,
Որ չի ունենում հսկա կայսրություն:

Լավագույն հավատն այն է, որ երբեք
Չի դառնում կրոն:

Լավագույն դիմակն այն է, անկասկա՛ծ,
Որ կոչվում է դեմք:

Լավագույն դերը՝
Վա՛տ խաղացվածը:

Լավագույն սերը՝
Կիսա՛տ թողածը:

Լավագույն տանջված ու տառապածը
Վարդն է (հրգեթո՛ւմ):

Լավագույն կապիկն աշխարհում (էլի՛)՝
Մարդն է հրեհի:

Լավագույն մարդն էլ (ո՛չ մի հրեհի)
Ներնցեք... ես եմ...

13. 111. 67

Արզնի

ՀԱՅՐԵՆԻՔ

Քեզնով երգվելիս
Ձեռքըս դնում եմ իմ սրտի վրա՝
Սեղմելով նման,
Որ... հանկարծակի չպայթի դողից...

Ինձնով երգվելիս
Ափըս դնում եմ քո մի ափ հողին,
Ինչպես իմ նախնիք՝ Սուրբ Գրքին իրենց...

Եվ գո՛ւր, իզուր են մեզ ուսուցանել,
Քե յուզոտ մատով Սուրբ Գիրք չեն թերթում:
Ա՛խ, ի՛մ ժողովուրդ, Գի՛րք ժողովողի,
Սուրբ Գիրք... ծամո՛ւմ են... յուզոտ բերանո՛ւմ՝
Քո լավաշիդ պես,
Նշխարիդ նման...

Եվ աշից նայում՝
Տեսնում եմ հրդեհ,
Ձախից եմ նայում՝
Տեսնում եմ մոխիր:
Ի՛նչ է. քե՛զ տրվեց կրակը կրթել
Ու դաստիարակել մի ամբողջ նախիր...

Ճակատազրրի բերումով դաժան
Ճակատրդ հիմա՝ փոքրի՛ց էլ փոքրիկ,
Մինչդեռ ճակատիդ գիրը՝ մեծից մե՛ծ:
Իսկ ո՞վ է դրա ընթերցողն, ո՞ւր է...

11. XI. 63
Երևան
22. III. 67
Արզնի

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Գիշերային մութն է հորդում:
Ու թո՛ղ հորդի:
Եվ իր կարգին թո՛ղ ցամաքի ցերեկն այնպես,
Որ կարոտենք լույսին,
Ինչպես
Մեր ա՛յն մոտիկ—հեռավորին՝
Սիրավորի՛ն,
Վիրավորի՛ն,
Ումից ընդմիշտ բաժանում է մեզ Օրենքը՝
Անօրենքը...

Բայց կա նաև օրինավոր մի օրենք էլ,
Որի հլու կատարածուն ենք ամենքըս...
Գիշերային մութը միշտ էլ քուն է բերում:
Եվ ահա ես
— Քնե՛ք,— ձեզ եմ ասում մոր պես,
— Քնե՛նք,— ինձ էլ խառնում եմ ձեզ:
— Քնե՛նք,
Որ զուր չմտածենք ծանր ու բարակ,
Որ մեզանից պոկենք ամեն մի մտորում,
Մեր բարձի տակ ճիւղենք ամեն խոկում ու խոհ:
Քնե՛նք, թեպետ ըստ առածի՝
Մեկ է, իբրը, մեռել ու քուն:

Եթե անգամ մեկ է, իբրը, մեռել ու քուն,
Վնաս չկա՞,— հորդորում եմ ես հոր նման,
Հո՞գ չէ, հոգի՛ս, ավելացնում եմ մոր նման,
Ձե՛զ եմ ասում,

Ի՛նձ համոզում,
Որ իսկապես վնաս—ն ինքը կուտի իրեն,
Չկա—ն ինքը կուտի իրեն,
Հոգ—ն էլ՝ հոգ—ին,
Ու կմնա միայն... հոգին:
Այդ պահին էլ մենք... կարթնանանք:

— Քնե՛ք ուրեմն,— ասում եմ ձեզ,—
Որ արթնանաք:
Արթնանալը շատ պետք է ձե՛զ,
Մե՛զ՝
Ամենքի՛ս...

— Քնե՛ք ուրեմն,— ասում եմ ձեզ,—
Քնե՛ք, որ նախ... ե՛ս արթնանամ,
Եվ ձեր վնաս ու մնասի,
Կա—չկայի,
Հոգս ու հոգի
Ու ձեր հոգու մասին հագա ի՞՞հ հեզ հոգի՛ն՝
Ձեր ամենքիդ հոգս ու հոգի կատարածո՛ւն...

20. 11. 67
Արզնի

ԵՐԿԿԵՆՑԱՂ ԿԵՆՑԱՂ

Մարիամ, Մարիամ,
Դու պարտ էիր ու պարտավոր
Աշխարհ բերել մի... թո՛ւխ տղա,
Բայց ծնեցիր մի... շե՛կ աղջիկ:
Եվ լինո՞ւմ է արդյոք այսպես:
Հավանաբար լինում է, որ եղավ:

Եղա՞վ.
Դու՛ տակավին ինքըդ աղջիկ,
Մտազարդարի շվի նման դեռ դալարուկ,
Եվ... աղջեկա մա՞յր ես հիմա,
Այն էլ մի... շե՛կ աղջեկա մայր:
Եվ ո՞ւմ պիտի նա կոչի «հայր».
Ոչ թե Հորը գերհեռավոր,
Այլ ինչ-որ մի... մի Հովսեփի՞...

Ու կան բառեր,
Որ ես հիմա մեջս եմ պահում
Այնպե՛ս,
Կարծես բանտարկյալներ լինեն նրանք:
Իսկ շուրթերի՛ս,
Փա՛կ շուրթերիս ձորի միջով
Մի ժպիտ է անվերջ սահում,
Մի ժպիտ, որ երկկենցաղ է՝
Ինչպես... աղբ.
Դա՛ռն ու քաղցը՛ր,
Կո՛շտ ու լուծվո՞ղ...

Բայց կան բառեր,
Որ կտրում են փշալարեր
Ու փախչելով ազատվում են
Մինչև անգամ արդիական՝ ճամբարներից:
Ու դրանցից մի քանիսը
Ահավասիկ
Ինձնից փախչում—հասնում են քեզ,
Որ քեզ ասեն.
— Կյանքի՛ ձեռքով ինձնից խլված
Այլապատկա՛ն բնագավառ դու իմ սիրո,
Այլազրբա՛վ բնակավայր իմ սիրելի,
Այլապատկա՛ն,
Այլազրբա՛վ,
Բայց ի՛մն էլի,—
Բարձրդ բարի՛, իմ սիրասո՛ւն ու սիրելի՛,
Չարչարանքիդ ապաշխարա՛նք:

Եվ փա՛ռք աստծու,
Որ ծնեցիր
Թուխ մանկան տեղ աղջիկ մի շեկ:
Ուրեմն արդեն մի Մարիամ էլ եկավ աշխարհ,
Որ երբ, հետո՛,
Իր մո՛ր նման
Ում հանդիպի և իր սիրով ընդմիշտ թովի՛
Նրա հացը սրբացնելով դարձնի նշխար,
Բայց դրանով
Նաև մատնի հավերժական քաղց ու սովի,—
Նախանձելի՛—անտանելի՛ վիճակ անանց.
Ապրել մի կերպ սուրբ նշխարո՛վ—մեռնել անհա՞ջ...

1. III. 67

Արզնի

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՎՌԱԶԻՆ

— Իսկ այդ ի՞նչն է,
Որ երբ հասավ՝
Փախցրնում է մեր քունն աչքից:

Պապիկն իսկույն հազն իր հազաց
Ու երբ պրծավ բարեհաջող,
Իսկույն ասաց.
— Մերությո՛ւնը:

Պատերազմի երես տեսած
Հայրիկն ասաց.
— Գերությո՛ւնը:

Մայրիկն ասաց.
— Մերությո՛ւնը:
Ու կրկնեց.
— Մերությո՛ւնը:

Փռքրիկ տղան
Փռքրիկ ափր զարկեց ափին
Ու ձայնիկն իր միացնելով
Ջնգուն ծափին՝
Չասա՛ց... գոռա՛ց.
— Չմեռ Պապի՛ն:

Իսկ աղջիկը արրունքահաս՝
Վառված ձեռով

Հարդարելով իր վարսերը՝
Ոչի՛նչ շասաց,
Բայց մտածեց.
— Պա՛րզ չէ, սե՛րը...

1. 111. 67
Արզնի

ՀԱՆՅԼՈՒԿ ԵՐԿՐՈՐԳ

— Այդ ո՞ր կենդանին է, որ չգիտի լողալ,
Իսկ թե փորձեց՝
Սուզվում—խեղդըվում է:

Շա՛տ-շատերը իրենց չարչարեցին
Իզո՛ւր,
Մտածեցի՛ն երկար, միտք արեցին
Իզո՛ւր,
Մեծը փոքրին նայեց,
Սա՛ տարեցին
Իզո՛ւր,
Մինչև որ պատահած կենդանաբանն ասաց.
— Այդ կենդանին ուղտն է:
Իսկ ես գոռացի.
— Ո՛չ,
Այդ կենդանին... ե՛ս եմ,
Որ չգիտեմ կյանքի սահանքներում լողալ,
Հետն էլ նաև... սողալ...
2. III. 67
Արզնի

ՍԵՐԸ՝ ՀԱՆՅԼՈՒԿ

Ծ՛րբ և ինչպե՞ս է,
Որ մենք մեր գլխով
Կարծես դիպչում ենք արևի գլխին
Ու մեր ոտքերի տեղն ենք մոռանում,
Քանի որ սրանք
Խրված են լինում
Օվկիանի խորունկ հատակում կարծես...

Ե՛րբ և ինչպե՞ս է,
Որ մեր աչքերը
Խոշորանալով ու լայնանալով
Բռնում են կարծես ամբողջ դեմքը մեր,
Ու մոռանում ենք տեղը մեր սրտի,
Որ տրոփում է արդեն... ամենո՛ւր՝
Մեր կրծքի նաև ա՛ջ կողմում,
Նաև
Մեր ծնկների՛ մեջ,
Մեր կրունկների
Ու մինչև անգամ... ատամների՛ տակ...
Եվ տնավորված մեր սիրտը
Դարձյա՛լ
Տնավեր դարձած
Ու թափառական դարձած վերստին,
Ճամփա է ընկնում
Մաշված հետքերով անքուն կարոտի՛
Ինքն իրեն նորից դառնալու հույսով...
Վերջապես, ասա՛, ե՛րբ և ինչո՞վ է,
Որ ցավի հումը

Եփփել-եռալով դառնում է տանջանք...
Եվ մի այնպիսի-այնպիսի տանջանք,
Որ մեզ դարձնում է... կենտրոն աշխարհի:

13. III. 67

Արզնի

ԱՐՄԱՏԱՎՈՐ ՀԱՆՆԵՆՈՒԿ

Մասրենի՞ն:

— Մասրենին թե՛ թուփ է, թե՛ ծառ է:
Աճում է և՛ անհող, և՛ անջուր,
Բայց միշտ էլ ամուր ու պայծառ է:
Բուսնում է նա ժայռի ականջում,
Բուսնում է քարափի շրթունքին,
Եվ նրա ցավերով երկունքի
Մնվում է դալարուկ մի տունկի՛
Ոչ պակաս և՛ անհող, և՛ անջուր...

— Մասրենին ո՛չ թուփ է, ո՛չ ծառ է:
Մասրենին... կապիկն է... վարդերի,
Վարդերի այր-բեն-գիմ հեգելը...

— Մասրենին սեռերի բարդ դերի
Արտիստիկ նմուշն է: Էգերը
Մշտապես կոճկրված—հավաք են,
Մինչդեռ միշտ ճաքում են որձիբը,
Եվ նրանց դալարուկ զավակը
Այդպես էլ վարելով գործերը՝
Չի մերժում իր նախնյաց փորձերը.
Նոր էգերն էլի՛ միշտ հավաք են,
Ճաքում են միշտ նորեկ որձերը...

— Մասրենին ո՛չ թուփ է, ո՛չ ծառ է,
Ո՛չ վարդ է:


— Իսկ ինչ է:

— Երեխի

Մասրենին... լուսնոտն է... արևի,
Որ քայլում քիվերի վրայով,
Բնական— ժայռեղեն քիվերի,
Ու ներքև չի ընկնում իր վերից...

25. 111. 67
Արզնի

ՀԱՎԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԻ ԱՐԱՏ ԶԷ



Դարե՛ր շարունակ,
 Դարե՛ր շարունակ
 Բոլոր գույներից կապույտն առավել
 Հուզել է մարդուն,
 Միտքը խռովել:

Օվկիանին տիրած,
 Իշխելով ծովին՝
 Նա աչքը տընկեց
 Երկընթին ծավի:

Իզուր կարծելով,
 Որ այլ ճար չունի
 Վերին ծովերում լողալու համար՝
 Մարդը միտք արեց կառկել թռչունին:

Սակայն...
 Կապկիւուց այդ ե՛րբ է ախար մեծ բան դուրս եկել,
 Որ դուրս գար հիմա:

Չէ՞ որ ծովերում լողալու համար
 Ճայ լինելն անգամ կատակ է հիմար—
 Պետք է ձո՛ւկ լինել:

Եվ Մարդը հիշեց,
 Որ ինքն առաջին իր նավակները
 Իրոք որ ձկան տեսքով էր շինել:

Եվ հենց ա՛յն պահին,
Սրբ թուրուններին կապկելուց պրճավ,
Այդ պահին էր հենց,
Որ երկրո՛րդ անգամ
Մարդը աշխարհում կապկից մարդ դարձավ:

2

Ստեղծվեց ահա, վերջիվերջո, նա՛
Այն երկնածուկը,
Որով պիտի որ շուտով վերջանա
Մարդու անձուկը:

Երկնային ծովի նավա՛կն առաջին...:

Նավա՛կ,
Որ արդեն կարող է լողալ
Անանց հովերի:

Նավա՛կ,
Որ արդեն կարող է տիրել
Վերին ծովերին:

Նավա՛կ,
Որով Մարդն ուր որ է ահա
Պիտի կատարի
Տիեզերական տեղափոխություն:

Տեղափոխություն,
Որ համեստություն անելուց եթե մի պահ դադարի՝
Կարող է իսկույն ինքն իրեն կոչել... հեղափոխություն:

3

Հեղափոխության շունչն է զգացվում և Տիեզերքում,
Ու շուտ է եկել ամեն ինչ հիմա:

244

Իսկապե՛ս:

Ձե՛ որ դարե՛ր շարունակ
Մեր Հողագնդի կտուրից վերե
Ձի անցել ոչի՛նչ—
Ո՛չ քամուց քըշված աշնան մի տերե,
Ո՛չ գընդակ,
Ո՛չ ճիչ:

Եվ մինչև անգամ ամեն մի թըռչուն,
Որ վերևում է շընչում
Ու շըրջում,
Թըռչունն ինչ է որ—
Փա՛ռք ստեղծողին—
Թըռչունն էլ վերջում
Հանգրստանում է կամ... սատկում հողին:

Վայր ընկնող աստղեր՝
Երկնային ծովից մի պահ դուրս թռած
Օձաձկան պես—
Նո՛ւյնպես վերևից:

Գիսավոր աստղեր՝
Ղումաշից կարած
Ձանգածև շորի փեշերը փռած
Բոց աղջրկա պես—
Նո՛ւյնպես վերևից:

Հրեշտակները՝
Գարձյա՛լ վերևից:
Նակ՝

դևե՛րը:
Եվ ինքը՝
աստվա՛ծ...

4

Բայց... շուտ է եկել ամեն ինչ հիմա.
Վերևից սուրող աստղերի տեղակ
Այժմ ներքևից

Յոսասիճանի աստղճր գիսավոր
Վերև են սուրում
Եվ հանդիսավոր
Կոչում են իրենց
Ո՛չ վար ընկնող աստղ,
Ո՛չ էլ գիսավոր—
Կոչվում են հրրթի՛ս:

Լսո՛ւմ ես,
Ո՛վ Մարդ
Սևանից-Բայկալ,
Ջունգլիից-տայգա:

Լսո՛ւմ ես,
Ո՛վ Մարդ.

Շունը՝
Մի կայկա՛,
Որ իբրև մահդիր
Գարեբ շարունակ միշտ քարշ է տվել
Մի բառ՝
«կապովի»,
Երեկ շէ՛ր,
Գարձավ... տիեզերական խիզախ կապավոր:

Շունը՝
Մի կայկա՛,
Որ ամբողջ կյանքում
Հանգով—չափավոր
Հաշի է միայն Լուսնյակի՛ վրա,
Երեկ շէ՛ր արդյոք,
Որ իր վերևից
Կաղկանձեց նաև Արևի՛ վրա,
Հողմաղացային անթվի շափ մեծ
Մի խո՛րթ Արևի...
Նա շէ՛ր, որ երեկ

Շենց այն էր անուճ,
Ինչ և ոչ մեկիս
Բախտ չէ վիճակվել գոնե մե՛կ անգամ.
Գոռոզ երկրնքին տեսազ էր անում—
Լեզու էր հանում...

5

Հեղափոխություն մրրիկն է հայթիկ
Նաև վերևում:

Եվ միանգամից — շուգելով — հանկարծ
Հեղափոխվում է հայա՛ցքդ անգամ.

Քիչ առաջ հանգիստ,
Իսկ հիմա գժված
քամուց

Պոչնիվար տանիքից քշված
Գյուղական ծաղկուն ավելը ծանոթ
Ինձ ցերեկային գիսաստղ է թվում...

Նույնիսկ հավերն են հիմա ինձ թովում—
Անվարժ-անճոռնի քայլող հավերը
Կարծես թե այսօր
(Առաջի՛ն անգամ)
Իրենց տոտերով դաշում են... աստղեր՝
Հողի երեսին երկի՛նք նկարում...

Միրանի ծառից խեժն է վար ծորում—
Ասես վայր ընկնող մի աստղ է ծյուրում...

Ճերմակ մալաշա տանձերն են կաթում—
Կարծես թե օղում
Գլխիվայր շրջված պարաշյուտներ են լիբիպուտային...

Մի ողջ ծիրկաթին ողկույզ-ճուֆային,
Եվ մի աննշան, մի խելառ հպուռ

Խարչու զնդածն շրջանն է ահա
Լարված բզզոցով անվերջ շափշփում,
Պտույտներ տալիս նույն ուղեծիրով
Ու հետո՝

Քափով ընկնելով ճութին,
Ձոհվում է նրա ձյութի պես կաշուն
Ու ճահճի նման ներս քաշող հյութին,
Ձոհվում է—

Ինչպես մթնոլորտային խիտ շերտերի մեջ
Արրանյակներն են խրվելով կորչում...

Հեղափոխվել է հայացքը անգամ:

6

Հեղափոխության մաքրող ալիքից
Եվ Տիեզերքն է մտովին բերկրում:

Բայց դա սկզբվեց նախ այստեղ՝
Երկրում:

Քեպես և վաղուց—

Քղթով ու գրով—

Ճորտատիրական իրավունք չկար,

Բայց Մարդը ճորտ էր—

Եղել էր ու կար:

Ճորտ էր ու գերի

Իր ամեն տեսակ՝

Ամեն օր

Մի նոր

Անուն ստացող

Բոլոր տերերին.

Դրախտ խոստացող,

Բայց դժոխք բացող

Մըրագրերին.

Սուտ-սուտ խոսքերով

Խարող ու գերող

Լըրագրերին.

Եվ ա՛յն հրերին,

Որ մուր են տալիս ավելի,

Քան հուր.

Եվ ա՛յն ջրերին,

Որ պապակի տեղ

Մարում են փափագ.

Եվ ա՛յն սերերին...

սրերի՛ն...

Կարծես

Դեռ այս ամենը քիչ էր ու թերի—

Եվ Մարդը նաև... հողին էր գերի.

Այնպես էր գամված միևնույն վայրին,

Ինչպես Պրոմեթևսն՝ իր քարածայրին:

Եվ փրկությունը վերևից չեկավ՝

Ո՛չ շար աստըծուց,

Ո՛չ բարի դևից:

Մա՛րդ,

Փրկությունը վերևից չեկավ—

Ափի՛դ մեջ ծնվեց,

Պոկվեց քո թևի՛ց...

7

Նորի՛ց մարդացած,

Կրկի՛ն գիտակից՝

Մարդը ելնում է այն խուփի տակից,

Որ կոշիլ է նա երկնային կամար:

Էլ բավակա՛ն է,

Որքան պտըտվեց,

Ինչպես բանտվածը՝ իր բանասխցում,
Ինչպես խխունչը՝
Մածկի տակ խեցու:

էլ բավակա՞ն է:

Կեցցե՛ք երազի ձևավորումը,
Կեցցե՛ք սողունի թևավորումը:
Վե՛րջ ճորտությանը,
Մի մորից ծնված բյուր գաժապենների
Ջուր խորթությանը—
Կորչի՛ երկնային բյուր երկբրնեբի
Հին գատությունը:
Կեցցե՛ք ու կեցցե՛ք ազատությունը:
Կեցցե՛ք...

8

Բայց կացեք,
Սպասե՛ք մի պահ,
Թող դադար առնի
Այս հասկանալի գոռում-գոշումը:

Որտեղի՞ց հապա,
Ինչի՞ց է դալիս
Անհասկանալի
այս զգացումը,
Այս զգացումը... խրղճահարություն:

Ծ՛ս,
Որ շատ հաճախ
Ուզել եմ նույնիսկ
Մեր Հողագունդը լինի իսկապես
Փոքրիկ զըլորուս աշակերտական,
Ու... կոթից բռնած՝
Չոր գետնին խփես,—

ես

Հիմա,
Հանկարծ,
Հանդես աշխարհի
Դառնում եմ ինչ-որ շափից դուրս բալի,
Մոռացած նոպան արդար շարության՝
Կցվում եմ ինչ-որ անհասկանալի խրղճահարությամբ:

էլ ուրիշ ինչպե՞ս:

Չէ՞ որ այս Երկրում
Եվ այս Երկրի հետ
Ես արդեն քանի՛ ու քանի՛ տարի
Ապրել եմ մեկտեղ,
Մեկտեղ մահացել—
Փոխել միասին
Քանի՛ կերպ ու ձև:

Ինչպե՞ս շինեմ քնքուշ ու բարի,
Թե արդեն քանի՛ ու քանի՛ տարի
Ինչ ունեցել է՝
Նա ինձ է տվել
Եվ տվել այնքան,
Որ հեշտ չէ թվել:

Տվել է անտառ
Ու որս է տվել.
Տվել գետ դանդաղ
Ու կոճըղ — նավակ.
Բքի դեմ՝ մորթի,
Շողի դեմ՝ շվաք,
Եվ մահ է տվել,
Բայց նաև՝ զավակ...

Ինչ ունե՛ք-չունե՛ք՝
Իմ գեմ շաղ տվեց,

Զտես-Վայրենուս
Անգամ... ա՛ղ տվեց:

Ինչ ունե՛ր-չունե՛ր...
Ամե՛ն ինչ ունե՛ր.
Ամե՛ն ինչ, բացի
Կրակ ու բոցից:
Բայց երբ կրակը՝
Շանթի տեսք առած,
Երկընթից թռած
Ու երկրին թառած,
Մեկ՝ ցըցվեց պոչին,
Մեկ՝ սողաց-սահեց,—
Անգե՛ն Երկիրը,
Դարձյա՛լ ինձ համար,
Իրեն վառելով՝
Ու սպառելով՝
Կրակը պահեց:

Կրակը պահե՛ց—
Եվ ձեռ ու ոտին ահեղ կրակի
Ես անմիջապես դրեցի շղթա,
Որ ինձ շթողնի ու Երկինք շերթա:

Եվ լի օր չէր դա,
Այլ վառ Կիրակի՛—
Դեռևս չեղած,
միա՛կ,
առաջի՛ն՝
Նախապատկերը Տեառնդառաջի...

Հետո,
Շա՛տ հետո,
Դար-դանդաղ հերթով,
Եկավ շո՛ւն, կատո՛ւ,
Ձի եկավ ու ե՛զ...

Սակայն առաջին վայրի կի՛նդանին,
Որ բռնել եմ ես,
Դարձրե՛լ եմ հեզ
Եվ անվանել եմ նրան «ընտանի»,
Հենց կրակն ի՛նքն էր,
Որ ինձ շի բաշխել ժլատ Երկինքը,
Այլ նույն Երկիրն է պարզակել:

9

Ու ես
Լքո՞ւմ եմ նրան—
Իմ օրորո՞ցը,
Եվ իմ մահի՛ճը,
Եվ իմ շիրի՛մը...

Ու թվում է, թե իմ մտերիմը,
Իմ քանի՛ տարվա հավատարիմը
Իր բեռնների ձնհալով
Ահա՛
Հուռ լաց է լինում
Եվ ասում կամաց.
—... Լքո՞ւմ ես հիմա:

Ու ես,
Որ հաճախ նրա նկատմամբ
Լցված եմ եղել արդար շարությամբ,
Հիմա — ո՛վ զարմանք — նրան եմ նայում
Անհասկանալի խղճահարությամբ:

Սով գորովանքի
Ու սիրո խոսքեր շըրթներիս վրա՝
Շոյել եմ ուզում
Սանըր շտեսած գլուխը նրա,
Շոյել ու ասել:

— Մի՛ չար,
Իմ անզի՛ն,
Լսո՛ւմ ես,
Իմ սե՛ր.
Ո՛վ էլ քեզ լքի՛
Ես չե՛մ լքեալ,
Ո՛վ էլ ինձ ձգի՛
Ձո՛ւր է ձգելու—
Թո՛ղ որ մեծ լինի հմայքն օտարի,
Օտարի կամքը ես չե՛մ կատարի—
Դարձյա՛լ կմընամ քեզ հավատարիմ...

10

Բայց բևեռների վարար ձնհալով
Համրածայն լալով՝
Կարծես ակամա
Ասում է կամաց.
— ... Լքո՛ւմ ես հիմա:

Չե՛մ լքի ես քեզ,
Չեմ լքի ցմա՛հ:

Ե՛վ իմ կինն ես դու՛
Տանտիրուհին ես,
Ե՛վ հավատարիմ իմ սիրուհին ես:

Ճիշտ է,
Որ քեզ հետ ես շամուսնացա—
Ամուսնացրի՛ն,
Եվ ա՛յն ժամանակ,
Երբ ես տակավին չէի հասկացել,
Թե ինչ է կյանքը,
Թե որն է սերը—
Ձեի համար էլ ոչ ոք չըղիմեց

Ու չըհարցրեց անգամ իմ կամքը.
— «Որդյակ իմ, տե՛ր ես»:

Չըհարցրեցի՛ն:
Բայց ես հասկացա,
Որ եթե հետո խուլ լինես ու կույր,
Դառնաս կոնդ ու թույլ՝
Քեզ,
Ինչպես որ կաս,
Պիտի ընդունեմ —
Է՛լ քեզ լքելու իրավունք չունեմ,
Պիտի ծերանանք մեկտեղ՝
Մի բարձի:
Եվ իրո՛ք.
Քանի՛ սավան փոխեցինք—
Երկրաբանական դարաշրջաննե՛ր...

Սավա՛ն փոխեցինք,
Բայց աստված շաներ,
Որ փոխվե՛ր բա՛րձը:

Բարձը չփոխվե՛ց:

11

Եվ ահա կախվեց
Քո ծանրը հարցը.
— ... Լքո՛ւմ ես հիմա:

Ո՞նց լքեմ,
Հիմա՛ր:

Ոնց լքեմ,
Թե մենք
Հնդկաստաններում մեկտեղ ենք սովել,
Եվ քը՛մնորիս տակ — կողքնորիս ծովեր՝

Անշուր պապակվել,
Տապից տապակվել
Սահարաներում,
Արևին մոտիկ՝
Բքից տապակվել
Բևեռի սառցե սահարաներում...

Քեզ ինչպե՞ս հիմա
Ես լքեմ, հիմա՛ր,
Եթե միասին
Մեկտեղ ենք արել ապուշություններ՝
Բրոնակալներին ջերմություն տվել,
Սողուն ծընվածին՝
Ոտքեր ու թևեր...

Մեկտեղ ենք արել և գծություններ.
Գահեր ենք շրջել,
Արյունով թրջել
Գոռ հաղթանակը արդար ռխության—
Ապրստամբելով՝
Փըրկվել ենք փորձել
Եվ պարզել զըրոշ հեղափոխություն...

Մեկտեղ ենք կրել,
Միասին տարել
Նաև ահավոր խժոժություններ՝
Բարբարոսներից մինչև Աթիլա,
Հոներից—թուրքեր,
Թուրքերից—ֆաշիզմ.
Վճարել արցունք,
Ո՛չ միայն տուրքեր.
Նաև՝ մեր կաշին,
Ո՛չ միայն քուրքեր.
Կորցրել հավատ,
Ո՛չ միայն կուռքեր...

Քանի՞ որդի ես դու ինձ պարզեցի...

Հիշել ո՞ր մեկին,
Ո՞ր մեկին թվել...

Նրանցից մեկը գոչեց. «Էվրիկա»...
Երկրորդն էլ գտավ — ողջ Ամերիկան...

Երրորդն սկսեց Պարթենոն շինել...
Չորրորդը խորհեց. «Լինել-չլինել»...

Մեկն ինձ քանդակեց՝
Մովսեսի դեմքով
Ու մարմնով Դավթի:

Մեկ ուրիշն ահա
Ծընվեց,
որ հետո
Զրից հուր զավթի
Ու թևեր՝
նավթից:

Մեկը խլացավ,
Զընկրճվեց սակայն
Ու «Հերոսական սիմֆոնիա» գրեց:

Մեկ ուրիշ որդիդ՝
Ծագումով հրեա,
Հրեա Հիսուսի հին միջը ցրեց
Եվ ինքը դարձավ իրական փրկիչ—
Իր միտքը դրեց
Մի կյանքի հիմքում,
Ուր՝
Ո՛չ տեր-ծառա,

Ո՛չ զրկյալ-զրկիչ...

Քանի՛ր զավակ ես դու ինձ պարզեել...

Իսկ քանի՛ր զավակ մենք զոհ ենք տվել:

Հիշել ո՞ր մեկին,
Ո՞ր մեկին թվել...

Այսքանից հետո
Լքե՛լ քեզ հիմա:

Ախար հասկացի՛ր.
Որքան ջանում եմ՝
էլի մտքերըս քո շուրջն են պըտտում,
Պըտտում են համառ,
Ինչպես թիթեռ...
(Ձէ՛ մի, ի՛նչ թիթեռ)
... Ինչպես որ հիմա
Օղազուրկ օդում
Արբանյակներն են քո շուրջը պըտտում...

Մինչդեռ դու, նորի՛ց,
Քո բեռների վարար ձընհալով
Համրաձայն լալով՝
Ասում ես կամաց.
— ... Լքո՞ւմ ես հիմա:

Իզուր ես լալիս,
Ձուր ես հոգ անում:

... Քո վախը սակայն լավ եմ հասկանում:

Իրարից հեռու,
Բայց դեմ-հանդիման՝
Մոլորակներով լի է երկինքը,
Եվ ամեն մեկը... կին է քեզ նման:

Իսկ դո՛ւ...

Ձէ՛ որ դու քո մրցակցուհուն
Նրբեք չես զիջի ո՛չ մի բան,
Ոչի՛նչ—

Ո՛չ շոր մի ցողուն,
Ո՛չ կանաչ մի սինձ,
Եվ ո՛չ էլ անգամ
Սովորական քար,
Որ երբ նետում են,
Ձի գնում հեռու—
Իսկույն ձգելով՝
Դու ետ ես բերում...

14

Ահա հենց ինքը Լուսինը լալառ,
Որ քո դեմ անվերջ դավեր է նյութել,
Քեզ տըրվածներին ձրգաել է դյութել,
Բայց մինչև այսօր չեն օգնել նրա
Ո՛չ մարմինը մերկ,
Ո՛չ դեմքը սիրուն,
Ո՛չ անկեղծ պահեր,
Ո՛չ խաղ ու կեղծիք:
Ու թե ազդել է՝
Լոկ նրանց վրա,
Որ քեզ ամենից տկար են սիրում—
Լոկ ծովի վրա
Ու... բանաստեղծի:

Լուսնա-կնամուլ ու հեշտաբարո
Օվկիանոսներն ու ծովերն իսկապես
Մակընթացություն իրենց ալիքով
Ձրգտում են թողնել փակ ափերը քո,
Ձրգվում են դեպի լանջաբաց ու հին
Այդ Լուսին կոչված էժան պրչրուհին,
Ձրգվում են...

Սակայն

Դու ամեն անգամ
Բարկոթյամբ կնոջ
Ներքուստ ծփում ես
Եվ ստիպում ես,
Որ ետ դառնան գան:

Եվ անուղղելի,
Բայց և ձախողակ
Այդ կնամուր՝
Նույն ծովն այդ
աճա՛

Զրդշացած արդեն
Եվ ամոթահար,
Աչքերը լեցուն
Ներումնաճայցման աղի թացությամբ՝
Նորից,
Շան նման,
Փարում ոտերիդ,
Ափերդ է լիզում—
մակընթացությամբ...

Իսկ պոետները...
Եթե ճիշտն ասել՝
Թույլ տղամարդ են,
Քան թե կնասեր...

Եվ դու
Նույնիսկ քո այդ պաղ ու շիջուն,
Այդ թույլ ու տկար սիրեկաններին,
Մինչևիսկ նրա՛նց
Լուսնին չե՛ս զիջում,
Ինչպես մանկանը՝ իր խաղալիքով,
Խաբում ես նրանց ծառ ու ծաղիկով,
Արբեցնում նրանց փառք-ըմպելիքով,
Հմայում նրանց

Մայրամուտներով ու ծեղով ոսկե,—
Եվ նրանք քեզ, կի՛ն,
Ասում են կրկին
Երդումի՛,
Սիրո՛,
Քնքշանքի՛ խոսքեր...

15

Այնպես որ՝ Լուսնից դու մի՛ վախենա:

Եվ ի՞նչ դու շունես,
Որով խաբի նա:

Ինչ որ «կրկեսներ»:

Բայց մի՞թե երբեմն
Ինչպես ինձ՝
Եվ քեզ
Կյանքը չի թվում
Կատարյալ կրկես...

Իրոք. ի՞նչ շունես,
Որով խաբի նա:

Իսկ այն,
Ինչ ունես՝
Նա շունի բնա՛վ:

Արևը՛ս վկա.
Այստեղ էլ, ուր կա
Մթնոլորտ
Եվ օդ,
Այստեղ էլ ախար
Այնքա՛ն անհողի բան է կատարվում՝
Նեղում են այնքա՛ն,

Սեղմում են այնքան,
Որ հաճախ մարդու շունչ է կտրրվում:
Հերիք չէ՞ այս դեռ:
Իսկ կուսնի վրա
Բնավ օ՞ղ չկա,
Մթնոլո՞րտ չկա...

Եվ այնտեղ չկան
Ամպե՛ր,
Զո՛ւր,
Քամի՛,
Չկան տեղումնե՛ր.
Որպիսի՞ տաղտուկ—
Ո՛չ հույս փոփոխման,
Ո՛չ էլ շեղումներ...

16

Սակայն երկյուղը դեռ անց չի կենում,
Եվ ես քո վախը լավ եմ հասկանում:

Քո դե՛մքը...

Գիտե՛մ,
Նա գրավի՛չ չէ,
Գուցե վանի՛չ է,
Անախորժալի՛ —
Ծաղկատար է նա՛,
Զոր ու խորշերից:

Մինչդեռ վեներա՛ն...
Նա շժանգոտող ազնիվ արծաթ է
Իվ կամ պարզապես խտացած կաթ է:

Իսկ հապա Մա՛րսը...

Նա վտանգավոր մի նորահարս է,

Կա պարզ է,
Թևպետ սուտլիկն այդ սիրուն
Տղամարդկային անուն է կրում:

Մինչդեռ մի ոմն լպըստված Սատուրն՝
Գայթակրողելու ախտին անձնատուր
Մի անվանափոխ այլ խանում-խաթուն,
Հերիք չէ ունի ձիգ-ջահել հասակ,
Երկրրպագուներ հազար մի տեսակ,
Հերիք չէ—
Որ դեռ գլխին էլ ունի
Սի մեքսիկական շքեղ սոմբրերո՞,
Թե՞ մի երկնային վառ լուսապըսակ,
Ու ման է գալիս՝
Շուրջը սրփռելով
Դյուրթանք
Ու վտանգ...

17

Եվ չվախենա՞ս:

Ո՞նց չվախենաս,
Երբ քո մարմինը—
Գուցե ի ծնե—
Պատված է՝

տեղ-տեղ

Դալկուիթյամբ ձնե.

Տեղ-տեղ՝

կապույտով—

Օվկիանոսներ ու ծով.
Իսկ քո շատ տեղին՝
Մահացու դեղին—
Խոցերի նման թարախակարմիր
Քեզ այլանդակող քանի՞ անապատ,—
Մի տգե՛ղ մարմին՝
Կապույտդեղնապատ

Վաղը կամ մյուս օր,
Երբ որ իմ հզոր
Ձեռքերի առաջ պիտի տեղի տան
Գաղտնասեր նյութի թաքուն գեղատան
Ամենակարող պահարանները,
Միամի՛տ եղիր,
Որ ես կըբուժե՛մ
Քո մեծ ու փոքր Սահարաները՝
Ահեղ Բնության դաժան պըճեղի
Բոլո՛ր հետքերը—
Քո խոր վերքերը,
Թունոտ ու լեղի
Խոցերըդ դիղին:

Կըբուժե՛մ:

Վկա՛

Այն Կարա-Կումը,
Ուր վարակում է
Արդեն կանաչը,
Ուր բարակում է
Անվերջ դեղինը
Եվ — մեկ էլ տեսնես—
Կար... ու էլ չկա:

Կըբուժե՛մ:

Վկա՛

Այն տափաստանը,
Որ պապակվել է դարեր շարունակ
Ու հետն էլ՝

Սովյալ անունն է կրել

Իսկ հիմա այնտեղ—
Ծփուն արտերի մի անդաստան է,
Որ երկրի բոլո՛ր գործազուրկներին
Կարող է մենակ կուշտ կերակըրել...

Քեզ հույս եմ տալիս,
Անկեղծ խոստանում,
Որ քեզ,
Միրելի՛ս,
Չե՛մ թողնի, գնա,
Բայց դարձյա՛լ լալիս,
Չես հանգըստանում:

Եվ քիչ է մնում,
Որ չհասկանամ:

Բայց հանկարծ—այնպես պարզ եմ հասկանում,
Թե ինչո՞ւ բնավ խոսքի չես գալիս,
Թե ի՞նչն է, որ քեզ հանգիստ չի տալիս:

Չէ՞ որ, իսկապես, այնպե՛ս կուզեի
Լինել անկըշիռ

Եվ առանց քաշի,
Որ մեր մարդկային այս մաշկը թըշվառ,
Որ մեր խեղճ կաշին,

Անվերջ չըքաշի,
Չըտանի դըժվար
Ա՛յն ծանրությունը,

Որ բնավ չունեն
Այս Լուսին կոշված բոլոր լրբերը:

Ա՛յն ծանրությունը,

Կշիռն ու բեռը,

Որից զըրկվելու,

Որից փըրկվելու

Վառ անըրջանքից լուռ կըկոցվելով՝
Բարակ ասեղի կետեր են դառնում
Իմ խեղճ բիբերը:

Սակայն...

Է՛նչ արած.

Գե՛հ, սերը սեր է—
կա՛վ ես, թե վատ ես՝
ես եմ քո տերը.
Դարձյալ շե՛մ լքի
Ու շե՛մ հեռանա՛
Կըշռազըրկումի հույսով տարվելով:
Դարձյալ շե՛մ լքի
Ու շե՛մ հեռանա՛
Այնքանով գոնե մխիթարվելով,
Թե անկըշուռության այդ զգացումը
Դու քնիս մեջ ես երբեմն ինձ տալիս:

19

Սակայն դու էլի շնո հանգըստանում:

Հասկանում եմ քեզ... մի վերջի՛ն անգամ:
Հասկանում—

և ի՛նչ.

Ահա մի բոպի
Սիրտըս սկըսեց կըրկին տըրոփել
Իր քենով նախկին
Ու հին շարությամբ՝
Առանց նորոյա խղճահարության:

Վերբասին ահա մաաբերեցի,
Որ պսակելիս շհարցըրեցին.
— «Որդյա՛կ իմ, տե՛ր ես»:

Չհարցըրեցին,
Թայց ես հասկացա,
Որ եթե հետո
Խուլ լինես ու կույր,
Դառնաս կոնդ ու թույլ՝
Քեզ,
Ինչպես որ կաս,

Պիտի ընդունեմ—
է՛լ քեզ լքելու իրավունք չունեմ:

Հետո, իսկապե՛ս, համրացար հաճախ,
Եվ նույնքան անգամ նաև խլացար.
Ով քո օգնական ձեռքին էր նայում՝
Դու ժլատորեն նույնիսկ զլացար
Դատարկ խոսք ասել քաջալերումի,
Ով արժանի էր սրտարուխ ներման՝
Ոչինչ շարժեցող մի բառ ներումի...

Նաև կա՛ղ եղար—
Միջնադարներո՛ւմ,
Երբ դար էր տևում քո ծանր տարին...

Եղար նաև կույր,
Հիմա էլ հաճախ
Խառնում ես աջ-ձախ
Եվ շար ու բարի.—
Ում տեսնել է պետք՝
Դու շես նկատում.
Ում սիրել է պետք՝
Նրան ես առում.
Ում պետք է ասել՝
Ամենից հաճախ
Սիրով ես պատում,
Տալիս եմ շոյանք.
Ում պետք է խոյանք՝
Նրան ոտնում ես.
Ում գրկել է պետք՝
Նրան գետնում ես.
Անարժաններին՝
Հասցընում փառքի,
Արժանավորին՝
Մուրողի պարկի...

Իմ սրտից հիմա արյուն է կաթում,
Արդար շարունակունն ինձ մշուշում է:
Երբ շուգելով իսկ՝
Դարձյալ հիշում եմ,
Որ կյանքիդ համար կյանքը վտանգած
Ինքնագոհ քաջին
Զգիտեմ ինչու
Զրկում ես հանկարծ իր զորեղ աջից.
Փըրկել ուզողիդ
Գամում ես խաչի.
Խաբվում ես հաճախ հուղայող պաշից.
Շոյված խոսքերից կեղծավոր բիճի՝
Կյանքից ես զրկում ուղղամիտ լաճիդ.
Դրախտի հույսով՝
Զրկվում ես նաև
Քեզ կերակրող խոփից ու մաճից.
Ու չես տարբերում
Պանիրը՝ գաջից,
Հառաչը՝ հաչից,
Սաղիկը՝ դաջից...

Միջակութունը մետրաչափ շինած
Ու սուր մրկրատով ինքըդ քեզ զինած՝
Դու այդ քո մետրով-արշինով-գազով
Զափում ես մարդկանց
Եվ այնպե՛ս խուզում,
Որ նրանք դառնան... հավասար գազոն:
Եվ ո՛նց է ուզում
Մըկրատը քո սուր —
Մինչևիսկ առանց թույլ ափսոսանքի—
Որ կյանքի թավուտ անտառը դառնա
Զափված ու ձևված մի... զբոսայգի...

Ու ճիշտ այդպես էլ՝
Հաճախ քեզ համար

Մե՛կ է

Մանվածքի բարակն ու հաստը...

Եվ չես ընդունում շողշողուն աստղը—
Գերադասում ես աստղակույտ-բազումը...

Իվ ի՛նչ ես շինել քեզ համար լողունգ՝
Ինչո՞վ ես դու քեզ շարունակ զինել:
Ինչո՞վ,
Եթե ոչ միշտ նույն... խոստումո՞վ,
Որ սակայն տարբեր կերպ է ընդունել—
Մերթ կոշվել է նա
Նիրվանա
Ու մերթ՝
Դրախտ ու ջեննեթ...

Եվ մութ խորքերում քո անձավների
Առավել սակավ,
Քիչ կա ավելի
Կրճոտված ոսկոր վայրի կենդանու,
Քան թե քո մթին բանտ ու զնդանում...

Մնում-սնում ես հազար բռնակալ
Ու... թույլ չես տալիս,
Որ այդ բռն անգամ
Գեթ հնչի:
Օ չէ՛.
Ստիպում ես դու
Աստված էլ կոշել...
Այսքանից հետո՝

Ո՞նց չըսարսփես,
Ինչպե՞ս չըղողաս,
Երբ քեզ—
Վերջապե՞ս—
Կարող եմ լքել՝
Զգե՛լ—
Հեռանալ,
Քո ամե՛ն տեսակ բեռից վերանալ
Եվ ընկերանալ երջանկությանը—
Տիրանալ հիմա ուրի՛շ մի բախտի:

30

Բայց դեմ եմ կանգնում իմ ցանկությանը:

Ո՛չ,
Մինչև անգամ այսքանից հետո՝
Դարձյա՛լ չեմ դիմի ես արտագաղթի:

Սեղմ շըրթունքներին՝
Սուր ճիչեր թառած,
Սրտիս մեջ՝
Վիթք բողոք ու հառաչ,
Դարձյա՛լ չեմ լքի
Ու չեմ հեռանա,
Բայց...
Դու էլ հիշի՛ր,
Էլ մի՛ մոռանա,
Որ հիմա պիտի քեզ խելո՞ք պահես—
Ո՛չ թե երևաս հնազանդ ու հեզ,
Ո՛չ էլ կոտորված իմ սիրտը շահես,
Այլ—

վերջ տաս այս բոլոր շարությունների՛դ...

Հիշի՛ր, որ տե՛րդ եմ,
Եվ ո՛չ թե գերիդ:

Վերին օվկիանոս ու հրկնային ծով
Արդ բաց են իմ դեմ.
Կարող եմ արդեն
Վաղը կամ մյուս օր,
Անվախ-անվարան,
Հանգիստ ճամփորդել
Կամ գնալ այնտեղ,
Ինչպես որ այսօր—
Ուղեգիրներով—
Մովափ են գնում:
Կամ առողջարան:

Կըզնա՛մ...

Եվ իմ մարմինը հոգնած
Կըթրջեմ հրի անձրևի ներքո—
Զե՛մ վերադառնա հին խոց ու վերքով...

Կազատվեմ գուցե թաքուն դողերից—
Արևների մեջ ես ինձ կըսուզեմ...

Կընդունեմ ցնցուղ բուժիչ շազերի—
Մաշված ջրղերս թերևս բուժեմ...

Մի երկնաշարժից ցած կիջնեմ փութով
Եվ այս անգամ էջ առտոմս ու ձրի,
Զըհամարելով բնավ անվայել՝
Մեկ այլ մոլորակ կընստեմ շուտով
Եվ, խիղճըս հանգիստ, կըտրամվայեմ
Կանգառներից զուրկ հսկա մարշրուտով...

Իմ հիացագին ապշած աչքերին
Կըշողան բոլոր կրակներն այն ծավ,
Որ տեսնում էր իմ Զորգանս քեզին

Մըսակեր հրի
Բոցերի միջով...

Եվ աշխարհներն այն տիեզերական,
Որոնց մասին է հորեղբայրս ասել՝
«Բայց... պտըտվում են»,—
Աշխարհներն այդ նույն
Թե ինձ՝

լողորդիս,
Վտանգի պահին հեռվից փարոսեն,
Ապա մոտիկից՝
Ինձ ընդունելով,
Օրորեն պիտի՝
Որպես կարուսել...

Իմ տեսածներից ես կըզարմանամ,
Թե՞ հիանալով ապշած կըմնամ,
Ու դրանից էլ
Ես էլ մի գուցե
Քայլեմ ծուռումուռ,
Ոլոր ու մոլոր,
Ինչպես քայլում է մի ինչ-որ Սիրիուս...

Բայց ինչ էլ լինի՝
Չե՛մ մնա այնտեղ,

Գարձյա՛լ ետ կըգամ
Եվ իմ շուրթերին
Ես ներողության խոսքեր կըբերեմ,
Որ ամոթահար-քըրտնած սըփռեմ
Քո՛ ոտքերի տակ՝
Միակ տիրուհո՛ւս...

Ու եթե քեզնից
Կամ—
Ավելի շուտ—
Չար փորձությունից լինի հրաման,

Եվ վերններում
Ես—

Լայկայի պես—
Նույնիսկ սատկեմ էլ՝
Ես քե՛զ կըճամփեմ սրտիս զարկերը—
Սըրտիս զարկերի կարդիոգրաման...

Իսկ եթե մնամ ես ողջ ու առողջ,
Նույնիսկ կազդուրվեմ,
Ինչպես այնպիսի՝ առողջարանում,
Որ անճարին է նույնիսկ ճար անում,
Ապա

Միրկաթնի հըսկա կամուրջին՝
Կանգառում վերջին,

Իմ կոշիկներից թափ կտամ փոշին տիեզերական
Ու երթագծով վար ընկնող աստղի,
Անօդ անհունի և օդի միջով,
Կըսուրամ կըգամ:

Ու եթե իրոք խելքըդ հավաքես,
Այնժամ, հավատա՛,
Ինքս էլ կօգնեմ քեզ,
Եվ գիտե՛ս,
Ինչո՛վ:

23

Վերին օվկիանոս
Ու երկնային ծով
Արդ բաց են իմ դեմ:

Այստեղից այնտեղ
Մեքենայություն ես կարտահանեմ
Ու կըններմուծեմ նոր մեքենաներ:

Ես կարտահանեմ սև միտք ու խավար
Ու կըններմուծեմ նույնչափ... սև խավար:

Ամենայն սիրով ես կարտահանեմ
Կարճամիտ հավկուր-հավատեսների
Ու ոչխարային լավատեսների
Ե՛վ կույր հավատը,
Ե՛վ հեղութունը՝
Ուժից վեր բեռից միշտ շտապելու
Եվ ոչ թե մեղքից ներքև թափելու
Այդ մարդկայնացած հին իշութունը,
Եվ կընկրմունքն դրա փոխարեն
Լուրջ բաղդատելու
Ու պաղ դատելու
Հավետ անվրտանդ ա՛յն գծությունը,
Ուր կատաղության նշո՛ւյլ իսկ չկա,
Ու մոլեգնության մի շյո՛ւղ իսկ չկա,
Ռեքեմըն՝ չկա չընչի՛ն իսկ առիթ զգուշանալու,
Սակայն—
Զրգիտես, թե ինչի՞ համար—
Լուրջ բաղդատելու
Ու պաղ դատելու
Հավետ անվրտանդ այգ գծությունը
Ենթակա է միշտ... մեկուսացումի,
Եվ այն էլ—
Այն էլ... ո՛չ գծանոցում,
Զէ՛ (երանի չէ՛ր)...

Ես կուզենայի
Եվ առևտրի մի էժանացում,
Որով ճար լինեի
Այս շար աշխարհի հերը անիծել—
Մի նոր ու խորունկ հավատ ստանալ՝
Գառնորեն կորած հույսերի գնով,
Սառը վաճառել՝
Ու ջերմ ստանալ դրա փոխարեն.
Խառնը վաճառել՝
Ու սերմ ստանալ—
Հատի՛կ-հատի՛կ սերմ։

Եվ ճառ վաճառել՝
Ու ճար ստանալ...

Ես կուզենայի—
Սեփական անձիս ի գործածություն
Պրղտորված ջրում ուովան զցելու
Քիչ փորձվածություն,
Երբեք չգործած հանցանքիս դիմաց՝
Փոքր-ինչ թողություն,
Եվ հեշտ կապկելո՛ւ
Ու թութակելո՛ւ
Մեծ կարողություն...

Ու ներմունծելով էժանության միտք՝
Կարտահանեի տեղը մտքերի ճոխ էժանություն:
Կարտահանեի և շարդարացվող նոր դաժանություն:
Որ դրա դիմաց ձեզ բավարարեմ
Հայնասըրտություն՝ մը,
Խըղճո՛վ,
Գթություն՝ մը՝
Մեկուզ դա թվա ինչքան հնացած,
Նույնքան միամիտ:

Ե՛ս,
Որ լուկ ունեմ
Կիսով քայքայված մի տընտեսություն՝
Տիեզերական շուկա կրտանեմ
Կարի՛ք,
Հո՛գս առաս,
Պակասությունեն՛ր,
Որ տեղն ստանամ
Հոգս ու կարիքի քիչ պակասություն.
Եվ հակասության լուծումի հույսով՝
Ես կարտահանեմ
Կարծիք ու փորձի,
Խոսքի և գործի

Զարմանահրաշ մի հակասություն...

Բայց...

Մինչև անգամ դիցուք վիզայի հարց էլ չիինի —
Եվ դյուրին լինի հա՞ գնալ ու գալ
Տիեզերական փակ սահմաններով, —
Բայց չէ՞ որ մեկ է.
Մատանա՞ն տանի,
Ախար ո՞վ ինձ հետ առևտուր կանի
Խիստ անհավասար այս պայմաններով:

Եվ այս պատճառով
Ես ինձ չեմ զգում ինչ-որ պետություն,
Մնում եմ նորից ես անհատ մի անձ՝
Ինչքան որ անուժ,
Նույնքան էլ միանձն,
Ու գուրս չըզալով՝
Մնալով այստեղ,
Ահա —

անհատո՛ւյց —

Ուղարկում եմ ես Երկրի շորսբուր՝
Կախյալ ու անկախ,
Հըսկա և փոքրիկ ամե՛ն պետություն,
Խորունկ սիրելու և շղթեղու մի վարպետություն
Ու հետն էլ —

Ոչ թե իբրև սուտ ռեկլամ,

Այլ մի ակնառու պարզ ցուցադրում —

Ես սե՛ր եմ ցրում՝
Հորդ ողողելով
Ու հեղեղելով
Համաշխարհային դատարկված շուկան —
Ունիվերսալ գնեք,
Խանութ ու դուքան...

Ինչպես որ շոգից անվերջ բարակող
Առվակի ջուրը բանդից են կալում՝

Ճիշտ այդպես էլ ես

Հիմա բարության

Որքան անվնաս,

Նույնքան վարակող

Մի բացիլային հորդ հոսք եմ թափում
Կեսլի-կեսթափուր
Մարդկային սրբտում,
Հանդում ու արտում,
Օդ-մթնոլորտում:

Եվ ամեն կարգի՝

Բաց ու բերանփակ,

Խորունկ ու տափակ,

Թե՛ մարդկայնության հրում թրծրված,
Թե՛ վառ հնոցից հում-հում վերցրված
Ամե՛ն անոթում
Հիմա տեղում եմ,
Հիմա հեղում եմ,
Նույնիսկ մղում եմ
Խոր մարդկայնությո՛ւն...

Ձեզ իմ հասցե՞ն է գուցե հարկավոր.

Ինչո՞ւ եք քաշվում —

Խընդրե՛մ, ի՞նչ կա որ.

Դա պիտի գրանի

Զավակը՝

իր մոր,

Թոռը՝

իր տատի,

Միրահար տղան՝

Միրածի սրբտում,

Մեծատառ Մարդը՝

Իր նման Մարդու,

Եվ մյուսներդ էլ —

Հեռու եք արդյոք,

Թե մոտ հարևան՝

Խընդրեմ.

Կարող եք հասցեադրել.

«Այստեղ,

Հողագունդ,

Քաղաք Երևան,

Այն խելառ Մարդուն,

Որ շաղ է տալիս

Սիրո թարմություն—

Հավատարմություն...»

11—15. IV,

3—21. V. 59

Մոսկվա

ՅՐԱՆՔԵԱԿԱ

ԴԱ ԲԻՄԻԿ

(ԸՄՏ ԴԵՆՈՐԵՐ)



Ինչպե՞ս եղավ, որ (տե՛ր աստված) այսպես եղավ...

Ի՞մ միամիտ-անգետ ձեռքով,
Քո՞ կույր կամքով,
Քե՞ պարզապես բախտի բերմամբ
Անկարելին տնկվեց ձախում՝
Մեկ սյունի պես,
Անհնարինն աջում տնկվեց՝
Երկրորդ մի սյուն,
Սյուներն այդ զույգ միացվեցին
Անթուլատու հույսի լծով
Եվ ստացվեց...
Եվ շատացվե՞ց մի... կախաղան՝
Մի այնպիսի հանցավոր սեր,
Մի այնպիսի սեր ահեղի,
Որից հետո չի կարելի
Նախկին անվամբ ապրել կյանքում:
Եվ այսուհետ ես Պառլո,
Դու այսուհետ՝ Ֆրանչեսկա...

Ինչպե՞ս եղավ, որ (տե՛ր աստված) այսպես եղավ...

Ինչպե՞ս եղավ,
Որ ողջ կյանքը թողած մի կողմ,
Ասես ուրիշ էլ գործ շունենք,
Հիմա պիտի, Ֆրանչեսկա՛,
Տասը ծանոթ պատվիրանի անդաստանում
Քաղհան անենք,
Եվ ի՞նչ քաղհան տառապալից.

Բա՛ն չգտնենք քաղհանելու...
Միշտ զբաղված անկարելի այս քաղհանով,
Եվ խաշվելով մի քրտինքով շիկակրակ,
Որ չի պտղում դեմքի վրա,
Այլ պտկում է հեզ հոգու մեջ,
Հիմա պիտի ստվերաշատ այս աշխարհում
Ստվեր փնտրենք ու չգտնենք
Եվ ստիպված տնկենք... ասե՛ք,
Որ ասեղի՛ ստվերի տակ
Ոչ թե մի կերպ հանգստանանք,
Այլ թաքցնենք մեր գաղտնիքը...

Ֆրանչեսկա՛,
Այդ գաղտնիքը՝
Գաղտնիքներից զարհուրելին,
Հաստանալով հաստանում է,
Ինչպես շյուզը օտար աչքում:
Որտեղ որ է նա կդառնա գերան մի մեծ՝
Այլև՛րս մե՛ր աչքերի մեջ,
Եվ մարդկանցից ամենարութն անգամ դարձյա՛լ կհասկանա,
Որ մեզ իրար շողկապողին Սեր շեն կոչում,
Այլ անվանում Աննեբրելի՛...

Ի՞նչ ես անում դու առանց ինձ,
Ֆրանչեսկա՛:

Ես առանց քեզ այդ գերանն եմ անվերջ տաշում.
Մեր գաղտնիքի ա՛յն գերանը,
Որ մեր աչքում հաստանալով հաստանում է:
Ու տաշում եմ՝ ամեն ձեռով,
Մինչև անգամ եղունգներով իմ հնամաշ:
Ու տաշում եմ
Ու քերծում եմ
Ու ճանկոտում,

Որ բարակի՛,
Գեթ բարակի՛...

Դու առանց ինձ արդյոք ի՞նչ ես միշտ երազում:
Ես առանց քեզ երազում եմ,
Թե սա, իբրը, մի իսկական սեր չէ բնավ,
Իբրը, միայն փոխ է տրված,
Ու ես պիտի ժամանակին վերադարձնեմ իր տիրոջը:
Ֆրանչեսկա՛,
Ի սեր սիրո՞ իսկականի՛,
Ինձ այս սերը փոխ տվողին մի կերպ գտի՛ր,
Որ իր փոխը փոխադարձեմ,
Հետն էլ տամ շահ, բարձրը տոկոս...

Իսկ այդ սերը՝
Աննեբրելին,
Ինձ է ահա շրջափակել
Կայսերական մի անիրավ սահմանի պես...
Բայց դա քիչ է,
Ֆրանչեսկա՛,
Սահմանապահ զորամասերդ ավելացրու,
Սահմանախախտ ամեն հայացք
Եվ հետախույզ ամեն ակնարկ ձերբակալի՛ր,
Ֆրանչեսկա՛:

Կա և ուրիշ մի կայսրություն՝
Կույրերինը:
Եվ վարժվել եմ այնտեղ ապրել ու գործելում.
Մթան մեջ էլ,
Փակ աչքով էլ ես գտնում եմ՝
Ողորկություն—կորուժյունները քո բույր,
Ակնկալված նորությունները քո բույր,
Որոնք—գուցե մինչև անգամ քեզնից թաքուն
Որոնում են իմ շոյանիքը,
Որոնում են՝

Աղվամազիդ յուրաքանչյուր շոշափուկով...
Ի սեր արյան և թանկարյուն եղբայրության,
Մի հրաշքով բաց անել տուր աչքերըս կույր,
Մի կերպ գտիր ամենաբուժ Հիսուս մի նոր,
Որ նայեմ քեզ նախկինի պես՝
Բա՛ց աչքերով՝
Ու նայելով բաց աչքերով՝
Չտեսնե՛մ քեզ այս տեսությամբ...

Բայց աշխարհում
Թե ամեն բան իր բույրն ունի և իր հոտը,
Մի՞թե դժբախտ երջանկությունն է, որ չունի
Ա՛խ, չէ՛.
Նա էլ ի՛ր բույրն ունի՝
Քո արգելված մարմնի բույրը,
Որ միայն ինքն է շարգելված
Այն ամենից, ինչ ունես դու...

Տե՛ս,
Ծառերի արյան ճնշումն ահա կրկին
Բարձրանում է և բարձրանում այնքան գոցե՛,
Որ գնում է ուշքը նրանց.
Նրանք ճոճվում ուշակորույս, բայց չեն ընկնում՝
Ես վաղուց եմ եղբայրացել նրանց բախտին՝
Քո՛ պատճառով,
Ավելի ճիշտ՝ քո բուրմունքի՛,
Որ միայն ինքն է շարգելված
Այն ամենից,
Ինչ որ ունի քո արգելված այս մարմինը...
Դու չես կարող
Դառնալ անհոտ և անբուրմունք,
Բայց աղաչում—պաղատում եմ,
Վերստացի՛ր նախկին բույրըդ:
Իսկ նախապես դու ունեիր ցորենի՛ բույր,
Սուրբ ցորենի՛, ոչ թե սրճի,
Որ հանգստի ու քնի դեմ ունի հին ոխ
Եվ խոռվքի աջակիցն է ավանդական...

Դու ազնիվ ես,
Ինչպես ինքը որթատունկը,
Շնորհալի ողկույզի պես,
Սվ այսքանը ավելի քան բավական էր.
Պետք չէր դառնալ նաև գինի
Եվ առավել պետք չէ հետո օղի՛ դառնալ...

Իսկ ես մարդ եմ, ոչ թե ջայլամ,
Որ ամեն ինչ կուլ տամ իսկույն:
Իսկ ես մարդ եմ, ոչ թե սավեր,
Որ հեշտությամբ
Կտրեմ—անցնեմ ամեն արգելք ու խոչընդոտ
Եթե անգամ ամե՛ն արգելք ու խոչընդոտ՝
Ո՛չ այս մեկը,
Այս միա՛կը,
Ֆրանչեսկա՛...

Մենք առավել ենք մտերիմ,
Քան թե դադճը և առվակը:
Մենք ավելի ենք մտերիմ,
Քան թե շունչը և կոկորդը:
Մենք առավել ենք մտերիմ,
Քան թե օղակն ու կոճակը:
Սակայն պիտի, Ֆրանչեսկա՛,
Հավիտենից հավիտյանըս մնանք կարոտ
Մտերմությանն այն հասարակ,
Որ սփռոցին է լուռ թառում՝
Ցերեկային անքուն—անգույն բուխ նման,
Իսկ երբ հոգնում է նստելուց՝
Պտըտվում է լուսամփոփի ուղեծիրով:

Ու բերանըս,
Որ եղել է խոսքի փեթակ,
Նույն բերանըս վերածվել է արդեն բանտի.
Կալանքել եմ աչնտեղ բառեր՝
Սիրո՛ւ.

Տենչի՛,

Ու ցանկությա՛ն բառեր անթիվ,
Ամեն մեկը՝ մի ավազակ,
Ամեն մեկը՝ մի հանցագործ,
Ես էլ՝ միակ սլահակ բանտի...
Եվ նրանցից ո՞վ է արդյոք բանտարկյալը.
Բանտարկյա՛լը, թե՞ պահակը բանտարկյալի:
Եվ նրանցից ո՞վ ավելի է կաշկանդված.
Դուան հետև կալանվա՞ծը,
Թե՞ տնկվածը դուան առջև...

Ֆրանչեսկա՛,

Չէ՞ որ եթե մենք իրա՛ր շենք, ես քո՛նն եմ գեթ,
Գոնե խղճա իբրև քոնի՛դ,
Եվ արձակիր բոլոր նրանց,
Եվ ազատիր ինձ էլ մի կերպ
Անվանարկու և խոշտանգող
Այս պաշտոնից բանտապահի...

Ա՛խ, մի՛ լսիր, Ֆրանչեսկա՛,

Իսկ լսել ես եթե արդեն՝
Մի՛ կատարիր իմ խնդիրքը,
Թե չէ հենց որ արձակեցիր փակ բերանըս՝
Ես քեզ կասեմ...

... Ձարհուրելի՛ խոսքեր կասեմ:
Կասեմ, որ գաւ միշտ ինձ հետ ես,

Միշտ ինձ հետ ես,

Ինչպես ծուխը ծխախոտի՛

Բերնիս վրա,

Հագուստիս մեջ,

Իմ թոքերում...

Քո անունը, անո՞ւնը լոկ

Ինձ ձգում է,

Ինչպես աղբյուրն անապատում.

— Եվ գեղեցի՛կ-գեղեցի՛կ ես,

Ինչպես մեղքը...

— Իսկ բերանըդ հրաբխի խառնարան է...

— Իսկ քայլքիդ տակ
Ինքը հողն է հեռախոսում
Հրահեղուկ իր արգանդից...

— Իսկ աչքերըդ ապստամբած երկրներ են.
Նոր արքայի են սպասում...

— Կըշիկանան մատները... քեզ մերկացնողի
Ու շիկացած՝ կեռերի պես կըկորանան,
Իսկ քեզ այդպես՝ մերկ տեսնողը, անտարակույս,
Տեղն ու տեղը և մեկընդմիշտ կը... կուրանա...

Ֆրանչեսկա՛,

Ի սե՛ր աստծո,

Ըմբերանիք ինձ վերստին և առհավետ:

Ըմբերանիք և դրանով օգնիր դու ինձ,

Որ ես դառնամ

Երազելի այն մարդն էլի,

Որ ստվերի՛ց, և ստվերի՛ց է ամաչում:

Թե չէ այսպես բարբաջելիս ինքքս հիմա

Ձգվելու շափ շատ եմ նման

Մի երջանի՛կ դատավորի,

Որ իր անկուշտ վառարանը ձմեռային

Տաքացնում է օրենսգրքի այն էջերով,

Որոնցով նա ամբողջ կյանքում դատ է վարել...

2

Մեքենական դարում ապրել

Եվ խեղճորեն չկարենա՞լ փախչել հեռու:

Որոշել եմ, քանի՞ անգամ,

Նստել ինչ-որ մի մեքենա

Եվ... ազատել քեզ ինձանից—ինձ քեզանից:

Բայց մի՞թե դու չես նկատել,

Թե ինչպես են մեքենաներն ընկնում զործի.

Բանալիի փոքրիկ շարժում,

Վառելիքի շնչի՛ն հոսանք՝

Եվ մեքենան կենդանանալ է սկսում,

Սկսում է խայտալ, ինչպես...
ինչպես... կինը անկողնու մեջ իր սիրածի...
ինքդ ասա.

Ես ի՞նչ տեսակ մեքենայով
եմ ո՞ւր փախչում
Պատկերավոր այս աշխարհից...

Հազար տեսակ պատկերի հետ
Հազար տեսակ լուսթյունների կան աշխարհում:
Իմն ամենից ահավորն է,
Որովհետև լցված է նա միշտ քեզանով:
Ու ես ինքըս, որ մարդ էի,
Քո պատճառով կարծես հիմա
Նկարագարդ գիրք եմ դարձել.
Հուշ—հիշատակ—հիշողություն՝
Եղած—չեղած,
Մթահանգած—մտահանգված,
Գեղեցիկ ու զարհուրելի,
Ինչպես ինքըդ...

Եվ հոգուս մեջ
Եինություն է և ավերմունք:
Եվ գլխիս մեջ
Դատարան է ու դատաստան:
Եվ աչքիս դեմ,
Թռչունները, տե՛ս, երկինքն են նոտազրուում,
Եվ հնչում է ոչ թե նրանց երգը վճիտ ու պարզունակ,
Այլ քո քայլերի եղանակը
Վսեմ ու պիղծ...

Ժպիտներից լավագույնը
Փակ աչքերովն է երևի:
Քոնն է հասցեն:
Եվ լավագույն երազանքը
Բաց աչքերովն է, անկասկած:
Նույնն է հասցեն:

Իսկ դու գիտե՞ս, թե մենք ո՞վ ենք...
Մենք նրանք ենք,
Ովքեր ինչքան խոսք են խոսել՝
Ողջը թերատ,
Ովքեր ինչքան խոհ են խորհել՝
Ողջը լրիվ:

Նայի՛ր,
Թլվատ ստվերները
Ինչ-որ մի բան են բարբաջում.
Թարգմանում են ինձ երևի:
Տե՛ս,
Ջրի մեջ շող-շառավիղն է կոնդացել.
Պատճենում է ի՛նձ երևի:
Տե՛ս,
Երկնքից սահանքվում է լուսթյունը,
Բայց խրվելով խոտ ու թփի թավության մեջ,
Հոծ սաղարթում խիտ ծառերի,
Կասեցվում է ու... փշրվում,
Եվ ի վերջո դառնում խշշոց—շրշույն—սոսափ:
Անիրավված այդ լուսթյանն ինչո՞ւ մարդիկ
Չեն անվանում հերոս և կամ գեթ նահատակ:
Եթե հերոս կամ նահատակ չեն անվանում,
Թող որ կոչեն կա՛մ իմ, կա՛մ քո անվամբ գոնե...

Համբերությունն այս քարեղեն
Կարող է և ճաքել մի օր՝ ժայռի նման,
Եվ այդ ճաքից բխելու է ոչ թե աղբյուր,
Ժայթքելու է սեր՝
Խառնրված ամոթի հետ,
Այսինքն՝ արյուն լերդակալած...

Արևը՝
Չար նկարչի պես,
Նկարչական իր գործիքի կիկլոպային միակ աչքով
Չորսրոլորքում՝ որոնում է իր—առարկա,

Մարդ—կենդանի,
Որ բոլորին աջանդակի՝
Ամեն մեկին ի՞ր սովերով:
Փախչե՞նք սիրո կիկլոպային միակ աչքից.
Չալլանդակվենք...
Բայց միևնույն արեգակը
Նաև բարի վարսավիր է.
Զրադված է ծառ ու ծաղկի,
Խոտ ու հասկի
Սանրվածքը հարդարելով:
Այնպե՛ս շաննս,
Որ քո ծանոթ ու սիրելի սանրվածքը
Հանկարծ խախտվի ի՞մ մատներով:
Օ՛, դրանով մի սանրվածք չի ավերվի,
Այլ մի աշխարհ՝
Ամենասուրբն ամեն տեսակ աշխարհներից:

11. XI. 65

Զանախի

ԳՐԱԵԼԼԱՄԱՏԱԲԱՌՅԱԲՆ



ՎԱՐՈՒԺԱՆԻ ՊՈՆՋԻԱՆ

Խոսել արվեստագետի, տվյալ դեպքում բանաստեղծի մասին, նշանակում է նկատի ունենալ մի աշխարհ՝ իր ուրույն կերպարանքով, երևույթների և նրանց շարժման իր օրենքներով, անհրաժեշտորեն սկզբնավորված և բնականորեն դեպի ավարտում ձգտող մի ուժ, որի առաջընթացը, վայրիվիրումն կամ խանգարումն օրգանապես պայմանավորված է արվեստագետի, տվյալ դեպքում բանաստեղծի պոետական ամբողջ նատուրայի հետ՝ մի կողմից և նրա ապրած դարաշրջանի և միջավայրի փոխադրեցության հետ՝ մյուս կողմից:

Յուրաքանչյուր բանաստեղծ; յուրաքանչյուր իսկական բանաստեղծ ինքնին ներփակ մի ամբողջութուն է, ինքն իր մեջ յուրահատուկ մի աշխարհ, որտեղ առերևույթ չպայմանավորված, ավելորդ կամ պատահական թվացող ամեն մի երևույթ, ըստ էության, սերտորեն առնչված է այդ յուրօրինակ աշխարհին և գործում է նրան հատուկ օրենքներով:

Այս տեսակետից բանաստեղծական այդ յուրօրինակ աշխարհը նման է մի զարմանալի ամրոցի, որին մոտենալ կարելի է ամեն կողմից, բայց նվաճել՝ միայն մի կողմից:

Խոսել բանաստեղծի մասին նշանակում է ըմբռնել հենց այդ աշխարհը, հասկանալ այդ աշխարհի ներքին այն օրենքները, որոնք պայմանավորում են տվյալ բանաստեղծի ստեղծագործության շարժումն ու զարգացումը անպայման ա՛յս և ո՛չ այլ կերպ, անպայման ա՛յս և ո՛չ այլ ուղղությամբ, նշանակում է գտնել այն միակ ուղին, որով հնարավոր է գրավել նրա բանաստեղծական ամրոցը:

Արդ՝ ո՞րն է այն ընդհանուր օրենքը, որով որոշվում և պայմանավորվում է բանաստեղծի ստեղծագործությունը

ընդհանրապես առած, իր՝ թեկուզ և տարբեր էտապների մեջ, իր այլազան արտահայտությունների, առերևույթ իրար հետ շաղռնչված երևույթների մեջ. այն ճիմնական ուժը, որ յուրահատուկ կերպ, տարբեր առանձնահատկություն և որոշիչ բնություն է տալիս այս արվեստագետին մյուսի նկատմամբ:

Իժվար չէ նկատել, որ բանաստեղծական աշխարհի այդ հիմնական օրենքը ոչ այլ ինչ է, քան հենց այն հայացքը, որ ունի նա կյանքի նկատմամբ: Կյանքի այս կամ այն երեվույթի նկատմամբ, այն տեսակետը (բառի բուն նշանակությամբ), որտեղից նա նայում է աշխարհին, մարդկանց և իրեն:

Իժվար չէ նկատել, որ աշխարհի, կյանքի և մարդկանց նկատմամբ ունեցած այդ վերաբերմունքով, որպես հիմնական օրենքով են պայմանավորված, ասենք և՛ Իսահակյանի, և՛ Թումանյանի ստեղծագործությունների իրենց համար միայն տիպական առանձնահատկությունները, նրանց բանաստեղծական աշխարհի զարգացման էությունները և այն որոշիչ հանգամանքները, որոնք Թումանյանին տարբերում են Իսահակյանից և ընդհակառակը:

Բացահայտած լինել այդ հիմնական օրենքը, այլ կերպ՝ կյանքի և աշխարհի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքը, նշանակում է բռնած լինել այն հիմնական օրենքը, որով շարժվում և պայմանավորվում են նրանց ստեղծագործական ներքին աշխարհները, նշանակում է զտած լինել այն առանձնահատուկը, որը հատուկ է միմիայն նրանց և որը կազմում է նրանց պոետական բնավորությունը, նշանակում է բռնած լինել ամբողջի նվաճման միակ ուղին:

Այսպիսով՝ արվեստը, տվյալ դեպքում բանաստեղծությունը ոչ այլ ինչ է, քան արվեստագետի, ստեղծագործանձնավորության վերաբերմունքի արտահայտությունը՝ աշխարհի, կյանքի և նրանց բազմազան երևույթների նկատմամբ:

Այսպիսով՝ արվեստի ծնունդ ենթադրվում է միայն այն հանգամանքներում, երբ հանդիպակադրված են մի կողմից արվեստագետը, ստեղծագործողը, այսինքն՝ վերաբերմունք արտահայտող անձնավորությունը և մյուս կողմից՝ նրանից,

արվեստագետից դուրս գոյություն ունեցող աշխարհը, կյանքը՝ իր բազմազան երևույթների մեջ, այն հասարակական միջավայրում, որի մեջ ապրում, որի նկատմամբ վերաբերմունք է արտահայտում ստեղծագործողը:

Այսպիսով՝ արվեստը ոչ այլ ինչ է, քան արվեստագետի, ինքն իր մեջ ունեցած ներհակությունների արտահայտություն, հոգեկան մի վիճակ, երբ ստեղծագործողը պատրաստի հասարակական հողի վրա, լայն ընդգրկմանների հնարավորության մեջ կարող է կամ անկարող է դրսևորել իր վերաբերմունքը տիրապետող միջավայրի, հասարակական մտայնության և այլնի հանդեպ:

Այս հանգամանքներում ամբողջ վճռական դերը մնում է իրեն՝ ստեղծագործողին, նայած ի՛նչ ընթացք և ի՛նչ ուղղություն է ստանում նրա երկպառակտումը «ինքն իր մեջ», նայած թե ինչպես է լուծվում այդ երկպառակտումը, այդ հոգեկան ներհակությունը, ըստ այդմ էլ այս կամ այն բնույթ է ստանում նրա ստեղծագործությունն՝ իր ամբողջությամբ առած:

Սակայն կյանքի, հասարակական երևույթների, տիրող միջավայրի դերը ո՛չ միայն այն է, որ նա հիմք է ծառայում իր նկատմամբ վերաբերմունք առաջ բերելու, ոչ միայն արվեստի նախապայմաններից մեկն է իբրև կրող խնդիր, որի նկատմամբ արվեստագետն իր վերաբերմունքն է արտահայտում, այլև հենց նրանով է պայմանավորված և նրանից է բխում այն վերաբերմունքը, որ ցուցաբերվում է արվեստագետի կողմից նրա իսկ նկատմամբ: Այստեղ է, որ ելման և ճանգվան կետերը նույնանում են: Այլ կերպ ասած՝ օրյեկտիվ, արվեստագետից դուրս գոյություն ունեցող աշխարհը, հաս[արակական]-քաղաքական միջավայրում ոչ միայն վերաբերմունք արթնացնողներ են, այլև վերաբերմունք ձևողներ:

Այս տեսակետից ելնելով, հայ գրականությանը մոտենալիս երբեք չի կարելի նույն կանխակալ կարծիքը ցուցաբերել, ինչ-որ եվրոպական գրականության նկատմամբ: Կա առերեվույթ փոքր, բայց ըստ էության խիստ վճռական մի հանգամանք:

մանք, որ ճակատագրական նշանակություն է ձեռք բերում հայ գրողի կյանքում:

Որևէ եվրոպական հայտնի բանաստեղծի բանաստեղծական ներքին աշխարհը հասկանալու և այն գնահատելու մեջ բավական է նկատի ունենալ այն վիթխարի տեսադաշտը, որի վրա նրանք բարձրացնում են իրենց համամարդկային խոհերն ու ապրումները, որպեսզի պայծառ կերպով դրսևորվի տվյալ բանաստեղծի և՛ տաղանդի բնույթը, և՛ ընդգրկման լայնությունը: Այստեղ ընդգրկման լայնությունը, համամարդկային խոհերի և ապրումների այս կամ այն շափի առկայությունը ո՛չ այնքան պայմանավորված են բանաստեղծի մեծությամբ և տաղանդով, որքան այն միջավայրի լայնությամբ, որի մեջ ապրել և ստեղծագործել են նրանք:

Մեկընդմիջտ, երբ նրանց ստեղծագործությունը դրված է ունալ հասարակական հողի վրա, մեկընդմիջտ, երբ նրանք գործում են հասարակայնորեն կայուն և որոշակի միջավայրում, նրանց ստեղծագործության համար բնորոշը և վճռականը դառնում է հենց իրենց, որպես անհատականության վերաբերմունքի հարցը՝ դեպի այդ իրականությունը և միջավայրը: Նայած թե ինքը, բանաստեղծը ինչպիսի՞ հայացք և վերաբերմունք ունի կյանքի, տվյալ հասարակական միջավայրի նկատմամբ, ըստ այդմ էլ որոշվում է նրա արվեստի բնույթը, նրա բանաստեղծական աշխարհի ինքնատիպությունը ու դեմքը:

Այս հանգամանքների մեջ վճռական դերն ու նշանակությունը պատկանում է հենց իրեն՝ արվեստագետին այն իմաստով, որ տվյալ հում[արակական]-քաղ[աքական] միջավայրի նկատմամբ ցուցաբերած նրա վերաբերմունքը հաստատուն և որոշակի է դառնում այնքանով, որքանով հաստատուն և որոշակի է այդ միջավայրը, այնքանով խոր կամ լայն ընդգրկումով, որքանով այդ միջավայրը իր մեջ պահած ունի հակում դեպի համամարդկայինը և լայն ընդգրկումների հնարավորությունը:

Այլ կերպ և ավելի կոնկրետ արտահայտվելու դեպքում այստեղ ամբողջ ինդիքը կախված է բանաստեղծի՝ ինքն

իր մեջ ունեցած ներհակությունների ելքից, նրանց լուծումից. նայած թե ինչպես է լուծվելու այդ ներհակությունը, ըստ այդմ այս կամ այն բնույթ է ստանալու նրա ստեղծագործությունը:

Մակայն, որքան էլ հայ գրողը իր ստեղծագործական կարողություններով ընդունակ լինի արտահայտելու համամարդկային լայն ընդհանրացումներ, որքան էլ նա խորապես զգա արվեստի մնացնության և մեծության գաղտնիքը, և աշխատի հասնել դրան, միևնույնն է, նա անկարող է հասնել այն բանին, ինչին կարող են հասնել, կամ ավելի ճիշտ՝ ինչին հասել են եվրոպական և ռուսական հեղինակները:

Տոլստոյի կամ Բալզակի մեծության գաղտնիքը ո՛չ միայն նրանց տաղանդի մեծության մեջ է թաքնված, այլև այն միջավայրի և այն պայմանների մեջ, որտեղ ապրել և ստեղծագործել են նրանք:

Մի Բաֆֆի, որքան էլ մեծ լիներ իր տաղանդի ուժով և զարմանալի վառ երևակայությամբ, երբեք չէր կարող հասնել այն վիթխարի ընդգրկումներին, որին հասել են մի Տոլստոյ կամ մի Բալզակ, և այդ ո՛չ միայն այն պատճառով, որ այդտեղ խաթարող հանգամանք է եղել Բաֆֆու ողորմանտիկ մր: Եթե երբեք Բաֆֆուն մտատանջեր Բալզակի կամ Տոլստոյի մեծ ընդգրկումները դրսևորելու իղձը, ապա, անշուշտ, Բաֆֆին շատ ավելի ողորմանտիկ կդառնար, քան մենք գիտենք նրան:

Մի Ռաստինյակ կամ մի Վոտոեն Հայաստանի պայմաններում շատ ավելի անիրական, կամ որ ավելի ճիշտ է, շատ ավելի բացառիկ հերոս կդառնար, քան մի Կարո, Ֆահրադ, մի Ասլան:

Հայ գրողը չէր կարող պատկերել մի երևույթ, որի գոյությունը չէր զգում ոչ միայն այն պատճառով, որ դժվար է անիրականը իրական դարձնել, այլև այն պատճառով, որ հայ գրողը այդ դեպքում կդադարեր արվեստագետ լինելուց, կդադարեր շահագրգռություններ ունենալուց, մի բան, առանց որի հնարավոր չէ արվեստ և ստեղծագործություն պատկերացնել: Մի ժողովուրդ, որը մաքառում էր ոչ միայն իր հոգեկան, այլև իր ֆիզիկական գոյությունը պաշտպանե-

լու համար, մի ժողովուրդ, որին օրբսօրե սպառնում էր խալառ բնաջնջվելու վտանգը, բնականաբար, չէր կարող թելադրել այլ մի շահագրգռություն, քան պատկերելու մի Յահ-րադի, մի Կարոյի, մի Ասլանի, քան թելադրելու օրհասական խոսքեր ու գործողություններ այդ հերոսներին:

Այդ պարագաներում Բաֆֆու մեծությունը և արվեստագետի խիղճը այլ տեղ էլ հնարավոր չէ երևակայել, քան հենց իր ժողովրդի օրհասական պահը ապրող և այդ ժողովրդի վիճակով տառապող թեկուզ և ռոմանտիկ այնպիսի հերոսների պատկերմամբ, ինչպիսիք են Բաֆֆու հերոսները:

Եթե հնարավոր լիներ երևակայել Բաֆֆուն Բալզակի ու Տոլստոյի, կամ Բալզակին և Տոլստոյին Բաֆֆու պայմանների մեջ, ապա դժվար չէ երևակայել, որ մի Բաֆֆի Բալզակին շրջապատող պայմաններում միգուցե մի նոր Բալզակ դառնար և Բալզակը Հայաստանում՝ մի նոր Բաֆֆի:

Որքան էլ թումանյանն իր վառվռուն և լուսավոր տաղանդով, իր պայծառ և խորին իմաստությունները ընդունակ լինեին վերաբարտադրելու կյանքը՝ իր բարդությունների մեջ, մարդկանց՝ իրենց մարդկային խորին ապրումներով, — միևնույն է, նա այդ խոհերն ու ապրումները այլ կերպ չէր կարող պատկերել, քան մի հովիվ Սաքոյի կամ Սարոյի կերպարներով, քան մի լոռեցի ծերունու հառաչանքով: Երեվակայեցեք «Ցառատը» թումանյանի գրչի տակ, կամ «Անուշը» Գյոթեի մոտ, և ահա պարզ կգտնա տիրապետող միջավայրի և պայմանների վճռական գործոնը պոեզիայի մեջ և բանաստեղծի կյանքում:

Այստեղ է, որ բանաստեղծի ներհակությունները «իմեն իր մեջ» ոչ միայն իրենց լուծումով ամեն ինչ վճռել չեն կարող, այլև նրանցից բացի բանաստեղծի ճանապարհին երեվում են այլ հակասություններ՝ հակասություններ «իբենից դուրս», մի վիճակ, երբ բանաստեղծը խորին երկրնորանք է ապրում ոչ միայն «իմեն իր մեջ», տվյալ երևույթի կամ տվյալ իրականության նկատմամբ իր վերաբերմունքը արտահայտելու գործում, այլև առաջիկա խորին երկրնորանք «իբենից դուրս», հենց հասարակական [բազմաբան]՝

միջավայրի մեջ, որպես այդ միջավայրի մասնակիցներից մեկը:

Եթե առաջին դեպքում (երկրնորանք «իմեն իր մեջ») վճռական գործոնը պատկանում էր հենց իրեն՝ արվեստագետին այն իմաստով, որ նրանից էր կախված իրերի նկատմամբ իր վերաբերմունքը արտահայտելը, երբ նրանից էր կախված հասարակական այս կամ այն երևույթը պատկերելու վերաբերմունքը և պատկերման խորությունը, ապա երկրորդ դեպքում (երկրնորանք «իբենից դուրս») բանաստեղծը գրվում է ճակատագրական խաղի մեջ, մի տանջալից կացություն, ուր իր սեփական երկրնորանքից դուրս գալուց առաջ և դուրս գալու համար նա ստիպված է սպասել իրենից դուրս և իր հետ չպայմանավորվող խնդիրների լուծմանը:

Փորձենք այս միտքը շոշափելի դարձնել հենց նույն Բաֆֆու օրինակով:

Ինչպես հայտնի է, նա իր գրական գործունեությունն սկսեց ռեալիզմով՝ տալով իրական կյանքի այնպիսի ռեալ վերաբարտադրություններ, ինչպես «Ջահրումարը», «Ռսկի աքաղաղը» և այլն, որոնց մեջ ցայտուն կերպով գրսևորվեց գրողի այն վիճակը, որ մենք կոչեցինք երկրնորանք «իմեն իր մեջ» այն իմաստով, որ հեղինակն իր սեփական երկրնորանքից, իր հոգևոր երկպառակությունից դուրս եկավ իբրև կապիտալիստական կարգերը մերկացնող, որ այդ կարգերի նկատմամբ ընդունեց և արտահայտեց իր վերաբերմունքը՝ նրան տալով գեղարվեստական երանգավորում:

Հարց է ծագում:

Ինչո՞վ բացատրել հապա Բաֆֆու հետագա անցումը ռեալիզմից դեպի ռոմանտիզմ, «Ջահրումարից» դեպի «Իմենի» և «Ռսկի աքաղաղից» դեպի «Կայծեր»:

Ինչ ասել կուզե՞՞ ո՛չ այն պատճառով, որ դա պայմանավորված էր ռոմանտիզմի հաղթանակով ռեալիզմի նկատմամբ և այդ այն ժամանակ, երբ իսկապես, ճիշտ հակառակը, եվրոպական և ռուս գրականությունների մեջ վերջնականապես ռեալիզմը փայլուն հաղթանակ էր տանում ռոմանտիզմի նկատմամբ:

Դժվար չէ նկատել, որ Բաֆֆու նմանօրինակ անցումը
ռեալիզմից դեպի ուժանտիզմ, «Ոսկե աքաղաղից» դեպի
«Կայծեր» ոչ այլ ինչ էր, քան «իրենից դուրս» եղած երկպա-
ռակտման հաղթանակը «ինքն... իր մեջ» ունեցած երկպա-
ռակտման նկատմամբ, որ ուղղութիւնների այս փոփոխու-
թյունը պայմանավորված էր և լուծվում էր ոչ թե Բաֆֆու,
իրրև անհատ ստեղծագործողի երկրնտրանքով, այլ նրանից
դուրս և նրանից անկախ գոյութիւն ունեցող մի այլ երկրնտ-
րանքով, «իրենից դուրս» եղած երկպառակտմամբ, այսինքն՝
հաս[արակական]-քաղաքական այն վիճակով, որ այդ շրջա-
նում դարձավ հայ ժողովրդի գոյութիւն հիմնական օղակը,
այն իրադարձութիւններով, որոնք հայտնի են աշխարհին
«հայկական հարց» անունով, մի վիճակ, որն իր կարևորու-
թյամբ և ուժով ետ մղելով անհատական ամեն մի նախասի-
րութիւն՝ դարձավ տվյալ ժամանակաշրջանն արտահայտող
գրողի համար վճռական իմպերատիվ:

Այս վիճակը խիստ տիպական է հայ գրողին և հայ գրա-
կանութեանը առհասարակ, և հայ գրականութեան մասին խո-
սել առանց այս հանգամանքը նկատի առնելու, նշանակում
է անվերապահորեն սխալ ճանապարհի վրա լինել և թույլ
տալ անուղղելի սխալներ:

Հայ գրականութեան և հայ գրողի այս ճակատագրական
վիճակը ամբողջ խորութեամբ իր ժամանակին զգաց Վահան
Տերյանը:

Նրա հայտնի դասախոսութիւնը («Հայ գրականութեան
գալիք օրը») հենց այդ ճակատագրական վիճակի օրհասա-
կանութիւնը դրսևորելու և պարզ կացուցանելու խնդրին էր
նվիրված, այն փակուղին ցույց տալու, որի մեջ, հիրավի,
ընկած էր հայ գրականութիւնը մինչխորհրդային շրջանում:

Տերյանի հիմնական թեզը «ազգային կոլտուրա» ստեղ-
ծելու հարցն էր, որը նա այլ կերպ չէր պատկերացնում, քան
«կոլտուրական ազգի» հողի վրա:

«Ազգային կոլտուրա» և «կոլտուրական ազգ» դիւմա-
տիկ հարցը նա զնում էր ոչ այլ ինչ, քան իրրև ելք՝ դուրս
գալու նեղ-ազգային, իր տերմինով ասած «սեմինարիստա-
կան», «տիրացուական» մտայնութիւնից դեպի համաշխար-

հային թատերաբեմը, ոչ այլ կերպ, քան տեղական, նեղ-
ազգային գրականութիւնը հանել համաշխարհային գրակա-
նութեան ասպարեզ, այսինքն՝ որ հայ գրողի կերտած հերոսը
նույնքան հասկանալի և հարազատ լինի իր ապրումներով,
իր հակումներով և խոհերով որքան հային, նույնքան և այլ
ժողովուրդներին, ճիշտ այնպես, ինչպես եվրոպական ամեն
մի նշանավոր գրողի հերոսը հասկանալի է հենց մեզ՝ հա-
յերիս: Ելնելով համաշխարհային գրականութեան տեսա-
դաշտից և բարձրացնելով միանգամայն ճշմարիտ ու հայ
գրականութեան համար ճակատագրական նշանակութիւն ու-
նեցող նմանօրինակ մի հարց, Տերյանը սակայն հասավ
ժայրահեղութեան:

Նա հասավ այնտեղ, որ ժխտեց ամբողջ արևմտահայ
գրականութիւնը այն պարզ պատճառով, որ այնտեղ ավելի
ցցուն կերպով, քան արեւլահայ հատվածում, երևան էին
գալիս նեղ-ազգային հատկանիշները:

Պատահական չէ, որ Տերյանը առանձնապես սուր և հա-
կանե-հանվանե արտահայտվեց Վարուժանի նկատմամբ՝
գտնելով, որ Թումանյանի մի «Փարվանա» չի փոխի «հան-
կարծակի հեթանոսացած» արևմտահայ բոլոր բանաստեղծ-
ների հետ՝ առաջին հերթին նկատի ունենալով Վարուժանին:

Խնդիրն այն է, որ Տերյանը այս դեպքում մոռացութեան
էր տալիս հենց այն վճռական հանգամանքը, որ մեր գրա-
կանութիւնը զնում էր ճակատագրական վիճակի մեջ: Բա-
նաստեղծից պահանջելով մեր տերմինով ասած «ինքն իր
մեջ» ունեցած երկրնտրանքը լուծել համաշխարհային գրա-
կանութեան տեսադաշտը նկատի ունենալով՝ Տերյանը պա-
հանջում էր անհնարինը այն իմաստով, որ մոռացութեան էր
տալիս «իրենից դուրս» գոյութիւն ունեցող ահավոր ներհա-
կութիւնը:

Այնուհանդերձ, հիրավի, Վարուժանի մոտ, իրրև կիզակե-
տում, առավել թանձրութեամբ է դրսևորվում հայ բանաս-
տեղծի տրագեդիան իր երկմիասնական պառակտութիւն-
ների մեջ:



Վարուժանի պոեզիայի համար ընդհանուր առմամբ բնաբան կարելի է ծառայեցնել նրա մի բանաստեղծությունը, իր ձեռքով հրատարակած երկերի ամենավերջին ոտանավորը՝ «Մատյանն ահա զոր խոստացա»...

Նրա պոեզիայի ամբողջ էությունը ամփոփված է իր իսկ երկտողի մեջ.

*Ո՛վ բարեկամ, խորհն թե երգս է պատմած
Ցավն հանույժին և հանույժները ցավին:*

Հիրավի, նրա ողջ պոեզիայի մեջ այս միտքը արտահայտվել է շոշափելի ցցունությունը:

Մի կողմից՝ «Հիտուսի պես կարեվեր», «արշալույսի մը երկունքեն բռնված» իր դարի պատկերը, «ճրագներու պես մարող» սրտերով, «երկաթներուն ու մարդուն» մաքառումներով, որտեղ «ցեխեն կանգնած ոճիրը խեթ կըխմե արյունն անձեղ վարդերուն»։ մի կողմից՝ իրենց գոյությունը քարշտալու համար իրենց մարմինը ծախող կանայք, որ իրենց ընկեցիկ մանկանը օտարի դուռը թողնելով «շտապ կըփախչին... սիրտը հոն թողած», — այլ կանայք, որոնք «զիրենք սիրողը կըսպառեն, և իրենք տան շքեկեն կսպառին»։ մի կողմից՝ ծանրահակ և ծյուրվող մահամերձ բանվոր, դրժույն և հյուժխտավոր բանվորուհի, երկաթի դեմ մարտնչող հազարավորների բանակ, մի խոսքով այն, ինչ բանաստեղծը անվանում է «ցավ» և մյուս կողմից՝ հին հեթանոսական դարերի:

*...կյանքին երազն անհատակ,
Եվ Բազուսի ըրմուհիներ վարդերես
Որ կըզարեն բլուրին վրա, (ուսեին տակ)
Եվ Աստվածներ՝ որ կուզեն սիրտն Համերթն
Դեռ ողջակեզ կամ Մեսսիին մ'Հրաշյա
Որ պատրանքին տեղ կըսրփեն ծիրանին
Սերեն մեռած ասպետներուն մարմիններ վրա:*

Մյուս կողմից՝ առպեսական դարերը,

*Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու Զորութունը արբուն
... Ուր մարդիկ հզոր և անկեզծ էին նման գեթիկն,*

Ուր տիրում էին հուլանի (մերկ) տեղերը փոխանակ պատենաՎորված դաշույնների, ուր չէին գործում մեղքերն այնժամ, երբ ննջում էր արեգակը, այլ բացեիբաց, հանուն Գեղեցկության և Զորության, մի խոսքով այն, ինչ բանաստեղծը «հանույժ» է անվանում:

Վարուժանի ամբողջ պոեզիայի էությունը հենց այդ երկու հակադիր ծայրերի միասնական արտահայտությունն է՝ հաճույքի զգացումը ցավի զգացման հետ և ընդհակառակը: Այս այլ բան չէ, քան արտահայտություն բանաստեղծական երկփեղկված հոգու, քան արգասիք այն երկրնորանքի, որ ապրում է բանաստեղծը «ինքն իր մեջ» և որը, ինչպես քիչ հետո կտեսնենք, բխում է «իրենից դուրս» եղած ներհակություններից:

Այս գիծը Վարուժանի մեջ սկզբնավորվում է նրա առաջին իսկ ստեղծագործություններից՝ «Մարտուններ» գրքից (տես «Գեղունի», 1905, առանձին գրքով՝ 1906 թ. Վենետիկ): Նրա առաջին իսկ բանաստեղծության մեջ («Մուսային») հոգեկան այս երկփեղկումը ցցուն կերպով է դրսևորված: Բանաստեղծը դիմում է Մուսային, ասելով՝

*Երգե՛լ կ'ուզեմ,— թող սարսուռս բընությունն
Մատերուս տակ, ինչպես մոր ծիծն հուլանի՝
Մանկան առջի բընազգական դըպչելուն.
Եվ կյանքը թող շըրթունքիս վրա լուծանի:
.....
Կ'ուզեմ ծովուն հետ սիրտ սըրտի ես հարիլ
Իմ անհունիս մեջ այդ անհունը թաղիլ.
Բուռն իղձն ունիմ մըրբըրիկին հետ մաքառիլ,
Եվ գլուխս հին գաղտնիքներուն դեմ բախիլ:*

*Գիտի այդ քնարը կապե իմ շըրթներուն
Փողովուրդին շըրթունքը հուր, սիրազին,
Եվ պիտի այդ համբույրն ըլլա բուռն, անհուն,
Համբույրին պես՝ տըրված ծովեն եզերքին:*

Սա բանաստեղծական որտե իսկական պոռթկումն է, բանաստեղծական հոգու իսկական, անաղարտ-ներշնչանքը,

միասնական հոգու պաթոսը, դեռ հեռու հողեկան երկփեղկումից, հեռու երկրնտրանքից:

Բայց ահա Մուսան պատասխանում է.

— «Տենչիդ ըզգո՞ւյշ, այս քրնարս է շինված, տե՛ս, Ան նոճիե, փթթում մահվան ավիշի...

Թըշվա՛ն հոգի, անոր լարերն են բերված
Փնտրուտըված գանգուրներն որբերուն.
Կ'երթան երգերն, հեհեալով, սրընթաց,
Որ որ կ'երթա ոտքը բորեկ՝ խեղճութունն:

Ժողովուրդի՛ն ըլլալ կ'ուզես՝ մո՛րդ շեղած.
Մնողքիդ արցունքը քու դարձիդ կրսպասե.
Արևմուտքի մեջ ծաղիկներդ ընձյուղած
Պիտի խորշակն Արևելքի աղազե:

Մըտածումի, ըզգացումի այս ճամբուն՝
Խընդի արևը չէ սքփոած իր շեկ բաշ.
Հոն կըշքըջի Աբովյանի մ' հեզ ուրուն,
Հոն Դուրյանն է լացած, տըխրած Պեշիկթաշ:

Ի՛նչ, այս քրնա՛րը կ'ուզես, քնար սև փայտե՛,—
Այս՝ վերքերու գործի մըն է, այս է հուր.
Ապագայդ է, այս՝ դազաղդ է, անո՛ւնդ է»:

Ահա այսպես է եղծվում անաղարտը: Ահա այստեղ է սկըսվում բանաստեղծի տրագեդիան. այսպես է առաջանում նրա հոգու երկպառակտումը:

Այսպես՝ Մարդկության մասին երազող, համամարդկային իղձեր փայփայող, բնությունը սարսոեցնել կամեցող, ընդհանրապես ժողովրդին ծառայել կամեցող բանաստեղծը դեմ է առնում ինքն իրեն, կանգնում է, ինչպես Տերյանը կասեր, «ինքն իր դեմ», քարանում է համատարած խեղճության ու որբության առաջ, իր ծնողների արտասուքի հանդեպ, իր բնաջնջվող ցեղի, իր մորթվող հայրենակիցների օրհասի առաջ:

Հետաքրքրականն այն է, որ բանաստեղծն ինքը հենց շուշափեյի կերպով զգում է, որ իր սեփական ներհակությունները բխում են նախ և առաջ «իրենից դուրս» եղած ներ-

հակություններից. նա հասկանում է, որ «Արևմուտքի (իմա՛ Ծվրոպայի) մեջ ընձյուղած ծաղիկները «պիտի «ազազեն» Առևելքի (իմա՛ Հայաստանի) խորշակից:

Այսպես. համամարդկայինը և ազգայինը, տիեզերականը և տեղականը, ընդհանուրը և մասնավորը, «Մտածումի, զգացումի ճամբան» ընդհանրապես և «Աբովյանի հեզ ուրուն», «լացած Դուրյանն» ու «տըխրած Պեշիկթաշը» — ահա այսպես է սկսվում բանաստեղծի հոգու երկփեղկումը:

Եվ հատկանշականն այն է, որ Մուսայի նման պատասխանից հետո, բանաստեղծը այնուամենայնիվ համաձայնվում է նրա հետ.

«ես, անհողողդ, ըսի անոր.
— Ըլլա՛, տո՛ւր»:

Հենց այդ քնարն է, որ Վարուժանը այնուհետև, մինչև իր ողբերգական մահը պահեց իր ձեռքում, իր երկփեղկված հոգու մեջ՝ նրա ամենավառ արտահայտությունները ցուցաբերելով «Ցեղին սրտի» և «Հեթանոս երգերի» մեջ:

Եվ այդ միանգամայն բնական է:

Եթե Վարուժանը փորձեր խուսափել իրեն շրջապատող կոնկրետ միջավայրից, տվյալ դեպքում հայ ժողովրդի օրհասական ճակատագրից, եթե նա հանուն համամարդկայինի մոռանար մարդկայինը (եթե հնարավոր է այսպես ասել), եթե նրան շնուզեր իր ամբողջ կուլտուրական և ազնվական ժողովրդի իսպառ բնաջնջումը, անգամ եթե նա իր սեփական ժողովուրդը շիներ, մի օրհասական վիճակ, որին արձագանքեցին ժամանակակից բոլոր, նույնիսկ օտար բանաստեղծները (է. Վերհարն, Քրյուսով, Վեսելովսկի և այլն), — ինչ խոսք նա կղաղարեր բանաստեղծ լինելուց, հնարավոր չէր լինի նրա մոտ բանաստեղծի դյուրբեկ և զգայուն հոգին, բանաստեղծի խիղճը, երբ իր հոգու ամբողջ էությունը նա բանաստեղծ էր:

Հետաքրքրական է, որ Վերհարնը իր աշխարհըմբռնմամբ և մտահորիզոնով, անշուշտ, ավելի բարձր կանգնած լինելով Վարուժանից և շատ կետերում նրա ուսուցիչը լինելով,

Վերհարնը անդամ առաջին իմպլիբիտական] պատերազմի տարիներին, երբ գերմանական զավթիչները ավերեցին նրա հայրենի Բելգիան, մոռացած իր հակապատերազմական-գեմեոկրատական կողմնորոշման մասին, զայրույթի քինոտ մարտակոչեր հնչեցրեց Գերմանիայի դեմ և այդ այն ժամանակ, երբ Բելգիայի ավերումը, կամ բելգիական ժողովրդին սպառնացող վտանգը համեմատել չէր կարելի հալ ժողովրդի կրած քստմնեցուցիչ տառապանքների հետ, երբ մի ամբողջ ժողովուրդ փաստորեն մորթվեց սրով կամ խեղդվեց Եփրատի հորձանուտներում:

Ահա թի որտեղ էր Տերյանը սխալվում և ահա թե Վարուժանը ինչպես կարող էր պատասխանել նրան.

Ի՞նչ, տեսնել որ խրխուռն է՝ այսօր կըլափի
Հըսկա շենքերն այն՝ երկու թել լորձուհեով,
Եվ խորանի մը խորշին մեջ լուկ կ'ապրի
Իուն, սևազգեստ ճրգնավոր.

Տեսնել որ լուռ կըփրտին
Ավերներու տակ հերոսի բազուկներ,
Գանգեր, սըրտեր՝ որոնց արյունը եղավ
Թույն՝ իծերուն, ա՛յնչափ որ լի էր ոխով...

Հողն՝ հերկված միայն սողովն օձերուն՝
Ի՞ր աղտաղտուկ խավերուն մեջ կըպահե
Պաղլեղ, և իր սև տափերուն վրա՝ ոքող...
Կըմընան մեր այգեստանները՝ առանց
Շերտափակի, և կարասները՝ առանց
Հայրենական գինիին.

Եվ մեր խոյերն ըսպիտակ՝
Չըզըտանելով խոտնոցներուն մեջ առվույտ՝
Նոթուձենն մոլեզված՝

Մըստրներուն դեմ կըշարդեն եղջյուրինն:
Իսկ որդիները թըշվատ
Կամ հեռացած հորենական երկըրեն
Կըխառնակին ազգերու խորդ արյունով...
... Որով կ'ըլլան իրարու դեմ թըշնամի
Եվ թըշնամվույն դեմ՝ ծառա...

... Օ՛հ, ի՛նչ, ի՛նչ

Առջը այս ամենուն
Մեալ կանգո՛ւն, մենավորի՛կ, անկարո՞ղ...

Բայց դրանով ամեն բան չի վերջանում. սա ո՛չ թե վերջ է, այլ սկիզբ: Սա հոգեկան երկպառակտումից դուրս գալու մի այնպիսի ելք է, որ կրկին փակուղու է հանգեցնում: Սա ինքնահաշտեցման մի վայրկյան է, որին անպատճառ հաջորդելու է ինքնահողոտումը, մի անցողիկ հաճույթ (հոգեկան երկընտրանքից դուրս գալը նկատի ունենալով), որին կրքնկակոխ հետևելու է ցավը (կրկին անգամ հոգեկան ավերի ծայրահեղ երկընտրանքի մեջ ընկնելու իմաստով):

Իր ավերված հայրենիքից, իր կործանվող ժողովրդից զատ, կամ որ ավելի հավանական է՝ նրա ասոցիացիայով բանաստեղծին հուզում է մարդու և մարդկության վիճակն առհասարակ, նրան հալածում են որբերը, սովյալներն առհասարակ: Նա արդեն դիմում է սովյալին, հայ լինի նա, թե թուրք, հրեա, թե հույն, կարծես մեղապարտորեն արդարանալով, որ այլևս ոչ մի գոռշ չունի նրան տալու. վերջին լուծալով այսօր թույն է գնել, և ապա՝

Վա՛ղը եկուր... (ո՛վ անթի)... պիտի ևս
Շիրմիս մեջեն, իբրև հաց
Քերթողի սիրտս այդ մախաղիդ մեջ ձըգեմ...

Նրան հետաքրքրում է ո՛չ միայն հայ նահատակը, իր զարհուրելի տանջանքներով, այլև թիապարտը, աններելի հանցագործը, որին լծել են թնդանոթին՝ այն լեռան գազաթ հանելու և այնտեղից մարդկանց բնաջնջելու համար: «Արյունով ձուլված» և «Մահով ծանրակիր» բեռը՝ թնդանոթը նըրանք են լեռն ի վեր հանում, որոնց բուռնցքը մի օր «շեշտակի թագերու և գահերու վրա կիջներ», որոնք

Երբ որ... կ'անցնեն հորիզոնն արփամուտ,
Աշխարհ վախով և հույսով տեսավ կարմիր
շուքն անոնց.

Եվ արյունի մեջ մեռնող շողերուն տակ լռաձվատ
Իրենց զենքերը բահեր կըթվեին, որոնցմով
Խուզարկելու կ'երթային արշալույսներ նորանոր...

Նրան հուզում է թշվառ մայրը, — հայ լինի, թե՛ այլազգի,
նա, որի

Սըրտին մեջ բոր հաղթահարել չէ կըրցած
Մայրութիւնն իր հուսութեան։—

Նա որ,

Մարդը սիրո՞ կհրավիրե, տղան՝ կաթի
Իր մատղաշ ծոցը բուրյան։

Նա, որը սակաջն ստիպված է տքնորեն աշխատել, տների
կեղտաջուրը թափել, աղտեղութիւնները մաքրել, որպեսզի
մի կտոր հաց վաստակելով իր մայրական կաթը բեղուն
դարձնի և այդ այն ժամանակ, երբ «անդին, մինակ, իր ե-
րիխան արթընացած օրոցքին մեջ, անոթի»

Կու լա, ողի՛կ ողի՛կ կուլա և հուակ՝ խոնջ
Նույն իր լացով կընեղդի։

Սակաջն բանաստեղծի հոգեկան այս վիճակը ևս երկար չի
տևում։ Հոգեկան երկպառակտման ժամանակավոր դադարը,
փոթորկին նախորդող օվկիանոսային լուսթյան նման, նրան
շատ ավելի տրագիկ վիճակի մեջ է նետում, շատ ավելի է
խորացնում նրա հոգու երկփեղկումը։

Նրան ներկայանում է բանտի խավարի մեջ խարխափող
իր կորաքամակ հայրը, մահվան մահիճ ընկած իր թշվառ
մայրը, և ինքը տառապում է «մեջտեղ մահվան և բանտի»։

Թխապարտների փոխարեն նա այժմ միայն իր հորն է
տեսնում, նրան, որի քրտինքից է գոյացել իր արյունը, որի
հոգնութեան ծիլն է ինքը. նա չի կարող ամեն ինչ մոռացած՝
այցելել նրան մութ զնդանի մեջ, բաղձալով նրան

... Տալ ընդգրկումի մը մեջ տաք՝

Ազատ աշխարհը գուրսի,

Եվ իմ փորրիկ բերբըս քու բիբերուդ

Տեղալ երկինքն անսահման,

Սըրտես սըրտիդ պարպել բոլոր օրերս այն,

Որ արևու տակ անցան։

Ահա այս հոգեկան ալեխոտով հորձանքի մեջ, համամարդկա-
ցինի և հայրենականի, տիեզերականի և տեղականի այս
տրագիկ տուրևադութեան մեջ նայեցե՛ք, թե ի՞նչպես է ներ-

կայացնում նա իր սեփական՝ վիճակը, իր սեփական հոգու
երկընտրանքը՝ անզոր լինելով դուրս գալ այդ անելանելի
զրութիւնից։

Սիրտս երազի ծովուն մեջ նոր նետեցի

Ձայն մի՛ փշրեք եզերքին վրա գերթ խեցի

Դեռ ամեն վիճ շըշափած.

Թողեք մեծնամ, ի՞նչ կենսավետ է բնութիւնն

Հոգիս թողեք անոր ծոցին մեջ տրոփուն՝

Աստճո հետ դեմ դիմաց։

... Ո՛րքան մութ է. ո՛հ կյանքն է այս, խո՛ր անդունդ

Ուր ամեն շող, գաղափարի ամեն հունտ

Ապառաժի վրա կ'իյնա

Մետաղի՛ հնոց, որուն ծուխին մեջ՝ ցիրցան՝

Լոկ արծաթի ձայնով իրար կըճանչնան

Մո՛վ դիմող իր ափը՝ շահ։

... Ես գերի եմ իմ գոյութեան պատճառին.

Կըխոնարհի սիրտս իր արյամբ միասին

Ձինքը լեցնող սըրտին տակ։

Քնարիս լարին մորս մազերն կառչեցան,

Եվ սիրո մազն երգի լարեն, ա՛հ, ո՛րքան

Ձորավոր է և անբակ։

Ինձի կ'սեն. — «Ձի ամփոփվիր հայ գըրչին

Մեջ հայ գրողին անձնական կյանքն իսկ մըթին

քընարն հայուն շունի բաստ. —

Ինձի կ'սեն. — «Աչքերդ վա՛ր իջեցուր.

Վերացումդ այդ պիտի հասնի մինչև ո՛ւր...»

... Սղճե՛ք բնութեան պատկերն, եղճե՛ք հոգվույդ մեջ.

Թոխըդ փետե՛ք, գըրքիդ ներքև գըրե՛ք «վերջ»

ըստվերին մեջ կըտեսնե՛ս —

Մնողդ ուղղած է թըշնամի իր շունչն իր ահա

Այն շահին դեմ՝ որ վառեցիր բազնին վրա

Գաղափարին լուսերս։

Երթա՛նք, երթա՛նք։ — Ո՛չ, ո՛չ հետո՛ւ, թողեք զիս.

Կըծաղրեմ կյանքն, ի՞նչ կառչեցար հոգիս։

Կ'ուրանամ հա՛յրըս այո՞ — դե՛ռ։ —

Թողեք մեծնամ, հըսկայանամ մըտքիս հետ.

Կոկորդըս մի՛ թողուք բնութեան խընկավետ

Կաթն՝ որ Աստված է կըթեր...»

... Կարկինիս մեկ ծայրն հաստատեցի կորովով

Հավերժորեն խաղած Սերին վրա՝ մյուսով

Որպեսզի մարդը շահիմ։

Մի՛ վերցընեք — այդ արարք մ՛ է անպիտան —

Անոր դադարող մեկ սլաքին Գողգոթան
Մյուս սլաքին՝ Մարդկութունն:
Այսպես, — արժվույն տակ Աստուծո հանդիման,
Ըրած բնությունն ինձ մայր, Անհունն օրորան,
Թողե՛ք, Թողե՛ք զիս խոկուն...

Այսպես. մերթ նա կամենում է կարկինի մեկ ծայրը հաս-
տատել «հավերժորեն խաչված սերին», որպեսզի մյուսով
չափի Մարդուն. մերթ նա «իր սերը երազի ծոցին մեջ է նե-
տում»՝ ամեն վիճ շափելու համար. մերթ նա ըզձում է
կենսավետ բնության ծոցի մեջ կանգնել Աստուծոն դեմ հան-
դիման. մերթ նա կամենում է համամարդկային շահը վա-
ռել «գաղափարին բազնին վրա», խուսափել մթին կյանքից,
ինչպես խոր անդունդից, ուր ծխի մեջ լույս արծաթի ձայնով
իրար կրճանչանան», բայց և միևնույն պահին զգում է, որ
«ես գերի եմ իմ գոյություն պատճառին», այսինքն նրանց,
ավքեր հղացել, ծնել ու սնել են իրեն — իր ծնողներին. նա
զգում է, որ իր ծնողի թշնամական շունչը ուղղված է այն
շահի վրա, որը իր ձեռքով վառվել է «գաղափարին բազնին
վրա»: նա զգում է, որ մոր մազերը իր քնարին են փա-
թաթվում. նա լսում է այլոց խոսքերը, թե «չի ամփոփիլ հայ
գրչին մեջ հայ գրողի անձնական կյանքն իսկ մթին», էլ ո՛ր
մնաց վերանալ, հոգու մեջ կնքել բնության և հավերժականի
պատկերը. պետք է եղծել այն, փետել թռիչքը և կառչել
հողին...

Ահա վարուժանի ողջ պոեզիայի էությունը, ահա նրա
տրագեդիան, որը որոշ առումով հիշեցնում է Նարեկացու
ողբերգությունը, նրա հոգեկան ալեկոծությունը, այն ահ-
ռելի տարուբերումը, երբ նա նույն վայրկյանին համոզվելով
թե իր ձայնը հասել է աստուծուն, նույն վայրկյանին իսկ կաս-
կածում է դրանում, նույն վայրկյանին, երբ կարծեք թե հո-
գեկան երկպառակտումից դուրս է եկել, նույն վայրկյանին
իսկ նա խրվում է ավելի խորին երկընտրանքի մեջ: Ավելի
ին. այդ երկփնդկվածությունը ոչ միայն կարելի է բռնել
առանձին բանաստեղծությունների մեջ, երբ կարելի է հա-
կադրել մի քառյակը, մի միտքը մյուսին, այլև այդ երկ-
փնդկվածությունը նրա զբե՛րի մեջ օւզակի կերպով:

Նրա «Ցեղին սիրտը» գիրքը հենց բաժանված, երկփնդկ-
ված է երկու իրար հակադիր, բայց և իրար պայմանավորող
մասերի՝ «Բազնին վրա» շարքը և ապա «Կրկեսին մեջ» բա-
ծինը, որին հետևում են նաև «Երուցազնավեպերը»:

«Բազնին վրա» շարքը ոչ այլ ինչ է, քան, ինչպես ինքն
է հայտնում՝ իր ձեռքով վառված շահը «Գաղափարին Բագ-
նին վրա», քան՝ կարկինի մի ծայրը «հավերժորեն խաչված
սերին վրա» բեռնելը, որպեսզի մյուսով «Մարդը շափե»: Այստեղ
առավել շափով արտահայտված է նրա հոգեկան
երկընտրանքի մի կողմը միայն. այնտեղ ավելի երևում են
նրա համամարդկային խոհերը, այնտեղ ավելի հաջողու-
թյամբ նեղ-ազգայինը բարձրանում է մինչև համընդհանուրը:
ազգային թշվառության պատկերը դառնում է ընդհանրապես
մարդկության թշվառության պատկեր և իրեն, ազգային բա-
նաստեղծի դերն ու նշանակությունը՝ բանաստեղծի կոչմանը
առհասարակ, անկախ ազգային պատկանելությունից: Այս-
տեղ նրա երկպառակտությունները «իր մեջ» և «իրենից
դուրս» — հանդես են գալիս շատ ավելի երկմիասնաբար, քան
հաջորդ շարքում:

Ահա «Նեմեսիսը»: Սա բանաստեղծի հավատո հանգա-
նակն է, Credo-ն:

Անտաշ ու կուպիտ «իր բերտության մեջ ննջող» մարմարի
զանգվածը արվեստագետի մուրճի հարվածների տակ դառ-
նում է Արգարության և Վրեժի աստվածուհի, դառնում է
Նեմեսիսի արձան, նա՛, որ

Ճկավ զանգված մ'իր բերտության մեջ ննջող
նվ արթնացավ Դիցուհի՛,
Ջերթ բարափերթ մ'ը սորուկ ինձավ ժուրճին տակ
նվ կանգնեցավ Վրեժուհի՛...

Նա «Ղուանյակին պես» հարստահարված ամբոխի-մողգան-
ծուփ բալբաները կթաշե գեպի ծոցն իր մայրենի». և հերամբի՛

Ան՛ր, ան՛ր կողմեն:
Գործատունն, թիարանն, բանտերն
Գրբո՛հ կուտան: Արյունստ են և բազմո՛:

Գեո. քեկորեկը շղթայի՝ զոք ջարդեցին՝
ՄԹԻՔ սոփոքանուն հետ ընդգարշ
Սալահատակին շոփեղ-շոփեղ կըհընչեն:

Ամեն շղթան կըբեկտի,
Եվ կըփլչի ամեն բանտ,
Հրապարակին մեղեղ կրակի կըտըրվի
Կառափնարանն՝ հերոսներուն արյունեն
Վարդակարմիր և ճարպոտ,
Եվ իր մեծ բոցն երկնոյոր
Ամբոխներուն գիտակցութեան կըլլա շահ:

Ուրիշներուն զըղյակ շինող ամբոխն է՝
Որ ոտքի միակ մոլեգնադրութ ռստումով
Նույն իր խորունկ գերեզմանին քարին վրա
Ահա՛վասիկ կըկանգնի:
... Իրենց գոռուզուզումն ահավոր
Կըսասանն գահերուն վրա կայսըրենք,
Եվ կ'օրորեն պատվանդանին վրա նընշող
Քերթողին թունն հանդարտիկ...

Այս գեղեցիկ բանաստեղծութեան մեջ ոչ միայն պարզվում է Վարուժանի ըմբռնումը բանաստեղծի կոչման մասին, այլև պարզվում է այս ամբողջ ցիկլի էությունը: Ամբողջ հետագա ցիկլը ոչ այլ ինչ է, քան հենց «Նեմեսիսի» այլազան կերպավորումը՝ գեղարվեստական տարբեր կտորների մեջ: Իզուր չէ, որ «Նեմեսիսը» դրված է ցիկլի սկզբում իբրև «Նախերգանք»: Հիրավի «Բագնին վրա» ցիկլում երևում է ոչ այլ սք, քան նույն քանդակագործը, որ կերտում է Արդարության և Վրեժի դիցուհու արձանը: Այն, ինչ «Նախերգանքում» քանդակագործ-արվեստագետն է կատարում, նույնը հետագա ցիկլում՝ բանաստեղծ-արվեստագետը, նա, որի ձեռքով վառվում է «Գաղափարի ջահը» մի բագնի վրա, որը ոչ այլ ինչ է, քան հենց Նեմեսիսի, Արդարության և Վրեժի դիցուհու ազոթատեղին:

Այստեղ ժամանակն է հաշվի առնել մի հանգամանք, որ խիստ որոշակի նշանակություն ունի ամբողջ հայ գրականության և մասնավորապես արևմտահայ գրականության համար:

Ի՞նչ հայրենասիրության հարցն է:

Մեկընդմիջտ, երբ հայ ժողովուրդը տառապում էր օտար և արյունոտ թշնամական կրունկի տակ, սկսած դեռ միջնադարից, մեկընդմիջտ, երբ հայրենիքի գաղափարը, ազգային-անկախության գաղափարը, սեփական պետականության հարցը դամոկլյան սրի պես կախված էր հայ ժողովրդի վրա, մեկընդմիջտ, երբ օրըստօրե ֆիզիկապես բնաջնջման, երկարատև և տաժանելի գաղթերի վտանգը ուրվականի պես հետևում էր այդ անհայրենիք ժողովրդին,— հայրենասիրությունը նրա համար և հատկապես հայ գրողի համար ոչ այնպիսի մի զգացում էր, ինչպես այդ կարելի է տեսնել օտար գրականությունների մեջ:

Հայ գրականության մեջ հայրենասիրությունը դարձել է գաղափարախոսություն, աշխարհայացք: Եվ այն քննադատները, որոնք հայ այս կամ այն գրողին մոտենում են առանց այս հանգամանքը հաշվի առնելու, անշուշտ, վրիպում են իրենց խնդրից:

Մասնավորապես Վարուժանի մոտ խիստ պայծառ է զըրտորվում հայրենասիրությունը իբրև աշխարհայացք: Ինչպես կտեսնենք քիչ հետո, «Հեքանոս երգերի» մեջ, այնպես էլ նրա «Ցեղին սրտի» մեջ, բանաստեղծի հայրենասիրությունը խկապես որ արտահայտվում է մի ամբողջական աշխարհայացքով և հենց այդ է պատճառը, եթե կուզեք իմանալ, նրա հոգեկան ներհակությունների, այդ է պատճառը նրա հոգեկան տրագեդիայի:

Առայժմ վերացաբար ընդունելով հայրենասիրության, իբրև աշխարհայացքի գոյությունը, նկատենք, որ այս դեպքում ամբողջ խնդիրը կայանում է նրանում, թե բանաստեղծը որքանով կրարձրանա ինքն իրենից, որքանով կազատագրվի իր ազգային հայրենասիրությունից՝ դրան տալով համամարդկային բնույթ, ըստ այդմ էլ ազգային գրականության մակարդակից որքանով կրարձրանա դեպի համամարդկային գրականության բարձունքները:

Ահա հենց այդ իմաստով է, որ հայ գրողի հայրենասիրության մեջ, իբրև կիզակետում, խտանում են նրա հոգեկան երկայտի ձգտումները, նրա հոգեկան երկպառակությունները և ամբողջ հարցը այդ երկպառակություններից

ազատագրվելու մեջ է՝ նրանց երկմիասնական արտահայտու-
թյան միջոցով:

Այստեղ բանաստեղծի մեզ ծանոթ երկպառակություն-
ները — «իր մեջ» և «իրենից դուրս» — իրենցով պայմանա-
վորում են երկկողմանի մի այլ օրինաչափություն, որը այս
անգամ վերաբերվում է ոչ թե բանաստեղծի ներաշխարհին,
ոչ թե նրա հոգեկան վիճակին, այլ հանդիսանում է այդ հո-
գեկան վիճակի լեզվական արտահայտությունը և, վերաբեր-
վելով ավելի կերտողական կողմին, արվեստին, տվյալ ար-
վեստագետի ստեղծագործության առավել կամ պակաս խո-
րության և մնայնության հարցում ձեռք է բերում ոչ պակաս
վճռական գործոնի դեր այն պարզ պատճառով, որ հոգեկան
ապրումներն ու ներհակությունները այլ կերպ չեն կարող
արտահայտվել, քան լեզվական մտածողությամբ:

Այս անգամ հարցը կոնկրետանում է այն հանգաման-
քի վրա, որը կարելի է կոչել արտահայտություն «տողի մեջ»
և արտահայտություն «տողից դուրս»:

Փորձենք ավելի շոշափելի դարձնել այս օրինաչափու-
թյունը:

Խնդիրը միայն այն չէ, թե ինչի՞ մասին է գրում պոետը,
այլև այն, թե ինչպե՞ս է գրում: Շատ հաճախ նա իր նեղ-
անձնական, սուբյեկտիվ ապրումների մասին (ի՛նչը) կարող
է արտահայտվել այն ձևով (ինչպե՞ս-ը), որ այդ «ինչը»
միանգամայն այլ բնույթ ստանա, դառնա ընդհանուրի օր-
յեկտիվ ապրումը՝ դադարելով անհատական լինելուց:

Այս գրականագիտության մեջ մի աքսիոմա է, որ հայտնի
է բոլորին:

Սակայն շատ հաճախ արվեստագետը, տվյալ դեպքում
բանաստեղծը, կարող է իր այս կամ այն բանաստեղծության
մեջ իր այս կամ այն հույզը արտահայտելու գործում վիր-
տուողության հասնելով հանդերձ շատ ավելի սահմանափակ
ոլորտի մեջ մնալ, քան իրոք կարելի էր սպասել նույն հույ-
զը, կամ նույն ապրումը փոքր ինչ այլ ձևով ներկայացնե-
լու դեպքում:

Հենց բանաստեղծության նմանօրինակ որակն է, որ մենք
անվանում ենք արտահայտություն «տողի մեջ»:

Այլ կերպ ասած՝ բանաստեղծը կոնկրետ, շոշափելի կեր-
պով կարող է կերպավորել մի հույզ, մի զգացում, մի գա-
ղափար, մի երևույթ՝ այդ հույզը, զգացումը, գաղափարը,
երևույթը դիտելով բոլոր կողմերից, բայց դիտելով «տողի
մեջ»:

Խնդիրը միայն այն չէ, թե ի՛նչպես և ի՛նչ է արտահայ-
տում բանաստեղծը «տողի մեջ», այլ, որ ամենագլխավորն
է, այն, թե տվյալ դեպքում ինձ ի՛նչ է թելադրում նրա տրվ-
յալ ստեղծագործությունը «տողից դուրս», այն, որ ես իբրև
ակտիվ ընթերցող ի՛նչ շահով և ի՛նչ ուղղությամբ եմ մաս-
նակցելու նրա ստեղծագործական ներշնչմանը՝ «տողի մեջ»
արտահայտածից բխեցնելու նաև «տողից դուրս» արտահայ-
տածը, ավելի ճիշտ՝ շարտահայտածը, բայց արտահայտե-
լին, այսինքն՝ կոնկրետից անցնելու դեպի վերացականը,
մասնավորից՝ դեպի ընդհանուրը, անձնականից՝ դեպի հա-
սարակականը, ազգայինից՝ դեպի միջազգայինը:

Այս իմաստով և միայն ա՛յս ձևով է հնարավոր տալ
գեղարվեստագետ լիարժեք գործեր, ա՛յս իմաստով և միայն
ա՛յս ձևով է հնարավոր բարձրանալ ինքն իրենից, ազատա-
գրվել հոգեկան ներհակ պառակտումներից՝ նրանց միասնա-
բար հանդես բերելու իմաստով:

Ավելի պարզ ասած, տվյալ դեպքում հայ գրողի համար
անհրաժեշտ է և անխուսափելի գեղարվեստական ստեղծա-
գործության նյութ դարձնել յուր սեփական հայրենիքի,
կոնկրետ կերպով յուր սեփական հոր կամ մոր տառապան-
քը, յուր սեփական ազգի օրհասական վիճակը, առանց որի
նա կզրկվեր կայուն հողից և կախված կմնար օդում:

Սակայն ամբողջ խնդիրը այն է, որ այդ ամենը նա
արտահայտել կարողանա «տողի մեջ» այնպես և այն ձևով,
որ ինձ, ընթերցողիս «տողից դուրս» թելադրի յուր սեփական
հայրենիքի առընչությամբ համայն տիեզերքի, յուր սեփա-
կան հոր կամ մոր տառապանքով՝ առհասարակ հայրության
և մայրության, յուր սեփական ազգի վիճակով՝ համայն
մարդկության վիճակը: Այստեղ արդեն, հիրավի, նա արտա-
հայտած կլինի իր հոգեկան երկընտրանքը ու երկպառակ-

տութիւնը միասնաբար, ինչպես ասում են՝ մի գնդակով երկու նապաստակ որսալուս։

Մեկընդմիշտ, երբ մենք՝ բացահայտել ենք հոգեկան ներհակութիւնների երկասյրի բնույթը հայ գրողի մոտ առհասարակ և Վարուժանի մոտ մասնավորապես, մնում է խընդիրը տանել այն ուղղութեամբ, թե այդ երկասյրի հակասութիւններն ի՞նչպես և որպիսի՞ հաջողութեամբ է արտահայտում Վարուժանը «տողի մեջ» և «տողից դուրս», որով և մենք պարզած կլինենք նրա ստեղծագործութեան արժեքն ու նշանակութիւնը։ Հենց այդ տեսակետից էլ պիտի մոտենալ Վարուժանի հայրենասիրութեանը, և կրկին պիտի դառնալ «Յեղին սրտին»։

Այժմ գալով «Քաղինին վրա» ցիկլին, նկատենք, որ համեմատած «Կրկեսին մեջ» ցիկլին և առավել ևս «Դյուցազնավեպերին», այստեղ առավել հաջողութեամբ են դրսևորվում «տողի մեջ» և «տողից դուրս» հասկացողութիւնները այն իմաստով, որ այդտեղ Վարուժանի հայրենասիրութիւնը կրում է շատ ավելի ընդհանրական, շատ ավելի համընդհանուր բնույթ և այդ ոչ թե բացասական իմաստով, այլ այն իմաստով, որ այստեղ ազգային տառապանքն ու թշվառութիւնը «տողի մեջ» փոխարկվում են համամարդկային ապրումների «տողից դուրս»։

Ահա «Ողորմութիւնը», որին մենք իր ժամանակին անդրադարձել ենք. ահա «Թիապարտները», ահա մեզ ծանոթ «Լվացարարուհին»։ Ահա «Հայհոյանքը», երբ պառավ մայրը իր 80-ամյա հավատքի մեջ դառնալով Աստուծոն և նշելով իր տեսած և ապրած բոլոր արհամարհները՝ զայրագին բացականշում է.

...Դու որ Որդուդ խաչն ողբալեն բըլշակնած,
Իմ աչքերս այս սահմանեցիք դեռ լալու
Մորթըված յոթը զավակ,
Դու՛ զերդ Վիշապ երկնածին
Երկու թաթերդ երկու ամպի վրա դըրած,
Մըռն՝ և տե՛ս.— Ողորմութեանդ սրտութիւնն
Հոն վարը, տե՛ս.— գյուղե՛ր, գյուղե՛ր և գյուղե՛ր
Կըհըրդե՛նք, և բոցն իրենց կըհասնի

Արարատեն բարձր և բարձր քեզմե...

Ինձ ունկնդրե՛.— Հան՞ն այն
Ժողովուրդին, որ քեզ սիրեց և առանց
Քու օգնութեանդ խալվեցավ...
Հան՞ն անոր՝ որուն սըրտին վրա, դարեր,
Իրբ ազամանդ կըովանի
Կայծակնացու ստըրդ դըրիւր, ուզեցիր
Որ կրունկիդ տակ փըշըրելով
Եղջուրներն իր դիմամարտ՝
Սըրբարանիդ մարմարներուն վրա միայն
Հուսին ձեթերը վառե...

Հանուն այդ հեզ ժողովուրդին՝ կ'ըսեմ ես
Սա մթընշաղ ծամուն մեջ ո՛ր որ ըլլաս,
Ո՛ր աստղին մեջ և կամ ո՛ր
Քուխ ամպին վրա շանթ ի բոխն,
Իմ կրոնիս ըզբեղ կըզըտեն
Եվ բերանս իմ կհայհոյե՛...

Սա բողոքի և հոգեկան ահա՛վոր պոռթկման արտահայտութիւն է, մի հրաշալի, բայց և սարսափելի նկարեն պատկեր, ուր դրսևորված է մարդկային հոգեբանութեան մի դրամատիկ անցում, տարիներով ամբարված և վայրկենապես դրսևորված մի հորձանք, որի առաջ կարելի է փշաքաղվել և, անկախ կենսափորձի համընկնումից, զգալ ողբերգական պահի ամբողջ ահա՛վորութիւնը։ Անգիտակցականից գիտակցականի, լուսութեանից բողոքի անցնելու այս վայրկյանը նայեցե՛ք. թե որքան է խտանում բանաստեղծութեան վերջամասի մեջ, երբ սարսափելի, ահա՛վոր բողոքից հետո իջնում է առավել ահա՛վոր լուսութիւնը.

Ըսավ։— Իր շուրջը սըղաններն ահարեկ՝
Գլուխին ծածկած թներուն տակ իրենց մոր
Ըսկըսան լալ, և կիններն ալ աղոթել.
Իսկ զազանները հեռավոր լեռներին՝
Արարչին սուրբ Անվան համար վրեժխընդիր՝
Լուսինն ի վեր երկա՛ր երկա՛ր ոռնացին...

Ակամա կծկվում են ջղերդ, և լսում ես սրաիդ բողոքող բաբախումը, Իսկ նա՛

... Զրլեսեց կամ շուգեց
Ոչինչ լրսել: Մոտենալով դիվահար
Լայն անդունդի մ'առլեփին
Մըրթմըրթալով, հուսահատ,
Ինքզինքը վար արձակեց...

Երկա՛ր ժամանակ չի կարելի ազատվել այս տեսարանի՝
տպավորությունից: Կարծես ոչ թե կարդացել, այլ տեսել
կամ մասնակցել եք այդ ահավոր արարողությունը:

Նույնպիսի հաջողությամբ բանաստեղծի երկպառակտու-
թյունները միասնաբար հանդես են գալիս նաև «Օձը», «Մա-
րած օջախը», «Կարոտի նամակը» և այլ բանաստեղծու-
թյուններում, որոնց մեջ պահպանելով տեղային կոլորիտը,
բանաստեղծը հասնում է խորին ընդհանրացումների:

Ո՛չ մի կասկած, որ ինչպես այս բանաստեղծությունները,
այնպես էլ այս ողջ գիրքը իր անմիջական ստիմուլը առել
է հայկական շարդերից և հայ ժողովրդի օրհասական վիճա-
կըն է պատկերում: Սակայն այս բոլորովին խաթարող հան-
գամանք չի ծառայում բանաստեղծի համար բարձրանալու
ազգայինից դեպի համամարդկայինը:

Ահավասիկ «Մարած օջախը»: Ավերել են նրա օջախը և
իրեն մորթել տան մեջ և այդ «մարած օջախը» «մեռելի
մ'անփակ աչքին հանգունակ», «արևուն և կյանքին» հան-
դեպ եղել է «միշտ բաց, նաև միշտ ալ զրկված»: Եվ այդ
մահազիր ու ազեր տան մեջ միակ կենդանի շունչը ախրա-
սեր տան կատուն է, որ պատվում է գիակի շուրջը և իր մլա-
վոցով վանում «երամը մը ազոավներու»:

Եվ այս սարսափ ազդող բանաստեղծությունից հետո
զրված է «Օձը», որին իբրև բնաբան բերված է «իսկ ապրօզ
հայերն ալ այսպես ապրեցան» խոսքերը: Այս բանաստեղ-
ծության մեջ սիմվոլիկ պատկերով տրված է հայ ժողովրդի,
որպես վեր բարձրացող, առաջընթաց, կոլտուրական ուժի
և մյուս կողմից՝ սուլթանական Թուրքիայի վար իջնող,
հետադիմական և արյունախում բնավորության իսկական
հակադրությունը, բայց, միաժամանակ, եթե մոռանանք վի-
րաբերյալ բնաբանը, այլևս այնտեղ շոշափելի իմաստով տե-
ղական, նեղ ազգային ոչինչ հնարավոր չէ գտնել: Այդ սիմ-

վոլի լեզուն որքան հային, հավասարապես նույնքան հաս-
կանալի և նույնքան հարազատ կարող է թվալ ամեն մի ազ-
գի, իբրև ստեղծագործ ուժի և բնաշնչող ախտի հակադրու-
թյուն:

Ահավասիկ այդ բանաստեղծությունը քաղվածաբար.

Տըղա կյանքիս, օգոստոսի մ'արևով
Կ'ելլի ես անկե [հեղեղատով] վեր,
Գեպի լեռն այն, դեպի դաշտերն ընդարձակ...

Կեցա հանկարծ, ու արևն հեռու կեցավ
Խարբսխրված զըլտուս վըրա.—
Վերեն՝ խրամատ ժայռն մը դուրս սըլացիկ՝
Վա՛ր կու գար օձ մը հըսկա:

Սլիք-ալիք օղակներով իր ճապուկ
Դահանակի և լալի,
Ու շըլելով՝ իբրե եղեզ մ'հողմակած՝
Ան կ'իչներ, ես կ'ելլայի:

Տեսանք գիրար,— կեցանք — գիրար շափեցինք...
Իր բոլոր զենքը անի
Բերանին մեջ հավաքեց, ես՝ աչքերուս,
Ես, դեռ անզեն պատանի:
Ոստում մ'ըրավ նայվածքներու ուզողությամբ՝

Եվ փաթթելով ինք զինք մատղաշ իրանիս
Իբրև բաղեղ՝ վարդենվուն,
Կուրծքը կուրծքիս դըրավ, ուղղեց շըրթներուս
Կոր զըլուխն իր լիաթույն:

Ես պարուրված ուրբտներուն մեջ իր ցուրտ
Մահվան գողով դողացի.
Մինչդեռ աչքերս իր աչքերուն խըմցուցին
Թովչանքն հոգվույս մըտացի.

Դըրին անոնց բոցերուն մեջ դեղնորակ
Իմաստությունը մարդուն,
Ըղեղին լույսն՝ որ քընացուց կամ սանձեց
Բընազդը նենգ կենդանվուն:

Ես չմն ամփոփեց.— ու ես կյանքի, մահվան մեջ,
Կյանքի, մահվան պըցտեքով
Արտասովեցի.— Ան բերանն իր բացած լայն

Կըզակիս տակ, անվրդով,
Խըմեց շիթ-շիթ կաթող արցունքն այտերես,
Քամեց բիրբըրս բերրի...

Հետո շըլաց ու նոր օղակ մ'ընելով
Շուրջը վըզիս՝ գայն սեղմեց.
Մինչ պոչն իր՝ նոր բաղցով ետեք ճոճուն՝
Կըջախշախեր բար մը մեծ:

Ու ես վայրկյան մ'զգացի մեջըս փակված
Չորս ճամփաները կյանքին:

Եվ ունչերես ու աչքերես բըխեցավ
Արշունըս դուրս սորսորուն:

Իսկ ան հեցած կըզակն ուղիղ կըզակիս
Խըմեց արշունս անդեղյա:
Մեն մի կըլլված շիթ որ կ'իջներ՝ կը զգայի
Իր մարմնույն մեջ, մարմնույս վրա:

Կըշտացած էր. — վիզես, մեջքես, ծունկերես
Լուծեց սղերն համարբար:
Միշտ հիշատակն իր օձ-ձևին թողելով
Շուրջն իրանիս դալկահար:

Կըշտացած էր իմ արցունքով, արյունով...
Ա՛լ, զերդ ոճիր կենդանի,
Արփույն ներհակ, միշտ այդ կարմիր ճամփային՝
Ան կ'իջներ, ես կ'ելլա՛յի...

Սակայն միշտ չէ, որ Վարուժանն իր հոգեկան ներհակու-
թյուններից ազատագրվում է նրանց երկմիասնական ար-
տահայտությամբ: Միշտ չէ, որ նա «տողի մեջ» արտահայ-
տածով ենթադրել է տալիս նաև «տողից դուրս» արտահայ-
տելին: Շատ հաճախ՝ մղված գազանային արհավիրքները
անմիջաբար պատկերելու ցանկությունից, նա գրում է բա-
նաստեղծություններ, որոնք «տողի մեջ» զարմանալի պատ-
կերավորությամբ, արտահայտչական դիպուկ միջոցների կի-
րառմամբ, մտքի զարմանալի թռիչքներով առատ լինելով, —
այնուհանդերձ, թույլ չեն տալիս, ավելի ճիշտ հիմք չեն ծա-
ռայում «տողից դուրս» ընդհանրացումներ կատարելու: Այդ-

պիսի դեպքերում նրա երկպառակտումը «ինքն իր մեջ»
լուծվում է այդ երկպառակտման մի կողմը միայն պատկե-
րելով: Այդպիսի դեպքերում նա, հիրավի, կերտում է բա-
նաստեղծություններ, որոնք իսկապես չեն բավարարում Տեր-
յանի, որ նույնն է՝ նաև լիարժեք արվեստի պահանջները:
Այդպիսի դեպքերում նրա բանաստեղծությունները դուրս չեն
գալիս տեղական ազգային շրջանակներից՝ հասկանալի
մնալով միայն այն ժողովրդին, որի ծնունդն է ինքը բա-
նաստեղծը:

Շոշափելի կերպով հայկական, հաճախ պատմական տեղ-
անուններով և անձնանուններով շափից դուրս ծանրաբեռ-
նված նրա այդպիսի բանաստեղծությունները իրենք իրենց
կաջկանգում են ազգայինից դեպի համազգայինը, հայկակա-
նից դեպի համաշխարհայինը բարձրանալու գործում:

Միամանթոն շատ ավելի խորությամբ անդրադարձավ իր
ժողովրդի օրհասական վիճակին, շատ ավելի երկարատև,
շատ ավելի անջնջելի պահեց իր ստեղծագործության մեջ
հայկական կոտորածների, հայ ժողովրդի բնաջնջման սար-
սափը. եթե «Ցեղին սրտից» հետո Վարուժանը գրեց իր «Հե-
թանոս երգերը», որոնց մեջ նա ավելի հեռվից անդրադար-
ձավ այդ կոտորածներին, շատ հաճախ ընթերցողի աչքից
կորցնելով դրանց հետքերը, եթե «Հեթանոս երգերից» հետո
իր «Հացին երգի» մեջ այդ հետքը համարյա իսպառ ջնջվեց՝
տալով հայ շինականի ստեղծագործ խաղաղ շինարարական
գործունեությունը, այլ կերպ ասած՝ եթե Վարուժանն իր
պոեզիայում մտքրեց այլազան գույներ և այլազան երե-
վույթների պատկերում՝ հասնելով մինչև իսկ բանվորական
շարժման գաղափարին, ապա Միամանթոն, ընդհակառակը,
իր ողջ պոեզիան ծառայեցրեց նույն սևեռյալ նպատակին՝
հայ ժողովրդի վիճակը համիդյան ռեակցիայի տարիներին
պատկերելուն:

Սակայն չնայած Միամանթոն իր ողջ կյանքում համարյա
ոչինչ չգրեց բացի «կոտորածներից», «ավերումի գիշերնե-
րից», այնուամենայնիվ, նրա պոեզիան համեմատած Վա-
րուժանի պոեզիայի այն էության հետ, որի մեջ նրանց ստեղ-
ծագործությունները գլխավոր մտտիվներով համընկնում են.

անշուշտ մի քայլ առաջ է հենց այն իմաստով, որ Սիամանթոն, կրկնում եմ, ավելի խորությամբ ապրած լինելով հայ ժողովրդի տվյալ վիճակը, այնուամենայնիվ, միշտ, կամ համարյա միշտ [հեռանում է] նեղ, տեղական տարրից՝ իր ստեղծագործությանը տալով ավելի ընդհանրական բնույթ: Եթե մի կողմ դնենք նրա «Հայրդիներ» շարքը, ապա նրա մնացած գործերում դժվար է գտնել երևույթներին հականահանվանն դիմելու տենդենց, հայոց պատմական անձնավորությունների և տեղանունների զեղման փաստ, ինչպես այդ նկատվում է Վարուժանի մոտ:

Սիամանթոնի այդօրինակ գործերը հասկանալի և այժմեական կարող են լինել բոլոր ժողովուրդների և բոլոր ժամանակների համար՝ կոտորածների, արհավիրքների, ահավոր պատերազմների, պատմական ամեն տեսակ մռայլ ուժերի սրածուփյունների ժամանակ՝ կուլտուրական և ազատատենչ ուժերի բնաջնջման նկատմամբ: Նրա այդօրինակ բանաստեղծությունները նույնիսկ մեր ժամանակներում նույնքան հարազատ կարող էին թվալ մի հարեջի, մի իսպանացու, մի հույնի՝ ընդդեմ գերմ[անական]-իտալական զավթիչների և այսօր՝ ամեն մի խորհրդային քաղաքացու, Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում՝ գերմանական զավթիչների ավերածություններն ու գազանությունները նկատի առնելով:

Այդ նույնը չի կարելի ասել Վարուժանի այնպիսի բանաստեղծությունների մասին, որոնց մեծ մասը ամփոփված են նրա «Կրկեսին մեջ» ցիկլում, «Դյուցազնավեպերի» մեջ և «Զարդ»-ում:

Այդօրինակ բանաստեղծությունների մեջ ազգային կոնկրետված արժանապատվությունը, վրեժի և ատելության լավան շատ հաճախ բանաստեղծին հանելով արվեստի սահմաններից զցում են հոստորականության մեջ. այդպիսի դեպքերում շատ հաճախ կորցնելով շափի զգացումը, նա անցնում է մերկ կոշիկի, լուտանքների, և եթե Վարուժանին այդպիսի դեպքերում փրկում է որևէ բան, դա նրա զարմանալի պատկերավոր ոճն է, ամեն կարգի երևույթների մեջ պատկերավորման համապատասխան եղանակ գտնելը, որը:

ինչ խոսք, որոշ չափով սեղմացնում է հոստորականության և կոշիկի դիտնանաները:

Առանձնապես կարիք չկա նմանօրինակ բանաստեղծությունների վրա երկար կանգ առնել. բավական է հիշել նրա «Ալիշանի շիրմին առջև», «Անիի ավերակներուն մեջ», «Դերենիկ», «Կիլիկյան մոխիրներուն», «Արծիվներու կարավանը», «Առևանգիչը», «Առաքյալը» և այլ բանաստեղծություններ, որպեսզի մեր միտքը մեկ ընդ միշտ հաստատված երևա:

Այդ ուղղությամբ են զարգանում նաև նրա «Դյուցազնավեպերը», որոնց գեղարվեստական թուլությունը շատ ավելի ակնբախ է դառնում նաև այն պարզ պատճառով, որ նրանց մեջ առկա է ուժեղ սյուժետային տարր, մի բան, որ իրենով ենթադրում է մարդկային հոգեբանության դրսևորում համոզեցուցիչ պարագաների մեջ, գործողությունների ռեալիստական պատկերավորում, խնդիրներ, որոնք լուծված են ոչ այնքան գեղարվեստական ռեալ և համոզեցուցիչ պերիոմներով, որքան ռոմանտիկական երանգավորումով: Հիշեցեք «Արմենուհին», «Երկիտ Տոնել» և այլն:

«Հովիվը» որոշ իմաստով կարող է բացառություն կազմել: Սակայն այս կարգի ստեղծագործությունների մեջ առավել չափով դրսևորված է Վարուժանի կարողությունը՝ հաս[արակական]-քաղաքական հարցերը, եվրոպական դիպլոմատիայի խաղերը պարզ կերպով հասկանալու ուղղությամբ:

Եթե Սիամանթոն կոշ էր անում իր հայրդիներին՝ պայքարել այն աստիճան, որ ջրերի վրա լողացող նավերը (իմա՝ Եվրոպական երկրների նավերը) նկատեն այդ և օգնության շտապեն, այսինքն լիբերալ բուրժուական մտախոսության այն թեզը, թե հարկավոր է արյուն թափելով գրավել Եվրոպայի ուշադրությունը, ապա Վարուժանի համար մեկընդմիջտ պարզ է եվրոպական դիվանագիտության էությունը:

Օտարականին մեկ-մեկ ցույց տալով Կիլիկյան բոլոր արհավիրքներն ու ավերակները, վերջում բանաստեղծը դիմում է նրան:

Յրբ թիկնոցիդ մեջ ծածկած դեռ նայվածքներդ ահարեկ
Գիրկը հասնիս ոսկիր եղբայրներուդ.— լըմոռնա՛ս
Սնոնց ըսել թե ինչպես Կիլիկիան մորթեցին
Ալլատուրիայի դափերուն նըվազին մեջ դավաճան.
Գիտեմ թե այդ եղբայրներդ մեծագող նավերով
Գալ պիտ' ուզեն... օգնութիւն... ո՛հ, ո՛չ... մահվան մնացորդին.

Պիտ' ուզեն զալ լոկ մեր կույս, ասոք լեռները պեղել,
Եվ մեր ծոցվոր հանքերին կըթել մետաղն հրաշափառ,
Կըթել մետա՛ղն ու իրենց եսին կուռքերը կերտել...

Կամ «Ջարդ»-ի մեջ, դիմելով Հայաստանին՝ գոչում է.

Լա՛ց, ու պատռն ծիծերդ ըզմեզ մեծցընող,
Նրակներեդ թող հոսի թույն մ'ոխութիւն
Ու Քիւմըզի, Հըռնեսոսի, Վուլգայի
Ակերն ամբողջ լեցընն ժահր, սեղընն,
Ձի հոն լվացին քեզ դատող
Պիղատոսներն իրենց ձեռքերն ու հոգին...

Եվ ճակտիդ դեմ փակելով
Գեսպանական իրենց զըռները՝ կ'ընեն
Սեմերեն ներս, նույն քու մահվանըզ վրա
Ճառեր ծափով ընդունված,
Մըրազիրներ համակիր
Որոնք հետո տապանագիրքդ եղան:

Կամ՝

Խանձումն ու հոտը մարմնի
Մեր սեմերեն, օրոցքներեն դեպ ի վեր,
Գեպ ի երկինք կը ճենճերին՝ որոնց դեմ
Իրենց պիւնջերը բացած՝
Ալլահն ամպին մեջե, Սուլթանը ցելսին
Կը ժըպտին հաշտ իրարու,
Ու եվրոպան դեմքն իր ետև դարձուցած
Գոպերը թաց կը շըփեն—
Մեր ծուխնն աչքն իր բողի
Կըսկըծելո՛ւն համար լոկ...

Ավելին, երբեմն նաև, առանձին կտորների մեջ, նա իր հայ-
րենասիրութիւնը հասցնում է այն առավելագույն աստիճա-

նին, որ դուրս գալով թուրքական ռեակցիայի սահմաննե-
րից, կոնկրետ՝ Սուլթան Համիդից, անցնում է ավելի լայն
ընդհանրացումների: Հայ-թաթարական կոնֆլիկտի առթիվ
գրած իր մի բանաստեղծութիւն մեջ («Վիրավորը») նա
երազում է ցարի և սուլթանի կամ բռնութիւն կործանումը:

Նույնպիսի պաթոսով է ներկայացնում նա իր խորին
հիասթափութիւնը թուրքական սահմանադրութիւնից, մի
հիասթափութիւն, որ խիստ տիպական էր ամբողջ հայու-
թիւն և մասնավորապես արևմտահայութիւն համար:

Օսմանյան բուրժուական սահմանադրութիւն հրապա-
րակումը մի պահ թվաց ժողովուրդների եղբայրութիւն և ա-
զատութիւն տոն, երբ ժողովուրդները «կանաչին վրա Վոս-
փորին եղբայրութիւն խրախճանքին նստեցին», երբ անգամ
«Ավերակներու տիկիներ» — Հայաստանի մայրը, նա, որ դա-
րերով

Քուրձ կը հազվեր, մոխի՛ր կ'ուտեր,
Եվ մայրորեն ծիծերն ափին մեջ բըռնած՝
Անմահութիւնն իր անոնց մեջ կ'օրորեր...

անգամ նա, լսելով «Ամբոխների ծովածուփ հրավերը» միա-
ցավ «եղբայրական հանդեսին», գինովցավ նրանց մեջ և
հարսնացավ «Մեծ ազգին հետ օսմանյան» դառնալով մի
մայր՝

Որ գիշերվան մեջ հերոսներ կը թաղե,
Առավոտուն կ'ըլլա հարս...

Բայց որքան ուժեղ էր հակումը դեպի այդ սահմանադրու-
թիւնը, նույնչափ զորավոր էր նրան հաջորդող հիասթափու-
թիւնը, մի բան, որ բանաստեղծը ամբողջ խորութիւնամբ ամ-
փոփում է մի տողում.

Ըսե՛ Այրի, ըսե՛ Դըշտո, ըսե՛ Մայր,
Պիտի երաբուխդ ա՛յսպես լեռն իր պայթեցնե:

Ահա այն ուղին, որով անցել է վարուժանի հայրենասիրու-
թիւնը և այն տեղը, որտեղ նա մնաց մինչև «Հեթանոս եր-

գերը», որտեղ առավել խտութիւնը դրսևորվեցին պոետի հոգեկան ներհակութիւնները, և որտեղ նրա հայրենասիրութիւնը, ազգային և համազգային ապրումները ստացան նոր որակ և նոր յուրօրինակ կերպավորումներ:

«Յեղին արտի» մեջ արդեն, ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի ազատագրութիւնը օսմանյան կառավարութիւնի ունեցողութեամբ կամ եվրոպական կառավարութիւնների միջամտութեամբ Վարուժանի համար անիրագործելի և անհուսալի մի հարց էր. հայ ժողովրդի կրած տառապանքների, արհաւիրքների և ատելութիւնի հրաբուխը այդ կերպ չէր կարող բնականութեան լեռը պայթեցնել:

Այդ երանելի ազատագրութիւնը չէր կարելի նաև սեփական ուժերով: Բանաստեղծը՝ չնայած իր բարձրացրած կոչերին, չնայած բանաստեղծի կոչման իր հասկացողութեանը (տես՝ «Նեմեսիս»), այնուամենայնիվ, ցավոք, համոզված է դրանում, որովհետև իր անիրական հայրենիքի «քշվառ որդիները»

Կամ հեռացած հորենական երկրեն
Կըխանակին ազգերու խորդ արշուճով,
Կամ նույն երկրին ծոցին մեջ
Կըմեռնին լուծն ուսերնուն,
Ազրոզներուն թողով մաս
Մերկացում ողջ հայութենեն, խորդացումն՝
Որով կ'ըլան իրարու դեմ թշնամի
Եվ թըշնամվուն դեմ՝ ծառա:

Հայրենիքի այսպիսի վիճակը, կամ, ավելի ճիշտ՝ հայրենիքի բացակայութիւնը բանաստեղծի մեջ ծնում է խորին նոստալգիա, հիվանդագրին կարոտ հայրենիքի նկատմամբ: Այդ նոստալգիան իրենով պայմանավորում է մի երկկողմանի պրոցես: Մի կողմից դրա ծնունդն են Վարուժանի պանդխտական երգերը — «Կարոտի նամակ», «Մեր կոտակ», «Պատվեր», «Հիվանդը», վերջապես «Կարմիր հողը», որոնցից յուրաքանչյուրը մի-մի գլուխգործոց են իրենց տեսակի մեջ: Մյուս կողմից, այդ նույն պատճառով հայ գրողը բնականաբար հետագարձ հայացք է ձգում Հայաստանի պատմական ան-

ցյալը, դեպի այն դարերը, ուր հայ ժողովուրդը զուրկ չէր հայրենիքից, ուր ինքնուրույն պետականութեան փաստը իրենով պայմանավորում էր տնտեսական և կուլտուրական բարգաւաճում:

Իրականում Վարուժանի անցումը «Յեղին արտի» դեպի «Հեթանոս երգերը», դեպի հեթանոսական դարերը ո՛չ թէ միջնադարի գովերգութիւնն էր, ո՛չ թէ ֆեոդալականութեան փառաբանում, ինչպես դիտել են ոմանք, այլ բնական հետևանք նրա հայրենասիրութեան, մի հայրենասիրութեան, որի համար հենց նույն մարգրիկ գովել են նրանք:

«Հեթանոս երգերը» ոչ այլ ինչ են, քան հայ ժողովրդի ճակատագրի և ցանկալի ապագայի դիտումը հեռավոր անցյալից: Վատթարագույն ներկայից դեպի հեթանոսական դարերը ցատկելու համար Վարուժանին տրամալին է ծառայել ոչ այլ ինչ, քան նրա հայրենասիրութիւնը, քան հայ ժողովրդի ճակատագրի հարցը. միայն թէ, կրկին անգամ, շնորհիվ ճակատագրի հարցը. միայն թէ, կրկին անգամ, շնորհիվ մոտ հանդես է գալիս ոչ որպես սուկական մի զգացում, այլ որպես աշխարհայացք, որպես գաղափարախոսութիւն: Եվ հիրավի, դարերին անցնելու փաստը Վարուժանի մոտ հանդես է գալիս իբրև ամբողջական աշխարհայացք:

Իրականութեան վատթարագույն վիճակը, հայ ժողովրդի օրհասական ապրումները՝ ազգային անկախութեան բացակայութեան և սուլթանների ու ցարերի բռնակալութեան պայմաններում, երբ մեղքերն ու ոճիրները գործում են միայն այն ժամանակ, երբ արևը ննջում է և ո՛չ թէ բացահայտ, ո՛չ թէ արևի լույսի տակ, որպես հետևանք առաքինի քաղութեան, երբ, ճիշտ նույն անալոգիայով սքերք պատշաճի մեջ են թաքնվում՝ փոխանակ հեթանոսական դարերի օրինակով մերկ մնալու, ինչպես այդ դարի նիզակներն ու հուանի տեղերը. երբ տիրողները ռուսկի են ցանում, որ բողոքութիւնը հնձեն՝ փոխանակ հեթանոսական դարերի, ուր «գեղեցկութիւնը ծնունդ էր զորութեան հորձանքին, ինչպես մարգրիտն օվկիանի անդունդներում մոլեգրին», «ուր պաշտվում էր Գեղեցկութիւնն ու Զորութիւնը» միայն, ուր սերը ոչ թէ

վաճառվում էր Մյունխենի մի բաժակ գարեջրով, այլ «նվիրվում իբրև պսակ սարգենի»:

Այդ տեսակետից հեթանոսական դարերի մարդը իր պարզ և բնական վարք ու բարքով, իր գորության և գեղեցկության պաշտամունքով Վարուժանի իղեալն է՝ համեմատած այն իրականության հետ, որի մեջ ապրում էր ինքը. բայց ոչ միայն այդ: «Հեթանոսությունը», ինչպես մի անգամ ասել ենք, նրա համար դառնում է ամբողջական աշխարհայացք, գաղափարախոսություն, և ոչ սոսկական նախասիրություն վաղնջական դարերի նկատմամբ: Ամբողջական աշխարհայացք, գաղափարախոսություն նախ և առաջ այն պատճառով, որ «հեթանոսություն» բառի տակ բանաստեղծը խտացնում է այն ամենը, ինչ վեհ է, գեղեցիկ, ինչ լավ է և երազելի, այն ամենը, ինչին բանաստեղծը «հաճույք» է անվանում՝ հակադրելով «ցավին» և ընդհակառակը՝ իր ժամանակակից իրականության տակ դնելով այն ամենը, ինչ ստոր է, վատշվեր, դաժան, անբնական և անբանական՝ լինեն դրանք սուլթան-համիդյան խարդավանքներ, եվրոպական դիպլոմատիայի խաղեր, թե բանվոր դասակարգի նորորակ թշվառություններ ու հարստահարում, այն ամենը, ինչ բանաստեղծի համար «ցավ» է: Պատմականի և ժամանակակիցի իրար հակադիր այս երկու բեկոնները բանաստեղծը ներկայացնում է երկու սիմվոլով՝ ի դեմս ճեքանոսության և քրիստոնեության:

Վարուժանի այն գիրքը, որ հայտնի է «Հեթանոս երգեր» խորագրով, իսկապես երկու՝ իրար ծայրահեղորեն հակառակ, բայց միաժամանակ իրար սերտորեն պայմանավորող գրքեր են՝ «Հեթանոս երգերը» առանձին և «Գողգոթայի ծաղիկները» առանձին:

Դա պատահական երևույթ չէ:

Այստեղ առավելագույն խորություն հանդես են գալիս բանաստեղծի հոգեկան ներհակությունները «ինքն իր մեջ»: որոնց պայմանավորվածությունը «իրենից դուրս» եղած ներհակությունների հետ այստեղ արդեն միանգամայն պարզորոշ է: Ինչպես նույնը տեսանք «Ցեղին սրտին» մեջ՝ ի դեմս «Բագինին վրա» և «Կրկեսին մեջ» բաժինների, այստեղ առավել ցցունությունամբ հոգեկան երկփեղկվածության արգաս

սիքը դրսևորվում է ավելի ծայրահեղ բեկոններով, արդեն միանգամայն առանձնահատուկ և նորորակ արտահայտություններ: Բավական է միայն թվել այդ բաժինների պարունակությունը, որպեսզի պարզ դառնա այն ամբողջ հակադրությունը, որ բանաստեղծը տեսնում է «հեթանոսություն» հասկացողության և «քրիստոնեություն» հասկացողության միջև՝ անդադրում հյուսելով այն շղթան, որ գոյանում է «ցավն հաճույքին և հաճույքները ցավին» պատմելուց: Փորձենք ավելի մոտիկից ծանոթանալ այդ բաժիններին:

Քրիստոնեության հակառակ՝ հակումը դեպի հեթանոսություն, Քրիստոսի փոխարեն՝ հեթանոս աստվածների սիմվոլիկ կուլտը սկսվում է դեռ «Ցեղին սրտից»: Հարստահարված, բայց և ըմբոստացած ամբոխը դիմում է «հեթանոս» նեմեսիսին հետևյալ խոսքերով.

Դո՛ւ մեզ Աստված, դո՛ւ Տիրամայր, դե՛հ իշիր
Պատվանդանեզ և ձուլե մեզ կամքիդ մեջ...
Քու ժողովուրդը մե՛նք ենք.
Պիտ սպանենք մեր աստվածներն հին և նոր
Եվ աճյունին վրա անոնց՝
Ատտիկեի մեհյանեդ ալ հոյակապ
Պիտ քու մեհյանեդ կանգնենք:

Քրիստոնեության էությունը Վարուժանը պատկերում է այդ գրքի մեզ ծանոթ մի այլ բանաստեղծության՝ «Հայհոյանք»-ի մեջ: Քրիստոնեական աստծո էությունը 80-ամյա հավատացյալի խոսքերով այն է, որ դարեր շարունակ իրեն հավատացող ժողովրդի սրտի վրա դրած իր կայծակնացող ոտքը

... ուզեցիր

Որ կրունկիդ տակ փռչրելով

Եղջուրներն իր դիմամարտ՝

Սըրբարանիդ մարմարներուն վրա միայն

Հույսին ձեթերը վառե,—

և ի՞նչ հույս, երբ նույն ժողովուրդը «որ քեզ սիրեց և առանց քու օգնությանդ խաչվեցավ»:

Ուժի փոխարեն՝ խեղճություն, հաճույքի տեղ՝ ցավ ու զրդշում, թշնամու դեմ՝ ոչ թե թշնամի, այլ հեզ ոչխար, կյանքի

փոխարեն՝ մահ, — ահա քրիստոնեության էությունը, և այս-
տեղից էլ, բնականաբար՝ Մաղթանք առ Վահագնը, Զորու-
թյան և Ուժի, Հաճույքի և Կենաց աստվածը.

Ո՛վ աստվածն իմ հայրերուս...
.....
Ո՛վ դու շրջոց, ընդունեն
Նրվերենես իմ՝ զոր մաքրափայլ սարկորով
Կըրակին վրա կըհնդում...
.....
Ինչպես արյունն երեսայի՝ մը՝ անմեղ,
Ինչպես քրտինքն հըղիներու՝ թանկագին...
.....
Ո՛վ դու Վահագն, ո՛վ աստվածն իմ հայրերուս,
Կ'աղոթեմ ես... կ'աղոթեմ...
.....
Ուժի՛ն համար, կրոնքի՛ն համար բազուկիդ...

«Յեղին սրտի» մեջ արժարժված այդ մոտիվներն ահա
«Հեթանոս երգերի» մեջ դարձան ընդհանուր գաղափարախո-
սություն, ընդհանուր աշխարհըմբռնողություն, որն իր «Մե-
ռած աստվածներուն» բանաստեղծության մեջ բանաստեղծը
ձևակերպեց իբրև մահվան հաղթանակ կյանքի նկատմամբ:

Արյունափառ եաշին տակ՝
Որուն թևերը տըրտմություն կըծորեն
Աշխարհիս վրա բովանդակ,
Ես պարտաված, Արվեստիս դառն սըրտեն
Կողքամ ձեր մահն, ո՛վ հեթանոս Աստվածներու
Մեռա՛վ խորհուրդն, և Բնությունն է արյունի՛ր
Օրենքներու կարկի՛նին սուր սըլաքով:
Ձանձրո՛ւյթը մնաց, սլըճնըված փուշ պըսակով:
Մարդն է ինկած գարշապարին տակ հըռկա
Խուլ Աստծո մը հրեա:

.....
Տանս ակութեն, Թերափնե՛ր,
Ո՛ր հեռացաք, ո՛ր ջըբմեռանք սըրբուհին
Ձեզ իր խաչովն է փըշըրեր...
Չըկաս, է՛րոս, պիտի քույրս իմ սիրահար
Իրո՛ւ ձոնն դաճաճունքներն իր ուխտին...
Չըկա և՛ դուռը պահպանող Շան անդրին...
Միայն սնառես կախվե՛ր է խաչ մ'աղբալիս
Ուր կա լոկ փառքը Մանվան:

Այսպիսով, ի դեմս «հեթանոսության» Վարուժանը նկատի
ունի կյանքի աճումն ու բարգավաճումը, Գեղեցկության և
Զորության կուլտը, հակառակ քրիստոնեության խեղճու-
թյան, թշվառության, ծախու սիրո, վշտի ցավի և տանջանք-
ների, վերացաբար ասած՝ կյանքի և մահվան հակադրու-
թյունը:

Այստեղից էլ, բնականաբար, ներբողներ առ «Գեղեցկու-
թյան արձանը», «Վանատուրը», «Անահիթը», «Մեռած աստ-
վածները»: Այստեղից էլ՝ նաև կնոջ պաշտամունքը, մարմնա-
կան սիրո կուլտը՝ իր երկկողմանի բնույթով: Մի կողմից
կինը պաշտամունքի առարկա է իբրև հաճույքի, ուրախու-
թյան և խրախճանքի աղբյուր, իբրև գեղեցկության՝ իր
ներդաշն մարմնով, իբրև արվեստ, իբրև ծնունդ և տղա-
ճառ ամեն տեսակ հաճույքների, այն ժամանակ, երբ նա
ծախու իր չէ, ալ նվիրվում է «իբրև պատկ սարդենի», երբ
սներն ու գեղեցկությունը Զորովյաճք և «սուտքի՛ր քաղու-
թյաճք» է գնահատվում, երբ

... համբույրով մ'այն գիշեր
Կին մ'Իտալիան նըվածեց,
Մարդ մը՝ Բուրգերն հաղթածեո...
(«Կղեկապատ»))

Մյուս կողմից՝ կնոջ պաշտամունքը իբրև «ամեն կենաց»,
իբրև կյանքի, հզացման միակ աղբյուր, իբրև մայրության
խորհրդանշան: Եվ բնավ պատահական չէ, որ Վարուժանի
«Հեթանոս երգերի» աղը կինն է այն պարզ պատճառով, որ
եթի ի դեմս «հեթանոսության» Վարուժանը պաշտպանում էր
կյանքի և գեղեցկության կուլտը, ապա կնոջ մեջ, իբրև կի-
զակետում, խտանում են հենց այդ երկու գծերը՝ կինը իբրև
գեղեցկություն և կինը՝ իբրև կենաց աղբյուր, իբրև մայր:
Կնոջ մարմնական սիրո, նրա իբրև ստեղծագործ ուժի,
իբրև կյանքի և հաճույքի կուլտը՝ կապված «հեթանոս աստ-
վածների» ներբողմանը, — ահա «Հեթանոս երգեր» բաժնի
զլխավոր մոտիվը:

Այդպես են ծնվել հանրահայտի «Հարճը», «Կղեկապա-
րան», «Աղոնիս մը»-ն և այլն՝ մի կողմից և «Հեթանոսակա-

նը», «Սաղաւունականը», «Գինարբուքեն վերջը», «Արևելյան բաղանիսը», նրանց առընչութեամբ նաև «Գրգանքը», «Հին սերը», «Օրհնյալ ես դու ի կանայս»-ը և վերջապես հրաշալի «Ո՛վ Լալագեն»՝ մյուս կողմից:

Կնոջ հանդեպ Վարուժանի տածած այդ վերաբերմունքից է բխում, ի միջի այլոց, այն զարմանալի երևույթը, որ ինչքան էլ բանաստեղծը բաց, հաճախ պոեզիայի և պատշաճութեան համար կարծես մերժելի արտահայտութիւններով է բնորոշում կնոջը, հականե-հանվանե կոչելով նրա մարմնական բարեմասնութիւնները, այնուհանդերձ որևէ վաճառի կամ տհաճ զգացում չի արտաբերում այդ ամենից: Ավելին. շատ հաճախ թվում է, որ այլ կերպ էլ Վարուժանը չէր կարող գրել: Այդ տեսակետից նրա պոեզիան հիշեցնում է Սողոմոնի «Ծրգ երգոցը»:

Կարիք չկա առանձնապես կանգ առնել այն գործերի վրա, որոնց մեջ նա պատկերում է կնոջ մարմնական գեղեցկութիւնը, կնոջ՝ իբրև հաճույքի և ուրախութեան աղբյուր լինելու: Բավական է հիշել միայն նրա «Հարճը», որպեսզի մեկընդմիջտ հասկանալի դառնա այդ հարցը:

Ինչ վերաբերում է կնոջ՝ իբրև բեղունութեան, իբրև կյանքի հարատև աղբյուր լինելուն, հիշենք ամենից առաջ նրա «Օրհնյալ ես դու ի կանայս» բանաստեղծութիւնը, որտեղ ավետարանական բնաբանի տակ, Աստվածածնին տրված կոչման տակ պատկերում է ոչ այլ ոքի, քան բեղուն կնոջը՝ մորը, կյանքի աղբյուրին:

Մարիամ, այս անկողնին վրա երբ նըստիս
Ու ես առջևդ, գորգին վրա ծընրադիր,
Համբուրեմ խաժ երակներն
Այդ ձեռքերուդ՝ որոնցմի լույսը կը ծորի,
Մարիամ, տաք շրթունքներու տակ կը զգամ
է՛մ կ'մ'որ, լուռ, արյունդ ումպ ումպ կը խըմե:
Այն գիշերեն՝ երբ մազերդ այդ բարձին վրա
Անփութորեն լեցուցած՝
Մոցդ հաճույքին բացիր և բուն հաճույքեն
Քըրտինք մ'առատ քունքերդ ի վար հոսեցամ,
Եվ կուսութիւնդ մեռամ
Արգանդիդ մեջ և աչքերուդ երկնաթույր,

Այն գիշերեն՝ թարթիչներն կոպերուդ
Մեղր ծորեց, դուն եղար
Հեզահամբույր՝ լըռակայց,
Ձյունափետուր դուն աղավնյակը եղար՝
Որ արևուն տակ կը ծկրկնած կ'երազի
Բույնին վըրա շինվելիք...
Կըդտեմ, արդ, քաղցրիկ հյուսումը դեմքիդ
Եվ բաց շապկիդ մեջն ծիծերդ՝ որոնց մեջ
Կըբաժնըվի կյանքդ, և դուն
Բաժնըվելով մայր կըլլաս...

... Օրհնյա՛լ ըլլաս, Մարիա՛մ,
Դո՛ւն որ անհուն գործով
Կողերդ ինձի՛ կու տաս, և ս'սկրըդ՝ ուրիշ
Ոսկրի մ'համար կըբամես,
Դուն՝ որ կ'ըլլաս ամենին
Մաքուր ակոսն՝ ակոսներեն բեղմնավոր,
Ու ամենին չըբնաղ թազարը՝ բոլոր
Թաղարներեն շուշանի...
...
Օրհնյա՛լ ըլլաս, Մարիամ...

Դժվար կլինի պատկերացնել մայրական բեղունության, կնոջ արգասավոր ծանրության առավել հմայուն, մաքուր և սրբազան պատկեր, եթե մենք կրկին չդիմենք Վարուժանին, եթե մենք չհիշենք նրա հոյակապ, սքանչելի «... Ո՛վ Լալագեն»-ն:

Վերջինս բանաստեղծական հորինվածքի ներդաշնակութեան, հղացման օրիգինալության և պատկերման հոգեհոյակապ խորութեան տեսակետից մի իսկական գլուխգործոց է, անխառն ներշնչանքով ծնված, մի յուրօրինակ հանցանքի խոստովանութիւն, որի մեջ հրաշալի կերպով խտացած է կնոջ նկատմամբ Վարուժանի վերաբերմունքի կվինտէսենցիան:

Ահա այն՝ քաղվածաբար.

Արդ հիշեցի՞ր դուն այն օրն, ս'վ Լալագեն:
Ակոսներուն և կողերուդ ընդմեջն,
Այն ծանր ամիսն հղութեանդ,
Կ'անցներ ակիքն հողին հորդող ուլժերուն:
Արեգակի արյունին նուռն էր՝ ծօցիդ
Մեջ հասունացած: Բուններն ի վար ծառերուն
Կըծորեին շիթ առ շիթ.

Հուլիբը՝ նման արցունքի,
Քու համբուրված մարմինիդ պես ծանրակիր
Հողն էր թըրված, էր կաշուն
Քաղցունհրով և մեղրով:
Անուշարույր իր բեռին տակ կըկըփեր
Դեղձենին քե՛զ նըմանակ,
Քու ծիծերուդ նըմանակ
Ողկույզներն այն լեցուն էին՝ ուպագա
Միծաղներով, ցընծությունով և կայթով:

Ճընձաններուն քովեն անցանք մենք դուրսված
Խաղճուզին բարկ բուրումեն:

Հետըդ անցանք ծիծաղներու, երգերու
Մեջն առույզ, զոր աշխատող հողիներ
Կըպոռթկային տերևներուն ներքենե:

Այն ատեն (թույլ կու տա՞ս ինձ
Խոստովանիլ, Լալա՛գե)
Ես ունեցա ընդվզումներ արյունի,
Ու ցանկացա արեգակին, հողին պես
Ուռնացընել ինձ մերձեցող ամեն հունդ:
Ու—թո՛ւյլ տուր ինձ խոստովանիլ, Լալա՛գե—
Երբ դուն անդին՝ կարկառուն նուր ծառեն
Կըբաղիիր, ու հետո
Կըխաժնեիր լիարերան հեշտանքով
Անոր բոսոր մարգրիտներուն շարքն անույշ՝
Ես անդին թուխ Եթովպուհին— որ ջերաց՝
Հընձանին մեջ կը ճըմլեր կուզն—
Համբուրեցի՞... բըռնած հընդիկ ծածերեն
Պառկեցուցի՞ ժըպտադին պուխը կուրծքիս,
Եվ հեշտաբա՛ւուն շըրթներով, Լալա՛գե,
Համբուրեցի՞...

Եվ որքան համոզի՛չ, բայց և որքան հուզի՛չ է հնչում բա-
նաստեղծության վերջնամասը.

... Բայց դուն ինչո՞ւ կ'արտասվիս
Այն հեռավոր աշունին
Բուրումներուն մատերջությունը համար,
Ո՛վ աշնագեղ Լալագե,
Արտասվել շա՛րժեր այսօր—

Հիրավի արտասվել շարժի՞, այլ խնդալ, հըճվել, ուրա-
խանալ կյանքի հարատևությանը և նրա պատճառած արտաս-
վախաուն ծիծաղով:

Ահա, համառոտ կերպով, «Հեթանոս երգեր» բաժնի էու-
թյունը, վարուժանի հոգեկան երկփեղկվածության մի կողմի
պատկերը, նրա պատմած «հաճույքները»՝ անհուն կենսա-
խնդունությամբ, կյանքի պատճառած ուրախություններով, ծի-
ծաղով և խնդունությամբ լեցուն, այն ամենը, ինչ բանաստեղծի
աշխարհըմբռնողությամբ, արգասիք է «հեթանոս դարերի»,
«Գինու նման անկեղծ և հզոր» ժամանակներին ու մարդ-
կանց:

Եվ «հեթանոսության» նմանորակ արգասիքների հետ
կողք-կողքի ահա «Տրսունջը», «Առկայծ ճրագը», «Բանվո-
բուհին», «Հնկեցիկը», «Մեննող բանվորը», «Խաբված կույ-
սերը», «Լքումը», «Մեքենաները» և այլն, այլ կերպ ասած
մարդկության թշվառությունը, զարհուրելի կոտորածների, ա-
վերի, հարստահարման պատկերը, խարդավանքը՝ մարդու
կերպարանքով, գազանությունը՝ մարդու ծնատներով, սըն-
գուրներից փտած, ոսկեշատ կեղտոտ ձեռքերի հպումներից
արատավորված սերն ու գեղեցկությունը և այդ բոլորը որպես
ոչ այլ ինչ, քան իբրև հետևանք քրիստոնեության, քան իբրև
դժգույն և հիվանդոտ ծաղիկներ՝ բուսած Գողգոթայի վրա:

Իզուր չէ, որ գրքի այս բաժինը վերնագրված է հենց
«Գողգոթայի ծաղիկներ»:

Ահա այսպես և այստեղ է ամբողջականանում վարուժա-
նի աշխարհայացքն ու աշխարհըմբռնողությունը՝ երկմիաս-
նական ներհակություններով: Ահա այսպես և այստեղ է վա-
րուժանի հոգու երկփեղկվածությունը հանդես գալիս ծայ-
րաբևեռային սրությանը, ո՛չ միայն հոգեկան, ներքին ըմ-
բռնումների, այլև, նույնիսկ ձևական տեսակետից՝ բանաս-
տեղծի հոգու պառակտման օրինակով և նրա նմանությամբ՝
պառակտելով նաև հենց գիրքը:

Հեթանոս դարերին հակվելը, այսպիսով, ոչ այլ ինչ է,
քան հենց հեռավոր դարերի գեղեցկության փոշուց իր ժա-
մանակի ցոփության-վավաշ հպումներից ու սնգուրներից
փտած մարմիններին նոր ձև ու նոր կերպարանք տալու ցան-

կություն, ոչ այլ ինչ, քան համատարած ցավի ծանր և հոգեմաշ ապրումներից հետո, կամ նրանցից առաջ, հաղորդակից լինել նաև հանույժներին, թեկուզ և նրանք անիրական, անշոշափելի լինեն, բայց հագուրդ պատճառող և կենարար, ոչ այլ ինչ, քան համատարած գազանություններից, մարդկային ահավորություններից, անհայրենիք մարդու, թշվառի, ընկածի ծանր վիճակից Զորավոր ու Գեղեցիկ, վսեմ ու մաքուր, կայուն հայրենի հողի վրա-ընկնելը:

Ոհ, ինչ փուլթ կյանքը մեռնող,
Երբ որ երազը կ'ապրի,
Երբ որ երազն անմահ է...

ահա այն ազդակը, որ, այնուհանդերձ, «Հեթանոս երգերի» մեջ բանաստեղծին կենսախիչնդ էր պահում:

Հեթանոս դարերի պատկերների այս պայծառ և էկզոտիկ ֆոնի վրա առավել դժգույն, առավել հիվանդոտ և առավել թունավորված են երևում «Գողգոթայի ծաղիկները»:

Զուր չէ, որ բանաստեղծն իր այս շարքը սկսում է «Աստղծո լացը» հրաշալի բանաստեղծությամբ: Արարիչը, եթե կարելի է ասել մինչև արարիչ դառնալը, այսինքն՝ «Երբ միջոցին (տարածություն) մեջ տեղի տրված չէր դեռ Ոչընչությունն այս տիեզերքին» որոնում էր մի բան, «որ դարմանն աներ «տաղտուկ վերքին», ուստի և

Շքշան ըրավ Ան միչոցը մեկեն,
Եվ հոն իրմե գատ բան մը չըզըտավ.
էություն մ'ուզեց իր էութենեն.—
Իր էությունն իր արծազանքն եղավ:

Հետո դառնալով, տրխոր և մորմոք,
Համըր կրուսթյան և կույր Ոչինչին՝
Ան իրենցմե ինչ մ'ուզեց, և անոնք
Ինքզինքնին տրվին, կամ բան չըտրվին:

Երբ Անհունն այսպես դատարկ զըտավ Ան,
Իր մեջ ըզգաց խոր, դառնակըսկիծ ցավ.
Երբ կրուսթյան վրա ու Ոչընչության
Հուսահատութենեն սըրտաբուխ լացավ:

Վարն իր արցունքներն ուզածը տրվին՝
Կազմելով մեյմեկ աստղեր երկրներին,—

Եվ Բաճաստեղծին Երման Աստված ալ
Ուպես զի ստեղծե՝ հարկ եղավ նախ լալ:

Բացի այն, որ այս օրիգինալ հղացմամբ վարուժանը դրսևորել է բանաստեղծի ստեղծագործության գաղտնիքն առհասարակ, այստեղ միաժամանակ հետաքրքրական է նաև այն, որ իր հոգեկան ներհակությունների այս կողմը՝ «Գողգոթայի ծաղիկները» բաժինը, սկսվում է ցավով, այն ժամանակ, երբ «Հեթանոս երգեր» բաժինը սկսվում էր ոչ պակաս հաջող և ոչ պակաս տիպական «Գեղեցկության արձանին» բանաստեղծությամբ, ուր փոխանակ լացի՝ անդրադառնալով նորից բանաստեղծին, գրում էր.

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգվույն պես.
Եվ հեթանոս այդ մերկությանըդ ներքե
Տառապի՜ մարդն, ու չըկրնա զըպիլի բեղ:

Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարզե՛
Բագինդո՛ կ'ս պիտի ուզեմ մորթվիլ՝
Որպեսզի կուճոց ըմպե արյանս հուսկ կաթիլ:

Հիրավի, «Հեթանոս երգերի» առույգ ուրախությամբ, հրճվանքից զոնվելու պատրաստ բանաստեղծը այստեղ, «Գողգոթայի ծաղիկներին» մեջ ոչ այլ ինչ է, քան հենց զոհ՝ անհամար վշտերի, դառնակսկիծ ապրումների, արհավիրքներ տեսնելուց, խոցոտումներ զգալուց հոգնած և շարդված:

Հաջորդ «Ճանապարհ խաչի» բանաստեղծությունը հենց նմանօրինակ տվյալտանքների արգասիք է, բանաստեղծական մի սքանչելի կտոր, որտեղ ամենայն խորությամբ երեվում է բանաստեղծի հոգեկան վայրիվերումների, ներքին հակասությունների մյուս կողմը: Սրան համապատասխան նախորդ շարքի «Իիցն Վանատուրին» ձոնված բանաստեղծությունից այս բանաստեղծության մեջ կարծես ոչինչ չկա՝ կենսախիչության, ուրախ ու բեղմնավոր ակընկալիքների տեսակետից:

Կարծեք թե «Խաչված Հիսուսը» այլ բան չէր էլ կարող առաջացնել բանաստեղծի հուզաշխարհում, քան մի սրտաճմլիկ, տվյալտանքներով լեցուն, տանջանքներով ծանրակի՞:

այնպիսի երգ, որը որոշ առումով հիշեցնում է Նարեկացու «Ողբը»:

Կարծեք թե, որոշ իմաստով, բանաստեղծը դժգոհ է Հիսուսից, կարծեք թե բանաստեղծին մահու շափ հոգնեցրել է նա իր կրավորական պատգամներով և իր իսկ կյանքի օրինակով: Այստեղ ոչ այնքան հայց կա Քրիստոսից, որքան մեղադրանք նրա հասցեին: Բավական է որքան տանջվել, տառապել, խոցվել, խաչվել է՝ բանաստեղծը. ժամանակն է ազատագրվել այդ ամենից:

Զի կարելի քաղվածաբար չբերել այդ բանաստեղծու-թյունը.

Ո՛վ մատնված Հիսուս.

Դուն, որ փրչապատ զբուխ մ'ունեցար՝

Գրթա՛ իմ զբխուս.—

Դերաններդ այն քարկոծեցին հար

Նկիղեցին ուղմարարիով:

Վերբերես բբխող ըղեղս կերան

Իշամեղուններն անբարիշտության:

Տե՛ս, մազբրուս վրա եղյամն է նըստեր,

Ես շա՛տ եմ տանջվեր:

Տառապա՛ծ Հիսուս.

Դուն, որ ունեցար արտավող աչքեր՝

Գրթա՛ աչքերուս.—

Անոնք ավելի արտոք են քամեր

Քան թե խմեր լույս: Դազաղներու վրա

Միշտ մահն են հրակեր մոմերու հետ շեղ,

Բիբերս են ինկեր վշտի հորի՛ն մեզ:

Տե՛ս, կողերուս վրա աճյուն է ցայտվեր...
Ես շա՛տ եմ տըքներ:

Մահապարտ Հիսուս.

Դուն, որ բեռված ստքեր ունեցար՝

Գրթա՛ ստքերուս.

Արլուն սըրակելով թափառեցան հար,

Ավերակներու եղինչներուն մեջ:

Ջանոնք լըվաց ձեռք մը սիրեկան

Ոչ մեկ լականի մեջ ասպընջական

Ռտեմամաներես կհոտի մոխիրներ.—

Ես շա՛տ եմ քալեր:

Ո՛վ խաչված Հիսուս.

Դուն, որ նիգակված սիրտ մը ունեցար՝

Գրթա՛ սըրտիս հույզ.—

Օր մ'որ անոր մեջ բարախեց շղխար՝

Հույսին տեղ այսօր ոչի՛նչը կ'ապրի:

Միրտըս սափոր մ'է, աճյունս՝ անոր մեջ,

Ձոր պիտի հոգե՛րն առնեն մահես վերջ:

Տե՛ս, տե՛ս, սրտիս վրա դաշույն մ' է խրովեր.

Ես շա՛տ եմ սիրեր:

Սա պատահական նյութանս չէ այս բաժնի մեջ, այլ մի պրոցես, որին շատ հաճախ է բանաստեղծը անդրադառնում: Նա խորապես զգում է, որ տառապանքի և շարչարանքի այդ ուղին երկար է, «սալարկված» կայծքարերով, ցանված՝ «մուրտի փուշերով» և շեղ՝ «ճառագայթի մը հանգունակ», բայց և այնպես.

Անկե կ'ելլեմ՝ հենյով գողգող ծունկերուս,

Եվ ծունկերես, զոր քամեցին եղբայրներս,

Արյունս տաք կըբբբի:

Հեվքն է՝ կուրծքիս, թարթիչներես վրա՝ փռչին:

Միրտըս սափորն է դատարկ,

Ու ես կ'երթամ դեպի աղբյուրը լույսին...

... Փանի՞ հազար, քանի՞ հազար տարիներ

Պետք է, որ ա՛յսպես քաջեմ.

Քանի՞ անգամ պիտի իյնամ, կարեվեր,

Չգիտե՛մ ես — միայն թե, ս՛վ եղբայրներ.

Ո՛վ խաչ հանող եղբայրներ.

Թողուցեք զիս ճամբորդությանս մեջ մինակ,

Ա՛յնքան մինակ և այնքան լուռ, որ լըսեմ

Տրոփը սըրտիս, որ ընալըրած նըվագս է

Նըվագներուն մեջեն բյուր...

... Ընդունա՛յն է խոստանալ:

Սըրտիս կույտեր, — սիրտըս սափորն է դատարկ,

Ու ես կ'երթամ դեպի աղբյուրը լույսին:

Իրականության մոռալը, անհուսալի առօրյան, բանաստեղծին շրջապատող միջավայրը համատարած խավարով են պատում նրան: Հոգեկան երկփեղկվածություն այս կողմը նրան դնում է մենավոր տրամության մեջ: Բանաստեղծը հրրորդ անգամ

կրկնում է, որ իր սիրտը դատարկ է, թափուր հույսերից, պա-
րապ՝ ալնկալիքներից, ամայի՝ սպասելիքներից:

Ո՛հ, շեմ ուզեր, ես շեմ ուզեր այս ժամուն
լամբարիս լույսը մատնիչ:

Վարդույրիս ժանյակներն կաթկըթող
լուսընկան բավ է ինձի:

Մարդիկներուն շրուայրոնն տալի վերջ
Արյուն և սեր, ծաղիկներն իմ էության,

Գրտնել զանոնք միշտ ծանծաղ,
Գրտնել Աստված միշտ ըսփինքս:

Ոչնչությունը պըճնող...

Հիմա, ավա՛ղ, ի՞նչ կմնա ալ ինձի.—

Մոխի՛ր, մոխի՛ր և ավերակ և նույն իսկ
Խորունկ սոսկում մ'իմ իսկ անձին նայելու:

Ո՛հ շեմ ուզեր, ես շեմ ուզեր այս ժամուն
լամբարիս լույսը մատնիչ:

Երբ ա՛լ դատարկ է հոգին

Ահավոր է տեսնել հատակը անոր:

Փլատակներու կանգուն մնացած կատարին
Կուսինն ոսկե ծեփող մեկ շողը բա՛վ է:

Մակայն հոգեկան նմանորինակ ներհակությունների տեսակե-
տից ամենահրաշալի կտորը, և որ կարևորն է, Վարուժանի
պոեզիայի կվինտէսեցիան, նրա (ինչպես և հայ պոեզիայի)
գլուխգործոցներից է «Տրտունջը», Վարուժանի բանաստեղ-
ծական ներհակությունների սինթեզն ու բանաստեղծական
կենսագրությունը, բանաստեղծի հոգու խոռվահույզ խոստո-
վանությունը:

Որոշ իմաստով Վարուժանի պոեզիայի հիմնական գծե-
րին կարելի է ծանոթանալ առանձին առած միայն այդ բա-
նաստեղծությամբ, այնքան նա խորն է, ընդհանրացած և
ընդգրկումների մեջ լայն:

Բայց մինչև այդ բանաստեղծության վերլուծումը և այն
վերլուծելու համար, շարունակենք հետևել «Գողգոթայի ծա-
ղիկների» ամամանը, շարունակենք տեսնել այն ամենը, ինչ
հեթանոսության հակառակ բերել է քրիստոնեությունը:

Մինչև այժմ «Գողգոթայի ծաղիկների» մեջ մենք ոչ այն-
քան տեսանք այդ «ծաղիկները», որքան զգացինք նրանց

բույրը բանաստեղծի ներաշխարհում, որքան զգացինք նը-
րանց պատճառած ազդեցությունները բանաստեղծի վրա՝
նրա հուզաշխարհի փոփոխությունները նկատի առնելով:

Արդ, որոնք են այդ «ծաղիկները»:

Ինքնին հասկանալի է, որ բանաստեղծը երկար ժամանակ
չէր կարող ապաստանել հեթանոս աստվածների անիրական
հովանու տակ. երկար ժամանակ չէր կարող մոռանալ իրեն
ըրջապատող առօրյան, իր ժամանակակից մարդկության վի-
ճակի պատճառած ցավը՝ հանուն հեթանոս դարերի հաճույ-
քի և խնդրության:

Նրա մեզ ծանոթ հոգեկան երկպառակտությունը «ինքն իր
մեջ» թույլ չէր տա նրան այդ բանն անելու. և ահա հենց այդ
երկպառակտության մյուս բևեռը մեխվում է թշվառների,
հարստահարվածների, երկաթների դեմ մաքառող բանակի,
այլ կերպ ասած՝ բանվորական մասսաների վրա:

Ազգային թշվառության պատկերից, կամ, որ ավելի հա-
վանական է, ազգային թշվառության միջով դեպի համա-
մարդկային թշվառությունը. հայ գյուղացու տառապանքնե-
րից դեպի բանվորության տառապանքները առհասարակ,
հայ «ցեղին» կոտորածներից ու գերությունից դեպի աշխա-
տավոր մասսաների գերությունը ընդհանրապես, — ահա այն
ճանապարհը, որով անցավ Վարուժանը «Ցեղին սրտից» դե-
պի «Հեթանոս երգերը»:

Այս մի փայլուն ապացույց է այն բանի, որ հայ ար-
վեստագետի կյանքում իսկապես ճակատագրական դեր է
խաղում երկպառակտումը «իրենից դուրս» և ոչ նա, հայ
արվեստագետը ոչ պակաս հաջողությամբ կարող էր լուծել
յուր սեփական ներհակությունները, ոչ պակաս հաջողու-
թյամբ կարող է ազատագրվել «ինքն իր մեջ» ունեցած հա-
կասություններից՝ ազգայինից դեպի միջազգայինը, տեղա-
կանից դեպի համաշխարհայինը բարձրանալու գործում, եթե
այդ ճանապարհին սֆինքսի պես նրա առաջ շտառանային
«իրենից դուրս» եղած ներհակությունները:

Մեկընդմիջտ, երբ բանաստեղծը ազատված է յուր սե-
փական ժողովրդի կրած տառապանքները պատկերելուց,
մեկընդմիջտ, երբ նա մի ամբողջ գրքով պատկերել է այդ

տառապանքները, իհարկե ոչ կանխակալ մտադրությամբ, որպեսզի դրանով ազատագրվի այդ ծանր «պարտքից», այլ բանաստեղծական անարատ ներշնչմամբ, երբ սուլթանական ազգակործան սուրբ թեկուզ կարճատև, թեկուզ արյունից դեռ շարված պատյան մտավ,— բանաստեղծը արդեն կարողանում է ելնել նեղ ազգային թշվառության սահմաններից դեպի համամարդկային խոհերն ու տառապանքները:

Իսնվոր դասակարգին նշմարելը և նրան ստեղծագործական նյութ գարծնելը, որի մեջ, անշուշտ, վճռական դեր է ունեցել վարուժանի բելգիական կրթությունը և Վերհարնի ազդեցությունը ուղիղ գծով,— պատիվ են բերում վարուժանին և ապացույց՝ մեզ՝ մեր թեզի իրավացիության համար:

Բայց վարուժանը «Գողգոթայի ծաղիկներին» մեջ չէ միայն, որ նկատել է թշվառներին առհասարակ և կապիտալիզմի բերած ավերածությունները մասնավորապես Դեռես իր առաջին գրքում՝ «Սարսուռներին» մեջ այդ մոտիվը գերակշիռ չափով ի հայտ էր գալիս: Դեռ այնտեղ վարուժանը նկատել էր «Ձյունի դադաղը»— անօթեան թշվառին, որ հարբեչուց հետո, փաթեամ ապարանքի մարմարե սանդուղքների վրա գլուխը դրած՝ քնել, ո՛չ, մեռել էր: Իսկ բնությունը կամենալով Օայդ մերժված մարմնույն աբսուստայան մը նվիրել» ձյուն է տեղում վրան «առանց մտածելու, թե գերեզման մը կուտա»: Վաղը շքեղ ապարանքի տերերը նրա գլին տեսնելով, նորկանքը շրթներին, պիտի հրամայեն դին փուռը նետել, արդարացյեներով խեղց, թե՛ թող շխմեր:

Բայց ինչպես չխմեր.

Ձիրենք մոռցող աշխարհն մոռնալ կ'օգնեն՝
Ալկոհոլի մեջ խեղդելով կյանքը վշտին:
Կ'ուզեն բողբոջի ձգել իրենց աչքերուն՝
Որ չկարգան ճակատադրի տողն արյան:

Դեռես այնտեղ վարուժանը զգում էր կապիտալիստական աշխարհի գայլային օրենքը, որով մատնված է «մարդը մարդու կեղեքման», ուր «մարդըս այնքան կ'շտապի մեջտեղեն վերցնելու իրեն նմանը»: Դեռես այնտեղ վարուժանին հուզում է «նոթութենն վիժող մայրը» և հենց վիժա-

ծը, որը եթե նույնիսկ ապրե՛ պիտի գառնար «Գողգոթայի ծաղիկներին» «Ընկեցիկը»:

Ո՛վ տառապանք.— Ձեզ համար
... Վիժումն աղբա՛ւ շրջիներ,
Քաղցածության, տաժանքի
Սալլին լվա՛ծ շրջիներ...
Անոթության ծանիքեն
Ցորշափ ձեր կուրծքը մաշի
Պիտ՝ շունենաք դուք արյուն
Արյան համար, միա՛ մըսի.
Ցորշափ ըլլաք հազար ծանր
Աշխատության սահմանված՝
Սեռի բընազգն, առնական
Համբույրը ձեզ շարիք է.
Ձեր արգանդները մեյմեկ
Գերեզմաններ պիտա՛ ըլլան...

Այսպես, վաղուց ծալք առած այս մոտիվը եթե «Ցեղին սրբոտի» մեջ չգարգացավ (իհարկե նաև լքնդհատվեց) այն հասկանալի պատճառով, որ հայկ[ախան] կոտորածները, սեփական տան և սեփական ժողովրդի օրհասը բանաստեղծին մոռացնել տվեց ամեն մի նախասիրություն և ամեն կարգի հակում,— ապա «Հեթանոս երգերի» մեջ այդ մոտիվը վերանձեռնվ ինքն իրեն՝ դարձավ վարուժանի աշխարհըմբռնողության բեռներից մեկը: Ձյունի տակ սառած նույն թշվառը այստեղ կրկին անգամ հանդես եկավ, բայց ոչ թե մարմարե սանդուղքների վրա գլուխը դրած, այլ յուր սեփական տան մեջ գոչողչելիս («Սպասում»):

Վիժածը այստեղ ապրեց, եթե ապրել է նշանակում օտար դարպասների առաջ, խորին գիշերվա մեջ լքվելը. ազրեց իրրև ընկեցիկ: Վիժողը կրկին երևաց այստեղ, բայց այս անգամ ավելի կոնկրետ հանգամանքների մեջ, դիտվելով բոլոր կողմերից: Նա կամ «Ընկեցիկի» մայրն է, մի կին, որ «Մայր եղավ՝ նախ շեղած դեռ կին» կամ «խաբված կույսը», որ «օր մ'ալ ճարահատ դուռը կզարնե բողբոջին»՝ «սրնգույրով ծեփած բոլոր ամոթն այտերուն»:

Նայեցեք՝ որքա՛ն թշվառ է մայրը իր անհուսալի քայլե մեջ և որքա՛ն կարեկցության արժանի իր պատրանքի մեջ.

այն ստի ու խարկանքի մեջ, որով կամենում է ծածկել իր հոգու ամբողջ ահապորությունը.

Պետք է լքել հոս.— կըղեն տըղան
Մածքին տակ քիվին, տան շեմին վրա...
Իր կաննի շալով կըսքողն վըրան:
Ինք երկընթին տակ, մերկ, կըղողըղա:

Ջայն կըհամբուրեմ և կ'ուզեմ փախչիլ...
Բայց սիրտը քայլին չի՝ հըպատակիր.—
Ո՛հ, ի՛նչպես բաժնել, փետե՛լ հոգեխիլ
Իր աղիթն որդվույն աղիթեն կարմիր:

Եվ հոն կըսպասեմ մինչև արշալույս.
Խելահեղ ուրուն կ'ըլլա գիշերվան.
Ու երբ որ տըղան կուլա սըրտահույզ՝
Մարմար շեմին վրա մերթ կ'օրորեմ զայն:

Կըխորհի.— զուցե ունենա որդին
Վաղը այս կյանքեն կյանք մը լավագույն.—
Դըրվի օրորան, ծիծերն ըստընտուին
Իրեն ավելի առատ կաթ մ'հեղուն:

Ունենա զուցե նույն իսկ խաղալիք.—
Պուպրիկ մ'իրեն պես բեհեզներ հագած.
Մարդիկ զայն կարծեն իշխան մը փոքրիկ.
Եվ զայն իր հրեշտակն ընդունի Աստված:

Կերգեմ աքաղաղն, որդին կըճըլա,
Ձի կոպերն անոնց շո՛ղն է համբուրած,
Մայրը խելացնոր, մայրը ակամա,
Ըշտապ կըփախչի՝... սիրտը հոն թողած:

Նայեցեք, թե որքան խորն է բանաստեղծի կարեկցությունը «խաբաված կույսերի», ապա նաև ոխն ու ատելությունը «ոսկե հորթերի» նկատմամբ.

Օ՛ այն հարուստ պարոններն, այն հըտպիտները շքեղ,
Որոնք ոսկի ցանեցին՝ որ բողբոջունը հընձեն,
Ձեր հյուղերեն ներս մըտան սիրահարի պես անմեղ,
Եվ դուրս եկան թըրթըլուն:

... Ես կըտեսնեմ ձեզմե մին կեցած ահա հորին քով:
Սըրտաճըմլիկ փորին վրա կիներ ծածուկ կըժպտին:

Իրմե հեռու կըխոսեն կույսերն անբիժ՝ դինք թողով
Իր դուլին հետ՝ առանձին:

Ահա ուրիշ մը լքված՝ խավարներուն մեջ հյուղին...
Կըհանդերձեմ նորածինն իր վարսերով տըխրաշուք.
Քընքույշ բերնին կը ճըմլեմ ծիծերն, ուրկե կը ծորեն
Կաթերու տեղ՝ արտասուք:

Ես կ'արտասվեմ ձեր վրա, ո՛վ տարաբախտ իմ Քույրը.
Ես ձեր այգանքը կու լամ՝ աչքերս այգեն փակելով...
.....

Չազրաթորմի ձեր մազերն հողվույս վըրա կը սողան՝
Շընչելով քեն մ'արյունիս, օձերու պես թունավոր.—
Եվ ես քենով կանիծեմ դարուս կավատ Մարդկության
Ոսկի Հորթերը բուրբ:

Կարեկցանքի և ատելության այս անընդմիջում հարակցությունը, գթություն և ոխի այս հարատև հաջորդականությունը տիպական է վարուժանի պոեզիայի այս մտքովի համար: Այդ կարեկցանքը բխում է ոչ այլ ինչից, քան բանվորությանը ոչ թե իբրև դասակարգ և այն էլ հաղթանակող դասակարգ տեսնելուց, այլ բանվորին իբրև սոսկական մարդ դիտելուց: Նրա բանվորը հաճախ իսկապես կարեկցություն է շարժում իր թշվառությունը. նա հաճախ հանդես է գալիս հայ պանդուխտի գծերով ավելի, քան իբրև մի գործող և միասնական դասակարգի անդամ:

Ահա «Մեռնող բանվորը».

Քամին կ'ոռնա ու տընակն իր հիմերեն կըցընցե
Իբրև ահեղ դամբարան:
Սյուրբաստավոր բանվոր մ'հոն կըվախճանի մազկըտին՝
Խարին վրա հոտան:

Ակամա հիշում եք Խարի վրա մեռնող պանդուխտ հային:

Հանո՛ւն պատառ մը հացի՝ զործատան մեջ թաղեց ան
Ճառագայթներն հողիին.
Տըվավ փերթ փերթ որ ուտեն մեքենաները վիշապ
Միսերն հուժկու կըռնակին:

Ակամա հիշում եք կարիքից Պոլիս մղված կաղնեբագուկ
Հարոյին, որի դեմքն այնքան հուժկու և հոյակապ է կիրտել

Կամսարականը: Կարծեք թե հենց Հիսուսի խաչն է պակաս տեսարանի ահազարուցումը խտացնելու և ապա՝ կրկին անգամ «Գողգոթայի ծաղիկները» հիշեցնելու համար: Եվ ահա,

Վար կրկնվի սրհարհն Հիսուսի խաչը կարմիր,
Բայց ճակատին վրա չինված
Շիթ մ'Արյունեն փրկության — որ ասած՝ է խաչին վրա —
Ինք կըմանի, վաստակած:

Այդպես է նաև «Բանվորուհին», որի կուրծքը նույնպես քանդված է հազից և այդ քանդված կրծքի տակ դեռ «կհամառի սերը երգել արատուտի պես սրարբած»: Անհուն արգահատանքով է լցվում բանաստեղծի հոգին այդ ծյուրված բանվորուհու, իր քրոջ հանդեպ.

Ես կըխորհեմ — և խենթի պես կըբազմամ
Վար իշնել, քո՛ւր դավկազեմ,
Քո՛վդ իշնել, համբուրել ձեռքդ նիհար,
Եվ հրծծել. — «Քեզ կըսիրեմ»: —

Եվ ես կուզեմ ամփոփել քեզ սըրտի՛ս վրա
Տաքրակի պես տարազիք,
Տալ ուժը քեզ, մըրցանակներըս փառքի,
Եվ ազգանունս անբասիր...

Միայն թե դուն լըլտա դըժգույն ու քաղցած,
Արևուն տակ շահազառ,
Մորդը վերև չըմարի ճրագն, ու, ո՛վ քույր,
Դուն գործատուն ա՛լ չերթաս:

Սակայն կարեկցանքի այս զգացումը, ինչպես նշեցինք, հանդես է գալիս ատելության հարակցությունում: Կարեկցանքի հետ միասին բանաստեղծը լցվում է անհուն վրեժով և ատելությամբ ընդդեմ նրանց և այն ամենի, որոնք պատճառ են դարձել այդ կարեկցյալների թշվառությունն ու կործանմանը: Այս ուղղությամբ հորինված նրա բանաստեղծությունները («Մեքենաներ», «Դադար», «Մայիսի մեկ») այժմեական են հնչում նույնիսկ այսօր և իրենց տեսակի մեջ գրվել կարող են համաշխարհային գրականության մեջ միայն Վերհարնի համապատասխան գործերի կողքին: Մեքենաների, բուրժուական քաղաքի, բանվորության նկարա-

զրերը՝ աննական թափով, պատկերավորության հուժկու եղանակով և, որ ամենագլխավորն է, աշխատանքի և կապիտալի փոխհարաբերության ըմբռնումով, — հիրավի պատիվ են բերում վարուժանին:

Հարյուր հազա՛ր են անոնք. — անոնք են որ կանգնեցին
Անմահությունն բուրգերուն և խորհուրդներն ըսփինքոին:
Կմախնին, մարմար առ մարմար, սանդուղ եղավ գահներուն...

Անոնց արյան շողա՛խն են պատերը մոռյլ նըլաղին.
Վատիկանի կամարներն, հողաթափերը Պապին
Անոնց լուսեղ բըրտիներին մարգրիտներով են ծեփված.
Անոնց խոփին նախ հանձնեց կորդ բընությունը՝ Աստված.
Կուռքերն անո՛նք դրոշեցին, և նույն անո՛նք զոհ եղան.
Եաչն անոնցմով ճաճանչեց, բայց ուրիշներ փըրկվեցան.

...Ռոմիկ ուժին բանա՛կն է, և հանճա՛րն է վաստակին՝
Որ կըբեք է դարեթու կոթողն իր հաղթ բամակին:

Հարյուր հազա՛ր են անոնք, — բանակներ են զոհերու՝
Զոր կըտանին միշտ Ոսկյա Հորթին առչև մորթելու:

Բանաստեղծը խորապես ըմբռնում է բուրժուական աշխարհի էությունը:

Մեքենաներն հոս կ'իշխեն՝ ըղբին վրա մարդերուն:

Ի վերջո նա աշխատանքի և կապիտալի փոխհարաբերության հարցից հասավ մինչև պրուլետարիատի հաղթանակի գաղափարին՝ հայ գրականության մեջ առաջիններից մեկը լինելով այդ ուղղությամբ:

Ատոնք բոլոր մըրթի՛կ են, ատոնք բուրք կայծա՛կ են,
Որոնք գոռան պիտի օր մ'ու Մարդկությունը սարսեն...

Վաղն, ո՛վ Ընկեր, ո՛վ Ընկեր, Քաղթին վրա այս գոռոզ
Պիտի Ամպրո՛ղը ճայթի, վառե շահե՛ր բարբարոս:

Ահա այսպես են լուծվում բանաստեղծի հոգեկան ներհանությունները, որոնց համապատասխան ձևի և աշխարհըմբռնողության հետ առկցելով վարուժանը իր այս գրքով բարձրացավ հայ կլասիկ պոեզիայի աստիճանին, իր խորին

ընդհանրացումների մեջ հլնելով ազգային-հայկական սահմաններին:

Հենց այդ պատճառով էլ, արվեստի տեսակետից անգամ, կերտողական կողմով Վարուժանի այս գիրքը մի քայլ առաջ մղվեց՝ նախորդի համեմատությամբ: Այստեղ անհամեմատ Վարուժանը հաջողում է «տողի մեջ» արտահայտել այն և արտահայտել այնպես, որ իրենով իսկ ենթադրել է տալիս «տողից դուրս» ընդհանրացումներ անելու: Կրկնում ենք, այս տեսակետից «Հեթանոս երգերը» մի քայլ առաջ է մղված «Ցեղին սրտի» համեմատությամբ:

Բայց շնայած դրան, Վարուժանի պոեզիայի համար առհասարակ կերտողական արվեստի տեսակետից տիպական է որոշ, իսկ հաճախ նաև անհանդուրժելի ձգձգվածություն: Նրա, իբրև բանաստեղծի ամենաուժեղ, բայց և ամենաթույլ լարը ամեն ինչ ասելու և ամեն ինչ պատկերավոր ասելու հակումն է:

Նա չի բավականանում տվյալ երևույթը, հույզը, ապրումը բնորոշել մի էպիտետով, կոնկրետացնել մի պատկերով, կամ դիտել մի կողմից: Նրա յուրաքանչյուր քառյակի մեջ կարելի է ցույց տալ բանաստեղծական այնպիսի գլուտեր, համեմատությունների և պատկերների այնպիսի զարմանալի առատություն, ինչպես նաև օրիգինալություն, մտքի այնպիսի թռիչքներ, որ զարմանք կարող է շարժել: Բայց դրա հետ միասին ամեն ինչ ասելու և ամեն ինչ պատկերավոր ասելու, չէինք ասի մարմաջը, այլ գուցե բնական հակումը նրա պոեզիան ծանրաբեռնում են ավելորդաբանություններով, ձգձգվածությամբ և չափի զգացման պակասով, եթե, իհարկե, չափի զգացման պակասը կարող է ծանրաբեռնվածություն կոչվել:

Բայց դա պատահական երևույթ չէ: Սա ևս ամենախորին և ամենապերտ առնչությամբ կապված է նրա, իբրև բանաստեղծի ամբողջ էության հետ: Մեզ ծանոթ հոգեկան ներհակությունների, տարրերումների, անզաղրում ալիկոծություն մեջ, այս ծայրահեղ ապրումից այլ ծայրահեղ ապրումին անցնելու մեջ՝ կորցնելով իր սովորական հավասարակշռությունը, բանաստեղծը ձևական ոչ մի արգելքի առաջ

կանգ չի առնում՝ իր հույզը ամբողջ խորությամբ, իր ապրումը ամբողջ լրիվությամբ, իր ցավը կամ իր հաճույթը ամբողջ լայնությամբ պատկերելու համար:

Ինչպես իր հոգեկան ներհակության եթե ոչ բնույթով, գոնե երևույթով Վարուժանը հիշեցնում է Նարեկացուն, այդպես էլ Վարուժանի պոեզիան իր որոշ ձգձգումներով, երեվույթները և իրերը իրենց բոլոր կողմերով պատկերելու հակումով, իր սեփական հույզը, ապրումը, խոհը այլազան տեսակետներից դիտելու և արտահայտելու միտումով, հիշեցնում է «Մատյան ողբերգության»-ը: Երկուսի մոտ էլ հիմնական մոտիվի, ստեղծագործության առանցքի տեսակետից այս կամ այն պատկերը, այս կամ այն արտահայտությունների կոմպլեքսը ավելորդ լինելով, միաժամանակ կրկնաբյուրեղներ չեն, այլ տվյալ հույզի, ապրումի, խոհի դիտումը մի այլ, դեռևս չդիտված կողմից:

Բայց եթե Նարեկացու «Ողբից», եթե ոչ անհնարին, ապա դժվար է առանձին կտորներ կամ առանձին գլուխներ դուրս ձգել՝ «Ողբի» հիմնական բնույթը նկատի ունենալով, ապա Վարուժանի մոտ հաճախ իսկապես կարելի է այս կամ այն բանաստեղծության միջից դուրս ձգել ոչ փոքր չափի կտորներ՝ ճորից նկատի ունենալով տվյալ բանաստեղծության հիմնական բնույթը:

Բայց մենք վերադառնանք «Տրտունջքին», որով միաժամանակ նաև ամփոփած կլինենք Վարուժանի պոեզիայի մեր քննարկած խնդիրները:

Ամենից առաջ, հենց վերոհիշյալ տեսանկյունից դիտելիս, այսինքն՝ բանաստեղծության կերտողական կողմը նկատի առնելով, այս բանաստեղծությունը Վարուժանի ամենապատարյալ այն բանաստեղծություններից է, որոնցից մի տող անգամ անտես առնել, կամ ջնջել հնարավոր չէ: Ձևի և բովանդակության տարբեր մասերի համատեղ ներդաշնակության, ընդգրկման լայնության տեսակետից նա մի հրաշալի նվաճում է:

Ավելի, քան Վարուժանի մի այլ բանաստեղծության մեջ՝ այնտեղ մեզ հայտնի «տողի մեջ» և «տողից դուրս» հասկացողությունները միանում են: Որքան ամբողջական, անթերի,

հուզական և խորն է նա «տողի մեջ», նույնքան լայն, ընդհանրացումներով հղի՝ «տողից դուրս»: Որքան այնտեղ անձնական ապրումներն են առկա, որքան այնտեղ բանաստեղծը յուր սեփական հույզերից և նբանց մասին է խորհում, դրանով բանաստեղծությունը տալով հուզիչ անմիջականություն, բայց և նույնքան օբյեկտիվ ունակականությամբ այնտեղ դրսևորված է մի ամբողջ դարաշրջան՝ իր ամենահիմնական գծերով:

Այնտեղ, ավելի քան մի այլ տեղ բանաստեղծի մեզ ծանոթ հոգեկան ներհակությունները «իր մեջ» և «իրենից դուրս» հանդես են գալիս երկմիասնաբար, բայց և այնտեղ, ավելի քան մի այլ տեղ, ճիշտ է ո՛չ այնքան ակնհայտնի ցցունությամբ (հմմտ. «Քողեք մեծնամ») որքան ըստ խորության երևում են հենց այդ հոգեկան երկպառակտումները: «Տրտունջը» երկպառակտված հոգու արտահայտությունն է, երկփեղկված հոգու տրտունջը: Այդ տեսակետից ավելորդ չէր լինի իրար հետ համեմատել հայ գրականության երկու հուշակավոր «Տրտունջը»-ները՝ Գուրյանի «Տրտունջը» և Վարուժանի «Տրտունջը»:

Գուրյանի հիրավի հանճարեղ բանաստեղծությունը կարևոր հոգու մի ապշեցուցիչ պոռթկում է: Նրան այլ կերպ կոչել հնարավոր չէ, քան հենց պոռթկում և այդ ոչ պատահական կերպով:

Թող արտառոց չթվա, եթե ասեմ՝ դա մի տրտունջ է, որ պոռթկել է հանկարծակի, միանգամից: Դա ոչ թե պրոցես է, այլ մոմենտ, ոչ թե ընթացք, այլ ուսմունք: Հիվանդ, մահամերձ բանաստեղծի հոգում այն ծնվել է միանգամից և միանգամից արտաբերվել. այն հետևանք է մի կրիտիկական, մի ողբերգական պահի, բայց ոչ երբեք ողբերգական պրոցես:

Իսկապես ասած այն ավելի աղաղակ է, բողոք, ըմբոստացում, քան տրտունջը, ավելի ցավ և տանջանք կա այնտեղ, քան ողբերգություն: Պատահական չէ, որ այդ բանաստեղծությունը զարգանում է ոչ թե ուղիղ գծով, այլ զիգզագներով, ոչ թե կեղեքիչ հանգստությամբ, ավելի ճիշտ՝ հանդարտությամբ, այլ զահավիժումներով, բարձրաստիճան

ելևէջումներով: Այդպես չէր կարելի խոսել մի հոգեվիճակի մասին, որն անցել է երկարատև պրոցես, մի պահի մասին, որին նախորդել են բազմաթիվ նմանօրինակ պահեր, այդպես չէր կարելի տրտնջալ, այլ միայն՝ աղաղակել, բողոքել: Այդ իմաստով Գուրյանի ապրած վիճակը (խոսքը «Տրտունջի» մասին է) ավելի դրամատիկական է, քան ողբերգական, և այդ պատճառով էլ նրա «Տրտունջը» ավելի դրամա է, քան ողբերգություն, ավելի աղաղակ, քան տրտունջ:

Թող ինձ սխալ չհասկանան. ասելով, թե այն մի պոռթկում է, հանկարծակի ծնված մի բողոք, ասելով, թե այն բանաստեղծի հոգում ծնվել է միանգամից, ես բնավ մտադիր չեմ պնդելու, թե Գուրյանի «Տրտունջը»-ում ի հայտ եկած հոգեվիճակը, տվյալ դեպքում Մահվան դատապարտվածի ծարավը կյանքի նկատմամբ, երբևէիցե, մինչև այդ չի պաշարել բանաստեղծին: Բայց տվյալ դեպքում դա բոլորովին էլ կարևոր չէ: Այստեղ կարևորը այն պահն է, երբ բանաստեղծն իր մահամերձի թեկուզ հազարերորդ անգամ կրկնվող հուզումների մեջ առաջին անգամ [կանգնում է] աստծո դեմ, առաջին անգամ փորձում է ելնել «աստղերի սանդուղքն ահալի», առաջին անգամ խիզախում է աստծո դեմ: Կարևորը հենց այդ առաջին անգամ կանգնելը, ելնելը, խիզախելն է, առաջին անգամ ըմբոստանալը:

Բանաստեղծությունը սկսվում է կեղեքիչ մեղմությամբ, այլ կերպ ասած «Տրտունջը»-ով:

Է՛հ, մնաք բարով, Աստված և արև,
Որ կբլբլբլբա իմ հոգույս վերև...
Ասող մ'ալ ես կ'երթամ հավելու երկնից...

Սակայն աստծո և «երթալու» (իմա՝ մեռնելու) փաստարկումը հենց բանաստեղծի իսկապես որ տրտունջը փոխում է աղաղակի, քինոս բողոքի:

Աստծուն հիշելը այն ժամանակ, երբ ինքը մեռնում է, ասոցիացիայով հիշեցնել է տալիս աստծուն, իբրև կենաց և մահվան հեղինակի, իբրև մարդու լինելության և չլինելության տնօրինողի, և մեռնողի հոգում ծնվում են ատելության և անեծքի այրող խոսքերը:

Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ
Եվ թշվառ հողվոց անհծբ ողբադին,
Որք թըրին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծուն՝ շանթերո՛ւ արմատ՝
Հավելուն գեներն ու զարդերն հըրատ...

Բայց այդ վայրկենական մեղանշմանը, հաջորդում է նույնպիսի վայրկենական զղջումն.

Այլ, ո՛հ, ի՛նչ կ'ըսեմ... շանթահարե գ'իտ,
Աստվա՛ծ, խոկն հըսկա, փշրե հյուսեխ,
Որ ժպըհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուղքն ահալի...

Բանաստեղծին սարսափ է պատճառում ո՛չ միայն այն, որ հանդգնում է «սուզիլ խորն երկնի», «ելնել աստղերու սանդուղքն ահալի», այսինքն խառնվել աստծո տնօրինությանը, մի վիճակ, որ համընկնում է Նարեկացու ապրած հոգեվիճակին, այլև այն, որ աստծո տնօրինությանն է հանձնված նաև ինքը, ոգեվարող բանաստեղծը.

Ռզը՛ւն քեզ, Աստված զոզոջ էակին,
Շողին, փըթիթին, ալվույն ու վանկին՝
Դու, որ ճակտիս վարդն և բոցն աշերուս,
Խըլեցիր թըթոսս շրթանց, թոհչքն հոգվույս,
Ամպ տըվիր աշացս, հեք տըվիր սրտիս,
Ըսիր մահվան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կյանք մը պահած ես ետքի,
Կյանք ժ'անհուն շողի, բույրի, ազոթքի...

Այսպիսով, հավատը այն բանի նկատմամբ, թե գուցե աստված «մահվան դռանը» «կծպտի» մահամերձին, թե նրա համար պահած կլինի «կյանք մը ետքի», բանաստեղծին իր ըմբոստացման մեջ կարմակած պահելով՝ նրան առավել ուժգին տարուբերումների մեջ է գցում, ավելի սրում նրա հոգեկան դրաման այն իմաստով, որ շահավոր հավատը փոխարկվում է ծայրահեղ կասկածանքի.

Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մեջ համր, անշըշունչ,

Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլամ դալկահար,
Պլլըվիմ անվանդ, մըռնչեմ անզաղար,
Թո՛ղ անհծբ մ'ըլամ ու կողըդ, խրիմ,
Թո՛ղ հորջորչեմ քեզ. «Աստվա՛ծ յիսերիմ»:

Բայց դա չի փրկում բանաստեղծին: Նա զգում է, որ դողգոջում է, որ «դժգո՛ւյն է, դժգո՛ւյն»: Նա զգում է, որ այնուամենայնիվ մեռնում է և այս անգամ բարձրագույն աղաղակում: Արդեն տրտունջքն անզոր է արտահայտելու այն, ինչ կարող է ասել աղաղակը, հուսահատ ճիշը և այդ ո՛չ այնքան աստծուն ուղղված, որքան ինքն էլ շգիտե թե ո՛ւմ...

Ո՛վ, կայծ տըվեք ի՛նձ, կա՛յծ տըվեք, ապրի՛մ...
Ի՛նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...

Ո՛հ, տվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կուզեմ դե՛ռ՛վ ապրիլ ու ապրի՛լ.
Երկնքի աստղե՛ր, հոգվույս մեջ ընկե՛ք,
Կայծ տըվե՛ք, կյա՛նք՝ ձեր սիրահարին հեք...

Զհաշտվելով հավիտենական մահվան հետ, բայց և չկարողանալով աստծուց կամ աստղերից կենաց կայծ ստանալ, չկամենալով մեռնել, բայց և չկարողանալով ապրել, նա ստիպված է հաշտվել այն մտքի հետ, որ մահվանից հետո գոնե կհիշեն իրեն: Զկարողանալով ապրել ինքն իր մեջ և ինքն իր համար, գոնե կապրի այլոց մեջ, նրանց հուշերում և այդ իմաստով կարծեք թե հաշտվում է աստծո հետ.

Գիշերն միշտ դազաղս, աստղերը շահեր,
Հուսինն հար կուլա խուզարկե վըհեր.
Կըլան մարդիկ, որ լացող մը շունին,
Անոր համար նա զըբավ այդ լուսին.
Եվ մահամեծն ալ կուզե երկու բան,
Նախ կյա՛նքը, վերջը լացող մ'իբ վրան:

Հիմա, երբ մեկընդմիջտ նա ազատագրված է մահվան զարհուրելի սարսափից, մեկընդմիջտ երբ գտել է մահվան մեջ իսկ ապրել կարողանալու գաղտնիքը, բանաստեղծը միաժամանակ կարողանում է խոստովանել այն, ինչ միևնչայդ անկարող էր անելու.

Ի զո՛ւր գրեցին աստղերն ինծի «սե՛ր»,
եվ ի զո՛ւր ուսույց բուլբուլն ինձ «սիրելի»,
Ի զո՛ւր սյուրբեր «սե՛ր» ինձ ներշնչեցին,
եվ զիս նորատի ցուցուց շինջ ալին,
Ի զո՛ւր թավուտքներ լրուեցին իմ շուրջ,
Փաղտնապահ տերեթ չ'առին երբե՛ք շունջ,
Որ չբխողովն երազքըս վսեմ,
Քույլ տըվին. որ միշտ ըզնն երազեմ,
եվ ի զո՛ւր ծաղկունք, փրթիթնե՛ր գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան...
Ո՛հ, նորա ամենքը զի՛ս ծաղրեր են...

Քայց որ ամենակարևորն է հիվանդ հոգու միակ սպեղանին,
մեռնողի միակ կուվանը ապրողների նկատմամբ՝

Աստուծո ծաղրն է աշխարհն ալ արգեն...

Ահա Գուրյանի «Տրտունջքը» իր ամբողջությունը:

Սա ոչ այլ ինչ է, քան ուժգին պոռթկման մի ալիք, որ
թավալվում է բանաստեղծի հոգու մեջ, մի աղաղակ, որ
ծնվել է ոչ թե պրոցեսից, այլ կրիտիկական մոմենտներից,
ոչ թե ողբերգություն, որ իրենով ենթադրում է երկարատև
հագեկան անցում, այլ ողբերգական պահ: Այդ իմաստով
այնտեղ ավելի մահ կա քան մահացում, ավելի մոմենտ, քան
պրոցես: Իսկ եթե այնտեղ պրոցես կա (իսկ իսկապես նա
կա), ապա դա ոչ թե պրոցես է ինքնին, այլ պրոցես, որ
բխում է մոմենտի կրիտիկական լինելուց: Այդ պրոցեսը ոչ
այլ ինչ է, քան արտահայտությունը հոգեկան այն վայրի-
վերումների, որ ապրում է բանաստեղծը կրիտիկական մի
պահի մեջ, այլ արտահայտությունն այն տարուբերումների,
որ ապրում է բանաստեղծը տվյալ պահին «ինքն իր մեջ»,
պրոցես, որ առաջանում է, մեր տերմինով ասած, բանաս-
տեղծի «ինքն իր մեջ» երկփեղկվելուց և ոչ երբեք պրոցես,
որ իրենով պայմանավորում է հոգեկան երկփեղկվածու-
թյուն:

Այսպիսով, Գուրյանի «Տրտունջքը» արտահայտություն է
բանաստեղծական մի հոգու, որ ապրում է ներհակություն
«ինքն իր մեջ»՝ մերթ աստծուն նզովելով, մերթ էլ ապաշա-
վելով, մերթ՝ մեղանշելով նրա դեմ, մերթ էլ գոչալով:

Այս իմաստով նա հիշեցնում է Նարեկացուն, որի ող-
բերգությունն էլ այլ բան չէ, քան հենց երկպառակտում
«ինքն իր մեջ»:

Այլ է Վարուժանի «Տրտունջքը»: Վարուժանի «Տրտունջքը»
նակառակ Գուրյանի «Տրտունջքի» արտահայտություն է բա-
նաստեղծական մի հոգու, որ ապրում է ներհակություն ոչ
միայն «ինքն իր մեջ», այլև «իրենից դուրս»:

Եվ դա միանգամայն հասկանալի է: Վարուժանի այս
բանաստեղծությունը ևս, և ավելի քան նրա մի այլ բանաս-
տեղծություն, ծնունդ է նրա երկփեղկված բանաստեղծական
հոգու: Նրա այս բանաստեղծությունն էլ ենթակա է այն հիմ-
նական օրենքին, որին ենթակա է նրա ողջ պոեզիան, իսկ
նրա ողջ պոեզիային, ինչպես տեսանք, հատուկ էր հենց
երկպառակտումն «իրեն մեջ» և «իրենից դուրս»:

Վարուժանի «Տրտունջքը» ոչ թե արտահայտություն է
մոմենտի, այլ պրոցեսի, ոչ թե ոստում է, այլ ընթացք, ոչ
թե դրամատիկական պահ, այլ ողբերգություն և հենց այդ
պատճառով էլ ոչ ախքան աղաղակ, բողոք կա այնտեղ, որ-
քան իսկապես որ տրտունջք, հենց այդ պատճառով էլ նրա
բանաստեղծական զարգացումը ոչ թե սահանքներով, գա-
հավիժումներով է կատարվում, այլ իսկապես կեղծքիչ հան-
դարտությունը: Վարուժանի այս բանաստեղծության համար
հարմար է գալիս Գուրյանի խոսքերը

«Ո՛հ, հատակն են իմ փոփոսներ»,

այնինչ Գուրյանի «Տրտունջքն» ոչ այլ ինչ է, քան ալեկոծու-
թյունն այն լճակի, որի մեջ «հուսահատ մը նայեցա՞վ» իր
իսկ խոսքերով ասած:

Վարուժանի «Տրտունջքը» միաժամանակ իր ողջ պոեզիա-
յի հանրագումարն է, իր բանաստեղծական ամբողջ ճանա-
պարհի կենսագրությունը, որի վերլուծումը միաժամանակ
նրա պոեզիայի ամփոփումը կհանդիսանա:

Մեծելով Նիրվանայի «աստղահեռ դռները» բանաստեղծը
գրում է.

Մարդիկներն ծանակված մահաբաղձիկ տրտմութունս
Հանճար մը լոկ իր գութով կրնա վարկյան մ'ըստփոխի:

Մեզ, որ քայլ առ քայլ հետևել ենք նրա պոեզիայի առաջընթացին և կարևորագույն անցումներին, մեզ պետք է, որ հասկանալի լինի, թե ո՞րն է բանաստեղծի «մահաբաղձիկ տրտմութունը», որ առաջացել է «Մարդիկներու ծանակից», և թէ ինչո՞ւ է նա իր մասին արտահայտվում այնպես,

Թե ջախջախված լարերես և աճյուննս գերիվեր
Կրմնա Վիշտս աննըված, Հուսահատութունըս անմահ:

Բայց ավելի լավ է, որ ինքը բանաստեղծը կրկին անգամ հիշեցնի մեզ այդ ամենը:

Ահավասիկ նրա այն նախնական հոգեվիճակը, երբ հողին լեցուն էր միայն բնությամբ, երբ նա կամենում էր իր մատներին տակ սարսուղենել բնությունը, «ինչպես մոր ծիծն հոլանի՝ մանկան առջին բնազդական դիպչելուն», երբ դեռ նրա բանաստեղծական ներշնչանքը անաղարտ էր և բանաստեղծի հոգին միաձուլ:

Տե՛ս, գարուննն ես կուգամ, հայրենիքնն վարդերու.
Օր մ'իմ շեմիս առջև ալ մայիսն առույզ ծաղկեցավ.
Աղավնիներս ըսպիտակ ավազանիս եզերքին
Համբուրվեցան կարմրագեղ կտուցներով տարփահեղջ:

Բայց դրա հետ միաժամանակ բնության, գարնան պատճառած հաճույքին առընթեր նա անկարող էր չզգալ, որ

...տառապանքն անապատում՝ շիրմաքարի մը պես սև՝
Փակած էր սիրտըս ընդդեմ գարնանային ավիշին:

Հաճույքի գիտակցումն ինքնին բերում է նաև ցավի գիտակցում: Նրա միաձուլ հոգին ճեղքված է արդեն, առկա է երկպառակտումն «ինքն իր մեջ»:

Գարունն ի՛նչ փուլթ, երբ շ՛ըլար սիրտըզ ծիծառը անոր:
Վարդերն ի՛նչ փուլթ, երբ միայն կրնան վերքերս հիշեցնել:

իր հոգու այս երերուն, իրարամերժ ներհակություններով հղի վիճակը բանաստեղծը հրաշալի կերպով ներկայացնում է բանաստեղծական մի օրիգինալ պատկերով՝ ընդամենը երկու տողի մեջ.

...նավեցի լըճի վրա բուրումնավետ իրիկունն.
Բայց դեռ լըմպած անդորրանքն՝ անդունդը ես չափեցի:

Ահա նրա հոգեկան բոլոր վայրկյերումների, նրա հոգեկան բոլոր տարուբերումների խտացած արտահայտությունը, երբ նա տատանվում է երկու իրար հակառակ, բայց և համազոր բևեռների միջև, հակվելով մերթ դեպի «հաճույքի» բևեռը, դեպի բնությունը, դեպի այն ամենը, ինչ վե՛հ է, վսեմ և գեղեցիկ և մերթ էլ դեպի «ցավի» բևեռը, հակումն դեպի իրականությունը, դեպի այն ամենը, ինչ տանջալից է և նսեմ:

Դեռ «հաճույքի», գեղեցիկի, վսեմի ոլորտում, դեռևս լըմբոշխնած այդ գեղեցիկի, վսեմի հաճույքը, այլ կերպ ասած՝ «բուրումնավետ իրիկվանն դեռ անդորրանքը լըմպած» հիշել «ցավի» մասին, հիշել տանջալից իրականության և նսեմի մասին, այլ կերպ ասած՝ նետվելու համար չափել անդունդը հենց այն լճի, որի վրա պիտի ըմպեր «իրիկվան անդորրանքը», — ահա վարուժանի տրագեդիայի աղբյուրը.

Սակայն կ'արժեր դեռ ասիլ՝... ու փորձեցի ես սիրել.
Սըրտիս տրտիունն զգալու համար՝ կուրժի մը փարել:

Որքան էլ բանաստեղծը դժվարանում է պատմել յուր այդ սիրո մասին, որովհետև «հիշելը զայն՝ վերստին արյունիլ է» իր համար, այնուամենայնիվ, լսեցեք, թե որպիսի պաթոսով է պատմում նա իր սիրո մասին և որպիսի դառնություններ են նրան հաջորդող հիասթափության մասին՝ շճոռանալով սակայն կնոջ հանդեպ տածած նրա սիրո սիմվոլիկ նշանակությունը, հենց նույնպիսի նշանակությունը, որպիսին նա ունի «Հեթանոս երգերի» մեջ.

Ա՛խ, բանաստե՛ղծ, ի՛նչպես թե՛ղ պատմել եղբորդ սերիս.
Հիշելը զայն՝ վերջապէս արյունիլ է ինձ համար:
Ինչպե՛ս ըսել, թե ես ալ պաշտեցի կին մ՛հրաշագեղ.
Անոր հեղեղ մազերուն վըրա, զընար բլուրաղի,
Մատերըս սեր նվազելով մեղրամոմի պես ծլուրան.
Ամբողջ տարի մը անոր բերերուն խորն ընկղզմած՝
Աշունթաթախ թըռիչներս արբշտությամբ պարզեցի՝
Անկարության մեջ ո՛րչափ ո՛ր կարելի է պարզել...

Այն ատեն ի՛ր նեա զրուանըս ծեղպեն նեա ծղպտեցան
Քարուններ բյուր դաւերու, անցյալ վաղերը առույգ.
Իսկ սրբեկնի տատակներն մեկյաններուն նինավաւրց՝
Վերադարձան ձեղունիս գերաններուն մեջ մըրոտ՝
Տարածեցին եղկ հոտերն իրենց ներմակ բույներուն:

Սա հեթանոս կնոջ պաշտամունքն է և նրա առընթերությամբ
հեթանոս դարերի, կործանված «հինավուրց մեհյաններուն»
վերակառուցումը հենց իրեն՝ բանաստեղծի հոգու մեջ: Հո-
գեկան երկպառակտումից դուրս գալու մի ելք է դա, երկու
բեւեռների միջև տատանվող բանաստեղծի ժամանակավոր
հանգրվանը այդ բեւեռներից մեկի վրա:

Բայց երկար չի տևում այդ և երկար տևել չէր կարող.

Սակայն ի զո՛ր մեր տարփանքն անմահանալ խոստացավ.
Խիստ զբովենն ա՛լ մեռած է թիթեռնիկն ափիս մեջ:

Կինը՝ բանաստեղծի «մտքին թռիչքն անհունին մեջ դիտելին
ձանձրացած»՝ դրժում է նրան—իր դրժանքը համբույրով ծած-
կելով:

Ան կըղրժեր և զըրժանքն համբույրը իր կըծածկեր.
Սիրտը՝ զոր ես բացի օր մը՝ ուրիշ բալիթ մ՛էր կըղպած:
Մինչ գլուխն իր ծունկիս դրած՝ կսեւեռն նայվածքն իր
անձանոթի՛ մը՝ հոգվույն մեջ՝ որուն վըրա կըխորհեր...

Իհրենիս վըրա համբույրն իր ուրի՛շ համբույր մ՛համբուրեց.
Սիրտը սըրտիս վրա ուրիշ սըրտի մ՛համար բարախեց:

Միամիտ պետք է լինել կարծելու համար, թե խոսքը ոմն
կնոջ մասին է, որը դրժել է բանաստեղծին: Կարևորն այն է,
որ բանաստեղծը երկար ժամանակ չէր կարող իր հոգեկան
երկփեղկվածությունից դուրս ելնել՝ կնոջը կամ ընդհանրա-

պես սիրուն կառչելով: Խնդիրը ո՛չ այնքան կնոջ դրժանքին
է վերաբերում, որքան բանաստեղծի անբավական հոգուն:
Կնոջն ու նրա սիրուն ապաստանելը բանաստեղծի համար մի
ժամանակավոր ելք էր հոգեկան երկպառակտումից դուրս
գալու համար: Մի՞թե այդ չի վկայում բանաստեղծի այն
միտքը, թե կինը «Մտքիս թռիչքն անհունի մեջ դիտելին ձան-
ձրացավ», այն միտքը, թե «ո՛ր կընոջ սիրտը կըրցավ հան-
ձար մ՛ ընել բարեբաստ» կամ.

Ո՛ր գիրգ տատարակը արդյոք ատակեց ձուն արծիվին
Թեկրուն տակ ամփոփել, տալ կենդանի շերմություն:

Հենց կարևորն էլ այս է, ինչը բանաստեղծն ինքը ևս հրա-
շալի կերպով գիտակցում է:

Ավելին.

Ան՛րն ու հանճա՛րն ըլլալով զույգ հաստիչներն Աշխարհի՛
Սրանույրան նպատակին բռնակալներն են անհաշտ:

Կնշանակե հանճարը, տվյալ դեպքում վարուժանը իր երկ-
փեղկված հոգով չէր կարող սիրո մեջ երանություն, այլ կերպ
առած հոգեկան բավարարություն գտնել: Անձնականի և արա-
անձնականի սուր բախումը և որ նույնն է՝ վարուժանի հո-
գեկան ներհակ երկփեղկվածությունը պետք է որ անցնեթ
այդ փուլը:

Նրան սպասում էր հայ ժողովուրդը՝ իր օրհասական վախ-
ճանի սպառնալիքի տակ: Նրան սպասում էին բազմահազար
թշվառներ, որոնք ոգեվարում էին կամ դահճի սրի տակ, կամ
Սփրատի հորձանուտներում: Նրան ձգում էր ներհակության
մյուս բեւեռը: Եվ բանաստեղծը զգում է այդ.

Գուցե ես վա՛տ մըն էի. — ուզած էի օսել ապրիլ
Սրտի՛ս ճամար սեղեկակե, գայն լեցրելի բերկաճե՛ով՝
Նրե նա արդեն ճաթա՛ծ էր արցունքներու կըրակով:
Թերևս զիս ուրիշն՛ համար բախտն էր սահմանած.
Եվ իմ կյանքիս նըպատակն էր ուրիշ կյանք մը գուցե:

Սեփական կյանքով մտահոգվելը, սեփական սիրտը բեր-
կանքով լցնելը, անձնական երանության և հաճույքի ձրգ-

տիլը, ասել է թե անձնական բախման մեջ է մտնում արտ-
անձնական, հասարակական թշվառության և ցավի հետ:

Ու ես խաչիս վրեժն խաչված Մարդուն եայցեա,

այսինքն՝ անձնականից դեպի հասարակականը, մասնավորից
դեպի ընդհանուրը, «Բագինին վրա»-ից դեպի «Գողգոթայի
ծաղիկները», «հաճույքից» դեպի «ցավը», կարճ՝ երկ-
պառակտման մի բեռից դեպի մյուսը.

Նրվիրվի՛ւ պետք էր ինձի. ու ես տեսա այն ատեն
Իմ վերքերես ավելի՛ խորունկ վերքեր ու ցավեր.—
Կըմորթեին ժողովուրդ մ'որ առած մուրճը ձեռքին՝
Սա կավեղեն դարուն վրա կըկերտեր դարը մարմար:
Այն ժամանակ վհատ հողիս կայծակներով պընդացավ...

Կամքս նվաճված իմ ցավով՝ կազդուրեց ցավն ուրիշին:
Ժողովուրդ մ'ես ըզգացի՛ որ լանջքիս տակ կըտրուփեր.
Աստված մը, ո՛հ, եկած էր բառսիս մեջ բընակիլ,
Եվ խորն հնոցիս՝ որ դատարկ էր Սերերեն հապաղաշտ՝
Նետեց անմահ Գաղափարն, ոսկեփրփուր եռեփեց:

Այստեղ է վարուժանը գծել հայկական անլուր կոտորած-
ների, ահավոր ավերածությունների, փլատակների և ավեր-
ների նկարեն պատկերը. այստեղ է նա պատկերել հայ շի-
նականին՝ իր նոր հերկած արտում, ախոսի մեջ մորթված,
որի արյունով կարծես պիտի ոռոգվի հերկը. այստեղ է նա
պատկերել հայ թշվառ պանդուխտին՝ խարի վրա ոգև-
րելիս, նրա մորը՝ «կարոտի նամակ» գրելիս, նրա հորը՝
բանտի խավարի մեջ խարխափելիս, նրա քրոջը՝ «բողոքի
դուռը» բախելիս, նրա զավակին՝ օտար պատերի տակ իբրև
ընկեցիկ վայր ընկած:

Սակայն վարուժանը հենց այստեղից միաժամանակ
բարձրացավ մինչև պրոլետարիատին նկատելը և նրա թըշ-
վառությունը, ապա նաև ռխն ու ատելությունը պատկերելը:

Ա՛լ հոն էի՛ որ մըրոտ խըրճիթներուն մեջ մարդիկ
Կ'անիծեն լույսը վաղվան՝ որ պիտի հա՛նկարծ սառի
Իրենց քաղցին նըվաղկոտ բիրբրուն մեջ մահաբաղձ.
Այնտե՛ղ էի, ուր բանվոր բազուկներ հանք կըպեղեն,
Կըրանան ծոցն ոսկիին, և շարագեպ վըտանգով

Գերեզմանին կըգանեն՝ ունենալով գերթ պատանք
Պատառ պատառ շապիկին՝ պանդուխտունը քըրտնաթոր.
Այնտե՛ղ էի, ուր բախտին խորթ գավակները համուռ՝
Ապրելու մեծ ու արդար իրավունքին ի խընդիր՝
Իընդկցուցին կատարներն ոստաններուն ցատումո՛ւ:

Ես ժողովուրդը հեծա նըման ձիու մ'ամեհի,
Եվ լուսաղբուր բիրբրս իմ Նպատակին սևեռուն՝
Սըրբրկավարար քըշեցի գայն գահերուն վըրահեն...
Մըտրակիս տակ ծառացած՝ երեք տարի ան վարգեց
Օրենքներուն բըռնակալ ավերակին ընդմեջեն.
Երեք տարի գանգերուն մեջ պայտերն իր թաթախեց,
Եվ արյունի խոշոլունով լանջքին ալիլն ան ըզգաց:
Բայց օր մ'ալ խեթ եղավ ձին և խարազանըս խոտեց.
Ու տակավին Փըրկության կատարին վրա աղամանդ
Վըրընչյունն իր շարձակած՝ ահիպարան ոստումով
Ձիս վար նետեց գավակեն, ժայռի դեմ կողըս պատոնց:

Ազատության սահմանված ազգը մընաց անմըտրակ
Մտացումին մեջ հողնած, ընտրեց սողալը անարգ...
Ի՛նչ փույթ, ըսավ, իմ կարթերս ապաժուժի մեջ թաթխել,
Կավագույն է տերերուս հղիանքին սայլը բաշիմ.
— Սայլ ո՛չ անբիծ մարմարով, ոսկի աղբով բեռցըված—
Ի՛նչ փույթ, ըսավ, արևուն տակ քըրտնելիլ ազատ,
Ուրիս շըղթան արգելք չէ՛ որ ես երբեմըն վերցնեմ
Գանգուրներուն վրա բողիս գինվո բաժակըս փըրփուրն:

Երկարատև և ապարդյուն հույսերից հետո հայկական հարցի
գերեզման իջնելը, ազգային բուրժուազիայի սնանկ անճա-
րակությունն ու վատասերվածությունը, եվրոպական դիպլո-
մատիայի հայտնի դառնալը մի կողմից, բուրժուական հե-
ղափոխության, ինչպես նաև եվրոպական բանվորական կու-
սակցությունների վատասերվելը՝ մյուս կողմից, — ահա հան-
գամանքներ, որոնք բանաստեղծին մատնեցին ծայրահեղ
հուսահատության: Մնում էր նրան արձանագրել փաստը, որ

Կա՛լ էր զայրույթն ամբոխին, տոնախըմբելը՝ վատթա՛ր

և ապա՝ հյուղը մտնել, մարել ճրագը, մարել և հույսը վերջին
և բախել նիրվանայի «աստղահեռ դռները»:

Այժմ կարծեմ հասկանալի կհնչեն այն տողերը, որոնցով
սկսվում էր բանաստեղծությունը.

Մարդիկներն ծանակված մահաբաղձիկ տրտմութունս
Հանճար մը լոկ իր գութով կրնա վայրկյան մ'ըսփոփել:

Եվ ապա բանաստեղծը գրում է.

Ո՛վ Տեսանող, թե ունի երջանկությունը գաղտնիք,
Թե կըրնամ ես պընդանալ մըտածումով մ'անծանոթ,
Վերքերս օծել նոր աստղի մը մեղրակաթ շողունով,
Ըսպիանալ թե կըրնամ, թե կըրնամ ես զըմբռնվի,
Հայտնե՛ ինձի... Սակայն դու աստվածորե՛ն կըլտես.
Լուսացայտ մատող միայն ինձ ցույց կու տա զոհանկեր
Պարանը սուրբ՝ զոր քու մահոյ իմ վախճանիս կըտակեց.
Կըհասկընամ թե անոր շուրջը լինով է միայն
Որ սիրտս ըսփոփեքը կ'ըլլա, վիշաբս գաղտնիքը անոր...

Սակայն բանաստեղծը դեռ կոչված էր ապրելու... նա
լլալովեց «զոհանվեր պարանիս»: Իրեն սնուցող ժողովրդի
նման նա էլ կոտորածի և արյունահեղութիւնի ամեն մի թե-
կուզ կարճատև դադարի ժամանակ կարողացավ նորից շըտ-
կել իր վայրահակ գլուխը և երգեց ոչ այլ ինչ, քան հենց իր
գլխահակ ժողովրդի շտկումը, նրա խաղաղ, շինարարական
աշխատանքը, նրա հերկն ու ցանը, հունձքն ու կալսումը:

Խոսքը Վարուժանի հետմահու հրատարակութիւնի՝ «Հացին
երգի» մասին է:

Երգերի այս շարքը առերևույթ կարող է հակասական
թվալ մեր այն թեզի, ըստ որի Վարուժանի ամբողջ պոեզիան
արդյունք է հոգեկան երկկողմանի պառակտութիւնի: Կարծեք
թե «Հացին երգը» այդ պառակտութիւնից գուրս է մնում:

Բայց, ըստ էության, «Հացին երգը» նույնպես այլ բան
չէ, քան բանաստեղծի երկփեղկված հոգու նույնպիսի մի ար-
տահայտություն, երբ մի կարճ դադարով Վարուժանից դուրս» ե-
ղած ներհակությունները եթե չէին լուծվել, գոնե դադարել
էին սրութեամբ հանդես գալուց, երբ սուլթանական ռեակ-
ցիոն քաղաքականությունը կարծես թե մի պահ խաղաղվել
էր՝ նման վայրի ծովի այն անավոր խաղաղությանը, որին
անմիջապես հաջորդում է ամենհի և մարգարեալ փոթորիկը:
«Հացին երգը» արդյունք է հենց այդ անավոր խաղաղու-
թիւնի:

Սրբի փայլից, հրագեներն որոտից հոգնած, արյան
կարկաշը լսելուց ձանձրացած, վրեժի և աստելութիւնի խոսքեր
կայծագրելուց խոնջացած պահ մի հանգստանալու համար
նստում է «կալին մեջ, զով շուքին տակ ուռիին» ու ծնվում են
այս «նվագները»:

«Հացին երգը» նշանակալի երևույթ է հայ գրականութիւնի
և ո՛չ միայն հայ գրականութիւնի մեջ: Վերհարնի օրինակով
վարուժանը կերտեց, եթե կարելի է ասել, արժանապատեան լի-
րիկայի հրաշալի նմուշներ:

Մի ամբողջ պրոցես կա «Հացին երգի» մեջ, հացի ար-
տադրութիւնի պրոցեսը՝ արտը հերկելուց մինչև ցորենը ա-
ղորիք տանելը, աղալը, հացը թխելը և հացը «հայրենի սե-
ղանի» վրա բազմելը: Դժբախտաբար, սակայն վարուժանի
եղեղնական մահով ընդհատվեց այս շարքի ավարտումը՝ այն
հասցնելով մինչև «Աղորիք»: Բանաստեղծի թղթերի մեջ
պահված տեղեկություններից երևում է, որ դեռ պետք է գրե-
վեին «Ալյուր», «Ախոռը», «Թթխմորը», «Փուռը», «Հայրենի
սեղան» և «Հացին երգը» բանաստեղծությունները, որով և
շարքը ամբողջապես կավարտվեր:

Շարքի ամենահիմնական արժանիքը նկարեն պատկեր-
ների կերտման կարողությունն է: Կարելի է առանց չափա-
զանցությունների մեջ ընկնելու պնդել, որ այստեղ ո՛չ այն-
քան բանաստեղծություն կա, որքան քանդակագործություն:
Բանաստեղծը ո՛չ այնքան գրում է, որքան նկարում: Ամենայն
հեշտությամբ այդ բանաստեղծություններից յուրաքանչյուրը
կարելի է տեղափոխել կտավի վրա և կամ էկրանի: Եվ իր
այդպիսի նկարագրական կարողությամբ վարուժանը հիրավի
ապշեցնում է ընթերցողին: Ահավաստիկ մի օրինակ՝ «Փուռը»:

Իրիկան մեջ, գլուխն քով,
Կըմբըմընչե գունն սուրի տակ շքեղ:
Ջայն կըլեցնե աղբուրն երգովը բլուրեղ,
Աստղը՝ բլուրեղ արցունքով:

Խորհուրդին մեջ ըստվերին
Կընձեքի չինջ ավազան մ'է կարծես ան՝
Ուր քաղցրորեն կըմբկըրով լուսընկան՝
Տըզու մը պես նորածին:

Հոգնաբեկ խումբն եզներուն
Հոն կըղիմն արահետեն ճախճախուտ՝
Ուրկե կ'հոսի, ճապաղելով, ջուրն անփույթ՝
Մարգերուն տակ՝ պըսպըղուն:

Կողեր կողի դեմ ահա՛,
Եվ գավակներ գավակներու կընդհարին.
Հանկարծ մոլուցք մ'եղջյուրներու ահագին
Կըտատանի գուռին վրա:

Միահաղույն կերկարեն
Վիզերն իրենց. և ոունգերնին հարդամած
Հըստակ ջուրին աղամանդին մեջ մըխած՝
Հավերժորեն՝ կըխըմեն:

Կ'ըմպեն ալիքն անապակ,
Լույս ծյուրումը պարեխներուն սառնակերտ.
Ու շն՝ խըրտչիր լուսընկային՝ որ մերթ մերթ
Կ'լողա իրենց բերնին տակ:

Կըվերցընեն երբեմն, հա՛գ,
Հըզոր գլուխնին, ու կը նային սարերդ՛ան...
Կըստըստա իրենց դունչեն՝ քարերուն՝
Ջուրը, երակ առ երակ:

Անդեորդն, հոն, մահակին
Վըրա կըռթնած՝ կըսույն երգն հեշտօրոր,
Մինչև վետ վետ ցամքի հեղուկը բուրբ,
Մընա մամուռն՝ հատակին:

Կ'երթան հետո, օրորուն,
Գոմին խաղաղ գավիթին մեջ պառկելու,—
Կըկարկաչե գյուղամեջեն, գերթ առու,
Ջանգակն իրենց վիզերուն:

Ու երբ դարձյալ զան առտուն,
Պիտի գըտնեն հսկումին տակ ուռիին
Գուռը նորեն՝ լեցված երզովն աղբյուրին,
Եվ արցունքովն՝ աստղերուն:

Այնուհետև դուք հրաշալի մանրամասնությամբ պատկերացնում եք ձեր առաջ այդ նույն եզների քայլը դաշտում «Ծղջուրնին խրած արշալույսին մեջ» կամ ճարակելիս, գիշերվա

անդորրի մեջ, երբ հասած արտերի վրա իջել է «մանգաղված լուսինը», որտեղ «ճերմակ եզը կարծես կուռք մ' է՝ ձուլված լուսնի արծաթին մեջ»: Դուք տեսնում եք «կալերուն մեջ դեզը՝ ծեփված արևով՝ կարծես տնակ մը ոսկի»: դուք տեսնում եք այդ նույն դեզի կատարին քնած նորահարսին՝ «ծոցը բացված գեփյուռեն, ուր կըպարպե Հարդագողը կաթն իր սափոր առ սափոր»:

Դուք տեսնում եք

... անտաներ թուխ կողերուն վրա սարին՝
Արծաթահյուս բողի տակ,
Կապույտին մեջ, առանձին,
Կ'երթա ամպ մը կաթնորակ
Փափուկ բուրդեն ծըվեններ թողլով ժայռի կատարին:

Լսում եք ուռենու տակ հեծող աղբյուրի ձայնը, որի ջուրը չի ուզում մեռնել «իր ոռոգած ծաղկին» վրա: Պատկերանում է ձեր առաջ «աղորիքը», որը «փրփուր կըխամն ալյուր կըտեղա», դեպի որը ձգվում են սայլերը «ոսկով» (ցորենով) և ետ են վերադառնում՝ «լույսով» (ալյուրով) բեռնավորված:

Դուք զգում եք, թե ինչպես է տեղում անձրևը արտերի վրա, անձրևը, որ կարծես արցունք է՝ առաջացած կապույտի (Նրկնքի) «բուռն ծիծաղեն». տեսնում եք ցորենի առաջին ծիլը՝ հարսի «մատնեբուն բույրը վրան». զգում եք «ցորյանների մոլեգին ծովերի» անցումը. լսում եք, թե ինչպես

Միտը կ'երգե թառած հասկի մ'օրորուն՝
Մինչ իր տակեն ցորյաններու մուրգին
Ծովե՛ր կ'անցնին...

Ձգում եք «արտի ոսկին», տեսնում եք, որ «նման բոցերու ցորենն է բռնկեր՝ առանց այրելու»:

Տեսնում եք սերմանողին, մշակներին, «դաշտի հզոր գավակներին», «որոնց բրդոտ կուրծքին տակ կըբաբախե սիրան հողին», որոնց «քայլեն մայր երկիրը իր արգանդեն կրսառուտա, բայց չի խամբիլ ծիլ մը իսկ գարշապարնուն տակ հսկա» և այլն, և այլն, և այլն:

Նկարեն պատկերների նման վիրտուոզության հետ միասին «Հացին երգը» աչքի է ընկնում նաև մի այլ առանձնահատկություն: Ստեղծագործության նյութ դարձնելով հայ շինականին, նրա բեղմնավոր աշխատանքը, նրա հերկն ու ցանը, նրա հունձքն ու կալը, բնականաբար վարուժանը չէր կարող աչքի առաջ շունենալ հենց այդ շինականի բանավոր ստեղծագործության, ֆուլկլորի, հատկապես նրա աշխատանքային երգերի փորձը: Եվ արդարև «Հացին երգի» մեջ առավելագույն չափով երևում է ազդեցությունը հայ ֆուլկլորի, նրա պոետիկայի՝ և՛ անմիջապես, և՛ միջնորդաբար: Բանաստեղծական այնպիսի հրաշալի կտորներ, ինչպիսիք են «Յորյանի ծովեր», «Հունձք կրժողվեմ», «Կամսերգ», «Օրհնություն» և այլն գրված են ֆուլկլորի ուժեղ ազդեցությամբ, նրա պոետիկայի օրենքներով: Սակայն ֆուլկլորի ազդեցությունն առկա է նաև մի այլ ուղղությամբ, միջնորդաբար է իր կարելի է այսպես ասել: Նույնիսկ այնպիսի բանաստեղծական կտորների վրա, ինչպես «Աղորիքը», «Ճարակումը», «Ցանը», «Մշակները» և այլն, որոնք առավելապես հեղինակային խոսքեր են, քան բանաստեղծական նկարագրեր, — նրանց վրա անգամ զգացվում է ֆուլկլորային պարզունակ ոճը, խրթնաբանության իսպառ բացակայությունը:

Եվ դա միանգամայն հասկանալի է: Նյութը ինքնին իրենով պայմանավորում է ձևը, ֆորման: Թեմայի ճարտար ձևի հաջ է: Եվ այդ իմաստով էլ վարուժանի բնորոշ նյութըն ու թեման տվյալ դեպքում հարկադրաբար թելադրում են այսօրինակ ձևի կիրառում և ոչ, ասենք, այնպիսի վերամբարձ ոճ, ինչպես «Հեթանոս երգեր» ցիլկում, կամ այնպիսի հզոր և մարտական շունչ, ինչպես «Գողգոթայի ծաղիկներում» կամ «Ցեղին սրտի» համապատասխան կտորներում:

Վերադառնալով «Հացին երգի» մեջ արծարծված հիմնական գաղափարին, պետք է նշել, որ այն խաղաղ շինարար աշխատանքի, բեղուն վաստակի փառաբանումն է, որպես նույնպիսի հաճույքի և ուրախության աղբյուր, որպիսին բանաստեղծն իր նախորդ շրջանում որոնում էր «հեթանոս դարերի» մեջ: Այդ իմաստով «Հացին երգը» մի յուրօրինակ «Հեթանոս երգ» է և թող դա արտատայ շփվա:

Նույն աշխարհայեցության բարձունքներից է գիտված և՛ «Հացին երգը», և՛ «Հեթանոս երգերը»: Նույն աշխարհայեցության բարձունքներից, միայն թե տրամագծորեն իրար հակառակ դասավորված ասպարեզների դիտումը, նույն բարձունքներից հաճույքի և ուրախության, գեղեցիկի և վսեմի դիտումը մեկ՝ հեռավոր անցյալում, և ապա՝ ներկայում: Հաճույքի, ուրախության, կենսասիրության նույն ծարավը, որ բանաստեղծին՝ իր հոգեկան ներհակություններից ժամանակավորապես հանելով նետում է հեթանոս դարերի մեջ, հեթանոս կնոջ սրունքների առաջ, նույն ծարավն է նրան կրկին անգամ նետում, բայց այս անգամ հայ — և ինչու՞ միայն հայ — շինականի ակոսների մեջ, կալերում և աղորիքների առաջ:

Հոգեկան երկպառակտումից դուրս գալու մի ելք էր դասավորված, տանջանքներից, տիտանական լարվածությունից հոգնած բանաստեղծի խոնջանքը գյուղական խաղաղ անդորրանքի մեջ: Դա այն է, ինչ բանաստեղծը անվանում է «ցավն հաճույքին և հաճույքները ցավին» պատմելը: Եվ այդ է պատճառը, որ ինչպես «հեթանոս դարերի» մեջ, այնպես էլ շինականի հյուղում, նրա դեզի տակ, նրա կալի մեջ բանաստեղծը չի տեսնում, կամ խուսափում է տեսնել թշվառություն, գասակարգային հակամարտություն, տանջանք, ցավ: Որտեղ որ պետք էր նա ահավոր ատելություններ զգացել էր այդ ամենը, այդ հակամարտությունը, այդ ցավը, այդ թշվառությունը, այժմ միայն հաճույք, ուրախություն է պետք նրան, պետք է ճանույթ ցավին պատմելու ճամար:

Հենց այդ պատճառով էլ, ինչպես սխալվում էին նրանք, ովքեր «Հեթանոս երգերը» համարելով գովերգումն միջնորդային ֆեոդալիզմի՝ հեղինակին մեղադրում էին գասակարգային հակամարտություններ շտեմելու մեջ, ճիշտ այդպես էլ կսխալվեն նրանք, ովքեր «Հացին երգը» համարելով հայ շինականի արդար վաստակի ապրթեոզ՝ կպահանջեն հեղինակից գասակարգային հակամարտություն, հայ շինականի շահագործման փաստ:

Չպիտի մոռանալ, կրկնում ենք, որ խոսել բանաստեղծի, տվյալ դեպքում վարուժանի մասին, նշանակում է նկատի ու-

նենալ մի աշխարհ իր ուրույն կերպարանքով, երևույթների և նրանց շարժման իր օրենքներով, անհրաժեշտորեն սկզբնավորված և բնականորեն դեպի ավարտին ձգտող մի ուժ, որի առաջընթացը, վայրիվերումը, կամ խանգարումը օրգանապես պայմանավորված է արվեստագետի, տվյալ դեպքում բանաստեղծի պոետական բնավորության հետ՝ մի կողմից և նրա ապրած դարաշրջանի ու նրան շրջապատող միջավայրի փոխազդեցության հետ՝ մյուս կողմից:

Այդ տեսակետից էլ վարուժանի այս կամ այն գործի մասին խոսել, կամ դատել առանց նկատի ունենալու նրա բանաստեղծական աշխարհի հիմնական օրենքը, որով զարգանում, կերպավորվում և փոխակերպվում է նրա պոեզիան, — նշանակում է չհասկանալ նրա բանաստեղծական աշխարհի էությունը:

Ինչ վերաբերում է մեզ, ամփոփման կարգով նշենք, որ մենք վարուժանի բանաստեղծական աշխարհի այդ հիմնական օրենքը որոնելիս շեշտը դրեցինք նրա հոգեկան երկփեղկվածության վրա, նրա, իբրև հայ բանաստեղծի այն վիճակի վրա, երբ նա իր կամքից անկախ չէր կարող բռնել մի և թողնել մի այլ երևույթ, երգել մի և մոռանալ մի այլ աշխարհ, երբ մի երևույթի պատկերումը ինքնին ենթադրում էր նաև այդ երևույթին հակադիր մի այլ երևույթի պատկերում, երբ հաճույքի ըմբռնումում ինքնին ենթադրում էր ցավի գոյությունը և ընդհակառակը:

Այդ բխում է ո՛չ միայն բանաստեղծի «ինքն իր մեջ» ունեցած երկպառակտումից: Այդ դեպքում նրա վիճակը ելք կունենար: Այդ բխում էր նաև, որ և զլխավորն է, բանաստեղծից դուրս գոյություն ունեցող ներհակություններից, «իրենից դուրս» եղած պառակտումից, այլ կերպ ասած՝ դա պայմանավորում էր այն դարաշրջանով և այն միջավայրով, որի մեջ ապրում և ստեղծագործում է բանաստեղծը:

Գալով նրա կոնկրետ ստեղծագործություններին՝ մենք նրանց մեջ վեր հանեցինք հենց «իր մեջ» և «իրենից դուրս» եղած ներհակությունները, ցույց տալով, որ նրա ողջ պոեզիան հենց այդ երկփեղկվածությունների արդյունք է կամ այլ կերպ ասած՝ նա իր ամբողջ պոեզիայով պատմել է ոչ

այլ ինչ, քան «ցավն հաճույթին և հաճույթները ցավին» հասցնելով այն մինչև նրա վերջին ստեղծագործությունը, մինչև նրա «Հացին երգը», որով և ընդհատվում է նրա և՛ պոեզիայի, և՛ կյանքի թելը հենց այն նույն վայրի, բարբարոս ուժի ձեռքով, սուլթանական ռեակցիայի ձեռքով, որը հենց երկփեղկել էր նրա բանաստեղծական միաձույլ հոգին, աղարտել նրա անաղարտ ներշնչանքը:

Իր պոեզիայի այդ բնույթով և այդ որակով վարուժանը մեկն է հայ ամենամեծ բանաստեղծներից հենց այնքանով, որքանով կարողացավ դրսևորել հայ ժողովրդի և հայ բանաստեղծի ճակատագրի համար բնորոշ մեզ հայտնի երկվությունը, և մեկը հայ այն բանաստեղծներից, որոնք ոտնահարում են ազգային սահմանները՝ դեպի համաշխարհային գրականության սահմանները ելնելու համար, այնքանով, որքանով որ կարողանում են ելնել իրենց հոգեկան երկպառակտումներից, այնքանով, որքանով իրենց հոգեկան ներհակությունները լուծում են ազգայինից դեպի միջազգայինը, տեղականից դեպի համաշխարհայինը, մասնավորից դեպի ընդհանուրը, կոնկրետից դեպի վերացականը բարձրանալու իմաստով:

1945, փետրվար
Երևան

Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ ԾԱՆԱԳԱՐՉԻ ԿԵՍԻՆ

Համարյա թե բոլոր ժողովուրդների մեջ էլ եղել է ոչ այնքան գեղեցիկ մի թուլություն. ծնողները գերադասել են ունենալ արու զավակ, հակառակ դեպքում ինչ-որ ցավ են զգացել կամ ապրել հիասթափություն:

Այդ հիասթափությունն ու ցավը, հավանորեն, զգաց և Կապուտիկյան ընտանիքը, երբ 1919-ին իր հարկի տակ լույս աշխարհ եկավ մի աղջնակ:

Որտեղի՞ց իմանային նրա ծնողները, որ իրենք և ինքը բնությունը այդ աղջկա մեջ հասել են մի հազվագյուտ միացություն, — որ նրա հոգին թաթախված է կանացի քնքշության, իսկ սիրտը տրոփելու է առնական ուժգնության. որ նրա ձայնը հնչելու է կնոջական գորովագին մեղմությամբ և տղամարդկային հուժկու շեշտերով. որ նրա խոսքը կունենա մայրական բարեգուլ ելևէջ և հայրական ազդու խրոխտություն. որ նա պիտի լաց լինի՝ որպես կին, և ոգեկոչի՝ որպես այր կորովի. որ նրա հոգևոր կյանքը զարդարվելու է հայուհու ավանդական պարկեշտությամբ և հայրորդու անհանգիստ փնտրումներով...

Այսօր արդեն կարելի է ասել, որ այսպիսին դարձավ Ս. Կապուտիկյանը:

Երբ նոր երեխա է աշխարհ գալիս, ամեն ծնող ակամա միտք է անում. ի՞նչ դուրս կգա սրանից, ի՞նչ մարդ կդառնա և, վերջապես, ճիշտն է կապահի:

Կապուտիկյաններն ինչպե՞ս իմանային, որ իրենց նորածին աղջիկը պիտի բարի ժառանգ դառնա ոչ միայն իրենց համար, այլև մի ամբողջ ազգի. որ նա պահելու է ոչ միայն

նրանց, այլև նրանց պես հազարավորներին՝ առատաձեռն ծախսելով իր այն հարստությունը, որ այսօր կոչվում է դրամ կամ փող, իսկ մի ժամանակ կոչվում էր տաղանդ կամ քանքար...

Այսպիսին է այսօր Ս. Կապուտիկյանը:

Հայոց մայրերը դարեր շարունակ մի առանձին սիրով են պատրաստել իրենց դուստրերի օժիտը:

Կապուտիկյան մայրիկը այդ պիտի աներ հատուկ մի շուքով, քանի որ նա վանեցի էր, իսկ վանք հայտնի էր իր հարստությամբ: Բայց Կապուտիկյան մայրիկից խլեցին նրա ամենամեծ հարստությունը՝ վանքը:

Կապուտիկյան մայրիկը իր դստեր համար չկարողացավ շքեղ օժիտ սարքել, բայց այդ օժիտը պատրաստված էր բնության ձեռքով — և ամբողջ մի ժողովուրդ նրա անօժիտ դուստրին այսօր կոչում է օժտված...

Ս. Կապուտիկյանի օժտվածությունը երևաց նրա գրական առաջին իսկ քայլերից, երբ տակավին կարմիր փողկապավոր մի աղջիկ էր:

Այսօր արդեն կարելի է բարձրաձայն ասել այն, ինչ շատ-շատերս գիտեինք, բայց պարտավոր էինք չիմանալու տալու Այսօր արդեն կարող ենք ասել, որ այն ժամանակ մեր երկիրն ու գրականությունը ծանր տարիներ էին ապրում: Չբարեկարարողն Չարենցը: Ավելին՝ ոչ միայն չէր կարելի նրա անունը տալ, այլև նրան թաքուն կարգալը համարվում էր մի այնպիսի հանցանք, որ կարող էր կյանք արժենալ: Քնար-երգության գլխավոր տեսակը ներքողն էր, շափ ու սահման չճանաչող գովքը: Բառերն սկսել էին կորցնել իրենց արժեքը: Համեմատություններ կազմելու համար ոչ մի ջանք պետք էր — ինչը ինչի հետ կուզես համեմատիր, միայն թե ներշնչվիր — ինչը ինչի հետ կուզես համեմատիր, միայն թե ներբող ստացվիր: Դեռ չկային Գաբարիներն ու Տիտովները, բայց տիեզերքն արդեն գրավված էր շափածոյի հրթիռներով. չբավարարվելով երկրային հնարավորություններից՝ թալանում էին նաև տիեզերականը, միայն թե գովաբանեն, դրվատեն, ներբողեն: Մյուս կողմից էլ՝ կային հարյուրավոր բաներ, որոնց վրա տաբու էր դրված — չէր կարելի գործածել:

Վիշտ, ցավ, տխրութիւն, թախիծ և բազմաթիւ այլ համա-
նիշներ ու ազգակից բառեր ամբողջ 10—20 տարի բացառ-
ված էին մեր գրականութիւնից. ու եթե որևէ լեզվարանի
հաջողվի դրանք գործածված գտնել, ապա, անկասկած, իր-
բև բնորոշումն «անհիծյալ անցյալի»:

Սիրային ոտանավոր տպելն էլ դուրին էր նույնքան, որ-
քան միջնագարում պաշարված ամբողջ գրավելը...

Այդ տարիներին էր, ահա, որ հրապարակ իջավ Հ. Շիրա-
զը և արագորեն հասավ անհավատալի հաջողութիւնների:
Նրա առաջին իսկ քայլերի լայն արձագանքը պետք է պատ-
ճառարանել ոչ միայն նրա տաղանդով: Շիրազին գնահա-
տողները աչքաթող են արել մի կարևոր հանգամանք: Մար-
դիկ չէին կարող խոստովանել ու բարձրաձայն բողոքել,
բայց նրանք իսկապես որ հոգնել էին շափածո ճառերից,
անսանձ և հաճախ անհիմն գովքերից, նույն մեկ կամ մի
բանի թեմաների անվերջ կրկնութիւնից: Նյութի կրկնութիւ-
նը ջնջում է նաև ձայների տարբերութիւնը: Չհաշված մի
բանի ուժեղ անհատականութիւններ՝ մեր բազմաթիւ բա-
նաստեղծների ձայները խառնվել էին իրար—առանց ստորա-
գրութիւնը նայելու՝ անհնար էր ջոկել նրանց գրածները:

Այս աննախանձելի տարիներին էր ահա, որ Հ. Շիրազից
հետո գրականութիւնը դուները բախեցին Գ. Էմինը, Ս. Կա-
պուտիկյանը, Մ. Մարգարյանը, Հ. Սահյանը, Հր. Հովհան-
նիսյանը:

Մի շարքով օրենքով, կրկնում եմ, արգելված էր թախիծն
իր համանիշներով...

Վարուժանին՝ արդեն նահատակված ու դատական վարու-
ժանին իսկ չէին ներվում իր «Հեթանոս երգերը»:

Եվ հանկարծ հնչեց ձայնը մի կոմերիտուհու, որը դեռ ե-
րեկ իր ճաշակով հագնվելու և սանրվելու իրավունք իսկ
չուներ.

Հոգնած անեղ ուղիներից, արշալներից՝ պարտասուն,
ձակատներից սպիներ, և պսակներ, և արյուն,
ինչպես բեղվին ծարաված, որ տենչում է օազիս,
ձեղքելով ծով ու հողմեր՝ դուք դեպի ի՞նձ եք գալիս...
Եկե՛ք, և դուք եք ինչպես ելնում սոսիս զորքի դեմ՝

Կապելով՝ զենք ու զրահ, այնպես էլ ես կզինեմ
Ինձ իմ բոլոր թողբերով՝ հմայքներով իմ անշեշ,
Եկե՛ք, թեև հաստատ է ձեր ընթացքը ծովի մեջ,
Բայց ողնական իմ մարմնի ալիքներում դավադիր
ես կսուզեմ ձեր կամքի առագաստները պատիր.
Ես մագերիս գիշերում կպարտեմ փրկութիւն
Փարոսները ձեր բոլոր, որ շտանեք դուք ճամփան
Դեպի այնտե՛ղ, դեպի ա՛փ, որ խավարում իմ հրե
Ձեր փրկութիւն ուղեցույց՝ վերջին ճրագը մարե:

Սիւվա Կապուտակյանն էր:

Տասնամյակներ հետո, ընդամենը վերջերս Ս. Կապու-
տիկյանը գրեց.

Իմ կյանքը անցավ ծափ ու ծաղիկ մեջ,
Ես անշափ դուրին հասա երազիս.
Ես՝ տասնչորսամյա պատանի հազիվ,
Ինձ անվանեցին արդեն բանաստեղծ:
Անարգել եղավ ուղին իմ երգի,
Ամաշելու շափ հեշտ ու հաշտ եղավ...

Ճշմարտութիւն կա այս տողերի մեջ: Ծիշտ է, որ Ս. Կա-
պուտիկյանը մեր այն բանաստեղծներից է, որոնց գրական
ճանապարհը համեմատաբար անարգել է եղել:

Ս. Կապուտիկյանն իր բանաստեղծութիւնների առաջին
գրքույկը խորագրեց «Օրերի հետ» արտահայտութեամբ:
Պատահական վերնագիր չէր դա, այլ հատկանշական: Այն
տարիներին մեր ոտանավորների մեծ մասը, թող թույլ տրվի
ասել, օրացուցային էր, առիթային: Ինչքա՛ն ասեք «Մայիսի
մեկ», «Նոյեմբերյան», «Հոկտեմբերյան» «Տարեմուտի»,
«Կ. բանակի», ինչքան ասեք օրվա հերոսներ՝ Չկալովից
մինչև Մարիամ Մարտիրոսյան: Այսպես «Օրերի հետ» կա-
րելի էր խորագրել նաև մեր ընդհանուր արտադրանքի այն
մեծ պատառը, որ հիմա չի ուսվում՝ ոչ մի աղով ու համե-
մով: Ս. Կապուտիկյանի «Օրերի հետ» գրքույկն էլ զերծ չէր
այդ «պարտադիր ասորտիմենտ»-ից: Բայց ուրախալին ու
նշանակալին այն էր, որ այդ գրքույկի լավագույն բանաս-
տեղծութիւնները քայլելով օրերի հետ՝ օրերի հետ էլ շան-
ցան, որովհետև ներկայացնում էին օրերի մնայուն շարժա-

որքները, և ոչ թե հավուր-պատշաճութունը: Բանաստեղծուհին, ի տարբերություն իր շատ ու շատ գրչակիցների, գալիս էր կյանքից և ոչ թե գրքերից: Գալիս էր, որպեսզի ետ շնաօրերից, օրերին համաքայլ ընթանա, այլ կերպ ասած՝ ոչ թե կյանքը ձևի տաղաչափական կաղապարների վրա, այլ բանաստեղծությունը ձևի կյանքի վրա:

Բանաստեղծական այս սկզբունքը Ս. Կապուտիկյանը հաստատեց իր հետագա ժողովածուների մեջ՝ «Զանգվի ակիին» գրքույկում, «Իմ հարազատների» էջերին, «Արտաբաց զրույց»-ի ժամանակ, «Բարի երթ»-ի ճանապարհներին:

Գրական այս ճիշտ ուղին էր, որ Ս. Կապուտիկյանին հասցրեց բանաստեղծի համար բաղձալի հանգրվանը՝ ընթերցողի սրտին:

Ս. Կապուտիկյանը մեկն էր այն սակավաթիվ հայ գրողներից, ովքեր դափնեկիրը դարձան մի մրցանակաբաշխության, որը ժամանակին բարձրագույնն էր համարվում: «Իմ հարազատները» ժողովածուով նա հասավ համամիութենական հռչակի: Այդ օրվանից ի վեր նրա ձայնը հնչեց ոուս լեզվով, մոտակա և հեռակա մյուս ժողովուրդների լեզուներով: Այսուհետև արդեն հայ բանաստեղծուհուն իրենց սրբտուն օթեան տվին ոչ միայն նրա հայրենակիցներն ու ազգակիցները, այլև ուրիշ ազգեր ու ժողովուրդներ՝ յուրաքանչյուրն ըստ օրինաց յուրեանց, բայց բոլորն էլ՝ անբռնադատ և սիրահոժար:

Այս է այն միակ և ճշմարիտ ճանապարհը, որը՝ ինչպես որսաստեղծների արահետը, չի ընդհատվում՝ հասնելով վիհի կամ դեմ առնելով անանցանելի քարափի:

Բայց Ս. Կապուտիկյանը, ինչպես ամեն մի իսկական բանաստեղծ, առաջին հերթին ազգային բանաստեղծ է, տրվյալ գեպքում՝ հայ բանաստեղծ: Հայ— ոչ միայն իր մեսրոպատառ խոսքով, այլև իր մտածողության եղանակով: Հայ— ոչ միայն ազգային թեմաներով (ինչը, շտապելով ասեմ՝ դյուրին է շարաշահել), այլև իր ներաշխարհի ամբողջ տուրևառություններով: Հայ— ոչ միայն իր անձնագրով, այլև իր հոգով, ոչ միայն ազգանվամբ, այլև իր ոգով— ոչ թե «թե»-ով, այլ «է»-ով:

Ընդհանրապես հայրենասեր չեն ծնվում, ինչպես որ չեն ծնվում ատամներով: Հայրենասեր դառնում են, ինչպես որ ատամ են հանում:

Բայց ճշմարիտ բանաստեղծը հայրենասեր ծնվում է, ինչպես որ պատահում են նաև ատամնավոր նորածիններ:

Կաթնատամները թափվում են, որպեսզի փոխարինվեն իրենց առավել ամուր ու երկարակյաց տեսակով:

Դրանից հետո է միայն դուրս գալիս նաև իմաստության ատամը:

Ս. Կապուտիկյան— հայրենասերը հենց այդ տարիքն է ապրում:

Այս պատճառով էլ բնական ու բնականոն է, որ նրա անունը օր-ավուր ավելի հաճախ և առավել բարձր է հնչում մեր բեմերից ու մեր սրտերում, մեր դասագրքերից ու մեր հոգիների մեջ, մեր Արտաշատից և Հալեպում, մեր Դվինից և Կահիրեում, մեր Արմավիրից և Բեյրութում, մեր Երևանից և Փարիզում:

Ճշմարիտ բանաստեղծները իրենց հայտագիրը տալիս են միանգամից, իրենց առաջին իսկ գրքույկի մեջ՝ ճիշտ այնպես, ինչպես սաղմի մեջ արդեն նրաշխավորված է մարդու ապագա խառնվածքն իր բաժնեմասերով, առաքինություններով ու թուլություններով: Միայն թե կյանքի այս կամ այն փուլում, այս կամ այն շրջանում բանաստեղծի ընդհանուր հայտագրի մասերից մեկը դրսևորվում է առավել լրիվությամբ, ինչպես որ նվազախմբի մեջ առավել հնչողություն է ստանում այս կամ այն գործիքը:

Եվ որովհետև Ս. Կապուտիկյանը բանաստեղծ էր ի ծնե, ապա իր բոլոր գրքույկների մեջ նա, հավատարիմ իր հայտագրին, նման է ինքն իրեն, բայց յուրաքանչյուր նոր գրքի մեջ առավել ամբողջական է արտահայտում իր խառնվածքի այս կամ այն մասը:

Նայելով այս տեսակետից՝ նրա այս վերջին գրքույկը իր մեջ չունի որևէ «թեմա», որ եղած չլիներ «Օրերի հետ» գրքույկի մեջ, թեպետ նրանց միջև ընկած է քառորդադարյա մի ճանապարհ: Ճշմարիտ բանաստեղծը թեմաներ չէ, որ

փոխում է, և նրա աճը այդ կերպ չէ, որ դրսևորվում է: Սակայն այս չի արդարացնում այն թերատ բանաստեղծներին կամ բանաստեղծների այն թերատությունը, որ արտահայտվում է ինքն իրեն կրկնելով:

Երկաթե պայտերն անգամ վաղ թե ուշ պոկվում ընկնում են, Բայց Պեգաս ձիու պայտերը պիտի պոկվեն ոչ թե կապի վրա՝ տեղում դոփելուց, այլ վազքից: Եվ այդ վազքը պիտի չկատարվի նաև ձիարշավարանում, այսինքն՝ նո՛ւյն, կրկնվա՞ղ վազքով:

Միշտ լինելով ինքն իրեն հետ, հար մնալով իրեն հավատարիմ՝ Ս. Կապուտիկյանը փոխվել է գրքից-գիրք, աճել, հասունացել, փթթել: Այս իմաստով նրա գրքերը նման են նկարչական այն ալբոմին, ուր շարունակաբար դրված են միևնույն անձի նկարները՝ իր կյանքի տարբեր շրջաններում— սկսած երեխայությունից մինչև ծերությունը: Այդ նկարները չեն կարող իրար նման չլինել, որովհետև ներկայացնում են միևնույն անձնավորությունը: Բայց նրանք չեն կարող նաև իրարից չտարբերվել, քանի որ նկարվողն ինքը փոխվել է տարիների ընթացքում:

Ինչքան մոտ են տարիները՝ այնքան նկարները ավելի են հիշեցնում իրար: Եվ ընդհակառակը՝ բացառված չէ, որ պատանություն պատկերող նկարը տարեց հասակ պատկերող նկարի կողքին համարյա անճանաչելիություն ներկայացնի:

Ս. Կապուտիկյանի գրքույկները, որ նրա «անձնական ալբոմն» են ներկայացնում, լեցուն չեն մեկ և նույն նկարով: Ի պատիվ նրա և հուրախություն մեր նրա նկարները փոխվել են՝ երբեք չհասցնելով անճանաչելիության:

Այսօրվա Ս. Կապուտիկյանին լավ ճանաչելու, նրա ապրած աճն ու հասունացումը տեսնելու համար ես պիտի ցույց տամ մի քանի «երեկվա լուսանկար»:

Արդեն հիշեցրեցի, որ Ս. Կապուտիկյանի հանդես գալուց առաջ սիրային բանաստեղծություն տպելն էլ մեծ հանդրգնություն էր: Կարելի է ասել, որ սիրային բանաստեղծությունները համարյա թե բացակայում էին: Կարելի է այսպես ասել: Բայց չափազանցնող չլինելու համար ասե՛ք, որ այդ-

պիսի ոտանավորներ կային, բայց դրանք ըստ մեծի մասի դրվում էին... երրորդ դեմքով: Սիրային բանաստեղծություն— երրորդ դեմքով:

Միծաղելի է հնչում, բայց այդպես էր մեր երեկը:

Բանաստեղծը տաղտկալի նկարագրում էր օղակավարի և օղակավարուհու կամ տրակտորիստի և հնձվորուհու սերը, Երկարացնե՞մ...

Կար սիրային բանաստեղծության մի այլ տեսակ էլ: Ու եթե առաջին տեսակը («երրորդ դեմքայինը») այսօր արդեն, բարեբախտաբար, ամոթից մկան ծակն է ծախ առնում, այս տեսակը շարունակում է աքլորային գոռոզությանը շրջել գրքից-գիրք:

Այս տեսակը «ես»-ով է խոսում, բայց այդ «ես»-ի տակ ոչ «ես» կա, ոչ «մենք»:

Դա բառային մի շխալ-շփոթ է, ուր «ես»-ը ունի խառնող գրալի դեր և խառնում է յարը, կրծքի ճուրբ, այտերի վարդը...

Սա մի պոեզիա է, որին պակասում է ամենատարրական բանը՝ ճաշակը — «Վա՛յ քու կորցրնողին ըլի»:

Սա մի սիրերգություն է, որ զուրկ է, իսպա՛ն զրկված է ամենակարևորից— սիրերգություն է՝ առանց հոգեբանության, մարդ՝ առանց հոգու...

Ինչպե՞ս բացատրել այս երևույթը:

Չարենցի կորուստը և ժամանակավոր լուսությունը մեր պոեզիային պատճառեց այնպիսի ավերածություն, որի իսկական գիտակցմանը թերևս չենք հասել տակավին:

Արևմտահայ բանաստեղծությունը, իր փայլուն ներկայացուցիչներով, հարգի չէր: Կոմունիստ և պետական մեծ գործիչ լինելն իսկ անմիջապես չօգնեց Տերյանին՝ ազատվելու հերթական «իզմ»-ի կեռից. երկար ժամանակ Տերյանին էլ էին «քննադատաբար յուրացնում»:

Եվ ստացվեց մի տարօրինակ բան, որի համար ինչքան էլ բացատրություններ ճարվեն՝ այնուամենայնիվ պիտի անհասկանալի մնա: Գուրյան ու Տերյան, Մեծարենց ու Վարուժան, Իսահակյան ու Թեքեյան վայելած ժողովրդին (այլևս չասած Չարենցի մասին) միանգամից զցցեցին Հովհաննես

Քլկուրանցու և Գրիգորիս Աղթամարցու ժամանակները: Վարդի ու բլբուլը (նույնիսկ ոչ սոխակը), ծոցի շամաման ու թշերի խնձորը, եղնիկներն ու պախրաները, առյուծներն ու վազրերը— ի՛նչ երկարացնեմ.— քնարերգության ասպարեզը փոխարկվեց մի կատարյալ Որսասարի, որտեղ բանաստեղծները սկսեցին որս անել նետ-ազեղով ու տեղ-նիզակով: Աշուղությունն ու սազանդարությունը սկսեց արյան վրեժ լուծել գրականությանից: Հետամնացությանը իրեն վերանվանեց ժողովրդականություն: Գեղեցիկ բառերն իրենց ծանրության տակ սպանեցին ճշմարիտ գեղեցիկին: Օր-ցերեկով պղինձը ծախվեց ոսկու տեղ և շիբը՝ շաքարի— գույնը վճռական դեր էր կատարում...

Ս. Կապուտիկյանը պիտի իր առաջին քայլերն աներ ահա այս պայմաններում: Եվ նա զերծ չմնաց այդ ընդհանուր վարակից: Պահվել են այդ օրերի «լուսանկարները»: Ահա նրանցից մեկը.

Աղբյուրնե՛ր, էդ ո՛ւր կերթաք,
Ա՛խ, էնպես մաքո՛ւր կերթաք,
Աշխարհում ճամփա ընկած՝
Զվարթ ու փրփուր կերթաք:
Ձեր զուլալ ջրերի մեջ
Թափեցի արցունքս տաք,
Հառաչս առել ձեր մեջ՝
Աղբյուրնե՛ր, տխո՛ւր կերթաք:
.....

Կամ

— Ա՛յ աղբյուր, ս՛ւր ես գնում,
Վա՛յ աղբյուր՝ ս՛ւր ես գնում,
Մովերում, ծովերի մեջ
Կկորչես, զո՛ւր ես գնում:

— Դաշտերում պապակ ու կեղ
Մաղիկներն ինձ են մեռում,
Դաշտերին տառում եմ ես,
Հով ու զով շտր եմ տանում:
.....

Ինչպես տեսնում եք՝ այստեղ Ս. Կապուտիկյան չկա— ո՛չ նրա ձայնն է, ո՛չ նրա քայլվածքը: Ասում եմ քայլված-

քը», որովհետև ճշմարիտ բանաստեղծը ոչ միայն սեփական ձայնն պիտի ունենա, այլև սեփական քայլվածք ունենա: Այստեղ այն է, ինչ մեքենավարներն ասում են «ուռերեն»՝ ХОЛОСТЫМ ХОДОМ— բառերի թավալում է վերևից ներքև, չի ծախսվում վառելանյութ-բենզին, չի փոխադրվում ոչ մի օդատակար բեռ:

Այսպես աշակերտներն են պատմում՝ ուսուցչի կամ դասադրքի բառերով, և պատանին է այսպես խոստովանում՝ օտարից առած քաղվածքով:

Եվ հանդիմանության տեղ շկա այստեղ, մանավանդ որ այդ նույն պատանին մյուս օրն իսկ կարող է հոգին բաց անել իր սեփական խոսքերով: Կարևոր է, որ հոգի լինի և այդ հոգին՝ լի:

Ս. Կապուտիկյանն ունե՛ր հոգի և լեցո՛ւն հոգի: Եվ չէր կարող շխտել իր սեփական բառերով: Եվ չէր կարող շունենալ իր սեփական քայլվածքը:

Ես արդեն ցույց տվի այս կարգի «լուսանկարներից» մեկը՝ «Կլեոպատրան»:

Ահա և մեկ ուրիշը.

Երբ երջանիկ՝ փայփայում եմ քեզ իմ լանդին,
Երբ կոացած տառիկներդ եմ սրբում ցեխոտ՝
Այրո՛ւմ է ինձ հանկարծ երգի խենթ մի կարոտ,
Ու քեզ թողած՝ հանձնվում եմ նրա կանչին:

Երբ երգելով վերանո՛ւմ եմ այս աշխարհից,
Երբ ներշնչող ուրիշ մի ոս՛ր է ինձ դուրբում,
Քո ճիշտ ինձ վա՛ր է բերում երկինքներից,
Քո կարոտը կանչում է ե՛տ, կանչում է տան:

Մերթ գերին եմ քո մանկամիտ քմայքների,
Մերթ սավառնո՛ւմ եմ աշխարհով՝ մոռացած քեզ.
Ա՛խ, երգը ինձ շթողե՛ց որ մայր դառնայի,
Դու շթողի՛ր, որ բանաստե՛ղծ դառնայի ես...

Այս արդեն Ս. Կապուտիկյանն է իր ձայնով և իր քայլվածքով:

Այսուհետև նա այլևս պոեզիա չի խաղա— նա պիտի պոեզիա ստեղծի: Այսուհետև նա այլևս չի դիմի էժան ոճա-

վորման, ինչ է թե հարգի է «ժողովրդային» բառը՝ այն էլ սխալ ըմբռնումով: Իսկ եթե երբևէ դիմի ոճավորման, ապա պիտի ստեղծի ահա թե ինչ:
Թույլ տվեք կարդալ այդ «ոճավորման» օրինակը.

Մեր վարդավառին աղբյուրներն ընկած էն աղբիկների
եւեթութիւնը և խի՛նդը կա իմ մեջ,
Նրանց շուրթերի կծաբերանից թափվող ծիծաղը:
Տաք շուրջպարերում փոխնփոխ ասվող սուր քառյակների
Տենդը կա իմ մեջ,
էն թեթև ու խն բառերի խաղը...
Բայց դժվար ժամին՝
Ի շնամու դիմաց շիպ-շիտակ կանգնող,
Ի խոսամոր նման՝ իր որբուկներին թեկ տակ առնող,
Փոքրիկ, բայց համառ հալ մամիկների սիրտը կա իմ մեջ,
Նրանց ցասումը, նրանց կորո՛վը:

Հոյակապ է: Այնքան հոյակապ, որ մեղք է այսպես ասած՝ վերլուծել: Ի դեպ՝ այս «վերլուծման» մասին:

Հանձն առնելով Ս. Կապուտիկյանի նոր գրքի քննարկմանը զեկուցող դառնալ՝ ես բնավ էլ մտադրութիւն չեմ ունեցել վերլուծել այդ գիրքը՝ ինչպես դա պահանջվում է ուսանողից կամ ուսուցանողից: Իմ պարտավորութիւնը ես հասկանում եմ իբրև փոքր-ինչ երկարացված բացման խոսք կամ մի քար, որ նետում են ոչ թե ջրհորը («հարյուր խելոք հավաքվեն՝ չհանեն»), այլ լիճը — որպեսզի ալիքներին հաջորդեն ալիքները և գնալով ծավալվեն: Այլապես չի արդարացվի «քննարկում»-ը, այն էլ ոչ թե ինչ-որ դպրոցում, այլ Գրողների միութեան դահլիճում:

Եվ, բնականաբար, եթե լիճը իմը չէ, ապա քարը չի կարող իմը չլինել: Ուզում եմ ասել՝ ես չեմ կարող չմատնել իմ ճաշակն ու ըմբռնումը, իմ մտածածն ու զգացածը, իմ հույսերն ու տագնապները, այսինքն՝ պիտի խոսեմ ոչ միայն «մասին»-ով, այլև «առթիվ», ոչ միայն «վերաբերյալ»-ով, այլև «շուրջ»:

Այս «ինքնապահովագրումից» հետո վերադառնանք Ս. Կա-

պուտիկյանի սիրերգութեանը, որ նրա հայտագրի կարեօր կետերից մեկն է եղել ու կա:

Ս. Կապուտիկյանը առաջիններից մեկն է այն խմբում, որոնց մեծ ծառայութիւնը այսօր արդեն անուրանալի է: Նըրանք նորից կյանք ու անձնագիր տվին մեր սիրերգութեանը՝ ընդդեմ աշուղական «նեյնիմ»-ների և հարեմական ախուվախի: Նրանք ստեղծեցին մեր սովետահայ իսկական սիրերգութիւնը, հոգեբանական սիրերգութիւնը:

Եվ այս գործում, կրկնում եմ, Ս. Կապուտիկյանի դերը պարզապես առաջնակարգ է:

Եվ, ինչքան էլ տարօրինակ թվա, բանաստեղծուհուն ամենից շատ հարվածել են հենց այն բանի համար, ինչը նրա մեծագույն ծառայութիւնն է մեր արդի քնարերգութեանը:

Ես հիմա չեմ կարդալու նրա լավագույն սիրային քերթվածքները: Այսօր իսկ կարդացողներ կլինեն, և լավ կարդացողներ:

Ես պիտի կարդամ նրա սիրային բանաստեղծութիւններից մեկը, որը լավագույններից չէ, բայց խոսք ու վեհի տարեկա է դարձել:

Ինձ միշտ թվում է՝ տեսնեմ թե քեզ,
Դեմդ կվազեմ ես մանկացած,
Կկանգնեմ երկար՝ դուրթվածի պես,
Կնայեմ խոնարհ ու կարոտած:

Բայց երբ գալիս ես հեռից դանդաղ,
Հպարտ ձգվում է գլուխս վեր,
Ժպտուն բարեղ ստնում եմ պաղ,
Քայլում, անցնում եմ ես անտարբեր:

Ու դեռ թվում է՝ սեանեմ թե քեզ,
Կբացեմ քո դեմ սիրտս լոխ,
Ու խոսքեր կասեմ, շեղյալ խոսքեր՝
Լուսավոր, քնքո՛ւշ, երազային:

Բայց հանդիպելիս՝ ես խենթ ու հեշտ
Խոսքեր եմ նետում, ժպտում, խայթում,
Ու կատակում եմ ես անհամեստ,
Ու ծիծաղում եմ բաց ու հանդուգն:

Գու լոնցրո՞ւ ինձ, դու լոնցրո՞ւ.
Ա՛ն ձեռքերիդ մեջ դու տիրաբար
Գլուխս, ուժով խոնարհեցրու
Եվ աչքերիս մե՛ջ նայիր անբառ:

Նայի՛ր, խո՛ր նայիր, նայիր երկա՛ր...:

Այստեղ էլ ոմանք ինչ-որ «անվայել» բան աշխատեցին տեսնել, ինչպես առավել «անվայել» բան էին տեսել «Տագնապ»-ի մեջ.

Եվ վանող, և այնպես մոգական
Ուրիշ զույգ աչքեր են նայում ինձ.
— Դու՞թե՛ք ինձ, աչիկե՛ք իմ մանկան,
Զթեքե՛մ հայացքս ձեզանից:

Եվ տանջո՞ւ, և բարե՛, և շարկա՛մ,
Ուրիշ զույգ ձեռքե՛ր են կանչում ինձ.
— Գրկե՛ք ինձ, թաթիկե՛ք իմ մանկան,
Ա՛խ, հանկարծ չպոկվե՛մ ձեզանից:

Զորեզորո՞վ է անցնում երբեմն
Մաքրության կածանը բյուրեղյա.
— Բռնի՛ր ինձ, պահի՛ր ինձ, փրկի՛ր ինձ,
Փրկի՛ր ինձ, իմ հզո՛ր երեխա...:

Կարծր հոգի պիտի ունենալ այսպիսի բանաստեղծությունների մեջ «անվայել» բան տեսնելու համար: Եվ պետք է լինել վա՛տ հոգեբան: Ասում եմ և ընդգծում՝ «վատ հոգեբան», որովհետև գերադասելի է բնավ հոգեբան չլինելը, քան վատ հոգեբանը, ինչպես որ բնավ բժիշկ չլինելուց ոչ մեկը չի մեռել, իսկ վատ բժիշկը շատերին կարող է «էն աշխարհն» ուղարկել:

Այս վատ հոգեբաններին խանգարում է նաև այն նախապաշարմունքը, թե սիրային բանաստեղծությունը պիտի միայն հավատարմության մասին գոռա ու բոռա:

Շատ շափանիչներ կարելի է հարմարեցնել քնարերգությանը, բայց կարելի է նաև չկասկածել, որ լավագույն շափանիչը՝ եղել ու մնում է անկեղծաբյուր: Բանաստեղծի համար անկեղծությունն ու մեծությունը ուղիղ համեմատա-

կան են: Կան հիանալի սիրերգակներ, որ ունեն միայն մի լար՝ հավատարմություն ասենք՝ կամ, դիցուք, մերժվածություն: Նրանք կարող են իրենց բնագավառում անկրկնելի լինել, բայց նրանցից անկասկած մեծ պիտի դառնա այն մյուսը, որ նվագում է մի քանի լարերի վրա:

Ս. Կապուտիկյան սիրերգակը միալար չէ: Նրա սիրային գիրքը լեցուն է իրարամերժ բանաստեղծություններով: Եվ դա է լավը: Հո չի կարելի ինքն իրեն աղքատացնել՝ ուրիշներին դուր գալու համար: Ս. Կապուտիկյանը քաջ գիտակցում է դա և գնալով ավելի ու ավելի է բացում իր հոգին, ավելի ու ավելի է անկեղծանում՝ չվախենալով անպարկեշտ կոշիկելու ամբաստանությունից: Լավ է ասել Բ. Շոուն, թե բանաստեղծները «բարձրաձայն խոսում են իրենք իրենց հետ, իսկ աշխարհն ականջ է դնում»:

Կան բանաստեղծներ, որ առաջնորդվում են այս ճշմարիտ դիտողության վերջին մասով: Իմանալով, որ «աշխարհըն ալկանջ է դնում»՝ նրանք «նախապատրաստվում են», դիրք ու կեցվածք ընդունում, ասես հեռուստատեսության կայանում լինեն: Այսպիսիները ուրիշ մտահոգություն չունեն, բացի դուր գալուց: Ամե՛ն կերպ դուր գալ: Բայց ճըշմարիտ-իրավ բանաստեղծի մտքովն էլ չի անցնում դուր գալը— սիրողը կսիրի, այսօ՛ր, թե վաղը, նրա հոգը չէ: Նա իմանալով իսկ մոռանում է, թե «աշխարհն ականջ է դնում»: Նա առաջնորդվում է Շոուի դիտողության առաջին մասով՝ «բարձրաձայն խոսում է ինքն իրեն հետ»:

Եվ որքան անկեղծ է, որքան իսկապես ձիքն իրեն հետ է այդ խոսակցությունը, որքան մոռացություն է տրված ականջ դնող աշխարհը», այնքան մեծ է բանաստեղծը, այնքան ավելի կգնահատվի նա՝ եթե ոչ այսօր (որ այնքան էլ կարևոր չէ), որքան վաղը (որ վճռականն է): Խնդրում եմ լսեք.

Ո՛չ, դու կին էիր ծնվել աշխարհում
Միբեղու համար ու նվերվելու:

Մի պարզ օջախի կրակ դառնալու
Ու մոխրանալու այդ նույն օջախում:

Բայց դու ցրեցի՜ր կրակը մաքուր,
Պե՞ծ ու կայծ դարձար՝ հողմերի ընդդեմ,
Չտաքացրեցի՜ր ոչ մի հարկ ու շեն,
Մաս-մաս՝ այրվեցի՜ր, այրվեցի՜ր իզո՛ւր:

Եվ գիտես, կգա, կիջնի՜ երեկո,
Ու ցո՛ւրտ կլինի, կլինի մենակ,
Իսկ այրված կյանքիդ մոխիրները տաք
Ցրված՝ կլինեն երկնքի ներքո...

Նաև՝

Քե իմանալի՜ք

Ի՞նչ խոռվահույզ ճամփաներով եմ տարել իմ սերը,
Երբ թվացել է մարել են դարձիդ բոլոր լույսերը,
Խարխափել եմ ես անհայտության մեջ կեպղեղաբային,
Բայց վար չե՛մ նետել իմ սրտի բեռը:

Իմ ամեն քայլին

Նոր գայթակղության առու է եղել,
Շամպայնի նման խշշացո՞ղ, կանչո՞ղ, արբեցնող առո՞ւ,
Բայց ես թեքել եմ, թեքե՛լ եմ ճամփա ու փախել հեռու:

Հավաքություններում ամենից զնգուն ե՛ս եմ ծիծաղել
Ու երջանկության ծփանք են կարծել իմ երզն ու ձայնը.

Բայց երբ գիշերը

Ուղեկցողներին մնա բարով եմ ասել ինդադեմ
Ու տուն մտնելով՝ շրջել եմ գանդաղ դուռն փականք,
Նույն բանալիով փակել եմ դրսի աշխարհը իմ դեմ
Ու խոր հանձնվել իմ կարոտներին, իմ մենությունը:

Քայլել եմ կյանքում մենակ ու համառ,

Հասնելու հույսով քայլե՛լ եմ նորից,

Քե՛ն անհա՛յտ է եղել կայանը...

Մի՛ ժպտա այդպես.

Հավատարիմ եմ մնացել ես ի՛նձ,

Իմ հոգու լույսին, իմ էությունը,

Ի՛նձ և ո՛չ թեքե՛լ...

Ս. Կապուտիկյանի փոխարեն ուրիշ մեկը կամաչեր այս-
քան բացվելուց, անհարմար կզգար այս հոգեկան մերկու-

թյունից: Եվ այդպիսի մեկը երբեք Ս. Կապուտիկյան չի
դառնալու: Իսկ Ս. Կապուտիկյանն արդեն կա, և անշուշտ
դուր պիտի գար մեծ անզլիացուն, դուր պիտի գար հենց այն
պատճառով, որ այս կարգի բանաստեղծություններ գրելիս
բնավ էլ չի մտածել դուր գալու մասին:

Ահա այս անկեղծությունն է, որ էժան են գնահատում ո՛-
րոշ գրականագետներ (քննադատները թող ինձ ճիշտ հասկա-
նան. ես այս բառն օգտագործում եմ լայն առումով՝ նրա
տակ տեղավորելով նաև բանաստեղծին ու գրողին): Էժան
են գնահատում այն, ինչ իրապես ամենաբանկն է՝ անկեղ-
ծությունը: Անկեղծությունը, որ քավում է ամեն ինչ: Ան-
կեղծությունը, որին գին են տալիս նույնիսկ քրեական դա-
ժան օրենսգրքերը՝ մինչև անգամ ծանր հանցագործություն-
ների մեջ: Նույնիսկ քրեական օրենսգրքե՛րը:

Եվ պիտի ցավի ոչ թե բանաստեղծը, որ ոմանց դուր չի
գալիս իր անկեղծության պատճառով: Պիտի ցավեն նրանք,
որոնց դուր չի գալիս այդ անկեղծությունը:

Եվս մի փոքր՝ այս դուր գալու մասին:

Իբրև օրենք՝ մեծ մասամբ դուր է գալիս այն, ինչին
վարժվել ենք, ընտելացել: Ամեն նորություն շարժում է մեր
հետաքրքրությունը, բայց առավել շարժում է մեր էության
ամենահնագույն մասը՝ ինքնապաշտպանության բնազդը—
նորությունից ակամա վախենում ենք: Այսպես է կյանքի բո-
լոր բնագավառներում: Պիտի ժամանակ անցնի, որ վարժ-
վենք նորությանը: Անկապած, կան հարյուրավոր մարդիկ,
որ դեռ խուսափում են ինքնաթիռ նստելուց: Բայց արդեն
դժվար թե գտնվի որևէ մեկը, որ վախենա գնացք նստելուց,
մինչդեռ կար ժամանակ, երբ գնացք նստողները Գագարի-
նի և Տիտովի պես մարդիկ էին:

Այսպես և առավել քան այսպես է նաև գրականության
մեջ: Ընդ որում նոր խոսք մարսելը շատ ավելի դժվար է,
քան նոր մեքենային վարժվելը: Համենայն դեպս նոր խոսքը
չի կարող անմիջապես մեծ լսարան հավաքագրել: Նույնիսկ
Թումանյանի պես բանաստեղծը ժողովրդից առած իր խոսքը
չէր կարողանում ժողովրդին վերադարձնել. նրա երկերի

տպաքանակը 300-ից չէր անցնում և դա այն ժամանակ, երբ «Ասլի և Քարամը» (թե՛ «Աշուղ Ղարիբը» — վախենում եմ՝ սխալվեմ) սպառվում էր՝ ունենալով այն ժամանակների համար առասպելական տպաքանակ՝ 17000:

Եվ տարօրինակ ոչինչ չկա այստեղ. այսպես եղել է, այսպես կլինի և պիտի որ լինի:

Տարօրինակն այն է, որ գրականագետներից ոմանք տպաքանակի կամ ծափաքանակի չափով են գնահատում գրական երևույթները:

Գրականությունը կրկես չէ, որ նրա գործիչներին գնահատեն ծափերով: Եվ բանաստեղծը փահլե՛վան-ջանբազ-լա-րախաղաց չէ, որ նրա հաջողությունը չափվի ունկնդիրների բազմամարդութեամբ: Եվ հաջողությունը բնավ էլ մեծություն արտահայտությունն չէ: Թերևս՝ հակառակը:

Իմ կարծիքով՝ ժամանակն է, որ մենք վերանայենք «ժողովուրդ» և «ժողովրդականություն» բառերը՝ մեր վերջին տասնամյակների կիրառումով:

«Ամեն ինչ՝ ժողովրդին, ամեն ինչ՝ ժողովրդի համար», — այս ազնիվ սկզբունքն ու կոչը հիրավի վիթխարի տեղաշարժեր կատարեց մեր կյանքում: Այս բնագավառում մեր երկրի հաջողություններն այնքան ակնհայտ են, այնքան ցցուն, որ մեր թշնամիներն իսկ ուրանալ չեն կարողանում: Ուրեմն և հարկ չկա ավելի ծավալվելու այս հարցի շուրջ:

Ընդհատ է, որ ժողովուրդն է բոլոր բարիքների ստեղծողը: Ամեն բան նրանից է գալիս, ամեն բան նա է տալիս, բացի թերևս... ճաշակից: Արվեստի մեջ առաջնորդվել ժողովրդի ճաշակով՝ նշանակում է չժառանգել ժողովրդին, որովհետև արվեստագետը, որ նույն ժողովրդի զավակն է, ժողովրդի հանդեպ ամենից առաջ ունի մեկ պարտավորություն՝ նրա ունեցած ճաշակը հղկել, նոր ճաշակ ներշնչել նրան: Արվեստագետի սրբազան պարտքն է՝ բոլոր հնարավոր միջոցներով ժողովրդին բարձրացնել դեպի արվեստը և ոչ թե արվեստն իջեցնել միայն ժողովրդի մակարդակը:

Արվեստը, ինչքան էլ առաձգական լինի, չի կարելի ձգել-ձգձգել մինչև հանրամատչելիություն: Այս դեպքում նա կկտրվի, այսինքն՝ կզագարի արվեստ լինելուց: Եվ ճշմարիտ

արվեստագետները չեն կարող նմանվել այն ձկների վառ-սխն, որ հետևում են լողացող նավին: Դեկտեմբերն էլ է ձուկ, բայց նա միշտ լողում է նավի առջևից: Արվեստագետը դեկտեմբերն պիտի լինի:

Ստեղծարար մի հանճարեղ միտք ունի. «Ձի կարելի քծնել ոչ ոքի, մինչևիսկ ժողովրդին»:

Իսկ մեզնից ոմանք քծնում են ժողովրդին՝ անվերջ բարբառելով նրա անունից, մոռանալով, որ ժողովուրդն էլ է փոխվում, երեկ «Ասլի-Քյարամ» էր պաշտում, իսկ այսօր՝ արդեն «Անուշ», «Աբու Լալա Մահարի»: Ժողովրդին ամեն կերպ դուր գալու ջանքերն են ահա, որ ծնում են մեծ ու փոքր շարժումներ ջանքերն են ահա, որ ծնում են մեծ ու փոքր շարժումներ են, որ ձիու և շորու սովոր ժողովուրդը այսօր մոռանում են, որ ձիու և շորու սովոր ժողովուրդը այսօր ոչ միայն գնացքն է գերադասում, այլև ինքնաթիռը: Ավելին՝ դժվար է երևակայել մի մարդ, որ վախենա, դիցուք՝ ավտոմեքենա նստելուց: Իսկ հազարավոր մարդիկ այսօր կվախենան ձի նստելուց: Ձին, որ երեկվա երթևեկի ամենատարածված միջոցն էր, այսօր դարձել է հատուկ սիրահարության առարկա միայն: Եվ ժողովրդին ավտոմեքենայի փոխարեն ձի մատակարարողները չեն մտածում արդյոք, որ վաղը-մյուս օր իրենց «օգտագործելու համար» անհրաժեշտություն կզգացվի հատուկ հատություն՝ «ձիավարություն»:

Մեծերին նմանվելու ճանապարհով ժողովրդին դուր գալ ջանացողները մոռանում են, որ այդ մեծերը մեծ են դարձել միայն մեկ բանի շնորհիվ՝ իրենց նախորդած մեծերին չնմանվելով:

Մենք շատ ենք շարաշահում Թումանյանի և Իսահակյանի անունը, մոռանալով, որ նրանք իրենց ժամանակի մեծ թարմություն բերողներն էին, որ նրանք եկան ոչ թե Քաթիպային ու Շահազիզին նմանվելու, այլ նրանց շարունակելու, եթե կուզեք՝ ժխտելով շարունակելու:

Մեծ իմաստ ունի այս «շարունակել» բառը:

Շարունակել չի նշանակում նորից սկսել, ինչպես այդ անում են վալս պարելիս՝ «սկսել վառարանի մոտից»: Շարունակել՝ նշանակում է... էլ ի՞նչ նշանակի խեղճ «շարունակել»

լ'լը»... նշանակում է ուղղակի շարունակել, առաջ շարժվել
այն տեղից, որտեղ կանգ են առել: Իսկ երբ դեպի առաջ ար-
ված է մինչևիսկ մեկ քայլ՝ շարունակելն արդեն հավասա-
րազոր է «կտրվել»-ուն, «բաժանվել»-ուն:

Կտրվել՝ ինչպես երեխան է իր պորտով կտրվում մորից:
Եվ պորտի կտրումով է միայն, որ նոր երեխա է ծնվում:
Կտրվել՝ ինչպես երեխան է մոր ստինքից կտրվում:
Եվ ծնից կտրվելով է միայն, որ երեխան մեծանում է:
Բաժանվել՝ ինչպես որդիներն են բաժանվում ծնողներից,
և եղբայրները՝ եղբայրներից:

Եվ մինչև չբաժանվեն՝ նոր տուն ու տեղ չի դրվի:
Ուրեմն՝ այս «բաժանվել» բառի ու նրա համանիշների
մեջ կա շատ ավելի մեծ իմաստ:

Մենք Ավետարանի աղքատ Ղազարոսը չենք: Մենք կտա-
կառուն ենք մի մեծ ժառանգության, որ հասել է մեզ Գող-
թան երգիչներից մինչև Չարենցը: Եվ նման չենք տափաս-
տանային այն բույսին (ռուսները կոչում են перекачи-поле,
մենք թարգմանում ենք՝ դաշտագլոր), որ քամուց տեղից-
տեղ է քշվում, որովհետև թույլ արմատներ ունի: Մեր ար-
մատները թերևս ավելի խորն են, քան բարձր է մեր սա-
ղարթը:

Ով անցյալ ունի՝ չի կարող հիշողություն չունենալ:

Ով պատմություն ունի՝ չի կարող ետ չնայել:

Բայց մենք իրավունք չունենք պարել ինքնահոսի կարգով,
պարել այն նախորդյալ հույսով, թե աղքատ Ղազարոսի
պես հայր Աբրահամը մեզ էլ իր գոգը կընդունի: Այսպիսի
բարություն, որ աստվածային է կոչվում, պատահում է
միայն սուրբ գրքերում, դրանք էլ սուտ են դուրս գալիս:

Կյանքը, մանավանդ ապագան, սուրբ գիրք չէ և բարու-
թյուն չի առատաձեռնում: Մարդկային մարմինն ստեղծված
է այնպես, որ կրունկները ետ են նայում, թաթերը՝ առաջ:
Երունկը չի կարող առաջնորդել: Եվ ինչքան էլ ճկուն լինի
վիզը՝ նա չի կարող ծոծրակը ճակատ դարձնել: Ետ-ետ են
նայում միայն վախից: Ետ-ետ են քայլում միայն նահանջ-

լիս: Հարկավոր է գիտակցել այս. վախից և նահանջելի՛ս:
Ու ետ նայելու մեջ էլ կարող է օգնել Աստվածաշունչը:
Ղովթի կիներ, ինչպես հայտնի է, հենց ետ նայելու պատճա-
ռով դարձավ քարարձան...
Թույլ տվեք ավետարանական մի առակ էլ հիշել:

Ագնավական մի մարդ հեռու աշխարհ է գնում՝ այնտեղ
թագավորություն առնելու ու ետ դառնալու: Մեկնելուց առաջ
կանչում է իր տասը ծառաներին տասը մնաս (փողի տեսակ)
է տալիս նրանց և ասում. «Բանեցրեք մինչև ես գամ»: Ու
երբ ետ է գալիս, կանչում է այդ ծառաներին, որ իմանա, թե
ով ինչպես է բանեցրել իր ստացած դրամը: Առաջին ծառան
գալիս և ասում է. «Տեր, քո մնասը տասը մնաս շահ է բե-
րել»: Եվ տերը, գովելով, նրան է հանձնում 10 քաղաքի իշ-
խանությունը, «զի ի փոքուդ հաւատարիմ եղեր» — որովհե-
տև քիչ բանի մեջ հավատարիմ եղար:

Երկրորդ ծառան է գալիս և ասում. «Տեր, քո մնասը հինգ
մնաս շահ բերեց»: Եվ տերը նրան իշխան է կարգում հինգ
քաղաքի վրա:

Գալիս է երրորդը և ասում. «Տեր, ահա քո մնասը, ոչ
պահել եմ թաշկինակի մեջ փաթաթված: Վախենում էի քեզ-
նից, որովհետև դու խիստ մարդ ես. բառնաս, զոր ոչ եղեր,
և հնձես, ուր ոչ սերմանեցեր — վերցնում ես չորած բանդ
և հնձում՝ չսերմանածդ»:

Ի՞նչ եք կարծում. տերն ինչպե՞ս է վարվում իր այս ծա-
ռայի հետ:

— Ես քո բերանով պիտի դատեմ քեզ, ով անհավատ
ծառա — գայրանում է տերը: — Ինչպես դու ես ասում՝ ես
խիստ մարդ եմ. վերցնում եմ՝ ինչ չեմ գրել և հնձում՝ ինչ
չեմ սերմանել: Ինչո՞ւ իմ մնասը սեղանավորներին չավիր,
որ վերադարձիս շահով ետ առնի:

Եվ հրամայում է՝ այդ մի մնասն էլ առնել նրանից ու
տալ տասը մնաս շահածին. ասելով՝ «ամենայնի, որ ունի-
ցի՝ տացի. և յայնմանէ, որ ոչն ունիցի, և զոր ունիցի՝
բարձցի ի նմանէ — ամեն ունեցողի պիտի տրվի, և չունեցո-
ղի ունեցածն էլ իրենից պիտի առնվի...»:

Ավանդապահությունից ճառողները, մեր մեծերի անունը

չարաշահողները մոռանում են, որ մեր մեծերը նման են այս առակի տիրոջը: Մեզ տված իրենց մնասի դիմաց նրանք շահ են պահանջում և զայրագին կղատապարտեին նրան, ով վարչամակի մեջ ծրարված է պահում իր ստացածը:

Թումանյանը, որին անհանգստացնում ենք ամեն վայրկյան, եթե հանկարծ հարուստն աններ, իրեն չէր կարող այլ կերպ պահել, քան առակի Տերը: Իսկ ինչո՞ւ նա հարուստն չի առել, եթե մեզ է դիմում ահա այսպես. «Ես չեմ կարող մի ծրագիր ընդունել և 40 տարի դրա վրա նստեմ ու պարծենամ... Մարդիկ ուզում են սրանով պարծենան ու աշխարհ գարմացնեն, իսկ ես ապշում եմ, թե ինչպե՞ս կարելի է 40 տարի նույն կարծիքի լինել ու չփոխվել»:

Այսպիսի մարդկանց բնորդն էլ Թումանյանի ձևակերպմամբ հանձարեղ է. «... Գաղափարը չի մտնում գլխի մեջ, այլ գլուխն է մտնում գաղափարի մեջ»:

Եվ իսկապես էլ. Թումանյանի մահից անցել է մոտ 40 տարի: Դեռ նրա կենդանության օրոք եկան Տերյան ու Մեծարենց, Վարուժան ու Սիամանթո: Եկավ ու գնաց Չարենցը: Գրական 3—4 վիթխարի ալիք անցավ մեր գրականության վրայով, փոխվեց 4—5 սերունդ: Մինչդեռ այսօր էլ մեզնից շատերը՝ շարաշահելով մեր մեծերի սրբությունը և ահաբեկելով սրբապղծության ամբաստանությանը՝ շարունակում են մեր գրականությունը ետ պահել, առաջ մղողներին ըմբերանել:

Ժամանակն է, որ մենք հասկանանք և մեկընդմիջտ հիշենք. Թումանյանն ու Իսահակյանը մեր թիկունքն են, մեր մեջքը, մեր հետևապահ զորագունդը: Իսկ մենք, մոռացած պատկառանք ու հարգանք, նրանց մեր առաջն ենք դրել ու հրում ենք՝ թաքնվելով նրանց թիկնեղության ետևում...

Առերևույթ կարող է թվալ, թե այս ամենը կապ չունի Ս. Կապուտիկյանի գրքի հետ:

Կապ ունի և ամո՞ւր կապ:

Ս. Կապուտիկյան բանաստեղծի մեջ հիանալին հենց այն է, որ նա աղքատ Ղազարոս շլինելով՝ Ղովթի կին էլ չէ: Նա շարունակում է մեր մեծ նախորդների գործը, և ոչ թե կրկնում նրանց: Նա ստեղծում է, և ոչ թե աշխատում գուր

գալ: Նա դիֆինի պես նավի առջևից է լողում և ոչ թե կտեղից: Նա չի քծնում ժողովուրդին, այլ սիրում է և որովհետև սիրում է՝ ձգտում է բարձրացնել նրան: Նա մեծերից սովորել է ամենակարևորը և կարող է իր մասին էլ ասել. «Բառնամ, զոր ոչ եղի. և հնձեմ, ուր ոչ սերմանեցի»:

Բանաստեղծը ներքին այրման շարժիչ է — իրենն է վանելիք-բենզինը, իրենն է և շարժիչ-մոտոռը: Բանաստեղծը ջրաղացի անիվ չէ, որ պտտվի օտար մի ուժի օգնությամբ: Ներքին այրման շարժիչ է և Ս. Կապուտիկյանը — և՛ վանելիքն է իրենը, և՛ շարժիչը:

Այս գիտակցությամբ է անցել Ս. Կապուտիկյանի ամբողջ գիտակցական կյանքը: Ինչպես աշխարհում, այնպես էլ գրականության մեջ հեշտ բան չէ անկախություն ստանալու: Կյանքում դա արժե ջանքեր, արյուն, հերոսություն ու մաքառում: Յուրովի նույնն է նաև գրականության մեջ: Ի պատիվ Ս. Կապուտիկյանի պետք է ասել, որ նա ժամանակին գիտակցեց այս վճռական բանը և ավելի քան երկու տասնամյակ գրականության մեջ քայլում է իր գնդով ու դրոշով, և գնալով՝ նրա անկախությունը ամրապնդվում է ու տալիս իր նոր արգասիքները:

«Մտորումներ ճանապարհի կեսին» գիրքը վառ ապացույցն է վերևում ասվածի:

Փոքրիկ գիրք է սա — Ս. Կապուտիկյանը երբեք չի հեղինակել հաստափոր գրքեր: Հանկարծակիի բերող ոչինչ չկա այս գրքի մեջ — Ս. Կապուտիկյանը վաղուց է տվել իր հայտագիրը:

Սակայն այդ գրքում Ս. Կապուտիկյանը հասել է մի որոշակի հաղթանակի: Առանց զեղչման, բնավ միտ չբերելով նրա կին լինելը, մեծ հաշվով կարող ենք ասել, որ Ս. Կապուտիկյանը այսօր արդեն վարպետ է. բառերն են վախենում նրանից և ոչ թե նա բառերից:

Այս գիրքն աղմուկ հանեց դեռ տպագրությունից առաջ:

Կա մի գազան, որ իսկապես շատ գիշատիչ է և ահավոր: Կո՛վում է ազգայնամոլություն կամ նացիոնալիզմ: Ով ով,

բայց հայ ժողովուրդը իր բզկտված մաշկով կարող է աշխարհին վկայել, թե ինչ ահավոր գազան է դա:

Իրոք որ պիտի վախենալ այդ գազանից, հակառակ դեպքում մենք ոչ միայն վտանգած կլինենք մեր այսօրն ու վաղը, այլև հարգած չենք լինի մեր միլիոնավոր նահատակներին:

Բայց պետք է վախենալ գազանից և ոչ թե նրա խրտվիլակից: Այստեղ չի կարող օգնել նաև հայտնի առածը, թե «Օձից խայթվածը թոկի կտորից էլ է վախենում»:

Պետք չի վախենալ խրտվիլակից: Առավել ևս՝ պետք չէ խրտվիլակ սառֆել:

Ս. Կապուտիկյանի այս գիրքը դեռ տպագրվելուց առաջ աղմուկ հանեց, որովհետև գտնվեցին մարդիկ, որ խրտվիլակ խաղացրին:

Գիրքը հիմա բոլորիս ձեռքին է, և պարզապես կարելի է զարմանալ, թե ուր է այն սողանցքը, որտեղով անց են կացրել խաղացվելիք խրտվիլակը:

Այս գիրքը, կրկնում եմ, գրված է Ս. Կապուտիկյանի այն հայտագրով, որ տրված է եղել 20 տարի առաջ՝ սիր և հայրենիք:

Միրո մասին ես արդեն խոսեցի:

Գալով հայրենիքին՝ պիտի ասեմ, որ այստեղ էլ Ս. Կապուտիկյանը մեզ անակնկալի չի բերում: Ոչնչից ոչինչ չի ստեղծվում: Գոնե պիտի փրփուր լինի, որ ծնվի Վենետիկ, և Ջևի գլուխ, որ ծնվի Աթենաս-Պալլաս:

Ս. Կապուտիկյանի նախորդ գրքերում եղել է ոչ միայն փրփուրն ու Ջեվի գլուխը, եղել են նաև Վենետիկն ու Աթենաս-Պալլասը:

Ժամանակի սղության պատճառով չեմ կարողում, այլ պարզապես հիշեցնում եմ նրա այնպիսի բանաստեղծությունները, ինչպիսիք են «Հայոց ծուխը» (46 թ.), «Հայոց պատմության դասին» (48 թ.), հանրահայտ «Խոսք իմ որդուն» (44 թ.), «Հայաստանից հեռու»-ն (46 թ.), «Հայրենիքի սերը» (46 թ.), «Միջագետքում ապրող հայ պատանուն» (47 թ.), «Հնկուզներին» (46 թ.), «Բաթումիի նավահանգստում» (47—49 թթ.) և այլն, և այլն:

Մրանք բանաստեղծություններ են, որոնք հեղինակին չէին կարող օրվա մի օր չհասցնել իր «Մտորումներին»:

Ուրեմն՝ «Մտորումների» այն մասում, որտեղ խոսքը հայ հայրենիքին է գալիս, չկա մի այնպիսի բան, որ կարողանա խրտվիլակ խաղացնելու տեղիք տալ: Նորը ուրիշ տեղ է: Նորը Ս. Կապուտիկյանի որոշակի հասունացումն է՝ և՛ իբրև մարդու, և՛ իբրև բանաստեղծի:

Կա մեկ այլ նորություն էլ, որ ինձ համար ամենագնահատելին է Ս. Կապուտիկյանի «Մտորումների» մեջ:

Մեր դարավոր սպիները, մեր դեռ չսպիացած վերքերը ոչ միայն սողանց, այլ բաց դուռ են դառնում ոմանց առաջ— և ստացվում է գրողի համար ամենամոթաբեր մի բան, շարաշահում են մեր սրբությունները, առևտուր են անում մեր վերքերի վրա, ծափի հետ փոխանակում մեր մասունքները:

Դա մի նողկալի սպեկուլյացիա է, որի վերջը չի երևում:

Դա մի նորօրինակ հոգեկան խաչագողություն է, որը պատժելու համար միջոցներ որոնել է պետք:

Այստեղ չի օգնի խորհուրդը, որովհետև սրբությունների առևտրով շարաշահողին դժվար թե համոզես, որ գերադասելի է գրպանահատության մարտը կամ մուրացկանությունը:

Այստեղ չեն օգնի քրեական օրենսգրքերը, որովհետև առայժմ նրանց մեջ ոչ մի կետ չկա հոգևոր խուլիզանությունից դեմ:

Պայքարի միակ միջոցը թերևս մնում է էլի ամենաստուգվածը՝ իսկական-անխառն-անխարդախ «ապրանքով» դուրս մղել «զիզի-բիզի»-ով շարաշահողին և դրանով փակել սպեկուլյացիայի ճանապարհը:

Ս. Կապուտիկյանի այս գրքի մեծագույն ծառայությունը այս եմ համարում:

Այս գրքում չկա ո՛չ մի բանաստեղծություն, որ ասված լինի լսված լինելու համար: Ամեն ինչ ասված է, որովհետև չէր կարող չասվել:

Իսկական բանաստեղծություն գրելը ինքնազատագրման պես մի բան պիտի լինի:

Ս. Կապուտիկյանի այս նոր հայերգութիւնը հենց այդ ինքնազատագրման արգասիքն է:

Արվեստագետների մասին, ըստ իս, վատ չէ ասված.

Բոլորի պես՝

Նրանք նույնպես անկարող են ապրել առանց թթվածնի,
Սակայն նրանք ամեն վայրկյան նախ այրվում են անթթվածին,
Հետո միայն հրդեհվում են՝ քարածխի պես:

Ս. Կապուտիկյանը իսկական արվեստագետ է, ուստի և նրա հետ նույնն է կատարվել: Նա չի կանգնել ժողովրդի հոգու բորբոք վառարանի մոտ՝ կազմ ու պատրաստ, ճղողված փայտերի խտիտը գրկին, որ մեկ-մեկ կրակի մեջ նետի՝ իր սեփական դեմքը լուսավորելու համար: Ո՛չ, այսպես չեն բողջավառվում նրա «Մտորումները»: Նա ինքն է նախ քարածխացել՝ վառվել անթթվածին, ու միայն դրանից հետո է բոցավառվել:

Եվ նրա «Մտորումներ»-ի մեջ չկա մի բառ, որից «քարածխի հոտ չգա», չկա մի տող, որ չունենա ներքին այրման ջերմություն:

Եվ մենք պիտի հիացմունքի մեր խոսքն ասելուց առաջ շնորհակալության խոսքն ասենք Ս. Կապուտիկյանին, որովհետև շնորհակալությունը շատ ավելի մեծ բան է, քան հիացումը. հիանում են կուշտ ու կուռ մարդիկ, շնորհակալ են լինում կշտացողները:

Իսկ եթե, այնուամենայնիվ, գթվարանանք մեր շնորհակալիքին չմիացնել մեր հիացքը, ապա դա էլ կարող ենք անել ոչ միայն անվերապահ, որովհետև մեր անկեղծությամբ մենք չենք զիջում բանաստեղծուհուն, այլև անզգուշավոր ու անվախ, որովհետև Ս. Կապուտիկյանը այն թիրառ բանաստեղծներից չէ, ովքեր սնվում են միայն քաղցրությամբ, որոնց ինքնագոհությունը երբեք չի խառնվում առաջնորդի ինքնագոհությունը, որոնց ինքնավստահությունը չի միջարկվում փրկարար կասկածանքով:

Ս. Կապուտիկյանն ինքն է մեզ հայտարարում.

Զգաստանում եմ ես ձեր հիացքից...

Եվ չի ստում Ս. Կապուտիկյանը, այլ խոստովանում: Եվ մենք հավատում ենք այդ հավաստիացումին, որովհետև կշեռքի վրա խոսք չէ, այլ գործը:

Ս. Կապուտիկյանը բազմաթիվ անթերի-մնայուն-ապրելիք բանաստեղծությունների հեղինակ է արդեն: Եթե նա, աստված մի արասցե, այսուհետև ոչինչ էլ չավելացնի իր արածին, միևնույն է՝ արդեն մտել է մեր քերթության պատմության մեջ: Հայ բանաստեղծության ապագա ծաղկաբաղնիքի մեջ նա արդեն ունի իր էջը:

Սա շոյիչ խոսք չէ, այլ պարզ հաշվարարություն:

Ս. Կապուտիկյանը պոեմներ չի գրել և թերևս չգրի էլ: Ոչ պարտադիր է դա, ոչ էլ առանձին մի անհրաժեշտություն կա:

Բայց մի տեսակ ընդունված է, որ ամեն բանաստեղծ ունենա իր գլուխ-գործոցը:

Սիլվա Կապուտիկյանը հասել է իր ճանապարհի կեսին, ուստի և նրանից գլուխ-գործոց ցույց տալը միամտություն կլինի— սպասելիքը դեռ առաջիկայում է:

Ճաշակներից ավելի անհամերաշխ բան չկա աշխարհում: Գլուխ-գործոցն էլ հենց այն է, որ հեշտացնում է այդ համերաշխությունը, բարձրանում անհատական ճաշակներից. մատնանշվում բոլորի կողմից՝ երբեմն նույնիսկ հեղինակի կամքին հակառակ:

Սպասելով Ս. Կապուտիկյանի նմանօրինակ գլուխ-գործոցին և խորապես հավատալով, որ դա կստանանք, ես՝ իմ ճաշակն ու կարծիքն արտահայտած լինելու վերապահումով՝ ուզում եմ ասել, որ առայժմ նրա գլուխ-գործոցը «Մտորումներ ճանապարհի կեսին» երկն է:

Դա ոչ պոեմ է, ոչ բանաստեղծություն և կարիք էլ չի դրում պիտակավորելու: Դա ծնվել է միանգամից, ինչպես ծնվում է «ախ»-ը կամ «վայց»-ը, ծնվել է կատարյալ՝ ինչպես երեխան— ունի ամեն ինչ, և ամեն ինչ իր տեղն է:

Արդեն նախապես վիճելով իմ ընդդիմախոսների հետ,

ավելի ճիշտ՝ պատասխանելով նրանց, պիտի ավելացնեմ, որ այս երկը չէր կարող ծնել ոչ ոք — ո՛չ Վարուժանը, ո՛չ Սիամանթոն, ո՛չ Չարենցը: Այս երկունքը ապրել կարող էր միայն Ս. Կապուտիկյանը: Եվ սա, հարկավ, չի նշանակում, թե Ս. Կապուտիկյանը կանգնում է նրանց շարքին կամ անցնում առաջ: Պարզապես Ս. Կապուտիկյանը իսկական բանաստեղծ է և մեծատաղանդ բանաստեղծ, և որպես այսպիսին չի կարող անկրկնելի չլինել: Վարուժանն ու Սիամանթոն չէին կարող այս պոեմը գրել նաև մեկ այլ պատճառով: Խնդրում եմ լսեք միայն մի կտոր.

Ո՛չ, ես չեմ ծնվել անեծքի համար,
ես միշտ բարեկամ խոսքի՝ եմ սովոր:
Ես մանուկ օրից հավատով, սիրով
Զնգուն երգել եմ «Ինտերնացիոնալ»...

Այսպես չէին կարող գրել Վարուժանն ու Սիամանթոն: Այսպես գրելու համար բավական չէ հայ բանաստեղծ լինել, հարկավոր է լինել նաև սովետաճայ բանաստեղծ:

Եվ ահամա վերհիշում եմ նացիոնալիզմի խրտվիլակներ խաղացնողներին և ահամա ուզում ես շշուկով գոռալ.

— Ո՛ւր են ձեր ահանջները: Եվ մի՞թե նրանք այնքան հեռու են ձեր գլխից, որքան Ս. Կապուտիկյանը՝ ազգայնամոլից...

Իր այս գրքի հիանալի բանաստեղծություններից մեկն է Ս. Կապուտիկյանի «Պանթեոնը»: Ես չեմ կարդա: Այո՛, մենք՝ «մեծ մահերով հարուստ ժողովուրդ», փոքր ու տխուր պանթեոն ունենք: Մեր բազմահազար մեծերնեքը անթաղ մնացին, մեր հարյուրավոր մեծերը՝ անշիրիմ:

«Մտորումներ ճանապարհի կեսին» քերթվածքը մի արժանի արձանագրար է՝ արժանավոր դատեր կողմից իր հայրերի գերեզմանին դրված: Եվ պետք չէ ասել ո՛չ «Տոգոց հանգուցելոց», ո՛չ խոսք հիշատակի:

Լռենք, բայց մի լուռությամբ, որ Ս. Կապուտիկյանի նախանձելի խոսքով ասած «ավա՛ղ, չի կարող ձայնագրվել»:

Ս. Կապուտիկյանի այս հերթական գիրքը ավելի ընդ-

դրկուն է, քան ես ներկայացրեցի: Սիրով և հայրենիքով չի սպառվում նա, եթե սերն ու հայրենիքը առարկայաբար հասկանանք: Այստեղ բանաստեղծություններ կան Լենինին նվիրված՝ բխած և ոչ թե քամած բանաստեղծություններ, բանաստեղծություններ Իսահակյանի մասին և Հաղթանակի օրվա առթիվ, ասորուհու մասին և գարնան վրա, սովխոզի դիրեկտորի և ուսու բարեկամուհու մասին, դիրիժյոր կա այստեղ և կա պատերազմ:

Այս «Պատերազմը» ես չեմ կարող չկարդալ.

Որդեկորույս մայրերին փառքեր ու երգ են ձոնում,
Խոնարհ ճամփա են տալիս այրուն զոհված դիմվորի:
Մանուկներին որբացած ամենքը գիրկ են բանում,
Գուրգուրում են հոր նման՝ դարձած գթոտ ու բարի:

Իսկ դո՛ւք, կյանքի եղբրքին կանգնած լուռ ու աննկատ,
Զհարսնացած, շիրված, շմայրացած աղչիկներ.
Ինչպե՛ս շափեք կոյուստը, երբ կորցրիք՝ շգտած,
Եվ ո՛ւմ անունը սգաք, երբ անուններ չեղա՞ն դեռ:

Երբ չիմացան ձեզ նրանք, ու դուք նրանց չիմացաք,
Մինչդեռ հյուսված ձեր բախտին՝ նրանք կային՝ կգային՝.
Քանի՞ շաված շշուկներ խեղդվեցին հողի տակ,
Քանի՞ սիրող հայացքներ դեռ չբացված՝ փակվեցին:

Մինչդեռ ամեն մի շշուկ ձեր մեջ աշխա՛րհ կծներ,
Ամեն հայացք կդատնար ձեզ գուրգուրող հովանի,
Սպասումից խուճացած ձեր աչքերը կլցնեք
Այն երջանիկ ծփանքով, որ սիրվող կինը ունի...

Ավա՛ղ, կարոտ անձրևի, դուք թոշնեցիք գունաթափ,
Ձեր կրծքի տակ ցամաքեց քեթշուխան ծով մի ալիք.
Ձեր կարծրացող կողերը չքեթջացա՞ն մայրությունք,
Ու չտվիք կյանքին այն, ինչ միայն դո՛ւք ունեիք:

Պատերա՛զմը... Նա վերջին ուսմբի հետ չի՛ ավարտվում,
Ականի պես դեռ հետո նա պայթում է հոգու մեջ.
Ու մինչ՝ մահվան մոտեցող մոր հին կակիժը թմրում,
Մխիթարվում է այրին որդիներով՝ արդեն մեծ,—

Ո՛չ, ժամանակը անցնող ձեր սիրտը չի ողորում,
Դեմքին դառնում է կնճիտ, մազերի մեջ՝ ճերմակ թել:

Չեր մեջ ամեն գարնան հետ պատերազմը նորոգվում
եմ ավերենք է գործում տարեցտարի առավել...

Ի՞նչ ասեմ: Չասե՞մ, որ պատերազմի մասին ավելի լավ
բան չի գրված: Չխոստովանե՞մ, որ պատշաճ խոսքեր չզըտ-
նելու անզորությունից է, որ շտապում եմ վերադառնալ իմ
քիչ առաջվա մտքին ու կրկնում եմ:

Ս. Կապուտիկյանի այս հերթական գիրքը ավելի ընդ-
գրկուն է, քան ես ներկայացրի: Սիրով ու հայրենիքով չի
սպառվում նա, եթե սերն ու հայրենիքը առարկայաբար
հասկանանք: Բայց այս գրքում ոչ մի տող չկա, որ համակ-
ված չլինի սիրով կամ հայրենիքով, հայրենիքով կամ սիրով:
Եվ սերն այստեղ լայնանում է մինչև հայրենիք, ու հայրենի-
քը մտերմաբար տեղավորվում է սիրո մեջ:

Եթե այսպես ընկալենք սերն ու հայրենիքը, նրանցով
իսկապես, որ կսպառվի Ս. Կապուտիկյանի հերթական
գիրքը...

Հերթական գիրք...

Ինձ շատ դուր է գալիս այս «հերթական» բառը, ոտ՝ հա-
վատացնում եմ ձեզ՝ բնավ էլ չեմ փնտրել նախահաշվով:
Բառն ինքը եկավ ու կրկնվեց, և ստիպեց, որ ուշք դարձնեմ
իրեն:

Նա եկավ ինքնաբերաբար, որովհետև խոսքը Ս. Կապու-
տիկյանի գրքին էր վերաբերում:

Ու վայրկյան իսկ չեմ կասկածում, թե այս գիրքը մի հեր-
թական գիրք չէ Ս. Կապուտիկյանի համար:

Եվ սա պիտի լինի մեր կրկնակի ուրախության լգատճա-
ռը. կրկնակի— նախ՝ այս գրքի համար, և ապա՝ որ նա
հերթական է, որ տարի-տարուկես անց մենք նորից պետք է
հավաքվենք քննարկելու Ս. Կապուտիկյանի հերթական գիր-
քը, ուրախանանք սրտանց, հրճվենք երջանիկ, հիանանք
անկեղծ:

Նախանձելի են այն բանաստեղծները, որոնց համար ի-
րենց գրքերը հանգրվաններ են միայն և ոչ թե տուն, որով-
հետև ճանապարհորդ է բանաստեղծը և ոչ թե տնտեսը:

Այսպիսի ճանապարհորդ է և Ս. Կապուտիկյանը:
Ի՞նչ կուզենայի անձամբ ես՝ հաջորդ հանգրվանին հան-
դիպելիս:

Սկսեմ մանրից:

Ս. Կապուտիկյանը հասել է մեծ վարպետության, և այս
բառից միշտ լիասիրտ օգտվելու համար այլևս իրավազրկ-
ված է ամենաթեթև վրիպումների իսկ թույլ տալուց— լեզվա-
կան թե տաղաչափական՝ միևնույնն է: Իսկ դրանք պատա-
հում են:

Ինքնավար, անկախ, թարմ ու նոր բանաստեղծ է Ս. Կա-
պուտիկյանը:

Շատ ենք խոսում, ավելի ճիշտ՝ ստիպված ենք խոսել
նորից ու նորարարությունից: Եվ ինչ էլ որ խոսանք, ինչքան
խելոք էլ որ խոսենք, մեր բոլոր խոսակցությունները ավե-
լորդ կարող են լինել, եթե հասկանանք մի շատ անժխտելի
բան, որով սպառվում է նոր ու մորի, հին ու մնի ամբողջ
վեճը:

Պետք է ունենալ հասարակ մի բան՝ ժամանակակից
մտածողություն,— միայն այս և ուրիշ ոչինչ...

Ս. Կապուտիկյանը կատարյալ բանաստեղծ է, այսինքն՝
ժամանակակից մտածողությամբ բանաստեղծ:

Իսկ այսպիսի բանաստեղծը պիտի ոխերիմ լինի ամեն
տեսակ ծամծմվածության, տափալարանության, այն ամե-
նի, ինչ ուռանհրը կոչում են банальность:

Ս. Կապուտիկյանի այս գրքում էլ, դժբախտաբար, պա-
տահում են ն՝ բանալ-ության հետքեր, և՛ մինչևիսկ ամբողջ-
ջական ոտանավորներ:

Ի՞նչ գգո՞ւմ եք հողի անձկությունը,
Երբ պարնանը՝ տագնապով մի լոին,
Իր կրծքի տակ հունտի ծանրությունը՝
Սպասում է հույսով անձրեին:
Ակոսները բյուր աչքով նայո՞ւմ են,
Երկնքին են նայում սրբրով,
Իսկ երկինքը՝ մերթ խեղա արևում է,
Մերթ լցվում է շոյող ամպերով:

Գոյ ժպտում է հողին, ու թվում է,
Թե ուր որ է հիմա կանձրևի.
Ու սրտի պես հողը թրթում է,
Թրթո՞ւմ է այդ պաղ խաղերից:

Չե՞մ ցանի ոչ մի հունտ սրտումըս,

Չե՞մ ուզում

մնալ քո

անձրևին...

Կուզենայի նրա հերթական-հաջորդ գրքում շտեմել այս-
պիսի ոտանավորներ: Ո՛չ. կուզենայի, որ նա այլևս չգրեր,
չկարողանար գրել այդպիսի ոտանավորներ: Ո՛չ միայն շտե-
պիր, այլև չգրեր:

Ս. Կապուտիկյանը հիանալի տողեր ունի.

Մայրենի լեզուն տարբեր է լինում,

Մայրերի լեզուն աշխարհում նույնն է:

Այս նշանաբանով թող գրվեն նրա բոլոր գալիք գրքե-
րը— մեր մեսրոպյան մայրենիով, բայց մոտ ու հասկանա-
լի աշխարհի բոլոր մայրերին:

Իր այս գրքում Ս. Կապուտիկյանը ութնյակներ ունի՝
նվիրած Սիրանույշին: Դա շատ հատկանշական բան եմ
համարում: «Դու՝ ճանապարհ, դու՝ իղեալ»:

Շատ ճիշտ է:


Սիրանույշի ճանապարհն է ճիշտը, և նա կարող է իղեալ
լինել մեր ստեղծագործող հայուհիներին: Սիրանույշի, սր
միևնույն հայոց լեզվով խաղում էր նաև Համլետ ու Դեղ-
գեմոնա, և ոչ միայն Վարդան ու Շուշանիկ:

Ս. Կապուտիկյանը կտրել է, իր ասելով, իր ճանապարհն
կեսը:

Նրան բարի երթ մաղթենք:

Թող Սիլվա մեկնի ու Սիրանույշ վերագառնա...

ՆԱՄԱԿՆԵՐ



Սիրելի բարեկամ

Ես չգիտեմ՝ Քրիստոսը այսքան շարշարվե՞լ էր մինչև խաչվելը, որքան ես՝ մինչև տուն հասնելը: Երկրորդ օրն է, ինչ հասել եմ, բայց շարժվել չեմ կարող: Ոտներիս տակ մաշկը ամբողջովին այրված, սևացած է, ճիշտ այն գույնի, ինչ գույնի լինում է մարդու ձեռքը՝ դեռ չհասած ընկույզի կճեպից: Քո գնալուց կես ժամ հետո ավտոն շարժվեց: Ժամը 8 անց մենք իջանք Վեդիում: Սկսվեց մեր Վոդիսականը՝ գիշերով՝ ոչ թեթև բեռներ շալակած, որը տևեց ամբողջ գիշերը և մյուս օր՝ մինչև 12-ը ժամի: Օրվա մյուս մասը քնած էի: Երեկ՝ օգ[ոստոսի] 5-ին հնարավոր չեղավ գրել, զի, դե գիտես գյուղի սովորույթը, տանը լիքն էին՝ ինձ տեսութան եկողները: Այսօր ահա օգ[ոստոսի] 6-ին ես գրում եմ... Իվան շան, սոսկալի տխրություն է իջել վրաս, մի ինչ-որ թախիծ, մանավանդ օրվա այս պահին: Առավոտ է, արևը դեռ նոր է ծագում. լեռնալանջերը դեռ ընկղմած են սովերի մեջ: Անշուշտ օրվա այս պահի մասին է Չարենցը գրել.

Արևից առաջ և ոսկուց առաջ

Տրտում է այնքան.

Խմում է հոգին բաժակը երազ

Այդ կույս տրտմության...*

Ինչ-որ բան ճնշում է կրծքավանդակս: Կարծես փակված եմ վանդակում: Բայց չնայած դրան զգում եմ ստեղծագործելու մեծ կարողություն և անհրաժեշտություն: Երեկ կարողում էի Դոստոևսկուն («Խաղամուլը»): Ինձ ապշեցրեց նա:

* Չարենցյան մեղքերումները արված են հիշողությամբ և ունեն բնագրային շեղումներ, որ թողնում ենք հուշությունը: (ժանոթ՝ կազմողի):

Այ, սա ինձ ավելի հարազատ է: Ուրիշների մոտ հաճախ մեծութունը երևում է, ասենք, այն բանում, որ մի տող շքեղ շենք կարող, նույնիսկ մի բառ. ամեն ինչ շափված-ձեղված է, ամեն ինչ հղկված: Այդ ապշեցնում է մարդու Սրա մոտ այդպես չէ: Սա հենց այն է, ինչ որ կյանքը՝ խառնիխուռն, վայրի, անդասդաս, անկարգ: Բայց այդ անկարգության մեջ կա մի ներքին ամենախիստ կապով իրար աղերսված կարգավորություն: Այդ իսկական կյանքն է— արտաքինից անտակտ, ներքուստ սակայն ամեն մի շնչին մասնամասնով իրար հետ պայմանավորված: Ռ. Ռոլանը հոգին մատնում է ընթերցողի առաջ. մերկացնելով այն (հոգին) միաժամանակ բացատրում է այդ մերկությունը: Սա (Գլուտոսկի-ն) ինձ թվում է միայն մեղկացնում է և դու քո առաջ տեսնում ես այդ մերկ հոգին: Ուզում եմ հենց այժմ նստել և սկսել մի վեպ, ոչ շատ լայնածավալ: Գիտեմ՝ թե ի՞նչ կգրեմ: Բայց խուսափում եմ դրանից միայն այն պատճառով, որ մի քիչ ավելի շափածո գրեմ: Զգում եմ նույնպիսի ուժ արձակում: Այսուհանդերձ մի փոքրիկ բանում անշուշտ կփորձեմ ուժս, մի նովելում: Ամենակարևոր անելիքս կլինի շափածոյում: Բայց մինչև բացատրելը, թե ի՞նչ կլինի այդ անելիքս, հարցնեմ քո մասին:

Գրիր թե ի՞նչ ես անում, ինչով ես զբաղվում և այլը: Խո՞ւ ես հարցեր չեմ տա, որ դու պատասխանես:

Դու քո կողմից ամեն ինչի մասին կգրես, իսկ ես այժմ գրեմ, թե ինչի վրա եմ աշխատելու:

Նախ գիտես, թե որքան լրջորեն եմ վերաբերում ես առհասարակ պոեզիային և բանաստեղծ հասկացողությանը:

Իմ որոնումները ինձ հաճախ փակուղիի առաջ են կանգնեցնում, հաճախ ազատվելով նրանցից՝ իմ առաջ բացվում են նորանոր հորիզոններ, որոնք սակայն հաճախ ամպածածկ են լինում: Այդ ամենի մասին բացի ինձնից ոչ ոք չի կարող իմանալ, զի անհնարին է այդ մասին հաղորդակից դարձնել մի այլին: Նրանք նման ամեն մի շնչին փորձից հօդս կցընդեն:

Այդպես շատ հաճախ ունեցած իմ մտորումները կարճ ա-

ռած պատվում են այն բանի շուրջը, ինչ Չարենցը ձևակերպել է այսպես.

Ամեն պոետ գալիս իր հետ մի անտես նետ է բերում,
եվ նետն առած, խոհակալած որս է անում երգերում,
Բայց դառնում է բանաստեղծ նա ոչ թե նետի մեծությամբ,
Այլ հարվածի ահազնությամբ, որ հանճարներ է սերում:

Անշուշտ անզուգական է ասված: Անշուշտ անտարակուսելի է, որ ես բանաստեղծ եմ, և որ ես ինձ հետ մի անտես նետ եմ բերել: Այդ մի հանդամանք. մի առաջնային, բայց տվյալ դեպքում խնդրից դուրս հանգամանք է: Երկրորդ հանգամանքը հարվածի ահազնության և այն դեպի ո՞ւր ուղղելու հարցն է: Այդ է հարցերի հարցը ինձ համար այժմ:

Վերջին հաշվով սա է ամենակարևորը և սա է վճռողը իմ To be or not to be-ի, իմ լինել, թե չլինելուն:

Այժմ ես մի քիչ այլ կերպ եմ հասկանում այն տարրական և անժխտելի ճշմարտությունը, որ նույնպես ձևակերպված կգտնենք Չարենցի մոտ.

Թե ուզում ես երգդ լսեն՝
Ժամանակիդ շունչը դարձիր:—
Կապվիր նյարդով լուրաբանչուր
Քո օրերին ու քո դարին...

Կամ.

Ձի շղթայի մարդու ոգին ոչ մի կապով արտաքին,
եթե դարի, ժամանակի գրահ ունի իր հագին:
Կբարձրահա ու կկանգնի նա հավատով անասան
եվ կմնա գալիք կյանքում՝ անխորտակ ու ահագին:

Ես չեմ կարող ժխտել հրապարակախոսային պոեզիան, եթե նույնիսկ ցանկանամ, բայց նմանօրինակ ոչ ոք էլ չի կարող ինձ համոզել, որ նա կարող է մնալ «գալիք կյանքում անխորտակ ու ահագին»: Իմ խոհերի ու մտածումների մեջ ես միշտ ապացույցներ փնտրում եմ գրակ[անության] պատմության մեջ, մասնավորապես մեր գրակ[անության]:

Հիմար կլինի անշուշտ նա, ով կցանկանա պնդել, որ այսօր Շահագիր կամ Քաթիպան բացի պատմական նշանակությունից ունեն նաև այնպիսի գեղ[արվեստական] նշանակություն, որ պիտի սեղանի գիրք դառնան: Բայց Գուրյա՞նը, որ ապրել է մոտավորապես նույն շրջանում: Կամ մի այլ օրինակ. որը իր մեջ հենց շատ լավ դրսևորում է այդ երկվությունը: Պեշիկթաշլյանը: Այսօր իսկ նրան սեղանի վրա կարելի է ունենալ: Նրա այնպիսի ոտանավորներ, ինչպես «Գարուն», «Ծղրայր եմք մեք», «Գնացեք իմ տաղք», «Մահ քաջորդույն», «Թաղումն քաջորդույն» և այլը, իրենց գեղ[արվեստական] արժանիքներով, իրենց ավարտվածությունը միայն կարելի կլինի փնտրել այնպիսի բանաստեղծների մոտ, որպիսիք են Տերյանը, Չարենցը: Բարի: Իսկ նրա ստեղծագործության մյուս, ամենաստվար, բայց արդեն գեղ[արվեստական] արժեքի տեսակետից միանգամայն անպետք մա՞սը, Մխիթարյան Վանականներին, զանազան նեղ հանգաններին և այլնի նվիրված ոտ[անավոր]նե՞րը...

Ի՞նչ են դրանք:— Վաղուց մեռած մոմիաներ: Մոռանանք առաջիններին (Պ[ատկանյան]-ին և Շ[ահագիր]-ին): Ամենահարմար օրինակը Պեշիկթաշլյանն է: Անկասկած է, որ Պեշ[իկթաշլյան]-ը արտահայտել է իր ժամանակը լրիվ կերպով իր ստեղծագործության թե այս, թե այն մասով: Բայց ինչո՞ւ նույն բանի մասին ասված նրա այս-ն ու այն-ը այսօր միևնույն արժեքը չունեն, և այն էլ միայն մի դարից պակաս ժամանակաշրջանում:

Հետևությունը պարզ է նույնիսկ գրականության դիլետանտի համար: Այդ բացատրվում է «հարվածի հասցնություն»-ը, որ հանճարներ է սերում: Բարեկամ, սիրելիս, կարծում եմ, որ ես շատ ավելի իրավունք ունեմ այդ մասին մտորելու, քան ոչ ոք: Վերջին հաշվով այդ հարցի վճռումը, մեծամտություն չհաշվես, ոչ միայն ինձ կամ քեզ (իմ մերձավորներին) համար է անհրաժեշտ և հարկավոր:

Այսպես դատելով կարծում եմ, որ Մայակովսկին ավելի քան մի ուրիշ պոետ նույն բախտին կարժանանա, ինչ Պեշիկթաշլյանը: Նույն հաշվեհարդարի առաջ կանգնում է նույնիսկ Չարենցը, բայց անհամեմատ ավելի նվազ կերպով: Այդ

բացատրվում է նրա ստեղծագործության բնույթով, որ քեզ համար հասկանալի է: Նույն բանի առաջ կանգնում են բուլլորը՝ առանց շնչին բացառության: Ահա Միամանթոն: Նա մի յուրատեսակ հսկա է, ահռելության մեջ թերևս միակը՝ Մայակովսկուն մրցակցող... Բայց նույն այդ հսկա Միամանթոն ունի իր աջն ու ահյակը: Նրա ամբողջ ստեղծագործությունը ունի ամենասերտ կապ, այլև ամենաանհրաժեշտ աղերսվածություն և պայմանավորվածություն հայ ժողովրդի դժբախտ ճակատագրի, հայկական ջարդերի և հայ ժող[ովրդի] հետ կապված մյուս հանգամանքների հետ: Կրկնում եմ՝ նրա ողջ ստեղծագործությունը ծագում է այդ խնդրից և հանգում այդ խնդրին: Ուրեմն նա ևս դարձել է իր ժամանակի շունչը: Բարի: Բայց կարդա նրան և ահա թե ինչ կտեսնես: Ամբողջապես համարյա «Հոգեվարժի և հույսի ջանք»-ը գիրքը կարող է ունենալ բացարձակապես միջազգային գեղ[արվեստական] արժեք: Այսօր շատ խելոք վարված կլինի Պետրոսյանը, եթե այդ գիրքը հրատարակի, և շատ դժվար է պատկերացնել մի այլ բանաստեղծի, որ այս ահեղ օրերը կարողանա այնպես ահեղորեն պատկերացնել, ինչպես Ս[իամանթո]-ն: Ուրեմն ժամանակի և տարածության հասկացողությունը բացասաբար չի անդրադառնում Միամանթոյի այդ գրքի վրա: Այլ են սակայն ասնք, «Հայրդիններ»-ի երեք շարքերը: Գրել է նույն խնդրի առնչությամբ, նույն մարդը, նույն ուժով, ընդհակառակը, դեռ ավելի ուշ շրջանում և պիտի սպասվեր ավելի մնայուն բան, սակայն ստացվել է հակառակը. «Հայրդիններ»-ը գերազանցապես իր արժեքը կարող է պաշտպանել (և ոչ պահպանել) հայ ժող[ովրդի] համար... Նույնիսկ այդ շարքերի տարբեր ոտ[անավոր]ներին տարբեր վերաբերմունք կարելի է ցույց տալ: Նմանապես կարելի է դատել նրա «Դյուցազնուհեն», «Հայրենի հրավեր», «Կառմիր լուեր բարեկամես», «Մեսոպ» գործերի մասին:

Այսպես, կարող եմ ընդարձակել իմ մոտեցումը բուլլոր ուղղություններով: Բայց կարծում եմ, որ այդքանն էլ բավական է, միայն մնում է հիշեցնել քեզ իմ վերաբերմունքը (ճիշտ նմանօրինակ) նույնիսկ Չարենցի «Գիրք նախապարհ»-ի նկատմամբ:

Այդ ամենից հետո պարզ է, թե ինչպես պիտի հասկա-
նու՞ «ժամանակի շունչը դառնալու» խնդիրը, որ ժամանակի և
տարածության ոչ փիլիսոփայական, այլ իրական հասկացո-
ւելթյունը բացասաբար շանդրադառնա գեղ[արվեստական],
զործի վրա: Այդ այն առանցքն է, այն անհերքելի և հա-
րամնա գործոնը, որ երբեք չպիտի անգիտանալ: Մնացած
խնդիրները արդեն ճաշակի, վերաբերմունքի, հասկացողու-
թյան հարցեր են: Վերջին դեպքում (ճաշակ, վերաբերմունք
և այլը) խոսքս վերաբերում է, ասենք, այն բանին, որ ինձ
համար (ինչպես և Չարենցի համար վերջին շրջանում՝ հի-
շիր «Մահվան տեսիլ»-ի «Սկիզբը»—

Սակայն բոլոր միասին՝ թվում եք ահավասիկ
Ապագայով լեցուն աչքերիս. որ անցյալին եմ հառել ահալի—
Ով դուք, զառամյալ մանկության հիշատակներ վսեմ,—
Այնքան թեթևախոս և միամիտ...—

այսօր ավելի հմայիչ է բարդը (ոչ խճճվածը և անիմանալին,
այլ խորիմաստը), քան պրիմիտիվը, խորը և նստողը, քան
զգացումնայինը, ունալիստականը, քան ուղմանտիկականը,
Շեքսպիրը, քան Շիլլերը, Գյոթեն, քան Հայնեն (ուղմանտի-
կական լիրիկան), Սիամանթոն, քան Տերյանը, Մայակովսկին,
քան Եսենինը, վերջին շրջանի Չարենցը, քան սկզբնական
շրջանի Չարենցը:

Բայց կրկնում եմ՝ այդ միայն ճաշակի և վերաբերմունքի,
նեղ, անհատական հայեցակետի խնդիր է և այդ բնավ չի
նշանակում, թե ինձ համար անհարազատ է զգացումային,
ուղմանտիկ լիրիկան, մեղմութունը, պարզությունը, կոնկրետ
Շիլլերը, Հայնեն, Տերյանը, Եսենինը, Չարենցը՝ նախնական
շրջանի և այլն: Ես, ինչպես ամեն մի խելոք մարդ, չեմ զո-
հում այդ շարքերից մեկը մյուսին: Ընդհակառակը «երանք
բոլորն են ինձ սիրելի» (Չարենց), որովհետև նրանցից

¹ Խոսքը վերաբերում է Համբրոսին, Վերդիիտին, Ֆիրզուսուն և
առհասարակ «Գաղափարներ» մտքի և հանճարի և քերթության պետեր-ին:

Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է կրում,
Յուրաքանչյուրը բերում է մի առանձին պարզե...
... Եվ պատմում են նրանք մեր աշխարհի մասին
Խոսքերով անկրկնելի և անագորույն...

Դրա համար էլ

Ես սիրում եմ նրանց բազմախորհուրդ
Այս ինքնության դաշն, անկրկնելի,
Նրանց միջև եղած տարբեր արյունն այս խոր
Եվ բոլորն են նրանք ինձ սիրելի... (Չարենց)

Այսպես դատելով ահա և վճռելով «ժամանակի շունչը
դառնալու» պրոբլեմը, մնում է արդեն համեմատաբար ոչ
հեշտ լուծելի, բայց վերջին հաշվով ամենակարևոր խնդիր-
ինչպե՞ս պատկերել այդ ժամանակը: Այստեղ նորից պիտի
հիշեցնեմ Չարենցի մի խորհուրդը «Գալիթի կրգասացնեբրին»:
Ահա նրա վեց խորհուրդներից հետո վերջին խորհուրդը՝
հանճարեղ կերպով ասված.

Եվ ասում եմ ահա Ձեզ, որ պիտի երգեք,
կարդալով մատյանն այս խորախորհուրդ.—
Խորհուրդ չի վերցնում ապագայի երգը
Եվ այս է իմ խորհուրդը լոթերորդ...

Շատ բարի: Ուզում է ասել, որ ես պիտի գրեմ՝ ինչ թելա-
դրում է սիրտս, կամ պիտի լռեմ: Այսպես է, և այլ կերպ
պատկերացնել իսկական բանաստեղծին անհնարին է, մա-
նավանդ, որ այդ բանաստեղծը կարդացել և ըմբռնել է.

Ուրեմն, ով գալիթի երգասաններ,
Որքան էլ վե՛հ լինի ձեր ներկան—
Չմոռանանք. որ դուք պիտի սերմեր ցանեք
Որ լինեն դարից ձեր— երկար...

Այսպես մտածելով և դատելով ահա, իմ անդրանիկ գիր-
քը (կամ գրքերի ցիկլը), որ ես կվերնագրեի «Մահվան վե-
նեբրա», ունենալու է հետևյալ բովանդակությունը և կա-

սուցվածքը: Այն, ինչի մասին պիտի խոսեմ, դեռ ոչ մի բան արված չի և նայած այն բանին, թե այդ գրքի մեջ մտնող ցիկլերը ինչ շափի կհասնեն, ըստ այդմ էլ կորոշվի նրանց հրատարակման պլանը. արդյոք ամբողջը մի գրքով, թե՛ մի քանի գրքով: Եթե ես կարողանամ վերջացնել այն, ինչպես ես մտածել եմ և այնպիսի հաջողությամբ, որպիսին սպասվում է, ապա ինձ վրա անգամ ճիշտ ասված կլինի մի ինչ-որ իմաստասերի միտքը. «Ճշմարիտ բանաստեղծին հասկանալը նույնքան դժվար է, որքան ճշմարիտ արվեստագետին (երաժշտին)»:

Իրոք իմ գործը հիշեցնում է երաժշտական մի սիմֆոնիա, որ բաղկացած է վեց մասից: Այդ մասերից յուրաքանչյուրը կլինի տարբեր բնույթի, տարբեր տիպի: Նրանցից յուրաքանչյուրը կլինի մի ամբողջական և լրիվ գործ իր սկիզբով, իր զարգացմամբ և իր վախճանով, բայց և միաժամանակ նրանցից յուրաքանչյուրը ընդհանուր իդեալով կապված կլինի իր նախորդին և հաջորդին և ապա բոլորի միասնությամբ իսկական բանաստեղծի, իսկական հասկացողի համար ամբողջական և հասկանալի կլինի այդ գործը ինչպես մի հրաժշտական սիմֆոնիա:

... Գրքի սկզբում դրված կլինի «To be or not to be»-ն («Լինել թե չլինելը»), որի բովանդակություն]-ը հենց վերնագիրը հուշում է, ապա առաջին շարքը (կամ գիրքը, նայած ծավալին, գրեւոց հետո):

Ի ԵՐՈՎԱՆԻ ԵՐԿԵՐ

Ամեն ինչ խաղաղ էր: Ե՛վ երկիրը, և՛ հոգին: Կար ինչ-որ կախարդանքի նման բան, ասենք ինչ-որ սիրո վեներայի թագավորության շրջան: Բայց ահա երևաց մի մուժ և անըմբռնելի ուժ, ու հողս ցնդեց այդ խաղաղ կյանքը: Այստեղից էլ սկսվում է «ետովքի երգերը»: Ե՛վ երկիրը, և՛ Մարդը ապրում են խոռվք՝ խաղաղության փոխարեն: Քաղաքական լեզվով ասած՝ ֆաշիստները խանգարեցին մեր կյանքի անդորրությունը: Այս ամենատիպականն է այս ցիկլի համար: Ի՞նչ «ժամանակի շունչը» լրիվ դառնալու համար կաշխա-

տեմ մատուցել մի այլ տարբերակ, մի այլ նուրբ շարիթ՝ խոռվք՝ այն բանի համար էլ, որ ինչի ձգտում էինք. նրան չհասանք: Այդ իհարկե կհնչի շատ մեղմ՝ առաջինի համեմատ:

II ՄԱՀՎԱՆ ՎԵՆԵՐԱ...

Այս արդեն առաջինի օրգանական շարունակությունն է, բայց, այսպես ասած, ինչպես այս ցիկլերից յուրաքանչյուրը, ունի իր սուվերեն իրավունքները: Այն մուժ ուժը, որ մեր (և աշխարհի) խաղաղ կյանքը խոռվքի փոխեց, այդ ուժի հետ ծնվեց մի նոր զգացում. Մահը: Մահը գերում է երկու կողմին: Քաղաքական լեզվով ասած կարմիր զինվորը գնում է դեպի մահ «գիտցած լինելով ինչն է հագնում մահվան քղանցքը սև, իրանապիրկ, գիտցած լինելով ինչն է աչքան շատ վաղ հավաքում դեռ նոր բաց արած ծիրաբանահագի առագաստը իր այս ուրախ կյանքում»: Նույնը կարելի է ասել նաև մի ֆաշիստ զինվորի, մի անգլիացու, մի ճապոնացու, մի չինացու մասին, չնայած որ նրանցից յուրաքանչյուրի «գիտցած լինելը» միանգամայն տարբեր բաներ են: Այսպես ահա կարծես մահվան աստվածուհու թե՛ վերի ճախրում ես լսում աշխարհի վրա, ոչ թե սիրո, այլ մահվան վեներայի: Այս է ցիկլից բխած բովանդակություն]-ը, որ երբեք չի բխի հենց առաջին հայացքից և ամեն մի ընթերցողի համար:

Այս ցիկլի վերջում դրված կլինի նույնանուն պոեման, որի վրա առանձնապես կանգ չեմ առնում: Նա ավելի կոնկրետ կերպով է կապված պատերազմի հետ: Նա մի յուրատեսակ «Ամենապոեմ» է, մի յուրատեսակ «Война и мир», մի նոր ու յուրատեսակ «Լուսին»: Այստեղ իմ մոտիվները կլինեն միջազգային, և իմ հորիզոնը կլինի համաշխարհային: Ոչ մի սահմանափակություն: Ինձ առաջին հերթին կհետաքրքրի համայն աշխարհի բախտը, երկրազնդի բախտը, որն ինձ կթվա մի շնչին գնդակ տիեզերական հաստատություն մեջ, մարդկանց բախտը, որպես շնչին և դժբախտ արարածներին: Կարծես երկրի վրա կատարվող անցուզարձին կնայեմ վեր-

երկրային ինչ որ տեղից, ինչ որ Մարսից կամ Սատուրնից...

Ես կառաջնորդվեմ մոտավորապես նախանդյանի հետևյալ իդեալով, որ նա զարգացրել է «Երկրագործության» մեջ— ցայսօր մարդ գոյություն չունի, մոտավորապես կրկնում եմ նրա միտքը,— այլ գոյություն ունեն միայն ազգեր: Ցայսօր մարդը չի հասել այնտեղ, որ հանդես գա առանց պաշտոնական անվան (անդ[լիա]ցի, գերմ[անա]ցի, ռուս, հայ)՝ սոսկ Մարդ բնական անունով...

III ԽԱՉՆԼՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Այս նորից օրգանական շարունակությունն է նախորդի:— Վեներան գերել է բոլոր հոգիներին: Բոլորը մահվան զգացման, մահվան կաշկանդանքի առաջ ստրուկ են, գերի, խաչված... Ցիկլը հենց այդ պահի մասին կբարբառի, այստեղ ես մի նրբերանգ կմտցնեմ: Այսպես ասած խաչված երազներ— ինչ երազում էինք, նրան չհասանք:

IV ՀՈՒՅՎԱՐՔԻ ԵՐԳԵՐ

Խաչելությանը հետևում է հոգեվարքը:

V Requiem

Հոգեվարքին հետևում է մահը, որի համար արարողություն կհանդիսանա այս ցիկլը (ընդամենը տասը ոտ[ոնավոր]), որ արդեն գրված է և քեզ ծանոթ է: Այս ցիկլը պիտի օրինակ ծառայի քեզ մնացած ցիկլերի մասին դադափար կազմելու համար: Ինչպես սա, այնպես էլ մնացածները պարտադիր չէ, որ նույն իդեան արտահայտեն կոնկրետ կերպով այնպես, ինչպես այս ցիկլը բնավ կոնկրետ կերպով չի արտացոլում մահվան արարողությունը: Վերջինս միայն բնդհանուր կարգով է երևում, վերջին հաշվով, իսկ կոնկրետ կերպով, ինչպես հայտնի է քեզ, պատկերվում են օրվա տարբեր պահեր (այգաբաց, միջօրե, երեկո, գիշեր...)

Այսպես կլինեն նաև մյուս ցիկլերը:

Խաչված, մեռած կյանքի, երևույթի, մարդու (ես ինչ գիտեմ ինչի...) վերադարձի կարոտն է... Գրքի վերջում կլինի վերջերգի փոխարեն որևէ բան, թերևս «Ուղեքձ առ Բենադատն»: Դրանով գիրքը (կամ գրքերի շարքը) կվերջանա, բայց թե ե՞րբ, ասել չեմ կարող: Գուցե այդ միայն գեղեցիկ երազ է, որ իրագործել չեմ կարող, բայց այնուհանդերձ գեղեցիկ երազ է:

Իվան ջան, հոգնեցի: Գրիչս էլ շարժել չեմ կարող: Գրել շատ եմ ուզում, բայց էլ չեմ կարող: Շատ եմ կարոտել քեզնից, որպես ամենամերձավորից:

Վաղը հավանաբար կգնամ սար: Կաշխատեմ հետս բերել «Խոռովի երգերը»: Բայց գիտես, չգիտեմ ի՞նչ շապիկ պիտի հագցնեմ այդ երաժշտական իդեան: Նամակ կարդա լրջորեն, աշխատիր խորամուկս լինել այն ամենի մեջ, որ աշխատել եմ տալ և գուցե դուրս չի եկել և միաժամանակ աշխատիր կոնկրետ վերաբերմունք ցույց տալ, որպես օգնություն: Բարեկիր ձերոնց: Բարեկիր թանգարանին, բոլորին մեկմեկ և խնդրիր իմ կողմից բոլորից ներողություն, որ չկարողացա վերջին անգամ անցնել:

Գրիր շատ և շուտ: Եթե ոչ կկատարեմ: Ինչպես կուզեի այս ընկերին խոսել բոլոր ծրագրերիս մասին: Գիտես որքան շատ են և որքան վառ են նրանք...

Էհ առայժմ սպասում եմ քո նամակին եղբայրական ամենազերմ համբույրներով՝

Պարույր

6. 8. 42 թ., Զանախի

Վաճե սիրելի.

Ստացա նամակդ և դրանով իսկ առիթ՝ ներողություն խնդրելու քեզնից լուսթյանս համար: Նախկին նամակներիդ պատասխանել չկարողացա զբաղվածության, նաև այն պատճառով, որ ինքս էլ չգիտեի, թե՛ ի՞նչ պիտի ասեմ ձեզ՝ Ս[այաթ]-նովայի մասին հոգված ճամփելու մասին: (Մի անգահն պատմություն է, որին հիմա անդրադառնալ շարժի): Վերջը որոշեցի մի քանի նամակիդ միանգամից պատասխանել: Գրեցի, մինչև հիմա էլ թղթերիս մեջ է 3—4 էջանոց այդ նամակը, որ նույնպես անավարտ մնաց: Բա, ախպերս... (մի օր կտամ քեզ):

Հիմա դամ վերջին նամակիդ:

Շատ շնորհակալ եմ շնորհավորանքիդ և ջերմ խոսքերիդ համար: Եվ մեկընդմիջտ արգելում եմ զանազան «ներողություն»-ներդ ու կասկածներդ (թե մի գուցե նեղանամ անկեղծությանդ համար): Այ տղա, դու ինձ ինչի՞ տեղ ես գրել. մեծամտությունք կամ փառամոլությունք հիվանդի՞: Փառք աստծո, որ այդ ախտերը ինձնից այնքա՛ն հեռու են...

Գրքիս մասին կարծիքդ շատ տրամաբանական է, ուստի և ուզում եմ վիճել հենց այդ տրամաբանության գեմ: Ըստ որում վիճում եմ (հավատա՞) ոչ իբրև հեղինակ, այլ իբրև քո գրքի գրախոս, իբրև, եթե կուզես, քննադատ, իբրև ընթերցող: Ասում ես՝ «նույն հասցեով»-ը ես եմ, «Մարզը ափի մեջ»-ը՝ նույնպես, և ամենից շատ «Թուուցիկ երգեր»-ի կեսն եմ ես, «Ականջ»-ի շա՛տ բաների դեմ ես... Քո մեջ, այսպիսով, շարունակում է գործել այն ըմբռնողությունն ու ճաշակը, որի դեմ էի գրել ես իմ նամակներից մեկում՝ ի պատասխան քո հարցի, թե ի՞նչ կուզեի ունենալիք և ինչ՝ շունենալիք: Ես քիչ առաջ թերթիցի «Թուուցիկ երգեր»-ը և չկարողացա հասկանալ՝ թե այդ ո՞ր կեսը շես հավանում: Ավելի ճիշտ՝ հասկացա: Բայց ճիշտ կլինեիր, եթե այդ շարքից ընդամենը մի Լաճի բան հավանեիր, իսկ մնացածը

(մեծագույն մասը)՝ ոչ: Դա կլինեիր տրամաբանական՝ քեզ համար, քո առայժմյան (ներիր այս բառիս համար) ճաշակի և ըմբռնողության տեսակետից դիտած:

Իսկ ես կուզենայի, որ ամենից քիչ հավանեիր «Մարզը ափի մեջ» շարքը (ուր դու ամենից շատ ես ինձ գտնում), որովհետև այդտեղ է ամենից քիչ բանաստեղծը և ամենից շատ՝ քարոզիչը, ազիտատորը, քննադատը, բարոյախոսը (և այլն):

Հիշիր, որ կյանքի վրա մեր (բանաստեղծներիս, ընդհանրապես արվեստի) ներգործությունը բնավ էլ այնքան մեծ չէ, որքան մեզ տասնամյակներ շարունակ ներշնչել են: Ու եթե մինչև անգամ մեծ էլ է, ապա այդ մեծը անցողիկ է: Վիթխարի ազդեցություն է ունեցել Ռ. Պատկանյանը, իսկ Մեծարենցը՝ համարյա ո՛չ մի: Բայց Ռ. Պատկանյանը այսօր շունի գեթ մի բանաստեղծություն քեզ բավարարող, մինչդեռ Մեծարենցը այս րոպեիս էլ կարող է շարժել իմ ու քո նախանձը իր լավագույն փնջով, որ երբեք էլ չի թառամելու... Ցավալի՞ է: Այո, շատ ցավալի է, որ կյանքը (և ժամանակը) այսպես անշնորհակալ են վարվում ամենաակտիվ, ամենագործունյա, ամենալավ ու ինքնազո՞հ մարդկանց հետ: Բայց այդպես է. մարդկությունը իր լավագույն (վերև հիշված բառերի տեր) զավակներին ավելի շուտ է մոռանում, քան իր այն զավակներին, որոնք առաջինների համեմատությամբ ավելի ինտելեկտ են, ավելի (եթե կուզես) եսասեր, պաղ, հաշվենկատ: Եվ այս՝ լոկ այն պատճառաբանությամբ, որ արվեստն ունի իր սահմանները, իր օրենքները (չշփոթես կանոնների հետ), և ով սահմանազանց և օրինազանց է (ով չի հարգում այդ սահմաններն ու օրենքները) նա, ինչպես որ ամեն մի սահմանազանց և օրինազանց, դատապարտման է ենթարկվում, տվյալ դեպքում՝ մոռացվում:

Այսպես դատելով. «Ականջ» և «Թուուցիկ»-ները շա՛տ ավելի բարձր մակարդակ են, քան «Ափի մեջ»-ը, քան «Մաշտոց»-ները: Նորից եմ կրկնում. մեջս բնավ էլ չի խոսում հեղինակը: Խոսում է վնճադատը, արդի (և վաղվա) բանաստեղծության ջատագովն ու շահախնդիրը: Իմ դատումը ճիշտ է (ավելի ճիշտ՝ իմ դատումի արդարությունը հավատա) նաև այն շատ կարևոր պատճառով, որ խոսքը իմ նոր գրած

խարխուլ կամրջի վրա, պիտի կամեցած լինես Անհանգրստությանը «հայրիկ» կանչելու և մտքովդ պիտի անցած լինեն բաներ, «որ շատ են նման խելագարության»։ պիտի զգացած լինես այն պահերին, երբ

Մնալով նո՛ւյնը,
նո՛ւյնը լինելով՝
Մեծանում ես դու,
Շարունակվում ես
Ինչպես... սենյակը մեծ հայելու մեջ.

այն պահերին, երբ դու «շատ ես ինքդ քեզ նման, այսինքն՝ բարձր ինքդ քեզանից»։ այն պահերին, երբ ձմռանը «վարդերի կարմիր ճիչն ես լսում քո ծխախոտի դառն ծխի միջից», և ահով զգում ես, որ «եթե արյանդ լուցկի մոտեցնես՝ արյունդ նույնպես կարող է... վառվել»։

Եվ այս ամենի մեջ տեսնել միայն խեղճի։ Ամբողջ խելքիս օգնությամբ էլ ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե այդ ինչպե՞ս ես դու (ոչ թե ուրիշները և հազարավորները, այլ դու) միայն խելք տեսնում այնտեղ, ուր կա... շատ բան կա, որ կոչվում է երկու բառով՝ վեցերորդ զգայաբան։

Իսկ «Վերնագիրը վերջումը»...

Ես շատ եմ ցավում, շատ-շատ, որ միամտություն (ավելի ճիշտ՝ ընթերցողի վրա ավելորդ վստահություն) ունեցա այդ 11 բանաստեղծությունների առաջին տողերը վերջում գնելու։ Բայց, տեր իմ աստված, մի՞թե այդքան դժվար բան է (առաջին բանաստեղծությունը կարդալուց հետո) նախ աչք զցել վերջին տողին և ապա կարդալ բանաստեղծությունը։ Եթե այդ հասարակ բանն արվի, (ինչպես որ ծրար ստանալիս նախ հոհասցեն ենք նայում, որ իմանանք, թե նամակն ումից է), ապա «Վերնագիրը վերջում» 11 գլխանի այդ «պոեմը» պիտի որ թվա... եթե ես կարգայի այդ «պոեմը» մեկ այլ բանաստեղծի գրքում, հավատացնում եմ քեզ, որ քեզ նման կբացականչեի.

— Вот это феноменально!

Եվ կկրկնեի մի քանի անգամ։

Իսկապես էլ «Վերնագիրը վերջում»-ը ես համարում եմ

իմ բոլոր գրածների մեջ հազվագյուտներից մեկը։ Եվ տա աստված, որ կյանքիս մնացած մասում էլ մեկ-երկու անգամ նորից իմ «սենյակը» մեծանա ներշնչանքի «հայելու մեջ» այնպես, որ գրեմ այդ ուժի, մաքրության և հնչելու-թյան ուրիշ մի քանի բան։

Իսկ դու «ավելի շատ աշխատում ես հասկանալ, բմբռնել»։ Այդ նրանից է, որ առայժմ դու նամակայնությունն ես համարում պոեզիայի արդի մետրաչափը։ Ես այդ նամակայնության «թեզը զարգացրել եմ» ընդդեմ հեռագրայնության և ԽՍՀՄ-ի Բայց մի ուրիշ հողվածում (թե՞ Սիլվայի մասին և ԽՍՀՄ-ի Բայց մի ուրիշ հողվածում) ես ավելի ճիշտ արածս զեկոսման մեջ, — լավ չեմ հիշում) ես ավելի ճիշտ բնութաբանում ունեմ, որ կարող եմ վերարտագրել (հասլուտապես և թուղթիկ) հետևյալ կերպ.

Սթե «հին» բանաստեղծությունը նման է հեռվից գրված նամակի (ուստի և՛ նկարագրական, մանրամասն, ամեն ինչ պարզ և մինչև վերջ բացատրված), ապա «նոր» պոեզիան, պիտի նման լինի (ուշացած հայերիս համար պիտի, իսկ ընդհանրապես՝ նման է) երկու մտերիմների, շատ մտերիմների խոսակցության, այնպիսի մտերիմների, ՈՐՈՆՔ ԻՐԱՐ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆ ԿԵՍ ԽՈՍՔԻՑ ԿԱՄ ՄԻ ԱԿՆԱՐԿՈՎ ՄԻԱՅՆ, ուստի և նրանց համար ոչ միայն ավելորդ, այլև ծիծաղելի է իրար բացատրել բաներ, որոնք վաղուց գիտեն, ասել է բաներ, որոնց կարիքը չունեն, անել բաներ, որոնք նույն-բան ավելորդ և ծիծաղելի են, ինչպես գիցուք, իրար ձեռք տալն ու անուն ասելը այն ժամանակ, երբ իրենք ոչ միայն տարիների ծանոթներ են, այլ նաև տարիների մտերիմ։

Ուստի ե՛ «նոր» պոեզիան «շասվածներին» պոեզիա է, ոչ թե գծի, այլ կետ գծի (ПУНКТИР-ի) պոեզիա. նա պարան չէ, ալ ըզբառ (միացման տեղում շփման շատ քիչ մակերես ունեցող, ապա իրարից ահագին հեռացող ու կրկին մոտեցող)։ Ահա, երևի, այդ շասվածներն են, որ քեզ թվում են «միայն խելք»-ով գրված, անհոգի—անզիգար, ինչպես նաև բարդ («Իսկ պետք է իսկույն կլաներ ինձ»)։

Այստեղ պիտի մի բան անել։ Բայց ոչ թե ես պիտի մի բան անեմ, այլ դու պիտի մի բան անես։

Ես որ հասել եմ շասվածներին մակարդակին, այլևս ոչ

մտադիր եմ, ոչ էլ կարող եմ այսուհետև ետ դառնալ դեպի սովածֆեների շրջանը, ինչպես որ ոչ մտադիր եմ, ոչ էլ կարող եմ կրկին երեխայանալ: Ես խոսում եմ իմ մտերիմներին, իմ ամենամեծավորների հետ, միայն նրանց հետ: Ես ոչ մտադիր եմ (ոչ էլ կարող եմ) օտարանալ նրանց, խորթանալ նրանցից, նրանց անձանոթի տեղ դնել, ուստի և պիտի շարունակեմ խոսել այնպես, ինչպես խոսում են նրանք դեպքերում: Խոսել ակնաբեկներով, խոսել այնպես, որ հասկացվեմ կեսխոսից: Մնացածները, եթե կարիքն ունեն իմ խոսքի (այստեղ և մնացած բոլոր դեպքերում այս «իմ»-ը միայն ինձ չի վերաբերում. այս «իմ»-ը հավասար է «արդի բանաստեղծ»-ին) պիտի ջանան մտեմալուստով ինձ, դառնալ իմ մեծավորը. այս դեպքում առանց որևէ դժվարության իրենք էլ կհասկանան ինձ կեսխոսքից, մեկ ակնարկից: Իսկ եթե չեն ուզում՝ «դու քո ճամփով, ես իմ ճամփով»:

Ահա այս է ճանապարհը, Վահե ջան, միայն այս: Եվ, ինչպես երևում է, դու պիտի անես ԵՎՄ մի քայլ, որպեսզի նամակայնությունից հասնես կեսխոսֆայնությանը...

Նամակով դժվար է այս դժվար բռնիքի բաների մասին խոսելը: Իմ գրքում հավատո հանգանակներ շատ կան, բայց ամենակարևորը (մեր այսօրվա խոսակցության համար) «Անպայման պայմանն է» (էջ 54): Նորից կարդա և եթե «միայն խելք» էլ թվա, հիշիր, որ դու ես սխալվում: Այնտեղ է իմ շափածո կարծիքը այսօրվա (կամ վաղվա) պոեզիայի մասին: Եվ իբրև արտացոլում այդ կարծիքի, ինչպես և ի պատասխան քո անկեղծության, ես էլ ասեմ, թե այս «Մարդը ափի մեջ» գրքում (որի հեղինակին չեմ հաճախում), որ բանաստեղծություններն են ամենից շատ համապատասխանում իմ ճաշակին ու պահանջին: Բարի իրիկուն—9, Գլխապտույտ—24, Նոր ծանոթություն—27, Անջատում—33, Երբ աչքերն են սառում—45, Հանգստացրու ինձ—50, Անպայման պայման—54, Վարք մեծաց—57, Ինչպե՞ս թե բախտ չկա—60, Արշալույսից առաջ—62, Ցավն է հաճախ—73, Սև կատու—74, «Ականջ»-ից՝ շատ բաներ, ամբողջ «Վերնագիրը վերջում»-ը, վերջին երկու պոեմը:

Նորից կարդա նշածս բան[աստեղծություն]ները և

կտեսնես իմ տրամաբանությունը (ճաշակի), որ շատ բաներով, երևի, պիտի հակառակի քո տրամաբանությանը, և նաևակիս միջնորդությամբ կհասկանաս, թե դեպի ուր եմ գրում՝ գիտակցաբար, որոշակիորեն, հավատացած...

Առողջությունս բանի նման չի: Սրտիս միացավ... այ քեզ միացում... միզապարկս (սիրտ-միզապարկ), որ եթե չբուժվի՝ ապրել չարժի: Հոգիս դուրս է գալիս: Շատ շուտ ընկալի՞ որ վաղը (բա՛, այ՝ քեզ զուգահեռություն) լրանում է բառասուն տարիս: Այսպես խարխուլվելու համար շատ էր շուտ: Իսկ գործի, արածի տեսակետից՝ շատ է շատ այս անավոր 40-ը «անունը կա՝ ամանումը չկա», է, ո՛չ ավելին: Ու սիրտս կծկվում է այդ մտքից, և ուզում եմ ճշալ. «Հըբա կյանքս ինչի՞ ընցավ»: Մնացել է մի ինչ-որ 10 տարի: Գե եկ ու շարածդ արա... Անհույս է...

Ինչի վրա եմ աշխատում: Վաղուց է բան[աստեղծություն]ներ չէի գրել: Վերջերս, որ ստիպված եղա անկողնում մնալու, մի 1500 տող բան[աստեղծություն]ներ եմ գրել: Այ, եթե այստեղ լինեիր՝ կկարդայի, և դրանք թերևս ավելի կբացատրեին այն, ինչ փորձում եմ նամակով ասել: «Մարդ»-ի մեջ քո չհավանած ճամփով: Թերևս էլի՞ դիմադրեիր, բայց գուցե և վարժվելով ոչ միայն ընդունեիր, այլև շատ հավանեիր: (Վարժվելը շատ մեծ բան է, այսինքն՝ ուժեղ բան, թերևս կյանքի ամենահզոր բանը, — մի՛ ծիծաղիր): Համենայն դեպս մի-երկու հոգու կարդացել եմ, ասում են, որ ավելի ուժեղ են ցայսօր գրածներին: Ես էլ եմ այդպես զգում, բայց կարող է պատահել, որ սխալվում եմ, զի տա՛-տա՛ եմ...

Մենդիս քաջընկն անցնելուց հետո պիտի (բռնություն գործադրելով) բանաստեղծության բերանը փակեմ և վերադառնամ Սայաթ-Նովային: Պարտավոր եմ մինչև գարուն կատարել իմ տարեկան պլանը (ինստիտուտի համար), զի գարնանից պիտի զբաղվեմ շինարարությամբ (մինչև ձյուն գալը): Ախար գիտե՞ս, թե՞ չգիտես, որ ես ահա 6 տարի է, ինչ մի... տնակ եմ սարքում մեր գյուղում: Քանզվեցի (առողջությունս էլ հետը), իսկ տակից դուրս գալ չեմ կարողանում: Ու մինչև այդ տունը շարքվի, ես ոչ մի լուրջ գործ

չեմ կարող անել: Նախ՝ որովհետև իմ Երևանի բնակարանը պարզապես քարվանսարա է և ինձ իմ տանը զգում եմ ոչ ավելի լավ, քան կայարանի սպասասրահում: Եվ հետո՝ շինարարական հոգսը խլում է իմ 12 ամսից 8-ը...

Այս էլ գործերս...

Ի՞նչ եղավ գրքիդ հարցը: Ուղարկե՞լ ես Պետհրատ:

Այս մասին անպատճառ գրիր:

Դե, ձեռքս հոգնեց, գիշերն էլ վաղուց է կիսվել:

Համբուրում եմ:

Քո՝ Պարույր

25. 1. 64.

Երևան

Սրբելի վանե

Գրում եմ քեզ անկողնում: Հիմա էլ պառկած եմ... ծիծաղելի հիվանդության պատճառով. տղաս խոզուկով (СВИНКА) վարակեց նախ մորը, հետո էլ ինձ...

Զգիտեմ, թե քեզ ո՞վ է ասել, որ ես Համազատովին բանաստեղծ չեմ ընդունում: Ծիշտ չեն ասել: Ե՛վ բանաստեղծ եմ ընդունում, և՛ լավ բանաստեղծ: Բայց ПО БОЛЬШОМУ СЧЕТУ! — ուշացած բանաստեղծ: Նա, իհարկե, մեզնից շատ-շատերի համեմատությամբ «նույնիսկ շատ նոր է» (քո խոսքով ասած): Բայց նա որևէ լեհի, հարավսլավացու, հույնի, դանիացու (էլ չեմ ասում ֆրանսիացու և իսպանացու) համար ծանոթ-ուշացած-պարզունակ բանաստեղծ է: Մի զարմացիր: Իսկ ինչո՞ւ միայն նրանց: Նաև՝ ոուսի՛ համար:

Եվ ահա Պաստեռնակ ու Յվետաևա, էլուար ու Արագոն, Կեմենես ու Լորկա, Ռիլկե ու Ջոն Պերս կարդացածի համար, ինչ ասել կուզի, Համազատովը չի կարող ուշացած չլիվալ: Իմ խոսքը ճաշակի մասին չէ: Մեկը թող տերտեր սիրի, մյուսը՝ տերտերկին: Իմ խոսքը ՄՏԱՄՈՂՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ մասին է: Նաև՝ ոչ մեծություն-փոքրություն: Մեկը կարող է ավելի փոքր լինել, բայց իր մտածողության աստիճանով ավելի բարձր համարվել մեծից: Համազատովն ինձ չի բավարարում իր մտածողության աստիճանով: Նա ինձ հա-

մար պարզունակ է: Նա դեռ ճախրում է «սրտի» և «մտքի» ուրտներում (դիտմամբ գրեցի նողկալի նախադասությամբ) և դեռ չի բախել ոգու դուրը: Ես քեզ կարող եմ ավելին ասել. Նարեկացին շատ ավելի հաճույք է պատճառում ինձ, քան թե ինձնից մեկ տարով փոքր Համազատովը: Ասում ենք գեղագիտական (էսթետիկական) հաճույք: Ամեն մեկի համար այդ հաճույքի չափանիշը այլ է: Ինձ համար այդ չափանիշն է հայտնագործության, գյուտի, ճանաչման ուրախությունը. Радость узнавания, — կասեր ոուսը: Խոսքս բանաստեղծական գյուտերի մասին չէ: Համազատովը այդպիսի գյուտեր շատ ունի: Նա ունի նաև հիանալի պատկերասի գյուտեր շատ ունի: Նա ունի նաև հիանալի պատկերավորություն: Նրա խոսքը սուր է, կտրուկ: Այս ամենով՝ նա ոչ միայն բանաստեղծ է, այլ նաև լավ բանաստեղծ: Բայց նրան կարգալիս ես չեմ ստանում այն радость узнавания-ն, որ ունենում եմ... հետոն չգնանք... նույնիսկ մեր երեկվա մեծերին՝ Վարուժանին, Թեքեյանին (անգամ Նարեկացուն) կարգալիս: Զգիտեմ՝ կարողացա՞մ միտքս հասկացնել: Համենայն դեպս՝ գամ գլխավորին: Իսկ գլխավորը բնավ էլ նոր ձևի հարցը չէ: Զեի հարց, եթե ըստ էության դատենք, չկա էլ որովհետև կա միայն խորհի հարց: Ուրեմն արդի կամ նոր սյոնզիա ասելիս ես բնավ էլ նկատի չունեմ, թե այս կամ այն բանաստեղծը ի՞նչ ձևով է գրում՝ դիցուք, ֆառյակով, թե՞ ազատ ոտանավորով: «Վարք մեծաց»-ը ես համարում եմ իմ լավագույն բանաստեղծություններից մեկը: Գրված է ֆառյակով: Կարող էր նաև հանդավորված լինել: Դրանից (դրանցից) ոչինչ չէր փոխվի: Ամեն անգամ, երբ նոր ասեն, կամ արդի ասեն, սերունդները միշտ էլ նկատի կանեն մտածողության եղանակը, մտածողության աստիճանը, բնությունն ու մարդուն «կարդալու» կերպը: Ահա այս է խնդիրը: Եվ սա հավերժական խնդիր է: Ինչպես որ Ալիշանն ու Պատկանյանը հնացան Թումանյանի աչքին, այնպես էլ Թումանյանը հնացավ Վարուժանի ու Զարենցի աչքին: Զարենցն էլ օրեցօր հնանում է իմ ու քո աչքին: Ես ու դու էլ մեր կենդանության օրոք կհնանանք հաջորդ սերնդի աչքին: Այստեղ ո՛չ մի անսովոր և արտառոց բան չկա: Եվ հնացածությունը վրա է հասնում լոկ այն ժամանակ և սոսկ այն պատճառով,

որ հաջորդ սերունդների մտածողութեան եղանակը փոխվում է, մտածողութեան աստիճանը խորանում (կամ բարձրանում): Ճաշակն էլ (սերունդների) ձևվում է հենց այդ աստիճանի կամ եղանակի վրա:

Հին-հին բաներ եմ ասում, բայց այդպես է. նորի մասին խոսելիս էլ առանց հին ճշմարտությունների յուր շես գնա:

Այս հարցին ուզում եմ կեռ անել ու միացնել նաև հանգիստ խնդիրը: Ինչո՞ւ ես դու այդքան լիբազորություն տալիս հանգին: Ըստ որում այս հարցը տվողը մեծամտություն ունի կարծելու, որ ինքը շատ լավ հանգաբան է: Իսկապես էլ. ինձ համար հանգավորելը ջուր խմելու պես բան է. մեկ վայրկյանում մեկ հանգի համար գլուխս է գալիս 10—20 հանգ: Կարող եմ հեշտությամբ կազմել այնպիսի բարդ ու ճոխ հանգեր, որ քեֆդ գա: Ու եթե որևէ մեկը բարկացնի ինձ (կամ ինձ մեծամիտ համարի), երկու օր կծախսեմ և իմ գրածներից կհանեմ այնպիսի և այնքան լիահունչ ու բարդ հանգեր, որ հետս շեն կարողանա մրցել Սայաթ-Նոփան ու Համո Սահյանն էլ (սրանք են ամենից լավ հանգավորողները): Ուրեմն ես չեմ խոսում իմ շիմացած բաներից: Այդպես վարվում են շատերը (ավելի ճիշտ՝ համարյա բոլորս): Իր շիմացած-շկարողացածը մարդ արարածը հակված է շքնդունելու: Ես խոսում եմ իմ իմացածի և լավ իմացածի մասին, ուստի և իմ խոսքը ստանում է կրկնակի արժեք: Հանգը լավ բան է, լավ հանգը՝ սքանչելի բան: Բայց, — մի շտապիր զարմանալ, — հանգը բանաստեղծության երկրորդական, ոչ վճռական հատկանիշ է, որովհետև բանաստեղծությունը բնավ էլ համարժեք չէ շափածոյին: Եվ իզուր են մեր ականջին հաճախ հոմանիշի պես հնչում այդ բաները՝ բանաստեղծություն ու շափածո: Ավելին կասեմ. իսկական, բարձր, վսեմ բանաստեղծությունը բանաստեղծության այլ օժիտ-երից տարբերելու համար հարկավոր է ջրնջել (փորձի համար) հանգը: Եթե հանգերը ոչնչացնելուց (դիտմամբ ջնջելուց) հետո էլ բանաստեղծությունը ոչինչ չի կորցնում (կամ շնչին բան է կորցնում), ապա գործ ունենք իսկական, բարձր, վսեմ բանաստեղծության հետ:

Նույնը՝ նաև շափի և կշռույթի (ոհիթի) մասին: Սրանք

էլ, որքան էլ տարօրինակ թվա, դարձյալ երկրորդական, ամանցված, անվճռական հատկանիշներ են իսկական բանաստեղծության: Ես կյանքումս դեռ անշափ-անկշռույթ բան չեմ գրել, որովհետև դեռ իմ ներշնչումը այդքան ուժեղ չի եղել: Ու եթե մեկը (կամ հարյուրավորներ) գրում են՝ իրենց ուժի և խելքի բանն է: Եվ խելքի՞, որովհետև հաճախ նույն կշռի (նույն արժեքի) բանը հանգով ու շափով անհամեմատաշահեկան է դառնում, ինչպես որ քիչ ջուրը լավ աշխատեցնելու համար առու հաճել է պետք: Բայց, մի՞ մոռացիր, քիչ ջրի համար է պետք առու քաշել: Իսկ եթե ջուրը շատ է, իսկ եթե վարար է և ահագին, այդ դեպքում կարծեմ ջրի հունը առու չի կոչվում և ոչ էլ այդ ջուրը՝ առվակ: Արդեն զրնգում են ուրիշ բաներ՝ գետակ, գետ, հեղեղ և այլն, որոնց հոսքը ինքն է գտնում իր ճանապարհը և կարիք շունի բահի ու բահվորի: Բայց ահա ստացվել է այնպես, որ առուն թելադրում է գետակին ու գետին: Բա եղա՞վ: Չեղա՞վ: Հակառակն ավելի ճիշտ է: Խնդրեմ, սրանից հետո միշտ աշխատիր մտովին շնջել կարդացածդ բանաստեղծության հանգերը, ու կտեսնես, որ այդ հանգերը, ըստ մեծի մասի, այլ բան չեն, քան խեղճ ու կրակ (հաճախ պերճ ու շքեղ) քող՝ ծածկելու համար անբաճախեղծականի... ամոթխած քամակը: Միայն թե ինձ ճիշտ հասկացիր. ես հանգերի դեմ չեմ, ես դեռ շատ հաճախ հանգերով կգրեմ ինքս: Ես դեմ եմ «անհանգ չի կարելի», «անհանգ էլ բանաստեղծություն» ասողներին:

Որ հանգը (նաև շափը) ճշմարիտ բանաստեղծության համար երկրորդական-երրորդական հատկանիշներ են՝ վկա «Ծրգ-երգոցը» (ոչ իմը, այլ Աստվածաշնչինը): Ո՞չ հանգ կա, ո՞չ էլ շափ, իսկ համաշխարհային բանաստեղծության գլուխ-գործոցն է մնում նաև հիմա՝ վկա՝ բոլոր հերթ (մեր նարեկացին էլ հետը): Բոլոր էպոսները (մեր Մոսկովն էլ մեջը), վկա՝ իսպանալեզու (տասից ավելի) գրականությունները, Եվ ինչո՞ւ այդքան հեռանանք, վկա նաև Պուշկինն ու Բլոկը, ոչ միայն Ուիտմանն ու Սիլվանթոն, այլ նաև Վարուժանը (որի բանաստեղծությունների մեծ մասը — նկատե՞՞ր ես արդյոք, նույնպես գրված են անհանգ): Այսքանից հետո՞ քեզ եմ հարցնում. այդ որտե՞ղ, ո՞ւմ աչոյվ և ի՞նչ

անշնչելի տառերով է գրված, թե բանաստեղծությունը կամ հանգավոր ըլլալու է, կամ բնավ ըլլալու չէ: Այդպես կարող են ասել միայն խեղճերը (հեռու քեզնից): Իսկ այդ խեղճերի խեղճությունը կարելի է (գրաբար ասած) պարզ կացուցանել շատ հասարակ մի առաջարկով.— Հապա, հոգյակս, փորձիր մի անհանգ բանաստեղծություն գրել: Եվ կպարզվի, որ հանգին դեմ խոսողների մեծագույն մասը չի կարողանա իր բանաստեղծ լինելն ապացուցել, որովհետև բանաստեղծն այն մարդը չէ, որ ունի (կամ ձեռք է բերել) շափածա խոսելու ունակություն, այլ այն սակավագյուտ արաբաժը, որ մտածում է յուրատեսակ, աշխարհին ու իրեն նայում այլապես, ծանոթ խոսքով՝ ունի պատկերավոր մտածողություն և (ավելացնենք) հոգեսուզման կարողություն:

Ուրեմն եկեք խոսենք այս պատկերավոր մտածողությանից և հոգեսուզման կարողությունից, և ոչ թե հանգ ու վանկից, շափ ու կշռույթից...

Վահե սիրելի, մի տեղ էլ ճիշտ չեմ հասկացվել: Ես «Մաշտոցները» (առավել ևս՝ «Ջանգապատունը») «ագիտացիոն» բաներ չեմ համարում, որպեսզի դրանց դեմ էլ խոսեմ: Ես պարզապես ուզում եմ բացատրել «Մաշտոցների» (նաև «Ջանգ»-ի) համընդհանուր հաջողության գաղտնիքը: Այն, որ դրանք մեր հոգուց են խոսում, հայի հոգուց: Այստեղ միջակ ու դրանից բարձր ու ցածր մեր ընթերցողները համագումարվում են (ներքի աշխատանք ասելու համար), համաճաշակավորվում և... Պ. Սևակը շահում է: Իսկ երբ նա նույն ուժով ու մտածողության նույն եղանակով մեկ այլ բանի մասին է խոսում (ոչ հայկական), արդեն սկսվում է տարակարծիքությունը: Իսկ եթե այդ համաճաշակ ընթերցողներին քննել փորձես (հատված առ հատված), ապա կտեսնես, որ նրանց համար շատ ու շատ բաներ բնավ էլ հասկանալի չեն (ուրեմն և՛ խրթին-խելոք-չոր են) և՛ «Ջանգ»-ի, և՛ «Մաշտոց»-ի մեջ, ինչպես որ հասկանալի չեն մյուս (ոչ հայկական) բաները: Իսկ աշխատել միայն «հայկական թեմա»-ով, նշանակում է ոչ միայն կամովին ինքնասպան լինել, այլև ինքնասպանության տանել հենց ողջ հայկականը... Այս պայմաններից մենք կարող ենք գլուխ

հանել միայն մեկ դեպքում՝ ետ շմալով: Հակառակ դեպքում՝ КРЫШАКА, ինչքան էլ խոսես Տիգրան Մեծից ու Մաշտոցից, Խորենացուց ու Նարեկացուց: Այսինքն՝ վարվել հենց Տիգրանի, Մաշտոցի, Խորենացու, Նարեկացու պես: Իսկ Տիգրանը երկրներ գրավելով չէր գրադված, այլ նաև իր ազգին համաշխարհային (այն ժամանակ՝ հելլենիստական) մշակույթի հետ հաղորդակցելու, գուսանների կողքին թատրոն ստեղծելու (և այլն) գործով: Եվ Մաշտոցն էլ եկավ մեր հետամնացությունը վերացնելու. նրա շնորհիվ մենք դարձանք դրատեր ժողովուրդ: Նույնը նաև Խորենացին ու Նարեկացին...

Իսկ եթե մենք (ամեն մեկս մեր ուժի շափով) նույնը շանենք՝ իզուր է ամեն ինչ մեր շառ բախտի ուսին գցելը: Եվ ինչքան մեր ժողովուրդը (տվյալ դեպքում՝ իմ ընթերցողները) մնան իրենց այն հոգեբանության մեջ, որ կարելի է ձևակերպել «մեր յուրով տապալվենք», այնքան վատ մե՛զ համար...

է՛հ, ի՛նչ ասեմ, այն էլ նամակով...

Հիմա գամ Ակնարկին ու կեսխոսքայնությանը:

Գու ինձ կամ ճիշտ չես հասկացել, կամ հասկացել ես թերատ: Այն խեղճերը, — գրում ես 21 և 22-րդ դարերի մարդկանց մասին, — ինչպես պիտի նրանք կեսխոսքով հասկանան, թե ինչն ենք ակնարկում մենք: Ակնարկել չի նշանակում թերատ խոսել, և կեսխոսքով գրել չի նշանակում կիսատ գրել: Ակնարկել և կեսխոսքայնություն նշանակում է ավելորդ բան շասել, տղայամտություն չանել, չդատել ու արտահայտվել մեր պապիկների կամ երեխաների պես. դատել ու մտածել մե՛զ նման՝ 1964 թվականին շափահաս գարձած մարդկանց պես: Ես երեխա չեմ, որ ամեն բան ծամես ու բերանս դնես: Դա ես ոչ միայն ուտել չեմ կարողանում, այլև դրանից իմ սիրտը խառնում է, որովհետև, կրկնում եմ, ես երեխա չեմ: Ես ուզում եմ ինքս ծամեմ և զգամ радость узнавания! Գու ինձ թվաբանական խնդիր մի՛ բացատրիր, որովհետև ես աշակերտ չեմ: Գու ինձ հարահաշվական (նաև՛ բարձր մաթեմատիկայի) խնդիր տուր, որ ես ինքս լուծեմ և զգամ радость узнавания! Այս աշխարհին և մարդկանց ես արդեն ծանոթ եմ: Այս աշխարհին

և մարդկանց մասին դու հետս մի՛ խոսիր (արևմտահայի ա- սած) սանկ-նանկ ասելով այն, ինչ ես գիտեմ, և ցույց տա- լով այն, ինչ աչքս նկատել է վաղուց (և ոչ մեկ անգամ), թե չէ խոսքդ կկտրեմ (նախ՝ քաղաքավարի, հետո՝ կոպտու- թյամբ) ասելով. «Առաջ անցիր, հասկացանք»:

Գրել ակնարկով և կեսխոսով՝ նշանակում է թույլ շտալ, որ ասեն «լա՛վ, հասկացանք, առաջ անցիր»: ... Եվ ճիշտ ենք այսօր մենք, ինչպես որ ճիշտ էր Թումանյանը երեկ, երբ իր օրերի «բոլորը» մեխված էին պատկանյանական կամ Ղարիբ-Քարամ-Օսանական մակարդակին: «Պղնձե քաղաքի պատմության» (գրանից առաջ էլ՝ հայսմավորքի և Հարանց վարքի), աչքը Ղարիբ-Քարամ-Օսանի նաղլահեֆիաթային մակարդակի համեմատությամբ «Անուշն» էլ այլ բան չէ, քան ակնարկով և կեսխոսով ստեղծված գործ: Մի բուպե լուրջ կշռադատիր և կզգաս, որ ճիշտ եմ ասում: Համեմատիր «Լավարի որսը» Թումանյանի «Անուշ»-ի հետ և շես կա- բողանա ինձ հետ մեկտեղ չհաստատել, որ առաջինի համե- մատությամբ վերջինը գրված է ակնարկով և կիսախոսք:

Ու եթե մենք էլ այսօր ակնարկով և կիսախոսք խոսենք, այս անգամ ոչ միայն Թումանյանի, այլ նաև Տերյանի հա- մեմատությամբ, դրանով մենք ոչ թե անհասկանալի կդառ- նանք 21 և 22-րդ դարերի մարդուն, այլ ուղիղ հակառակը՝ հասկանալի կդառնանք Թումանյանից (և Տերյանից) ավելի, որովհետև դրանով մենք ավելի կմոտենանք 21—22-րդ դա- րերի մարդու մտածողությանը, ինչպես որ Թումանյանի ակ- նարկով ու կիսախոսք ասված «Անուշն» էլ այսօր մեզ ա- վելի է հասկանալի, քան նրանից առաջ (և դժբախտաբար հետո) գրված մանրամասն և լիախոսք «նամակները»: Իսկ մի՞թե նույնը չի ապացուցում Նարեկացին, իմ ու քո Նարե- կացին: Նրանից ոչ միայն առաջ (դժբախտաբար՝ չգիտենք): այլև հետո, քանի՞ դար գրել են շատ տաղանդավոր մարդիկ, բայց այսօր ամենից ավելի նա է մեզ մոտիկ և հարազատ (ոչ միայն հայերիս, այլև ֆրանսիացուն): Ինչո՞ւ: Որովհե- տև (իմ ու քո կրկնած խոսքով ասած) նա է ամենից ավելի իր ժամանակին գրել ակնարկով և կիսախոսք: Դու երկու դարի ժամկետ ես տալիս (21—22-րդ դարերի): Իսկ չէ՞ որ

Նարեկացին բռնել է ամբողջ տասը դարի քննություն: Էլ կասկածի տեղ մնո՞ւմ է...

Ուրեմն իմ ակնարկելը դու մի հասկացիր բառացի կամ խոսակցական իմաստով, և ոչ էլ այն կերպ, թե ինչ-ինչ պատճառներով մենք պիտի ակնարկով խոսենք և ոչ թե լիա- բերան-բացահայտ-միջնակ վերջ: Բնավ ոչ: Ակնարկով խո- սել և կիսախոսք գրուցել նշանակում է շարել սրբատաշ ֆա- տեռով՝ պատկերը-պատկերի, զգացմունքը-զգացման, միտքը- մտքի, հոգեկան գյուտը-գյուտի կոՂՔի՛ն, կիՊ-կիՑ, և ոչ թե մեր գյուղական պատերի շարով, երբ քարը քարին չի բռ- նում, ուստի և արանքները մեծ ու փոքր խճեր են խրում, տակը մեկ այլ քար խոթում, վրեն դուզամ դնում, հետևից սլոշկապ տալիս, և ի լրացումն այս ամենի (լավագույն դեպքում) ցիխի կամ կրի շաղախով դարգերը (այսինքն դար- սերը) առնում, որ նշանակում է շարվածքի ծակուծուկերը մի կերպ փակել:

Պա՞րզ է: Եթե ոչ՝ նորից կանդաղանամ: Իսկ հիմա ա- վելացնեմ, որ այս ամենը «գելի ղլխին ավետարան կարդա- լու» պես կարող է հնչել բոլո՞ր նրանց համար, որոնց մտա- ծողության եղանակը պարզապես հին է, ապարդիական, ե- րևիվա և հերվա: Աստված շանի, որ նման մարդիկ ենթարկ- վին իմ այս (առայժմ նամակներումս ասված) պահանջին, դրանցից ՈՒ ԲԵՃԱ ՈՒ ՄԱՍՈ-ի պես բան կստացվի: Եվ վեր- ջապես, ես ոչ թե գործում եմ ըստ այս եզրահանգումների, այլ ինքս այս եզրահանգումներին եմ հասել իմ գործելու բնթացքում: Այսինքն՝ մտածողությանս եղանակն եմ դարձ- րել կարծիք և ոչ թե կարծիքի վրա եմ խՈՒՒ-ի գցել մտածո- ղությունս (որ անկարելի է): Բայց մտածողության իմ եղա- նակը միայն իմը չէ, թե չէ ոչ մի արժեք էլ չէր ունենա: Դա- րինն է, ժամանակինն է մտածողության այդ եղանակը, ուս- տի և որտեղ-որ է մտածողության այդ եղանակը ընդհանուր կդառնա բոլորի համար: Այդ «որտեղ որ է»-ն կարող է տե- վիլ 10 տարի կամ 30 տարի: Դա չէ կարևորը: Կարևորն այն է, որ դա չի կարող ընդհանուր շղառնալ բոլորի համար: Ու հենց որ դարձավ (ավելի ճիշտ դրանից դեռ առաջ, գուցե հենց հիմա)՝ կգան նորերը (եկել են երևի), որոնք կըմբոս-

տանան ընդհանուր դարձած այդ մտաբանակի դեմ (այսինքն՝ այսօրվա իմ ասած «անընդունելի» բաների դեմ) և, խոսելով նորի և արդիականի սնունդից, կպահանջեն իրենցը: Նրանց կշվացնեն, նրանց բանաստեղծ չեն համարի, նրանց բերանը կիպակեն գուցե և իմ անունով, նրանց գրածները կհամարեն շոր-խեղճը— «ինչ ուզում ես ասա, բայց ոչ բանաստեղծություն» — «օրիգինալության մարմաջ» և այլն, — բայց ճիշտ կլինեն նրանք: Եվ այսօրվանից էլ ես նրանց կողմն եմ կանգնած, ես նրանց հետ եմ, ես օրհնում եմ նրանց ճանապարհը...

Այսպես եղել է: Այսպես կլինի: Այլապես անկաթելի է...

(Լուսանում է: Վաղը կշարունակեմ):

3. 11. 64
Երևան

Վահե ջան, ինչպես տեսնում ես, նամակս ընդհատել եմ ամբողջ մի շաբաթ: Ամբողջ մի շաբաթ էլ տաքություն մեջ էի և այնպիսի վիճակում, որ գրելն անհնարին է: Կարողացա միայն «նարեկացիդ» վերընթեռնել՝ մատիտով:

Նախ՝ վերջացնեմ «իմ» մասը:

Ասում ես, որ «Մարդ»-ի մեջ չկան «ինքն իրեն հետ»-ի կամ «Մարդ էլ կա»-ի պես բանաստեղծություններ: Ուզում եմ ասածիցդ բռնել և դարձյալ մեխել նույն մտքի վրա: Ճիշտ է՝ չկան: Բայց և սխալ է՝ կան: Կան, միայն թե այլ որակի, և այս վերջին որակն է գերադասելին:

Բաց արա «Մարդ»-ի 68-րդ էջը և կկարդաս մի շատ պարզ բանաստեղծություն: Վերջերս Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում իմ երեկոն էր... Կարդացին, ի շարս այլ բաների, ինչպես «Մարդ էլ կա»-ն, այնպես էլ այս պատիկ-ճատիկ «Միանգամից»-ը: «Մարդ էլ կա»-ն, ինչպես միշտ, մեծ հաջողություն վայելից (մանավանդ կոմիկ գերասան Ֆրունզիկ Թաննը, նրա աննման արտասանությամբ): Բայց դու տեսնեիր, թե ինչ կոտորվեց «Միանգամից»-ի վրա: Էստեղ են

ասում, թե արտաստեղծից ճեփ թափվեց: Առաջն էն է, որ բանաստեղծությունն ընդունվեց «ինքն իրեն հետ»-ի պես. դեռ մի բան էլ ավելի: Բայց հիմա արի ա տես, որ «ինքն իրեն հետ»-ը կլանվ շունեցող, ոչ երկարակյաց-անցուցիկ-զնայուն բանաստեղծություն է. գնացով ու գնալով ոչ մի հնչեղանքով չի անկես, որովհետև պրկած է կոնկրետ վերքի մասին և կոնկրետ վերքի վերացումից հետո կվերանա նաև այն մատը, որ վրվել է այդ վերքի վրա: Իսկ «Միանգամից»-ը՝ չէ: Այսօր դահլիճն ու ընթերցողը «այսպես» է ընդունում, իսկ երբ վերանա այս «այսպես»-ի առկայությունը՝ «Միանգամիցն» էլի կպարի, որովհետև նա միայն «այսպես»-ի մասին չէ. ավելի ճիշտ՝ ոչ այնքան «այսպես»-ի մասին է, որքան «այնպես»-ի, այսինքն՝ իբրև կարոտանք հրդեհի և ոչ թե միանգամի, մեկվան և ոչ թե մեկացման, ջարդ-դեհի և ոչ թե ջարդոտման, ժայթքման, և ոչ թե պուտ-պուտվելուն և ոչ թե ջարդոտման, ժայթքման, և ոչ թե պուտ-պուտի կամ «հիշ էլ, հիշ էլ»-ի: Մարդկային այս ցանկությունը ո՛չ հանալ գիտի, ո՛չ էլ մեռնել: Եվ այդ ցանկության պարունակիչը շատ ավելի երկարակյաց պիտի լինի...

Իմ պահանջն էլ ահա հենց այս է. միևնույն բանի մասին գրել «Միանգամից»-ի պես և ոչ թե «ինքն իրեն հետ»-ի, որովհետև վերջինս (իրեն նման 1000-ավոր ոտանավորների հետ մեկտեղ), պատկերով ասած, նման է միատախ ժամացույցի, որ ցույց է տալիս միայն կոնկրետ ժամանակը (ժամացույցի լեզվով ասած՝ ցույց է տալիս միայն ռուպեն): Մինչդեռ նույնքան պարզ ու մաշելի «Միանգամից»-ը երկարաժամ ժամացույց է. եթե նրա մեծ սլաքը ցույց է տալիս կոնկրետ ժամանակը՝ ռուպեն, ապա նրա փոքր սլաքը շարունակում է ցույց տալ ընդհանրապես ժամանակը՝ ժամը՝ ուրեմն առաջինի համեմատությամբ երկարակյաց է առնվազն 60 անգամ:

Նույնը՝ նաև «Մարդ էլ կա»-ի առթիվ...

Եվ ինչո՞ւ հեռու գնանք: Հենց թո «Բարդին»: Շատ լավ էլ բանաստեղծություն է և շատ ավելի «սուր-քաղաքական», քան ինձ ծանոթ քո բանաստեղծություններից շատ-շատերը: «Բարդու» (նաև, հիշո՞ւմ ես, «Քամու») ճանապարհն է ճիշտը, հիշիր մեկընդմիջտ: «Բարդի»-ն, իհարկե, ավելի կշա-

Տեր, եթե Ծանալեալ չլինէր նրա մեղսեղը և... պահպանված լինէր շափը, որովհետեւ դա է հենց ասածս այն ջուրը, որը ճիշտ աշխատեցնելու համար առու փորելն անհրաժեշտութիւն է. գետ չէ, ոչ էլ հեղեղ, այլ աղբյուրի կես կամ մի բահ ջուր, որ չպիտի ճանապարհին զուր կորչի այս ու այն քար ու թփի տակ: Իսկ ընդհանուր առմամբ՝ իսկական բանաստեղծութիւնն է և ոչ թե (մեղա՛ ասու)...

Այ, եթե «Նարեկացին» էլ գրած լինէիր մտածողութեան այդ ձևով... Դժբախտաբար, այլ կերպ ես գրել. հենց այն կերպ, որի դեմ եմ ես գրում (իմ սեփականները նկատի ունենալով և ընդհանրապես) արդեն որբերո՛րդ անդամ:

Սկիզբը լավ էր: Մտքիս մեջ «կեցցես... կեցցես» ասելով ուրախացած վազեցի և վազեցի, պատահած խոչ ու խճերին ուշք չդարձնելով, բայց վերջ ի վերջո կանգ առա դառնացած: Այդ ոճը Նարեկացու ժամանակ կոչվում էր ճարտասանութիւն կամ հոնտորութիւն, հիմա՛ վերջինս: Դրա և ներբող-գովերգութիւնների միջև (հիշիր 20—50 թթ. մեր պոեզիան) էական ոչ մի տարբերութիւն էլ չկա, որովհետեւ երկուսն էլ բանաստեղծութիւն ասված ցորենի թեփն են և ոչ թե ալյուրը՝ տա՛ք ու փափո՛ւկ և սննդարար ու կենսապարզ և ալյուրը: Դու, Վահե տղա, պատկերով մտածել գիտես: Եթե չլինէր դա, ես քո մասին այդքան մեծ հողված չէի գրի, հավատացնում եմ: Ես այնքան կարճատես չեմ, որ իր ժամանակին, հենց առաջին իսկ հայացքից, շտեմնի քո հոնտորա-ճարտասանական հակումը (առավել ևս, որ ինքս էլ նույն ախտով թե ջարդվածքով տառապել եմ միշտ և այժմ նաև): Բայց դեռ նա՛ չէ բանաստեղծը, ով կատարելագործում է ինքն իրեն (իր լավը), այլ նա, ով հաղթահարում է ինքն իրեն (իր վատը): Մեկընդմիջտ դու պիտի իմանաս, որ քո թուլութիւնը ճարտասանութիւնն է: Թող ազնիվ լինեն քո մտքերը, բարի՛ քո միտումները, հանրային՝ քո նպատակը, սուր՝ քո խոսքը, կատարյալ՝ քո շափն ու հանգը, — միևնույն է. ճարտասանութիւնը մնում է ճարտասանութիւն, ինչի մեջ ինքդ կհամոզվես: Եթե՛ վարվելով ըստ իմ խորհրդի՝ մտովին չնշես այդ շափն ու հանգը, կմնա այն,

ինչ դու մեծ հաջողութեամբ կարող էիր հողված դարձնել կամ «գրողի խոսք» (լավագույն դեպքում):

Ճիշտ այդպես էլ դու պիտի մեկընդմիջտ հիշես, որ քո ուժը (և ոչ միայն քո, այլ և ամեն մի իսկական բանաստեղծի) նրա պատկերավոր մտածելու, աշխարհին, իրերին, ամեն ինչի բանաստեղծական տեսանկյունից նայելու մեջ է: Պիտի զարկ տաս սրան, պիտի ինքդ ամեն անգամ «կանգնես քո սեփական կոկորդին» կամ զրշիդ թանաքը ծծես, երբ հոնտորութիւնը գլուխ բարձրացնի և շանա քեզ թոցնել իր ետևից: Ամեն 5—10 տողից հետո դու պիտի կանգ առնես և ինքդ քեզ հարցնես. իսկ ո՞ւր է այստեղ թարմ պատկերը, նոր մակդիրը, անսպասելի համեմատութիւնը, բնութեան նորանկատ այս կամ այն եզրը: Եթե չկա՛ ոչ միայն պիտի առաջ չգնաս, այլ և ետ դառնաս ու վճռես նախ և առաջ այդ 5—10 տողիդ «լինել չլինելու» խնդիրը, զի նրանք էլ, այդ վիճակում ապրելու իրավունք չունեն: Զգտիր ոչինչ ուղղակի շատել: Մի՛ գարմացիր: (Ախար որ մոտս լինէիր՝ հեշտ էր բացատրելը՝ բանավոր): Զէ՛ որ պատկերավորութիւն ասաբացատրելը՝ զէ՛ որ պատկերավորութիւն ասած՝ ծրն արդեն ուղիղ (ճիշտ, բոլորի կողմից ասված-ընդունված) խոսք չէ, այլ միշտ էլ՝ այսպես ասած՝ շրջված-շուռ տրված խոսք: Օրինակ, դիցուք, հազարավոր վայ-բանաստեղծութիւնների մեջ կարդացել ենք. «Դուրս եմ գալիս, որ կանաչով զմայլեմ»: Այդպես նաև ամեն մի մարդ (առանց վաստակելու «վայ»-ը կասի. «Զմայլելի (սքանչելի. հիանալի) կանաչ է»: Իսկ Պ. Սևակը կոչվածն, օրինակ, շրջում-շուռ է տալիս, переиначивает՝ «խոտի անման համար հարկ վճարեմ աչքով»: Ծառերն են շարվել իրար ետևից, — կասն բոլորը և բոլոր վայ-բանաստեղծները: Իսկ ես անպատճառ շուռ կտամ և կստացվի՛ «ծառերը մայթերին բազմակետ են դնում»: Նորից ու նորից կողոպտելով սուրբ ու խեղճ Մեծաբնցին՝ «ըլլայի»-ներ շարելիս կգրեն. «հազար ու մի քաղաքներում լինէի» կամ «օտար-օտար երկրներում լինէի»: Իսկ ես շուռ եմ տալիս. «Սոված են ոտքերս, թող հող ուտեն մի քիչ: Եվ աչքերս են սոված. չի կշտացնում լույսը»... Ահա և քեզ օրինակներ՝ պատահաբար բացված էջից:

Այսպես ուրեմն՝ պատկերավորութիւնն այլ բան չէ, քան

շրջանություն կամ շուտորվածություն: Ամենաահեղեղյան» միաքն էլ, ամենաապրոզայիկ» առարկան էլ, երբ շրջում-շուտ ես աալիս՝ գառնում է բանաստեղծություն, ձեռք բերելով և՛ կորուսյուն (անկյունները մաշվելու իմաստով), և՛ ջերմութեան և՛... մնացած բաները: ԿԱՔ ՉՏՕ քո չակերտավոր և անչակերտ ճարտասանական շատ ու շատ տեղեր կարող են բոլորովին այլ փայլ ու զվարթություն ստանալ, եթե դրանք «չրջես», ինչպես որ (մի բոպե ընդունենք) թարս երեւո՞վ փաված գորգն են շուտ տալիս...

Վահե տղա... հոգնեցի: Վաղը, լա՞վ:

Գիշեր բարի: Ավելի ճիշտ՝ բարի լույս (ժամը ուղիղ 5-ն է):

10.11.64

Ե՛վս մի նկատողություն, որ շատ կարևոր է:

Ես չեմ ընդունում պատմական թեմայով գրված որեէ բան, որ շունի ժամանակակից ենչեղություն... Իսկ քո «նարեկացին», դժբախտաբար, գրված է դասագրքախառն մեկնաբանությամբ: Այսպիսի մոտեցումը կարող է խրատեցնել ոչ միայն ինձ, այլև բոլոր խելամիտ ընթերցողներին...

Արի դու, Վահե տղա, «նամակը» վերամշակիր անհունգ: Մի վախեցիր իսկույն, սպասիր միտքս բացատրեմ: Գրիր անհանգ, որպեսզի կարողանաս ջոկել չորը թացից, որպեսզի կարողանաս նկատել ճարտասանության, «սուր» խոսքի ականջները, և դրանց՝ հենց իրենց նույն ականջներից բռնած՝ գտար պչես «նամակի» միջից: Ու երբ տեսնես (իսկ առանց հանգի շատ հեշտ կտեսնես), որ ստացվել է բանաստեղծական, դրանից հետո, խնդրեմ, նաեզավորի: Համենայն գեպս վերամշակելիս գոնե մտովին ազատվիր հանգի թովչանից, որպեսզի կրկին չսայթաքես...

Մնացած մանր ու խոշոր դիտողություններս՝ «նամակ»-ի շուտանցքներում:

Ըստ որում պիտի շատ ներողություն խնդրեմ քեզից 10-րդ էջի համար: Տղաս (որ 5 տարեկան է) օգտվելով և՛

մոր, և՛ իմ մահճակալվածությունից քո 10-րդ էջը մի այնպիսի օրի էր գցել, որ աստված թշնամուղ էլ ազատի: Բանն այն է, որ նրան ես մի ամբողջ կապոց հին-հին սևագրություններ եմ տվել՝ հետևներին «նկարելու» համար: Քո 10-րդ էջն էլ դրանց տեղն է դրել՝ տեսնելով, որ իսկական «սևագրություն» է՝ աջից գրված, ձախից գիծ քաշած և ալին: Մի կերպ «վերականգնեցի» էջը էլ, իմ նշումներն էլ: Ներիր:

Էլ ի՞նչ գրեմ, Վահե ջան, առանց այն էլ մի «սուրի» դիտարտացիա» ստացվեց:

Երբ վերամշակես «նամակը», անպատճառ կրկին կուղարկես ինձ: Պիտի որ լավ բան ստացվի: Եվ մինչև չստացվի իմ ուզածը՝ օձիքդ բաց չեմ թողնի...

Դու ամենավերջում էիր թողել իմ 40-ամյակը շնորհավորելու ուրախությունը (որի համար սրտագին շնորհակալ եմ քեզանից, աիրելիս): Ես էլ ամենավերջումն եմ թողել քո ծանրը կորստին խորապես վշտակցելու իմ ախրությունը: Դոնե իմանայինք, մի անկեղծ խոսքով մասնակից լինեի՞ք վըշտիդ... է՛հ, ինչ ասեմ, Վահե ջան, այդ ահավոր կորուստը ուղտի պես ամենքիս դասն էլ ծունր պիտի դնի: Ողորմի հորըդ, դու ողջ մնաս, քո բալիկներից անպակաս...

Սպասում եմ նամակիդ և նամակներիդ:

Բարևներս՝ տղաներին: Համբուրում եմ.

Քո՛ Պատույշ

11.11.64

Երևան

Սիրելի Վանե

Բանաստեղծություններիդ ընդհանուր առմամբ շատ հավանեցի: Համբուրում եմ քեզ ու շնորհակալություն հայտնում... աստուծոյ՝ քեզ համար: Բայց ունեմ մի փոքրիկ վախ, որ չեմ ուզում թացցնել: Ինձ թվում է, թե այս ձեռով ընթանալիս հանկարծ կսրող ես սայթաքել գեպի... աչ, որ միշտ էլ սխալ է: Դու զգու՛յշ եղիր Պատանունուկի և Յվետանուկի

արվեստի հետ. միայն դրան (գրելաձև-արվեստին) հետևելը կարող է քեզ (և ամեն ոքի) շատ խեղճացնել, էլ շատ մ'հնացնել:

Նկատեցի նաև վիզենակաճուրջուն (խելումյանակաճուրջուն): Ստիպված եմ նորից կրկնել տպագիր ասածս. վիզենի լեզուն կարելի է օգտագործել, բայց ոչ գործածել, որ տեղ-տեղ անում ես դու: Նրա նյութն ու լեզուն ամուսնացած են, իսկ քո (և ամեն այլ նյութատերի) համար նման միացությունը կարող է հասցնել ապօրինի (եթե շատ մ'զնային-անցողիկ) սիրային կապի:

Հազար անգամ համամիտ եմ քեզ, որ մեր գործը ոչ միայն լավ բան ասելն է, այլև լավ ասելը: Եվ ինքս էլ արդեն հոգնել եմ մեր ջահել-ջուհուլի ծայրահեղ թափփվածությունից, որին եթե վերջ չտան՝ կկորչեն: Բայց լավ ասել չի նշանակում ասել անպատճառ քառյակով և հանգավոր: Քառյակը (հանգի հետ մեկտեղ, գումարած լավ նմանաձայնություն-բառախաղերը, որոնց սիրահարն եմ ես էլ) հաճախ ստիպում է ասել մաշված ու շփված բաներ, ավելորդ красивости (տողն ու հանգը իրար բերելու համար): Եվ այս երևույթը նկատելի է քո այս նոր բանաստեղծությունն]ի-րում:

Որն է ճիշտը: Ասեմ.

— Պետք է գրել փառակով, կուռ ու ձուլածս տողերով, Ըոխ հանգավորմամբ (կամ անհանգ, նույնիսկ առանց շափի,— միևնույնն է), բայց միշտ երջելով, թե սույն քո քառյակը (պատկեր-համեմատությունը, միտքը) ինչպե՞ս կերևա, Ի՞նչ տպավորություն կթողնի մեկ այլ լեզվով, այսինքն՝ ոչ միայն հայի, այլև առհասարակ մարդու վրա: Երևի կասես՝ մենք ուրիշի համար չենք գրում: Անմիջապես կասեմ՝ մեզ համար լավ գրելու վրա մենք պիտի նայենք ուրիշի աչքով: Օրինա՞կ:

Խնդրեմ.

— Պուշկինը ուսերենով և ուսի համար սփանջելի բանաստեղծություն է գրել՝ «Я помню чудное мгновение» և այլն: Լերմոնտովն էլ նույն ուսերենով, նույն ուսի համար գրել է ոչ պակաս սփանջելի մեկ այլ բանաստեղծություն՝

«Мне грустно, потому что весело тебе»: Հիմա մեզ համար (այսինքն՝ ոչ ուսի, այլ հայի-ֆրանսիացու-գերմանացու-մարդու համար) ո՞րն է ավելի բանաստեղծություն՝ արդյո՞ք «Ես երջում եմ մի հրաշալի պահ», թե՞ «Ես տխուր եմ, որովհետև ուրախ ես դու»: Համեմատիր ընդգծածս տողերը, հիշիր այն բոլոր բանաստեղծությունները, որ կարդացել ես (տվյալ դեպքում) ռուսերեն, հավանել, բայց երբ փորձել ես թարգմանել հայերեն, զգացել ես, որ ЭТО НЕ ТО: Այս ЭТО НЕ ТО-ն, ըստ իս, ունի ՉԱՓԱՆԻՇԱՅԻՆ նշանակություն: Ափսոս, որ այս ծանր զրույցը վարում եմ գրավոր-նամակով և չեմ կարող նամակս ո՛չ զրույց դարձնել, ո՛չ հոգված: Բայց որովհետև դու այն մարդն ես, որ կես խոսքից էլ ամեն բան հասկանում է, ուստի համոզված եմ, որ այս անգամ էլ կցկտուր խոսքս կհասկանաս այնպես, կարծես թե մի ամբողջ մենագրություն ես կարդացել:

Ես քեզ (քեզնից էլ առաջ՝ ինձ և բոլորի՞ս-բոլորի՞ս) զգուշացնում եմ այն բառային կախարհանքից, առանց որի բանաստեղծություն չկա առհասարակ, բայց եթե մեկը իր ամբողջ ուժը գործածում է միայն այդ բառային կախարհանքի վրա, տուժում է նույնչափ, որքան այն մյուսը, որ մոռանում է այդ կախարհանքի մասին և գրում է ինչ-որ քաղցմանելի, ինչ-որ օտար լեզուների համար հարմար բաներ: Գրեացնե՞րն էլ են հիվանդ բուժում (ինքդ գիտես) և բուժում են ոչ այնքան խաբեբայությամբ, որքան ներշնչելու կարողությամբ: Դրա մեջ արդեն կա արվեստի երկսածիլանի սաղմը: «Գրեաց-կախարհը» ներշնչում է, բուժվող-հիվանդը հավատում: Բայց չէ՞ որ կա նաև բժշկություն՝ հարա-դեղահատային, хирурго-операционная: Մեր կետ-նպատակը պիտի լինի այդ երկուսի միացությունը, այսինքն՝ մի բժշկություն, որ ենթակա է այդ գիտության լատիներենին, բայց նույնաժամանակ մի գրեացություն է, որ հայ տերտերը անում է այլ կերպ, քան մուսուլման մոլլան, քան շամուրը, քան ֆայնմը, քան պաղրեն և այլն: Հիմա լսիր.

Սուսկ մի մզկիթի դու խոնկ-խնկարկու,
Որ վաղուց անտի նետել ես շաման,

Ես այնքան «քննադատ»-հաշվապահ չեմ, որ ասեմ, թե խոնկը ի՞նչ կապ ունի մզկիթի հետ, թե ի՞նչ ասել է «խոնկ-խնկարկու» և «խենթ-խնդրարկու»: Բայց հենց որ փորձենք դուրս գալ այս բառային (լավագույն խմաստով) կախարդանքից՝ տակը կմնա մի «շահածը բաշխող», մի «մզկիթ» ու «խոնկ», մի «շալմա»: Ինչո՞ւ: Որովհետև отпадает «խոնկ-խնկարկու»-ի և «խենթ-խնդրարկու»-ի, ինչպես նաև հանգեբի, ինչպես նաև «անտի»-ի ողջ կախարդանքը (ճիշտ, հիանալի կախարդանքը): Զրկվե՞լ այս ամենից: Ո՞նց թե... Իմ պահանջը контроль-ին է վերաբերում, այն контроль-ին, որ այսքան ճիշտ հղացված բանաստեղծության մեջ մշտադավաճ է, բայց ԱՀԱ շատ անշղարշ է երևում հետևյալ տողերում. «Երկյուղածությունը մեր գլխին (վրա) դիր սրբացած ձեռքը քո արքայական»: Սա արդեն նշանակում է «լավություն արա՛ ջուրը գցի», որովհետև քո ամենաբարձր գացողությունը արտահայտվել է ամենածանր մի խոսքով, որ եկել է հանգից ու վաճկից, քառյակից ու «լավը լավ ասելու» ձգտումից և մի... շատ ավելի կարևոր, եթե կուզես՝ տեսակարար (տեսակ անող = СОРТ-ը — СОРТ-ից = փուլից բաժանող) հայտանշից:

Որպեսզի այս վերջին միտքս բացատրեմ՝ հիշեցնում եմ քեզ մի հայտնի բան: Կարդա Տերյանի որևէ բան[աստեղծություն] առաջին քառյակը և, դիցուք, Վարուժանի որևէ բան[աստեղծություն] առաջին տունը և... մտածիր, թե դրբանք ինչպես պիտի վերջանան: Տերյանի սկզբից ելնելով՝ ՄԻՇՏ կարող ես անսխալ ենթադրել վերջը, իսկ Վարուժանի սկզբից՝ համարյա ոչ երբեք: Ես, ինչպես տեսնում ես, խոսում եմ երկու Մեծ և ՍՈՒՐԲ մարդկանց մասին, երկու ՎԱՂԱՄԵՌ բանաստեղծների և պաշտված (բուրբուս և իմ կողմից) բանաստեղծների մասին:

Նշածս առանձնահատկությամբ կարելի է անսխալ ՊՆԴՆԸ, որ եթե նրանց երկուսի կյանքը շարունակվեր՝ Տ[երյան]ի և Վ[արուժան]ի տարբերությունը գնալով կմեծանար՝ հօգուտ Վ[արուժան]ի, դի... ՄԻՇՎՆՈՒՅՆ ՏՐԱՄԱԻՐՈՒԹՅԱՆ (և մըտ-

քի) արտահայտման մեջ Տերյանի սկիզբը ենթադրում էր ԿԼԱՀՎՈՂ վերջ, Վարուժանինը՝ ոչ երբեք...

Համոն (իմ ու քո) սքանչելի բանաստեղծ է՝ անթերի-կատարյալ: Բայց Համոյի յուրաքանչյուր բան[աստեղծություն] առաջին իսկ քառյակը ենթադրում է մի ընթացք ու վերջ, որ կանխատեսվում է ընթերցողի կողմից շատ ավելի վաղ, քան կվերջանա տվյալ 3—4 քառյականոց բան[աստեղծություն] 3—4 բույե տևող ընթերցումը: Ես չեմ ասում, թե դա վատ է: Ես ասում եմ, որ դա մեր նվաճումն էր տակավին Տերյան-Վարուժանյան օրերին: Իսկ ես ու դու Տերյան-Վարուժանի երեսներն ենք: Չմոռանանք այս: Իբրև ընթերցող (իրև ԸՆԹԵՐՑՈՂ և ոչ իբրև ստանալոր գրող ոմն Սեակ) ես իմ ստանալիք հաճույքի կեսից ավելին կորցնում եմ, երբ առաջին քառյակից զգում եմ, թե սո՛ւյն տրամադրությունը ի՞նչ տրամաբանությունը ո՛ւր է հասցնելու: Չեմ ասում, որ սա ճանապարհ չէ: Բայց ասում եմ, որ սա տրամվայի ուզի է՝ նույն գծի վրա, նույն երթուղի—маршрут-ով: Իսկ տրամվայն ամեն տեղ չես կարող էջել...

Բայց չէ՞ որ կա նաև ավտոմեքենա, որ երկարգծերի վրայով = маршрут = երթուղով չի ըջվում: Եվ, եթե մի քիչ էլ առուդիր անենք, կա ՁԻ՛: Ուստի և՛ ամենից առաջ ես ձիու պահանջատերն եմ, հետո, ավտոմեքենայի, հետո՝ տրամվայի...

Հիմա երբ միտքս պարզ է, հիմա կարող եմ դա փուլ մեկ այլ բան[աստեղծություն] վրա՝ քեզ, սիրելիդ իմ, ասելով, որ եթե քառյակով ու հանգով չգրեիր, հազիվ թե ստացվեր սույն քառյակը.

Այսպես աշխարհից կզնամ ես էլ՝
 Իմ ամենալավ երգը դեռ չերգած...

Ախար ես էլ մի քիչ բանաստեղծ եմ ու գիտեմ, որ այս անտեր-ամենատեր «ՉԵՐԳԱՍԸ» պիտի հանգ պահանջի և... հասցնի «ՉԵՐԳԱՍ»-ի, այս «չհերկածն» էլ (պարտադրաբար)

պիտի հասցնի «դաշտի» (արտի, անդաստանի, ցանքսի), սա էլ՝ լծկանի, սա էլ... քառյակի այսպիսի ավարտի.
(մեկ վանկն էլ ավելի),

Մի օր լծկանս կսկսի շքաշի
Գաշտս կմնա ստոն ու շհերկած...

Եվ ի՞նչ ստացվեց. մի ամենատվորական (չասելու համար ամենահոգեկեցուցիչ) քառյակ, որ գրվել է միլիարդ անգամ, գրում են միլիոն մարդիկ. բայց շպիտի գրի մի մարդ, որի անունն է Վահն...

Բա, Վահն ջան:

Ասածս այն է, որ հիմա գրում ես անհամեմատ լավ, քան երբևիցե: Համարում եմ քեզ եղբայրաբար: Չոնիդ խոսքերով ասածս՝ երկյուղածությունը զլխիդ եմ դնում ձեռքս, որ ընկերոջ է, եղբոր, բայց ոչ արթայի: Միաժամանակ իրավունք եմ վերապահում ինձ զգուշացնելու, որ բռնածոց նոր «ճիշտ» ճանապարհով ընթանալիս շատ էլ տարված-վառված չքայլես՝ հին ուխտավորի նման:

Վաղը-մյուս օր «Գրական» թերթը կտանեմ համարյա բոլոր բանաստեղծություններիդ (բացի, ինչ ասել կուզի, Չոնիցդ և մեկ-երկու համեմատաբար միջակ բանաստեղծություններից)՝ այն հույսով, որ մի շաբթ տպեն ֆեզնից և ոչ թե միայն «Հայաստան»-ը, որ անպատճառ կտպվի:

Մնացածը՝ ըստ կարգի, որ իմ կյանքի անկարգությունն է շաղկապված...

Ժամը 3,30 րոպեն է (գիշերվա):

Ողջություն և համբույր:

Միշտ քո՝ Պարույր

16.1.67

Երևան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անխորագիր— Պ. Սևակի առաջին տպագիր բանաստեղծությունն է: Տպագրված է «Սովետական գրականություն» ամսագրի 1942 թ. № 7-ում: Փետրումներ, Աղշում, Պատերազմի դաշտում զոհվածներին— Տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրի նույն, 1942 թվականի № 8-ում:

To be or not to be (կենի, թե չիենի)— Շեքսպիրյան հերոսի՝ Համլետի երկդիմությունը արտահայտող հայտնի խոսքն է, որ Պ. Սևակը դարձրել է բանաստեղծության խորագիր: Բանաստեղծի առաջին գործերից մեկն է: Տպագրվում է ձեռագրից, որոշ հապավումներով:

Աշխարհի գառուը— Տպագրվել է «Սովետական գրականություն» և արվեստ» ամսագրի 1951 թ. № 9-ում:

Արքայակներ— 1956 թ. Պ. Սևակը գրել է ժողովրդական առածների ու սոսցվածքների վրա կառուցված բազմաթիվ ութնյակներ, որոնց մի մասը տպագրվել է «Նորից քեզ հետ» ժողովածուում, իսկ մի բանիսը «Մարդ ափի մեջ» գրքում իբրև առանձին բանաստեղծություններ՝ խորագրված:

Ժխտում եմ, Հրաժարվում եմ, Վախենում-ստրտափում եմ, Քրտնում եմ, Հիմարաբար խոստովանում եմ, Ներում եմ, Մեղանչել-զղշում եմ, Խեռ-յում եմ, Աղվկում եմ, Զարմանում եմ բանաստեղծությունները «Մարդ ափի մեջ» շաբթից են: Ժխտում եմ— Տպագրվել է «Գարուն» ամսագրում (1974 թ. № 1): Քրտնում եմ— Տպագրվել է «Սովետական Հայաստան» օրաթերթում (1974 թ. փետրվարի 6):

Կամիտասի դիմանկարի առաջ— Տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում (1959, № 9) իբրև հատված Կոմիտասին նվիրված («Անլուրի զանգակատուն») պոեմից: Սակայն «Անլուրի զանգակատուն» հրատարակության ժամանակ բանաստեղծը պոեմից դուրս է թողել և դարձրել առանձին բանաստեղծություն:

Գառնեային ուրվանկար— Տպագրվել է Լուսերն, Ս. Կունյակի թարգմանությունում «Коммунист» (Երևան) օրաթերթում (1963, 19 ապրիլի), «Литературная Армения» ամսագրում (1963 թ., № 2), «Ленинское

* Մանթապարություններ՝ կազմողի:

ЗНАМЯ» (1967 թ., 3 հոկտեմբերի) և այլ պարբերականներում: Տպագրվել է նաև էստոներեն «Լոմիդ» ամսագրում (1964 թ., № 5):

Մինչև անգամ մեր ձկները — «Հայկական ձկները» խորագրով Յու. Մորիցի թարգմանությամբ տպագրվել է «Литературная газета»-ում (1961 թ., մայիսի 5), Ս. Կունյանի թարգմանությամբ՝ «Коммунист» օրաթերթում (1962 թ., 7 հոկտեմբերի):

Անտառն է արդյոք, Հոգեբանություն քի ստուգաբանություն — Տպագրվել են «Գարուն» ամսագրում (1974 թ., № 1):

Հոգը հայելի — Տպագրվել է «Մարդը ափի մեջ» ռուսերեն ժողովածուում:

Երկու սիրս արանում — Տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում (1974 թ., № 2):

Ինձ ա՛վ է արդյոք հավանաբար, Ու եթե հայր եմ, Իմ կտակը, Ենթանման պահիլ, Անկումներով եմ վերև բարձրանում, Զգայուն զլխարկ, Պարան եմ ուզում, Տակավի՛ն հեռու է սիրուս զայուտը, Անտարբերության բշտամի՛ն, Առանց հանգրի, բայց սրտի շափով, Բաց ցանկություն, Ինձ ի՛նձ հյուս, Մի էիչ բվարանություն, Կթություն հույսեր, Ամենավայրի սպանություն բանաստեղծությունները «Ականջդ բեր, ասեմ» շարքից են: Հատվածաբար տպագրվել է «Գարուն» ամսագրում (1974 թ. № 1):

Քիչ ենք, բայց ճայ ենք — Տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1962 թ., № 11), որտեղից տարբեր վերնագրերով («Մենք կոչվում ենք հայ», «Քիչ ենք, բայց հայ ենք», «Կանք, սիրտի լինենք» և այլն) արտատպվել է սփյուռքահայ բազմաթիվ պարբերականներում:

Տոգադարձված սեր — Տպագրվել է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում (1974 թ., № 1):

Հայոց լեզու — Տպագրվել է «Գրական թերթ»-ում (1962 թ., մարտի 2), որտեղից արտատպվել է սփյուռքահայ մի շարք պարբերականներում: Բանաստեղծի վախճ — Տպագրվել է «Գարուն» ամսագրում (1969 թ., № 2):

Քարե հյուրը — Տպագրվել է «Գարուն» ամսագրում (1974 թ., № 1):

Վահագնին — Գրվել է սփյուռքահայ երիտասարդությանն ուղղված «Վահագն» չքի համար («Հայրենիքի ձայն», 1963 թ., 3 մարտի): Արտատպվել է «Աշխարհ», «Պայքար», «Մեր նշանաբանն է հատաչ» և սփյուռքահայ այլ թերթերում:

Հայունիները — Տպագրվել է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում (1974 թ., № 1) և սփյուռքահայ պարբերականներում:

Խեղճ ու խղճով — Տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1972 թ., № 6):

Սեկի կողմից երկու կատակերդ երեք աղչկա վրա, Հավերճ ներկաբացական — Տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1971 թ., № 10):

Մառերի օգնությամբ, Հոգը — Տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1972 թ., № 6):

Կես զիշեռային բնակար — Տպագրվել է «Գրական թերթ»-ում (1972 թ., հունիսի 16):

Բարի օր, Յոնսուրյուն, Բարով տեսնե՛ք, Մնաս բարև — բանաստեղծություններով ամբողջանում է «Ողջունի բմայքներ» շարքը: «Բարով տեսանք»-ը տպագրվել է «Գրական թերթ»-ում (1974 թ., փետրվարի 6), իսկ «Մնաս բարև»-ը «Սովետական արվեստ» ամսագրում (1974 թ., № 2):

Անտե՛խտ — Տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրում (1966 թ., № 5), որտեղից արտատպվել է սփյուռքահայ պարբերականներում:

Խեները — Տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1974 թ., № 1):

Երջանկության դափնեկիրը — Տպագրվել է «Գրական թերթ»-ում (1965 թ., 10 փետրվարի):

Ձիբապտղի ծառը — Տպագրվել է «Գարուն» ամսագրում (1974 թ., № 1):

Կարչի հինգշաբթին — Տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1974 թ., № 1):

Անցած սերերը — Տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1971 թ., № 10):

Ասա ամեն, էլիկտրական աղեա, Երջանկության նոր շափանիչ — Տպագրվել են «Գարուն» ամսագրում (1974 թ., № 1):

Կրկնվող ճանելով — Տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1972 թ., № 6):

Լավագույներ, Հայրենիք — Տպագրվել են «Գարուն» ամսագրում (1969 թ., № 2):

Պարտի տակսները, Քուրակի կարոտ — Տպագրվել են «Սովետական գրականություն» ամսագրում (1974 թ., № 1):

Սերը՝ հանելով — Տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1972 թ., № 6):

ՊՈՆՄՆԵՐ

Հավաստմությունը սրտի արժան չէ — Պոնմի առաջին տարբերակը բավականին ծավալուն է: Բանաստեղծը այնքան էլ չէր հավանում և դրա համար հետազայում կրճատումներ է կատարել: Պոնմից առանձին հասկաններ «Տիկեղբորի ուղիներով» խորագրով տպագրվել են «Գրական թերթ»-ում (1959 թ., դեկտեմբերի 11): Այս տարբերակը բանաստեղծի մահից հետո ուպագրվել է «Գարուն» ամսագրում (1971 թ., № 9):

Տրանչեսկա դա Ռիմինի — Գրված է Դանթեի «Դոժյորի երկրորդ պարունակ»-ի հայտնի սիրո պատմության թեմայով: Տրանչեսկա դա Ռիմինի հոր կամքով, ամուսնանում է Պաուլոյի եղբոր հետ: Բայց շուտով Պաուլոյի

ու Ֆրանչեսկայի միջև ծայր է առնում սեր, որը ողբերգական վախճան է ունենում սիրահարների համար: Ամուսինը սպանում է երկուսին էլ:

ԿՐԱՔՆԵԱՒԱՏՈՒԹՅՈՒՆ

Իսանիել Վարուժանի պանդխան — Ռեֆերատ է, որ Պ. Սևակը գրել է Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական սեսիայում կարդալու համար: Բայց չի կարդացել ինչ-ինչ պատճառներով և դարձրել է գիպլոմալին աշխատանք, որ գնահատվել է «Ջերգանց»: Տպագրվում է որոշ հապավումներով:

Սիլվա Կապուտիկյանի մտորումները ճանապարհի կեսին — գեկուցում, որ կարդացվել է Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» գրքի քննարկման ժամանակ: Քննարկումը տեղի է ունեցել Հայաստանի գրողների միությանում, 1961 թ.: Ձեկուցման ձեռագրում Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունների մեջբերումները բացակայում են, նշված են միայն էջերը, որոնց համապատասխան էլ կատարված են մեջբերումները:

ՆԱՄԱԿՆԵՐ

Առաջին նամակը հասցեագրված է գրականագետ Հովհաննես Ղազարյանին, որ մեկն է եղել այն մարդկանցից, ովքեր ծանոթացել են Պ. Սևակի ստեղծագործական առաջին փորձերին ու կարդացել են պատերազմի սարկներին նրա գրած բանաստեղծությունները: Ինչպես նամակի բնագիրը, այնպես էլ Պ. Սևակի այդ տարիներին գրած մի շարք բանաստեղծությունների ձեռագրերը գտնվում են Հ. Ղազարյանի մոտ: Տպագրվում է հապավումներով:

Մյուս նամակները հասցեագրված են բանաստեղծ, գրականագետ Վահե Հովակիմյանին, որ ապրիլիս է եղել այդ տարիներին Բաքվում և աշխատել է «Գրական Ազդերջան» ամսագրի խմբագրությունում: Վ. Հովակիմյանին հասցեագրված նամակները որոշ հապավումներով տպագրվել են «Գրական Ազդերջան» ամսագրում (1972 թ., № 1), ինչպես նաև «Գարուն» ամսագրում (1972 թ., № 6): Ձեռագրերը գտնվում են հասցեատիրոջ մոտ: Տպագրվում են հապավումներով:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություններ

Անխորազիր	7
Փնտրումներ	11
Ջղջում	14
Պատերազմի դաշտում զոհվածներին	16
To be or not to be	17
Աշխարհի գարունը	23
Լինում է չի լինում...	25
Անհասցե բացիկ	26
Կաս ու չկաս — աստծու պես	27
Նա դուրս է տալիս...	28
Դուք հիշում եք...	28
Իսկ ինչու, ինչի՞ համար...	29
Ինչ ասեմ խնիթի...	29
Իմաստուն էր, բայց շատ ձգեց...	30
Թե ասես...	30
Այք մտնելու համար...	31
Ձյունը ի՞նչ է իմանում...	31
Ինքը հոպոպն է հոտած...	32
Ա՛խ, արդեն ականջ է ծակում...	32
Եթե ասեմ...	33
Թե ինձ այրեց...	34
Մի ամիս է...	34
Դո՛ւ ես ձգում...	35
Հովիտը ինքս տվեցի...	35
Թե ինձ համար...	36
Նույն հին վանքն է...	36
Իմ սրտի սյունը...	37
Մաղի մեջ...	37
Ես բռնել ուզեցի...	37
Տանը լինեմ...	38
Հիմար ծախսով...	38
Այք մտնողը...	39
Ա՛խ, հավատալիք գոնե աստծուն	40
Փխում եմ	41
Հրածարվում եմ	44
Վախենում-սարսափում եմ	46
Քրտնում եմ	49
Հիմարաբար խոստովանում եմ	52
Ներում եմ	53
Մեղանչիլ-զղջում եմ	56
Խնայում եմ	58
Աղմկում եմ	60
Ջարմանում եմ	62
Չարմանում եմ	63
Կոմիտասի դիմանկարի առջև	67
Ամենքը իրենց բախտից են դժգոհ	69
Գարնանային ուրվանկար	71
Հայաստան	72
Մինչև անգամ մեր ձկները...	73
Անտա՛ռն է արգյուր...	73

Հոգեբանություն թի ստուգարանություն	74
Ծրագրի նյութը	75
Զնայվող կարևորություն	77
Հոգը հայելի	78
Պատրանք	79
Իրկու սիրո արանքում	80
Ինձ ո՞վ է արդյոք հովանավորում	82
Ու եթե հայր եմ...	83
Ի՞նչ կտակը	
Ի՞նչ կտակը	
1	84
2	85
3	87
4	88
5	89
6	90
7	91
8	92
9	93
10	94
Ենթանկյան սլաշին	95
Յնկումներով եմ վերև բարձրանում	96
Զգայուն գլխարկ	97
Պարուն եմ ուզում	98
Տակավին հետո սթաուս գալուստը	99
Անտարբերության թնամին	100
Առանց հանգստի, բայց սրտի շափով	101
Բաց ցանկություն	102
Ինքս ինձ հյուս	103
Մի թիլ թվարանություն	
1	104
2	105
Գթության բույրեր	106
Ամենավայրի սպանությունը	107
Քիչ ենք, բայց հայ ենք	108
Տողադարձված սևը	111
Հայտը լեզու	112
Բանաստեղծի վախը	118
Քարի հյուրը	120
Անպաշտոն գիշերապահը	121
Վահագնին	123
Երկը և իր մարդկային դիմակը և այլն	126
Մեղանքից մեկը	132
Հայունհինը	133
Ենդճ ու խղճով	136
Մեկի կողմից երկու կատակերդ երեք աղջկա վրա	138
Պրտի...	140
Հավերժ ներկան-բացական	141
Մի... ի...	142
Ոտների օգնությունը	143
Հազը	146
Կեղծիչերային բնանկար	150
Բարի օր	153
Ցուխություն	155

Բարով տեսանք	158
Մնաս բառ	160
Ինչնից, թե քեզնից	163
Անահիտ	166
Երեխայի լեզվով	168
Ենթևը	170
Երբանկության դափնեկիրը	172
Գարնան վատնագավոր հոտը	174
Զլիթապտի ծառը	177
Անթնության դեղատոմս	179
Բողոքարկման հույսը	182
Կորչի հինգշաբթին	184
Բաժանություն տեղն ու տեղը	186
Անցած սերերը	188
Կակազող լույսերը	190
Ասա ռամեն	192
Եղևություն, որ լավ գլխի, եթե այլևս չլինի	195
Անարժեքության տապկնոցում	196
Ներկա-բացակա	198
Ես, որ ես չեմ	200
Էլեկտրական աղետ	202
Երբանկության նոր շափանիչ	204
Տակմաշ կրկնակոշիկ	205
Պարտքի տոկոսները	207
Սպասելով կեսօրվա հրամանին	209
Ընդդեմ օդաբանական կայանի	212
Դարը և ժամը	213
Քուրթակի կարաս	215
Անտուսցությունները	217
Մեր թույլությունները	219
Օրհնություն	220
Պատրանքի պատանքը	221
Կրկնվող հանելուկ	222
Հավագույնը	226
Հայրենիք	228
Օրորոցային	230
Սրկկենցաղ կենցաղ	232
Հանելուկ առաջին	234
Հանելուկ երկրորդ	236
Սերը՝ հանելուկ	237
Արմատավոր հանելուկ	239
Պոեմներ	
Հավասարությունը սրտի արատ չէ	243
Ճրանչեակա դա Ռիմինի	281
Գրաքննադատություն	
Վարուժանի պոեզիան	293
Մ. Կապուտիկյանի մտորումները ճանապարհի կետին	370
Նամակներ	
Հ. Ղազարյանին	403
Վ. Հովակիմյանին	414
Մանթապարություններ	441

ՊԱՐՈՒՅՐ ՌԱՅՔՅԵԼԻ ՍԵՎԱԿ

Երկերի ժողովածու վեց հատորով
Հասար վեցերորդ

Հրատ. խմբագիր՝ Ա. Ս. Քիրոսյան
Նկարիչ՝ Յ. Կ. Աֆրիկյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Ռ. Ստոյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Գևորգյան

Հանձնված և շարվածքի 13/Յ 1975 թ.: Ստորագրված է տպագրության 19/IV 1976 թ.: Թուղթ՝ Մ 1, 84×108¹/₃₂, տպագր. 14,0 մամ.—23,52 պայմ. մամ., հրատ. 16,1 մամ.: Պատվեր 2232: ՎՖ 08634: Տպարանակ 50 000: Գինը՝ 1 ո. 48 կ.: «Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегаларта Госкомитета
Совета Министров Арм. ССР по делам издательств,
полиграфии и книжной торговли, Ереван, ул. Теряна, 91.